

**ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝
«ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ**

«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ» ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄՍԱԳԻՐՆ ԸՆԴԳՐԿՎԱԾ Է ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՑԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ՀՀ ԿԳՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿՈՒՄ

***Հրատարակվում է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական
խորհրդի երաշխավորությամբ***

Լրատվական գործունեություն իրականացնող՝
ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ՊՈԱԿ, գրանցման վկայական
03Ա085891՝ տրված 15.09.2009թ.

Հասցե՝ Երևան 0004, Ծովակալ Իսակովի պողոտա 29,

Էլեկտրոնային կայք՝ www.edupolice.am,

Էլեկտրոնային փոստ՝ orenqipatvarjournal@mail.ru,

Հեռ. 010-77-15-24

Համարի թողարկման պատասխանատու՝ պատասխանատու քարտուղար
Տ.Խաչատրյան:

Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համամիտ չլինելով
հեղինակների տեսակետներին:

ОСНОВАТЕЛЬ И ИЗДАТЕЛЬ:
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ
"ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС МВД РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ"
"ЗАЩИТНИК ЗАКОНА" научно-методический журнал
Издается по рекомендации Научного совета Образовательного
комплекса МВД Республики Армения

ЖУРНАЛ РЕКОМЕНДОВАН ВЫСШИМ КВАЛИФИКАЦИОННЫМ КОМИТЕТОМ И ВКЛЮЧЕН В ПЕРЕЧЕНЬ ВЕДУЩИХ РЕЦЕНЗИРУЕМЫХ НАУЧНЫХ ЖУРНАЛОВ И ИЗДАНИЙ, В КОТОРЫХ ДОЛЖНЫ БЫТЬ ОПУБЛИКОВАНЫ ОСНОВНЫЕ НАУЧНЫЕ РЕЗУЛЬТАТЫ ДИССЕРТАЦИЙ НА СОИСКАНИЕ УЧЕНЫХ СТЕПЕНЕЙ ДОКТОРА И КАНДИДАТА НАУК

Адрес: Ереван 0004, проспект Адмирала Исакова 29

Официальный сайт: www.edupolice.am

Электронная почта: orenqipatvarjournal@mail.ru

Тел: 010-77-15-24

Ответственный за выпуск номера: ответственный секретарь Тигран Хачатрян

FOUNDER AND PUBLISHER:
“MIA EDUCATIONAL COMPLEX OF RA RMENIA” STATE NON-PROFIT
ORGANIZATION
“BULWARK OF LAW” scientific-methodical journal
It is published with the warranty of the Scientific Council of the MIA
Educational Complex of RA

THE JOURNAL IS INCLUDED IN THE MAIN RESULTS AND FOR PUBLISHING THE THESIS IN RA'S
MINISTER OF EDUCATION AND SCIENCE HIGHER QUALIFICATION COMITTEE'S IN THE
ACCEPTED SCIENTIFIC PUBLICATIONS LIST

Address: Yerevan 0004, Covakal Isakov Avenue 23,

Official web-cite: www.edupolice.am

Email: orenqipatvarjournal@mail.ru

Tel.: +374 10-77-15-24

Journal Issue Manager, Responsible Secretary T.Khachatryan

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐ

Գլխավոր խմբագիր - ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Մանուկ Մուրադյան,**

Գլխավոր խմբագրի տեղակալ - ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Միսակ Մարկոսյան,**

Պատասխանատու քարտուղար - ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի կրթության որակի ապահովման և գիտական աշխատանքների բաժնի պետ, ոստիկանության մայոր **Տիգրան Խաչատրյան**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐ ԱՆՈՒՍՆԵՐ՝

ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Գազիկ Գրիգորյան,**

ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ, ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Արտակ Մնացականյան,**

ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ., դոցենտ **Արտակ Հովհաննիսյան,**

ՀՀ ՆԳՆ ոստիկանության իրավաբանական վարչության պետ, ոստիկանության գնդապետ, ի.գ.թ. **Ռուսյան Մարանդյան,**

ՀՀ Սահմանադրական դատարանի գիտական հարցերով խորհրդական, ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.դ., պրոֆեսոր **Աշոտ Խաչատրյան,**

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ի.գ.դ., պրոֆեսոր **Մերգեյ Առաքելյան,**

ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.թ. **Հովհաննես Քոչարյան,**

ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պայմանագրային դասախոս, ի.գ.թ., դոցենտ **Դավիթ Թումասյան,**

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր, ի.գ.թ., դոցենտ **Ռաֆիկ Խանդանյան,**

ՀՀ վարչական դատարանի դատավոր, ի.գ.թ. **Կարեն Զարիկյան,**

ՀՀ ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր, ի.գ.թ. **Ջոն Հայրապետյան,**

ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գնդապետ-մայոր, տ.գ.դ., պրոֆեսոր **Օլեգ Բուլգակով,**

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ-մայոր, ի.գ.թ., դոցենտ **Ալեքսանդր Պարադնիկով,**

ՌԴ ՆԳՆ Մանկտ Պետերբուրգի համալսարանի պետի գիտական աշխատանքների գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.դ., պրոֆեսոր **Մակսիմ Բավսուն:**

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետական կառավարման տեսության և մեթոդոլոգիայի ամբիոնի պետի տեղակալ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, դոցենտ **Անդրեյ Անիսին:**

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор - начальник Образовательного комплекса полиции МВД РА, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Манук Мурадян**

Заместитель главного редактора - первый заместитель начальника Образовательного комплекса полиции МВД РА, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Мисак Маркосян**

Ответственный секретарь - начальник отдела обеспечения качества образования и научных работ Образовательного комплекса полиции МВД РА, майор полиции **Тигран Хачатрян**

ЧЛЕНЫ РЕДАКЦИОННОГО СОВЕТА:

Начальник Академии Образовательного комплекса полиции МВД РА, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Гагик Григорян**

Начальник управления учебно-методического обеспечения и развития Образовательного комплекса полиции МВД РА, кандидат юридических наук, доцент, подполковник полиции **Артас Мнацаканян**

Заместитель начальника Академии Образовательного комплекса полиции МВД РА, полковник полиции, кандидат юридических наук, доцент **Артас Оганесян**

Начальник Юридического управления Полиции МВД РА, кандидат юридических наук, полковник полиции **Руслан Марандян**

Советник Конституционного суда РА по научным вопросам, Заслуженный юрист РА, доктор юридических наук, профессор **Ашот Хачатрян**

Ректор Академии Юстиции, доктор юридических наук, профессор **Сергей Аракелян**

Заслуженный юрист РА, кандидат юридических наук **Ованнес Кочарян**

Преподаватель кафедры уголовного права и криминологии Академии Образовательного комплекса полиции МВД РА на договорной основе, кандидат юридических наук, доцент **Давид Тумасян**

Судья Апелляционного административного суда РА, кандидат юридических наук, доцент **Рафик Ханданян**

Судья административного суда РА, кандидат юридических наук **Карен Зарикян**

Судья Уголовного суда общей юрисдикции РА, кандидат юридических наук **Джон Айрапетян**

Первый заместитель начальника Краснодарского университета МВД РФ, генерал-майор полиции, доктор технических наук, профессор **Олег Булгаков**

Первый заместитель начальника Академии управления МВД РФ, генерал-майор полиции, кандидат юридических наук, доцент **Александр Парадников**

Заместитель начальника по научной работе Санкт-Петербургского университета МВД РФ, полковник полиции, доктор юридических наук, профессор **Максим Бавсун**

Заместитель начальника кафедры теории и методологии государственного управления Академии управления МВД РФ, доктор философ. наук, доцент **Андрей Анисин**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աղայան Սարիկ, Աղայան Ռուբեն

ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՎՐԱ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ.....8

Թումասյան Դավիթ

ԱՆՉԱՓԱՀԱՄԻՆ ՀԱՆՑԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ ՀԱԿԵԼՈՒ ԿԱՄ ԴՐԱՆ
ՄԱՍՆԱԿԻՑ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ..... 17

Լազարյան Արփի

«ԲԱՆՏԱՐԿՅԱԼ» ՄԻԶԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....33

Խանդանյան Ռաֆիկ

ԼՈԿԱԼ (ՆԵՐՔԻՆ) և ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՆՈՐՄԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ՏԵՍԱՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) 45

Հովհաննիսյան Արտակ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ68

Ղամբարյան Արթուր

ՔՆՆՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ
ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՅԵՐ.....77

Մելիքյան Մելիք

ԿԱՇԱՌՔԻ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ՊՐՈՎՈԿԱՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՄԻ ՆԵՐՔՈՒ..... 102

Մնացականյան Արտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌԵՑԻԴԻՎԱՅԻՆ
ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ 112

Մուրադյան Մանուկ

ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 130

Նազարյան Նաիրա

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԴԱՊՏԱՑԻԱՅԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՈՒՍՈՒՄՆԱԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ 176

Սանթրոսյան Աշոտ, Իշխանյան Յուրի

ՓՈՔԸ ՀԻՒՐՈԿԱՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՇՐՋԱԿԱ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 185

Սաֆարյան Ամալյա, Զիլարյան Նաիրի

ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՅՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 195

Սմբատյան Հասմիկ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՎՆԱՐԿ ՀԱՆՑԱՆՔԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱՐՔԻ
ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ..... 206

Վարյան Նվարդ, Մանուկյան Ջոնիկ

«ԿԱՇԱՌՔ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՄ ՏԱԼՈՒ ՆՄԱՆԱԿՈՒՄԸ» ՕՊԵՐԱՏԻՎ
ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱՎԱԶՍՓՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ..... 219

Багратян Азат Людвигович

ПРОБЛЕМЫ ЗАКОНОДАТЕЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ КАК ФАКТОР,
СНИЖАЮЩИЙ ЭФФЕКТИВНОСТЬ ИСПОЛЬЗОВАНИЯ РЕЗУЛЬТАТОВ
ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ 233

Болт Юлия Александровна

НЕЗАКОННОЕ ОБРАЩЕНИЕ МЕДИЦИНСКОЙ ПРОДУКЦИИ В СЕТИ
«ИНТЕРНЕТ» 239

Дьяченко Наталья Николаевна, Васильев Эдуард Анатольевич

ПРАВОВЫЕ АСПЕКТЫ ПРОТИВОДЕЙСТВИЯ КИБЕРПРЕСТУПНОСТИ НА
ТЕРРИТОРИЯХ ГОСУДАРСТВ – УЧАСТНИКОВ СНГ 250

Исраелян Геворг Воваевич

КИБЕРВИКТИМОЛОГИЯ: ПОНЯТИЕ И СОСТАВЛЯЮЩИЕ ЭЛЕМЕНТЫ 264

Маилян Ани Варужановна

ИННОВАЦИОННЫЕ ТЕХНОЛОГИИ ПОЛУЧЕНИЯ И АНАЛИЗА ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ИНФОРМАЦИИ: ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ ВНЕДРЕНИЯ 271

Надейкина Ольга Андреевна

ПРОБЛЕМНЫЕ АСПЕКТЫ БОРЬБЫ С КИБЕРПРЕСТУПНОСТЬЮ В ГОСУДАРСТВАХ-УЧАСТНИКАХ СНГ 278

Подчерняев Александр Николаевич

К ВОПРОСУ ОПРЕДЕЛЕНИЯ ПРЕСТУПЛЕНИЙ, СОВЕРШАЕМЫХ С ИСПОЛЬЗОВАНИЕМ ИНФОРМАЦИОННО-ТЕЛЕКОММУНИКАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ 289

Пустовойт Елизавета Сергеевна

ВИРТУАЛИЗАЦИЯ НАРКОПРЕСТУПНОСТИ В РЕГИОНЕ ОТВЕТСТВЕННОСТИ ГОСУДАРСТВ-ЧЛЕНОВ ОРГАНИЗАЦИИ ДОГОВОРА О КОЛЛЕКТИВНОЙ БЕЗОПАСНОСТИ 296

Расулев Абдулазиз Каримович, Югай Людмила Юрьевна

СОВЕРШЕНСТВОВАНИЕ УГОЛОВНО-ПРАВОВОЙ ПОЛИТИКИ В СФЕРЕ ПРОТИВОДЕЙСТВИЯ КИБЕРПРЕСТУПНОСТИ В РЕСПУБЛИКЕ УЗБЕКИСТАН 301

Савенко Ирина Алексеевна, Бикмашев Виталий Абдулхаевич

МОШЕННИЧЕСТВО В СФЕРЕ КОМПЬЮТЕРНОЙ ИНФОРМАЦИИ: УГОЛОВНО-ПРАВОВОЙ И КРИМИНОЛОГИЧЕСКИЙ АСПЕКТ 311

Сорокун Николай Сергеевич

ВЫЯВЛЕНИЕ И УСТРАНЕНИЕ ПРИЧИН И УСЛОВИЙ СОВЕРШЕНИЯ ПРЕСТУПЛЕНИЙ В СФЕРЕ ИНФОРМАЦИОННО-ТЕЛЕКОММУНИКАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ КАК ОСНОВА ПРОФИЛАКТИКИ ТАКИХ ДЕЯНИЙ 321

Устинкин Пётр Анатольевич

ПОНЯТИЕ «ПОКАЗАНИЯ» В УГОЛОВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РОССИИ..... 329

ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՎՐԱ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Աղայան Սարիկ

*ՀՀ ոստիկանության ճանապարհային
ոստիկանության պլանավորման,
հաշվառման և վերլուծության բաժնի
տեսուչ, ոստիկանության կապիտան,
տեխն. գիտ. թեկն., դոցենտ*

Աղայան Ռուբեն

*ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների
ազգային բյուրո»
ՊՈԱԿ-ի ավտոտեխնիկական
փորձաքննությունների բաժնի
փորձագետ*

Համառոտագիր: Հոդվածում դիտարկվել են ճանապարհատրանսպորտային պատահարի (ՃՏՊ) առաջացման վրա ազդող գործոնները՝ երթևեկելի մասում փոսերի (խանդակավոր ծածկի) առկայությունը, ճանապարհային նշանների բացակայությունը և լուսացույցերի խափանումները, ոլորաններում երթևեկելի մասի ոչ ճիշտ լայնական թեքությունը և այլն, ինչպես նաև դրանց ազդեցության վերլուծությունը: Նշված գործոնները վերացնելու նպատակով առաջարկվում է մի շարք միջոցառումների իրականացում, ինչը կհանգեցնի հետագայում այդ գործոններով՝ ճանապարհային պայմաններով պայմանավորված ճանապարհատրանսպորտային պատահարներից խուսափելուն:

Բանալի բառեր. ճանապարհատրանսպորտային պատահար, ավտոտրանսպորտային միջոց, փորձագետ, ճանապարհային պայման, արագություն, ավտոմեքենայի անիվ:

Ավտոմոբիլային ճանապարհներն ունեն բարձր վտանգավորության այնպիսի տեղամասեր, որտեղ պահանջվում է ավտոտրանսպորտային միջոցի (ԱՏՄ) արագության նվազեցում: Դրանք, ըստ հատակագծի և պրոֆիլի կորության, փոքր շառավիղ ունեցող ճանապարհային մասերն են՝ խաչմերուկները, ճանապարհի հետագծի փոփոխության մասին վարորդների համար վատ կողմնորոշման հատվածները, ցածրադիր վայրերում հաճախակի մառախլապատ տեղամասերը, մերկասառույցների առաջացման հատվածները, կամուրջները, երկար վայրէջքներից դեպի վերելքներ անցումները,

ԱՏՄ-ի կանգառներում հետիոտների և կենդանիների հայտնվելու տեղերը [2]: Սրանք այն կարևորագույն վայրերն են, որոնց համար պահանջվում է ճանապարհներ շահագործող կազմակերպությունների մեծ ուշադրությունը:

Հատկապես մեծ վտանգ են ներկայացնում ընդհանուր հարթ ճանապարհաձածկույթի վրա երբեմն հանդիպող խոր և երկար փոսերը, որոնք վարորդը կարող է բացահայտել միայն շատ մոտ տարածությունից: Ի դեպ, գրանցվել են ՃՏՊ-ներ, որոնց ժամանակ մարդատար ավտոմոբիլների կախոցների դետալները խափանվել են այդպիսի փոսերի մեջ անիվների ընկնելու և դրա հետևանքով կողասահիքից շրջվելու պատճառով: Ուստի, անհրաժեշտ է ՃՏՊ-ի վայրում պատահարի մանրամասնությունները հստակ արձանագրել գնությունն իրականացնող մարմնի կողմից:

Նկարագրված փոսերը, հատկապես մուր ժամանակ ճանապարհի չլուսավորված հատվածներում, փոքր հեռավորության վրա հայտնաբերելու դեպքում հաճախ վարորդները բնագոյաբար մանևրում՝ շրջանցում են կատարում, որի ժամանակ տեղի են ունենում տրանսպորտային միջոցի համընթաց կամ հանդիպակաց բախումներ: Այդպիսի դեպքերում սովորաբար ներկայացվում է ՀՀ կառավարության «Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին» 2007 թվականի հունիսի 28-ի թիվ 955-Ն որոշման (այսուհետև ՃԵԿ) 36 և 39 կետերի պահանջների կամ 53 և 54 կետերի պահանջների խախտում, սակայն որի դեպքում փորձագետը կարող է համապատասխան հաշվարկների միջոցով ապացուցել անվտանգության ապահովման տեխնիկական անհնարինությունը ստանդարտի պահանջներին ճանապարհաձածկույթի անհամապատասխանության պատճառով և այդպիսով բացահայտել ՃՏՊ-ի բուն պատճառը: Այդպիսի վտանգավոր տեղամասերում պետք է անպայման տեղադրված լինեն դրանց համար նախազգուշացնող և արագության սահմանափակման համապատասխանաբար՝ ՃԵԿ-ի 1.16 «Անհարթ ճանապարհ» և 3.24 «Առավելագույն արագության սահմանափակում» նշաններ (նկ.1) [1]:



**Նկ.1. ա. 1.16 «Անհարթ ճանապարհ»
նշան,**



**բ. 3.24 «Առավելագույն արագության
սահմանափակում» նշան:**


Ըստ ստանդարտների՝ պինդ ճանապարհածածկույթի կցման գործակցի մեծությունն անվադողի պահպանաշերտի նախշանկարի հետ պետք է լինի $\varphi = 0,4$ -ից ոչ պակաս, ինչը ձմռան ժամանակ պետք է ապահովվի ձյան շերտի մաքրումով կամ սառցապատ մակերևույթի մշակմամբ [4]: Ճանապարհի կեղտոտվածությունը մաքրելու համար տրվում է 4-5 օրից ոչ ավել ժամանակ, իսկ ճանապարհի ձմեռային սայթաքելիության վերացման նորմատիվային ժամանակահատվածը 4-6 ժամից ոչ ավել է կազմում՝ ձյունը նստելուց կամ հայտնաբերելուց հետո: Ճանապարհների սառցակալած ծածկը և ձնակուտակումը տևական ժամանակ պահպանվում են նաև այս ժամկետները չպահպանելու պատճառով: Ժամանակին ձյունը մաքրելու համար տեխնիկան չի բավականացնում, իսկ սառցապատումները վերացնելու անվնաս և արդյունավետ միջոցներ չկան: Չեն կատարվում նաև ամենապարզունակ միջոցառումները, օրինակ՝ վտանգավոր տեղերում աղ և ավազ լցնելը, ինչը հնարավորություն է տալիս էապես բաձրացնել կցման գործակիցը: Հատկապես վտանգավոր են սառցապատված և սայթաքուն առանձին փոքր հատվածները ճանապարհի հմնական ընդհանուր բավարար կցման ֆոնի վրա: Օրինակ՝ վարորդը մուգ ասֆալտբետոնե ճանապարհածածկույթի վրա սառցակալումը կարող է հայտնաբերել USU-ի լուսարձակների լույսի տակ, իսկ ցերեկը՝ մանևրի կամ արգելակման ժամանակ: Ուստի տվյալ հատվածներում անհրաժեշտ է տեղակայել 1.15 «Սայթաքուն ճանապարհ» (նկ.2) նախագրուշացնող և 3.24 «Առավելագույն արագության սահմանափակում» արգելող նշանները, իսկ որոշ դեպքերում՝ նաև երթևեկության արգելումը ճանապարհի երկարաձիգ վերելքներով և վայրէջքներով հատվածում, մինչև ճանապարհի մշակման ավարտը՝ ճանապարհի ծածկույթի հետ անվադողի կցման լավացումը [1,3]:



Նկ.2. 1.15 «Մայթաքուն ճանապարհ» նշան

Ճանապարհի լայնքով անհավասարաչափ կցման դեպքում (ԱՏՄ-ի ձախ և աջ կողմի անիվների տակ) կտրուկ մանևրի և արգելակման ժամանակ ԱՏՄ-ի ապակայունացումն անխուսափելի է: ԱՏՄ-ի ուղղագիծ երթևեկության ժամանակ ապակայունացումը կարող է տեղի ունենալ նաև առանց արգելակման, սառցակալված անհարթությունների պատճառով: Ձմռանը ճանապարհների հանդիպակաց հոսքերը միմյանցից բաժանող երկայնական առանցքի շրջանում հաճախակի առաջանում են ձյան կամ մերկասառույցի շերտեր, որոնք վազանցի դեպքում մեծ վտանգ են ներկայացնում:

Ճանապարհային նշանները վնասվելու դեպքում չեն հասցվում փոխարինվել և չեն վերականգնվում 3 օրվա ընթացքում, իսկ առավելության նշանները՝ մեկ օրվա ընթացքում: Երբեմն տեղադրված են լինում նշաններ, որոնք պարզապես ոչ պիտանի են և վարորդներին թյուրիմացության մեջ են գցում, իսկ որոշ դեպքերում էլ նշանների տեղադրման և հսկման փաստաթղթերը բացակայում են: Արդեն, որպես կանոն, բավարար են համարվում ՃԵԿ-ի 2.4 «Զիջեք ճանապարհը» նշանի տեղադրումը, և հատվող խաչմերուկներում չեն տեղադրվում 2.1 «Գլխավոր ճանապարհ», 2.3.1 «Հատում երկրորդական ճանապարհի հետ» և 2.3.2, 2.3.3 «Երկրորդական ճանապարհի հարում» առավելության նշանները (նկ.3): 50 մ-ից պակաս տեսանելիության պայմաններում հարկ չի համարվում տեղադրել 1.6 «Հավասարազոր ճանապարհների հատում» նախազգուշացնող նշանը (նկ.3) [1,3]:



Նկ.3. ա. 2.4 «Զիջեք ճանապարհը» նշան, բ. 2.1 «Գլխավոր ճանապարհ» նշան, գ. 2.3.1 «Հատում երկրորդական ճանապարհի հետ» նշան, դ., ե. 2.3.2, 2.3.3 «Երկրորդական ճանապարհի հարում» առավելության նշաններ զ. 1.6 «Հավասարազոր ճանապարհների հատում» նախազգուշացնող նշան

Որոշ դեպքերում տարբեր պատճառներով լուսացույցերը շարքից դուրս են գալիս: Դրանց վերականգնման ժամկետները չեն պահպանվում: Վարորդն անսարք լուսացույցի դեպքում լայն գլխավոր ճանապարհի հատումը ստիպված է լինում կատարել երկու փուլով՝ ընթացքը երթևեկելի մասի մեջ տեղում դանդաղեցնելով, որի պատճառով հաճախակի ստեղծվում են բախումային իրավիճակներ:

Հաճախ ՃՏՊ-ներ տեղի են ունենում ճանապարհների նորոգման և սպասարկման տեղամասերում: Վտանգավոր իրավիճակներ ստեղծվում են այդ աշխատանքների անփույթ կերպով կազմակերպման և տեխնիկայի

անվտանգության կանոնների խախտման դեպքերում [1,3], մասնավորապես՝ շատ դեպքերում չեն տեղադրում կամ վատ տեսանելի է լինում 1.25 «Ճանապարհային աշխատանքներ» նախազգուշացնող նշանը (նկ.4):



Նկ.4. 1.25 «Ճանապարհային աշխատանքներ» նշան

Այսպիսով՝ վերը նշված միջոցառումների իրականացումը, մասնավորապես՝ ճանապարհային նշանների և լուսացույցերի ժամանակին սպասարկումը, ճիշտ վայրերում տեղադրումը և ճանապարհների ծածկույթի անհրաժեշտ որակի ապահովումը թույլ կտա որոշակի չափով խուսափել ՃՏՊ-ներից:

Առաջարկվում է նաև ճանապարհների նորոգման և սպասարկման տեղամասերում այդ աշխատանքների սպասարկումն իրականացնող՝ ճանապարհի երթևեկելի մասում գտնվող ավտոմեքենաների հետին մասում տեղադրել 1.25 «Ճանապարհային աշխատանքներ» նշանի (նկ.4) մեծացված տարբերակը՝ այն հեռվից առավել լավ տեսանելի լինելու նպատակով:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ նմանատիվ ՃՏՊ-ներով ավտոտեխնիկական փորձաքննությունների կատարման ընթացքում իրականացվող հետազոտությունների արդյունքների հիման վրա, երբ պարզ է դառնում, որ տվյալ ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացումը պայմանավորված է եղել ճանապարհային երթևեկության ոչ ճիշտ կազմակերպմամբ կամ ճանապարհային պայմանների՝ ճանապարհի ծածկույթի ոչ բարվոք վիճակով և ճանապարհային նշանների ոչ ճիշտ տեղադրման հետևանքով (հետագայում՝ «ճանապարհային պայմաններ»), անհրաժեշտ է, որպեսզի ավտոտեխնիկական փորձագիտական հետազոտությունների կատարման արդյունքում փորձագետների կողմից համապատասխան հետևությունների կատարումից հետո նաև ներկայացվեն կանխարգելիչ առաջարկություններ: Խոսքը վերաբերում է փորձագետների կողմից արվող այնպիսի «կանխարգելիչ առաջարկություններին», որոնցով կարող են բացահայտվել տվյալ ճա-

նապարհատրանսպորտային պատահարի առաջացումը պայմանավորող «ճանապարհային պայմանների» պատճառները: Այս պարագայում, միաժամանակ առաջարկություն կարող է ներկայացվել տվյալ փորձաքննությունը նախաձեռնող մարմնին, որպեսզի վերջինիս կողմից տեղեկացվեն համապատասխան պատկան կազմակերպությունները փորձաքննությամբ հայտնաբերված, ի հայտ եկած թերությունները՝ «ճանապարհային պայմանները» վերացնելու ուղղությամբ նմանատիպ պատահարներից խուսափելու նպատակով անհետաձգելի կերպով կատարվելիք համապատասխան միջոցառումների վերաբերյալ: Նաև նշվածին պետք է հավելել այն, որ նմանատիպ ճանապարհային պայմաններով պայմանավորված ՃՏՊ-ների առաջացման պատճառների և իրավիճակների քննության ժամանակ համապատասխան մասնագետների և փորձագետների ներգրավվածությունը՝ ավտոմոբիլիզացման բացասական կողմերի և ճանապարհային երթևեկության բնագավառում անվտանգության ապահովման ընդհանուր խնդիրների բացահայտման նպատակով անհրաժեշտ է:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ Կառավարության 2007 թվականի հունիսի 28 N 955-Ն որոշումը «ՀՀ ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին»:
2. Бабков В. Ф. Дорожные условия и безопасность движения: Учебное пособие для вузов. – М.: Транспорт, 1982. – 288 с
3. Использование специальных познаний в расследовании дорожно-транспортных происшествий. А.М.Кривицкий, Ю.М.Шапоров, В.В.Фальковский и др. – Изд-во «Харвест», 2004.–128 с.
4. Тишин Б.М. Приминение коэффициента сцепления в практике эксперта-автотехника.

ИССЛЕДОВАНИЕ ВЛИЯНИЯ ДОРОЖНЫХ УСЛОВИЙ НА ДОРОЖНО-ТРАНСПОРТНЫЕ ПРОИСШЕСТВИЯ

Агаян Сарик Рубенович

*Инспектор отдела планирования,
учета и анализа Дорожной полиции
Полиции РА, капитан полиции,
кандидат технических наук, доцент*

Агаян Рубен Саркисович

*эксперт отдела экспертиз
автотехнических экспертиз
"Национального бюро экспертиз"
Национальной академии наук
Республики Армения*

В данной статье рассматриваются факторы, действующие на возникновение дорожно-транспортных происшествий (ДТП): наличие выбоин на проезжей части, отсутствие необходимых дорожных знаков, выход из строя светофоров, неправильный поперечный уклон проезжей части на поворотах и др., а так же анализ их действие. Рекомендуются осуществить ряд мероприятий по устранению указанных факторов, что приведет в дальнейшем к предотвращению дорожно-транспортных происшествий, вызванных вышеперечисленными факторами в связи с дорожными условиями.

Ключевые слова: дорожно-транспортное происшествие, автотранспортное средство, дорожное условие, скорость, колесо автомобиля.

INVESTIGATING THE INFLUENCE OF THE ROAD CONDITIONS ON TRAFFIC ACCIDENTS

Aghayan Sarik

*PhD at Technical Sciences, Associate
Professor, Inspector of the Department
of Planning, Registration and Examination
of the Road Police of the RA Police,
Police Captain*

Aghayan Ruben

*Expert of Commodity Expertise
Department "National Bureau of
Expertise" SNPO of the National
Academy of Sciences of the Republic
of Armenia*

This article discusses the factors affecting the occurrence of traffic accidents (RTA): the presence of potholes on the roadway, the absence of the necessary road

signs, the failure of traffic lights, the wrong cross-slope of the roadway when cornering, etc., as well as an analysis of their effect. It is recommended to take a number of measures to eliminate these factors, which will lead in the future to the prevention of traffic accidents caused by the above factors in connection with road conditions.

Key words: traffic accident, motor vehicle, road condition, speed, car wheel.

Հոդվածը գրախոսվել է՝ 10.05.2023թ.:

Ներկայացվել է տպագրության՝ 15.05.2023թ.:

ԱՆՉԱՓԱՀԱՍԻՆ ՀԱՆՑԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ ՀԱԿԵԼՈՒ ԿԱՍ ԴՐԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թումասյան Դավիթ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի քրեական

իրավունքի և քրեաբանության ամբիոնի

դասախոս, ի.գ.թ., դոցենտ

Ներածություն

2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական նոր օրենսգիրքն էական փոփոխություններ նախատեսեց նաև ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ 29-րդ գլխում: Փաստացի այդ գլուխը նորույթ չէր քրեական օրենսդրության համար, քանի որ համանման գլուխ նախատեսված էր նաև ՀՀ քրեական նախկին օրենսգրքում, սակայն «սահմանադրական կարգավորումները պարտավորեցնում էին նախատեսել գործուն մեխանիզմներ ընտանիքի և երեխայի անվտանգությունն ու անձեռնմխելիությունը հատուկ պաշտպանելու համար, ներառյալ՝ քրեաիրավական ներգործության միջոցներով: Այդ իսկ պատճառով ՀՀ քրեական օրենսգիրքը կրկին առանձնացրել է «Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ 29-րդ գլուխը, որտեղ ներառված են 14 հոդվածներ¹:

ՀՀ-ում վերջին տարիներին առհասարակ ավելացել է երեխաների դեմ կատարվող հանցագործությունների նկատմամբ ուշադրությունը, այդ թվում՝ նոր տեսակի հանցագործությունների, ինչպիսիք են՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացումը խոչընդոտելը, երեխայի թրաֆիքինգը և այլն, առավել ևս, ավելացել են թե՛ երեխաների դեմ կատարվող հանցագործությունները, թե՛ դրանց մասին դիմելիությունը, թե՛ դրանց բացահայտման դեպքերը: Այսպես, 2017թ. ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի վարույթում քննվել է երեխաների նկատմամբ կա-

¹ Դ.Ա. Թումասյան, Կ.Հ. Հովհաննիսյան. ՀՀ քրեական իրավունք (Հատուկ մաս)». ուսումնական ձեռնարկ /ՀՀ ոստիկանության կրթահամալիր. Երևան, Լիմուշ, 2022, էջ 360:

տարված հանցագործությունների վերաբերյալ 265 քրեական գործ², 2018թ. ընթացքում՝ 317 քրեական գործ³, 2019թ. ընթացքում՝ 360 քրեական գործ⁴, 2020թ. ընթացքում՝ 328 քրեական գործ⁵, 2021թ. ընթացքում՝ 340 քրեական գործ⁶, իսկ 2022թ.՝ արդեն 545 քրեական գործ⁷:

Այս վիճակագրությունը չի արտացոլում երեխայի դեմ ուղղված հանցագործությունների պատկերը, քանի որ այդ հանցագործություններն ունեն բարձր լատենտայնություն:

Երեխաների դեմ ուղղված հանցագործությունները նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի ոչ միայն վերը նշված 29-րդ գլխում, այլ նաև այլ գլուխներում՝ ելնելով հանցագործության անմիջական հիմնական օբյեկտից:

Արարքի ընդհանուր բնութագիրը

«Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ 29-րդ գլխում նախատեսված առաջին հոդվածը 238-րդ հոդվածն է, որը քրեական պատասխանատվություն է սահմանում անչափահասին հանցանքի կատարմանը հակելու կամ դրան մասնակից դարձնելու համար: Այս հանցագործությունը յուրահաստուկ է նրանով, որ հանցագործությունից տուժած երեխան ինքնին դրսևորում է իրավախախտ վարքագիծ, ինչով և պայմանավորվում է քննարկվող հանցագործության նկատմամբ վերաբերմունքի երկակիությունը:

Այդ հանցագործության անմիջական օբյեկտն անչափահասի պատշաճ զարգացումն ու նրա անձի նորմալ ձևավորումն ապահովող հասարակա-

²<https://investigative.am/news/view/erexaneri-nkatmamb-katarvac-hancagorcutyunner.html> (վերջին անգամ դիտվել է 27.05.2023թ.-ին)

³<https://investigative.am/news/view/%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%B6%D5%AF%D5%A1%D5%BF%D5%B4%D5%A1%D5%B4%D5%A2-%D5%A2%D5%BC%D5%B6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.html> (վերջին անգամ դիտվել է 27.05.2023թ.-ին)

⁴https://www.investigative.am/news/view/erexaneri-nkatmamb-hancagorcutyunner_2019.html (վերջին անգամ դիտվել է 27.05.2023թ.-ին)

⁵ <https://www.investigative.am/news/view/2020-erexaneri-nkatmamb-hancagorcutyun0.html> (վերջին անգամ դիտվել է 27.05.2023թ.-ին)

⁶https://www.investigative.am/news/view/hancagorcutyunner-anchapahasner-vichakagrutyun_2021.html (վերջին անգամ դիտվել է 27.05.2023թ.-ին)

⁷<https://investigative.am/news/view/2022t-anchapahasneri-nkatmamb-katarvac-hancagorcutyunneri-vichakagrutyun.html> (վերջին անգամ դիտվել է 27.05.2023թ.-ին)

կան հարաբերություններն են, իսկ փաստացի հանցանք կատարելու դեպքում՝ նաև քրեական օրենքով պաշտպանվող համապատասխան հասարակական այլ հարաբերությունները:

Հանցագործության տուժած կարող է հանդիսանալ ինչպես կոնկրետ հանցագործության համար ՀՀ քր. օր-ով քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասը՝ 14-18 կամ 16-18 տարեկան՝ ելնելով կոնկրետ հանցագործությունից, որի մասնակից է նա դառնում, այնպես նաև ցանկացած անչափահասը, ում նկատմամբ իրականացվում են հոդվածի դիսպոզիցիայում նշված համապատասխան գործողությունները (հանցագործության հմտություններ սովորեցնելը, անչափահասի մեջ հանցավոր գաղափարախոսություն, հանցավոր ենթամշակույթի ավանդույթներ, հանցավոր վարքագծի կանոններ կամ սովորույթներ սերմանելը կամ հանցանքներ կատարելու քարոզը):

Հանցագործությունից տուժած անչափահասի տարիքային առանձնահատկությունները քննարկելու համար պետք է տարանջատել քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը կազմող երկրնորելի արարքները: Այսպես, օբյեկտիվ կողմից անչափահասին հանցանքի կատարմանը հակելը կամ դրան մասնակից դարձնելը կարող է իրականացվել՝

- 1) անչափահասին հանցագործության հմտություններ սովորեցնելով,
- 2) անչափահասի մեջ հանցավոր գաղափարախոսություն, հանցավոր ենթամշակույթի ավանդույթներ, հանցավոր վարքագծի կանոններ կամ սովորույթներ սերմանելով,
- 3) հանցանքներ կատարելու քարոզով,
- 4) անչափահասի նախաձեռնությամբ իր կամ այլ անձի կողմից կատարվող հանցանքին մասնակից դարձնելով:

Առաջին երեք արարքներն ունեն ընդհանրական բնույթ և կարող են իրականացվել ցանկացած տարիքի անչափահասի նկատմամբ, եթե այդ անչափահասը գիտակցում է այն հմտությունները, որոնց նրան սովորեցնում են, հանցավոր ենթամշակույթի այն ավանդույթները, հանցավոր վարքագծի այն կանոնները կամ սովորույթները, որոնք սերմանվում են անչափահասին, այն քարոզը, որի արդյունքում անչափահասը կատարում է հանցագործություն, կամ որի արդյունքում կարող է առաջանալ այդ ցանկությունը:

Սակայն թվարկված 4-րդ արարքն իրականացնելիս պետք է գիտակցել, որ այն կատարվում է կոնկրետ հանցանքի համար քրեական պատասխանատվության հասած անչափահասի նկատմամբ: Անչափահասի նախաձեռնությամբ իր կամ այլ անձի կողմից կատարվող հանցանքին մասնակից դարձնելն առնվազն ենթադրում է, որ անչափահասը կատարելու է հանցագործություն կամ լինելու է այդ հանցագործության հանցակիցը: ՀՀ քրեական օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Սույն օրենսգրքի իմաստով՝ հանցանք կատարած անչափահաս է համարվում հանցագործության պահին 14 տարին լրացած, սակայն 18 տարին չլրացած անձը»: Հետևաբար, քննարկվող հանցագործության երկրնորելի այս արարքի համար անչափահասը պետք է լինի 14-18 տարեկան:

Առաջին հայացքից հստակ ձևակերպումն առաջացնում է որոշակի թյուրընկալումներ, երբ քննարկման առարկա է դառնում հանցագործության սուբյեկտի տարիքը: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է մեղսունակ ֆիզիկական անձը, որի 16 տարին լրացած է եղել հանցանքը կատարելու պահին, ինչպես նաև՝ իրավաբանական անձը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն անձը, որի 14 տարին լրացած է եղել հանցանքը կատարելու պահին, ենթակա է քրեական պատասխանատվության սույն օրենսգրքի 155-161-րդ հոդվածներով, 166-170-րդ հոդվածներով, 191-րդ հոդվածով, 198-րդ հոդվածով, 252-րդ հոդվածով, 253-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով, 254-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով, 258-րդ հոդվածով, 264-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով, 297-րդ հոդվածով, 338-րդ հոդվածով, 339-րդ հոդվածով, 397-րդ հոդվածով կամ 398-րդ հոդվածով նախատեսված հանցանքների կատարման համար:

Վերը շարադրված դրույթներից ակնհայտ է, որ 14-16 տարեկան անչափահասները չեն ենթարկվելու քրեական պատասխանատվության, եթե նրանք կատարել են այնպիսի հանցագործություն, որը նախատեսված չէ ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում: Ավելին, այդ դեպքում մենք գործ ենք ունենալու հանցանքի միջնորդավորված կատարման հետ, երբ հանցանքը կատարվում է այնպիսի անձի օգտագործելու միջոցով, որն օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության կամ ենթակա չէ քրեական պատասխանատվության տվյալ հանցագործության համար որպես կատարող:

Ասվածից հետևում է, որ որոշ դեպքերում անչափահասին հանցանքի մասնակից դարձնելը կարող է որակվել ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածով, սակայն դիտարկվելու է որպես միջնորդավորված կատարում: Նման մոտեցումն անթույլատրելի է, և իրավական որոշակիությունից ելնելով՝ անհրաժեշտ է հստակեցնել այն տարիքը, որից անչափահասին հանցանքի մասնակից դարձնելը կհանդիսանա քննարկվող հանցագործության դրսևորման ձև:

Քննարկվող հանցագործության մյուս արարքները դժվար չէ մեկնաբանել: Այսպես, անչափահասին հանցագործության հմտություններ սովորեցնելը հանցագործության կատարման, դրա եղանակների ու մեթոդների, հանցագործությունը թաքցնելու կամ քողարկելու, ինչպես նաև հանցագործությանն առնչվող այլ հմտությունների մասին տեղեկություններ հայտնելն է, դրանց իրականացումը ցուցադրելը, գործնական հմտությունների ձևավորումը և տեղեկատվություն փոխանցելու այլ ձևերը (օրինակ՝ գրավոր տեղեկություններ կամ գրառումներ փոխանցելը):

Անչափահասի մեջ հանցավոր գաղափարախոսություն, հանցավոր ենթամշակույթի ավանդույթներ, հանցավոր վարքագծի կանոններ կամ սովորույթներ սերմանելը գործունեություն է, որն ուղղված է անչափահասի այնպիսի հատկանիշների ձևավորմանը կամ ամրապնդմանը, որոնք նրան կհանգեցնեն հանցավոր գաղափարախոսության, հանցավոր ենթամշակույթի ավանդույթների, հանցավոր վարքագծի կանոնների կամ սովորույթների ընդունմանը կամ նրան կդարձնեն այդ հանցավոր գաղափարախոսությունը, հանցավոր ենթամշակույթի ավանդույթները, հանցավոր վարքագծի կանոնները կամ սովորույթները կրող:

Հանցանքներ կատարելու քարոզը հանցագործություն կատարելը գովազդելն է, դրանց կատարումը քաջալերելը կամ այլ եղանակով խրախուսելն է, որոնք անչափահասին մղելու են հանցանք կատարելու վճռականության: Այս եղանակն իրականացնելու առավել հաճախ հանդիպող հատկանիշ է նյութական շահագրգռումը և, մասնավորապես, սոցիալապես անապահով ընտանիքի անչափահասներին այնպիսի համեմատություններ ներկայացնելը, որոնք ցույց կտան նրա ընտանիքի անկարողությունը և հանցանքների արդյունքում անչափահասի նյութական ու այլ բոլոր խնդիրների լուծման հնարավորությունը:

Անչափահասի նախաձեռնությամբ իր կամ այլ անձի կողմից կատարվող հանցանքին մասնակից դարձնելը կոնկրետ հանցագործության մասնակցությունն է: Անչափահասը կարող է լինել կատարող, կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող, և որևէ նշանակություն չունի այն, թե ում նախաձեռնությամբ է կատարվում հանցանքը՝ անչափահասի՝, թե՞ այլ անձի: Այստեղ կարևոր է ճշտել անչափահասի՝ քրեական պատասխանատվության տարիքի հասած լինելու հանգամանքը, որի մասին նախորդիվ արդեն ներկայացվել է:

Հանցակազմը ձևական է՝ հանցագործությունն ավարտված է համարվում անչափահասին հանցանքի կատարմանը հակելու կամ դրան մասնակից դարձնելու պահից՝ անկախ անչափահասի կողմից տվյալ հանցանքը կատարելու հանգամանքից:

Սուբյեկտիվ կողմից հանցանքը բնութագրվում է բացառապես ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը պետք է գիտակցի հակվողի կամ մասնակից դարձվողի անչափահասության, իսկ առանձին դեպքերում՝ կոնկրետ տարիքի հասած լինելու հանգամանքը, և կատարված արարքը հանդիսանա իր նպատակը կամ նպատակին հասնելու միջոցը:

Հանցագործության սուբյեկտ կարող է հանդիսանալ 18 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:⁸

1. Արարքի համեմատական վերլուծությունը ՀՀ քրեական նոր և նախկին օրենսգրքերի համատեքստում

ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 165-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն էր նախատեսում անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու համար, և այդ հոդվածի օբյեկտիվ կողմից անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելը կարող է իրականացվել խոստումներ տալու, խաբեության կամ այլ եղանակով: Խոստումը չափահաս անձի պարտավորությունն է տրամադրել անչափահասին որոշակի բարիքներ կամ օգուտներ հանցագործության մեջ մասնակցելու համար, օրինակ՝ պարգևել կամ տրամադրել որևէ ծառայություն նրան կամ նրա ընտանիքին, մարել պարտքը, օգնել լուծելու ցանկացած հարց կամ խնդիր, ապահովել հովանա-

⁸ Մանրամասն տես՝ **Դ.Ա. Թումայան, Կ.Հ. Հովհաննիսյան**. ՀՀ քրեական իրավունք (Հատուկ մաս)». ուսումնական ձեռնարկ /ՀՀ ոստիկանության կրթահամալիր. Երևան, Լիմուշ, 2022, էջեր 364-366:

վորչություն կամ պաշտպանություն և այլն:⁹ Խաբեությունը դիտավորությանամբ իրականությունը խեղաթուրելն է՝ կոնկրետ փաստերը ձևախեղելով, իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելով, իրական մտադրության մասին լռելով կամ այնպիսի տեղեկություն չհաղորդելով, որն անձը պարտավոր էր հաղորդել:

2010 թվականի դեկտեմբերի 23-ին ԵՄԴ/0086/01/10 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 165-րդ հոդվածին՝ նշելով, որ՝ «Անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ակտիվ գործողություններով, որոնք ուղղված են անչափահասի մոտ մեկ կամ մի քանի հանցագործություն կատարելու կամ դրա(նց) կատարմանը մասնակից լինելու ցանկություն առաջացնելուն: Այս հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը գիտակցում է, որ անչափահասին ներգրավում է հանցագործությանը և ցանկանում է դա: Վերոնշյալ ակտիվ գործողությունները կարող են դրսևորվել տարբեր եղանակներով: Մասնավորապես,

ա) խոստումներ տալով (օրինակ՝ վարձատրելու, նվերներ տալու, զվարճանքներով ապահովելու և այլն)։

բ) խաբեությամբ, երբ ներգրավողի քողարկված խնդրանքը կամ հանձնարարությունը կատարելով՝ անչափահասը հայտնվում է մոլորության մեջ և չի գիտակցում կատարվելիք արարքի հանցավոր բնույթը։

գ) այլ եղանակով, որը ենթադրում է բռնության հետ չկապված տարաբնույթ դիտավորյալ հոգեբանական ազդեցություն՝ ուղղված անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելուն, այդ թվում՝ նյութական վնաս պատճառելու, հասակակիցների կամ ընկերների ներկայությամբ նվաստացնելու և նման այլ սպառնալիքներ, համոզում, կաշառում, հանցագործության կատարման մասին անչափահասի հետ նպատակաուղղված զրույցների վարում, որոշակի անձանց նկատմամբ թշնամանքի, ատելության, նախանձի ձևավորում, դաժանության սերմանում, շահադիտական ձգտումների առաջացում, շողոքորթում և այլն: Վերը նշված գործողությունների նկատմամբ ներգրավողը պետք է դրսևորի ուղղակի դիտավորություն:

⁹ Уголовное право Российской Федерации. Особенная часть/ Под ред. Б. В. Здравомыслова. М., 1996, էջ 281:

Այսինքն՝ պետք է գիտակցի խոստումներ տալով, խաբեությամբ կամ այլ եղանակով անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանրային վտանգավորությունը և ցանկանում է վերը նշված որևէ միջոցով անչափահասին ներգրավել հանցանքի կատարմանը:

Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անչափահասին հանցանքի կատարմանը ներգրավելու հանցակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմի հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գործի կոնկրետ հանգամանքները, մասնավորապես՝ (ա) այն, թե ինչ նպատակներ է հետապնդում անձն անչափահասին հանցանքի կատարման մեջ ենթադրաբար ներգրավելով, (բ) ներգրավող չափահասի և ներգրավված անչափահասի անձի առանձնահատկությունները, (գ) ներգրավող չափահասի և ներգրավված անչափահասի փոխհարաբերությունների բնույթը, (դ) ներգրավող անձի կողմից անչափահասի նկատմամբ ակտիվ ֆիզիկական կամ հոգեկան ներգործության առկայությունը կամ բացակայությունը և այդ ներգործության կոնկրետ դրսևորումը, (ե) անչափահասի մոտ տվյալ հանցագործության կապակցությամբ սեփական շահի առկայությունը կամ բացակայությունը:»:

Ներկայացված նախադեպային որոշումը հիմք է դարձել կոնկրետ գործով անձի արարքում բացառել հանցակազմը, քանի որ ներգրավումը հանցանքի կատարման նախաձեռնողը եղել է անչափահասը, իսկ չափահասն ուղղակի դեմ չի եղել այդ նախաձեռնությանը և համատեղ հանցանքի կատարմանը:

ՀՀ քրեական նոր օրենսգիրքը վերացրեց այդ բացը՝ սահմանելով, որ անկախ այն հանգամանքից, թե ում նախաձեռնությամբ է անչափահասը մասնակցում հանցանքի կատարմանը, արարքը պետք է լինի քրեորեն պատժելի:

2. Արարքի տարանջատումը երեխայի թրաֆիքինգից կամ շահագործումից

ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է, որ շահագործում են համարվում այլ մարդու՝ պոռնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայություն մատուցելուն կամ հակաիրավական գործողություններ կատարելուն հարկադրելը, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առքը կամ վաճառքը, բջիջը, օրգանը, հյուսվածքը կամ կենսաբանա-

կան նյութերը կամ հեղուկները վերցնելը: Որպես շահագործման առանձին ձև՝ նախատեսվել է հակախրավական գործողություններ կատարելուն հարկադրելը, ինչը ենթադրում է նաև հանցանքի կատարման հարկադրում: Հետևաբար, եթե հանցանքի կատարմանը ներգրավված անչափահասը դա իրականացնում է հարկադրանքի ներքո՝ շահագործման վիճակի մեջ գտնվելով, ապա արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ հոդվածով (երեխայի կամ անօգնական վիճակում գտնվողի թրաֆիքինգ կամ շահագործում):

Քրեական օրենսդրությունում նման լրացումը պայմանավորված է նրանով, որ Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին ԱՄԿ կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն, «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը» եզրույթն ընդգրկում է՝

ա) ստրկության բոլոր ձևերը կամ ստրկությանը համանման աշխատանքը, ինչպիսիք են երեխաների վաճառքը և առևտուրը, պարտքային ստրկացումը կամ ճորտային կախվածությունը, ինչպես նաև հարկադիր կամ պարտադիր աշխատանքը, այդ թվում՝ երեխաների պարտադիր կամ հարկադիր հավաքագրումը զինված ընդհարումներում օգտագործելու համար,

բ) երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը մարմնավաճառությամբ զբաղվելու, պոռնոգրաֆիկ արտադրանքի արտադրության կամ պոռնոգրաֆիկ ներկայացումների համար,

գ) երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը հակախրավական գործունեությամբ զբաղվելու, մասնավորապես՝ թմրանյութերի արտադրման և վաճառքի համար, ինչպես դրանք սահմանված են համապատասխան միջազգային պայմանագրերում,

դ) աշխատանքը, որն իր բնույթով կամ իր կատարման պայմաններով կարող է վնասել երեխաների առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը:

Քանի որ այստեղ նշված է երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը ցանկացած հակախրավական գործունեության մեջ, իսկ հանցանքի հակախրավական լինելն անհերքելի է, օրենսդիրը 2021թ. նախատեսեց շահագործման դրսևորման նոր ձև, առավել ևս, որ այն նաև տարածում է գտել պրակտիկայում, և անչափահասներին կարող են հարկադրել կատարել գողություն, տարածել թմրամիջոցներ կամ այլ արգելված նյութեր ու

առարկաներ: Հետևաբար, եթե հիմնավորվի, որ երեխան հանցանքը կատարել է հարկադրանքի ներքո, ու դա հանդիսացել է շահագործման ձև, ապա իրավակիրառողը պետք է արարքը որակի որպես երեխայի թրաֆիքինգ կամ շահագործում: Այս դեպքում հանցագործությունների համակցությունը բացակայում է, քանի որ որակումն իրականացվում է լրացուցիչ օբյեկտով հանցագործությունների որակման կանոններով՝ հաշվի առնելով նաև այդ արարքների համար նախատեսված պատիժները և նրանց չափը: Այդ կանոնի համաձայն՝ եթե լրացուցիչ օբյեկտին վնաս պատճառող արարքը որպես ինքնուրույն հանցագործություն ավելի խիստ է պատժվում, քան հիմնական օբյեկտին վնաս պատճառող հանցագործությունը, ապա արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ: Տվյալ դեպքում թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկված երեխային ներգրավում են հանցանք կատարելու մեջ, և որպես հանցագործության հիմնական օբյեկտ հանդես են գալիս երեխայի ազատությունն ապահովող հասարակական հարաբերությունները, իսկ երեխայի պատշաճ զարգացումն ու նրա անձի նորմալ ֆիզիկական ու հոգեբանական ձևավորումն ապահովող հասարակական հարաբերությունները հանդիսանում են լրացուցիչ օբյեկտ:¹⁰

5. Արարքի ծանրացնող հանգամանքները

ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի ծանրացնող հանգամանք է համարվում 1-ին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) այն անձի կողմից, որի վրա դրված է երեխայի դաստիարակության, խնամքի կամ բուժման պարտականություն կամ

2) տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով:

ՀՀ քրեական օրենսգրքի 238-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի առանձնապես ծանրացնող հանգամանք է համարվում 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) անչափահասին հանցավոր կազմակերպության մեջ ներգրավելով կամ

¹⁰ Մանրամասն տես՝ **Տոնյան Ն.** Հնտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ /ուսումնական ձեռնարկ/: Երևան, 2014, էջեր 51-56:

2) անչափահասին ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելուն մասնակից դարձնելով:

Առաջին ծանրացնող հանգամանքի առնչությամբ պետք է պարզել այն անձանց շրջանակը, ովքեր ունեն երեխայի դաստիարակության, խնամքի կամ բուժման պարտականություն:

ՀՀ Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին:

«Հանրակրթության մասին» 2009թ. հուլիսի 10-ի ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 12-րդ և 13-րդ կետերի համաձայն՝ **մանկավարժական աշխատող է համարվում** սովորողների կողմից հանրակրթական ծրագրերի յուրացմանը նպաստող և (կամ) կրթության բովանդակության պահանջներն ապահովող ուսումնական հաստատության, ինչպես նաև մանկավարժահոգեբանական կենտրոնների աշխատակիցը, իսկ **ուսուցիչ է** ուսումնական հաստատությունում սովորողների կողմից առարկայական ծրագրերի յուրացումը դասապրոցեսի միջոցով ապահովող և այդ գործընթացի համար անմիջականորեն պատասխանատու մանկավարժական աշխատողը:

Այլ անձինք, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն, համարվում են, օրինակ, որդեգրողները, խնամակալներն ու հոգաբարձուները, խնամատար ծնողները և այլն:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի համաձայն՝ երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք: Ծնողների բացակայության, նրանց ծնողական իրավունքներից զրկված լինելու և ծնողական հոգատարությունից զրկվելու այլ դեպքերում ընտանիքում դաստիարակվելու երեխայի իրավունքն ապահովվում է խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 17-րդ գլխի նորմերով սահմանված կարգով: Խնամակալության կամ հոգաբարձության մարմինն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների դաստիարակության համար կատարում է հետևյալ գործողություններից մեկը՝

- հանձնում է ընտանիք (որդեգրման),

- հանձնում է խնամակալության (հոգաբարձության) կամ խնամատար ընտանիք,

- վերը նշված հնարավորության բացակայության դեպքում՝ հանձնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար բոլոր տիպի կազմակերպություններ (դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններ):

Խնամատար ծնողներ են համարվում քաղաքացիները (ամուսինները կամ առանձին անձինք), որոնք ցանկություն են հայտնել դաստիարակության վերցնել առանց ծնողական խնամքի մնացած երեխա (երեխաներ): Դաստիարակության համար խնամատար ընտանիք հանձնվող երեխան (երեխաները) համարվում է հոգազավակ, իսկ խնամատար ծնողներից և հոգազավակներից կազմված ընտանիքը՝ խնամատար ընտանիք:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» 1996թ. մարտի 4-ի ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը սահմանում է **բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների պարտականությունները և պատասխանատվությունը և 1-ին մասի 1-ին կետով ամրագրում պարտականություն՝ յուրաքանչյուր մարդու ցուցաբերել շտապ և անհետաձգելի բժշկական օգնություն՝ անկախ այդ օգնության դիմաց վարձատրությունը երաշխավորող հիմքերի և այլ հանգամանքների առկայությունից:**

Ելնելով վերոգրյալից՝ երևում է, որ այս ծանրացնող հանգամանքում օրենսդիրը, հաշվի առնելով այն, որ այն անձինք, ում վրա դրված է անչափահասի դաստիարակության, խնամքի կամ բուժման պարտականությունը, կրում են լրացուցիչ պատասխանատվություն երեխայի դաստիարակության, խնամքի կամ բուժման համար և ոչ միայն չեն կատարում իրենց վրա դրված պարտականությունը, այլ հակառակը՝ կատարում են նաև արարք, որը հակադրվում է իրենց պարտականությանը, դիտարկել է առավել մեծ վտանգ ու հատուկ ամրագրել քննարկվող հոդվածի 2-րդ մասում: Դա է պատճառը, որ վերը նշված անձանց նկատմամբ կարող է կիրառվել որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը՝ երեքից յոթ տարի ժամկետով:

Տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով հանցանքի կատարումը ենթադրում է սոցիալական կայքերում, հա-

մացանցում, բջջային հավելվածներում նմանատիպ գործողություններ կատարելը:

Տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելը վերաբերում է այն դեպքերին, երբ համացանցի միջոցով, տարբեր սոցիալական կայքերում, հեռախոսով, տարբեր այլ միջոցներով անչափահասներին սովորեցնում են հանցագործության հմտություններ, սերմանում են անչափահասի մեջ հանցավոր գաղափարախոսություն, հանցավոր ենթամշակույթի ավանդույթներ, հանցավոր վարքագծի կանոններ կամ սովորույթներ կամ քարոզում են հանցանքներ կատարելը, ինչպես նաև անչափահասի նախաձեռնությամբ իր կամ այլ անձի կողմից կատարվող հանցանքին մասնակից են դարձնում (խոսքը ոչ միայն համացանցում կատարվող հանցագործությունների մասին է, այլ նաև համացանցից դուրս կատարվող հանցագործությունների մասնակցության մասին է):

ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված, եթե կատարվել է մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար ստեղծված երեք կամ ավել անձից բաղկացած կայուն խմբի կամ խմբերի միավորման կողմից: Հանցանքը համարվում է հանցավոր կազմակերպության կողմից կատարված նաև այն դեպքում, երբ դա ստեղծած կամ ղեկավարող անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն անմիջականորեն կատարել է խմբի թեկուզ մեկ անդամը կամ խմբի առաջադրանքով՝ դրա անդամ չհանդիսացող անձը: Անչափահասին հանցավոր կազմակերպության մեջ ներգրավելն առավել ծանրացնող հանգամանք է համարվում՝ ելնելով այն փաստից, որ անչափահասը մասնակցելու է երեք կամ ավել անձից բաղկացած կայուն խմբի կամ խմբերի միավորմանը և մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելուն: Այսինքն՝ նրա մոտ առավելապես փորձելու են ձևավորել կայուն հանցավոր միտումներ ու պարբերաբար դարձնեն հանցանքների մասնակից:

Անչափահասին ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելուն մասնակից դարձնելը ենթադրում է, որ անչափահասը մասնակցելու է այնպիսի արարքի կատարմանը, որը պատժվում է ազատազրկմամբ 5-ից ավել ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ:

6. Եզրակացություն

Ամփոփելով անչափահասին հանցանքի կատարմանը հակելու կամ դրան մասնակից դարձնելու հանցակազմի ուսումնասիրությունը՝ պետք է նշել, որ օրենսդիրն ընդլայնել է այս հանցագործության դրսևորման ձևերը՝ հնարավորինս ամբողջական պաշտպանելով անչափահասների նորմալ ֆիզիկական և հոգեկան զարգացումը՝ ներառելով նաև ՀՀ քրեական նախկին օրենսգրքում չքրեականացված արարքներ, սակայն քննարկվող հանցակազմի իրավական որոշակիությունն ապահովելու և իրավակիրառ պրակտիկայում տարբերություններից խուսափելու համար անհրաժեշտ է քննարկվող հանցագործության դրսևորումներից մեկը շարադրել հետևյալ կերպ՝ «ինչպես նաև կոնկրետ հանցանքի համար քրեական պատասխանատվության տարիքի հասած անչափահասի նախաձեռնությամբ իր կամ այլ անձի կողմից կատարվող հանցանքին մասնակից դարձնելը»: Այս ձևակերպումը ոչ միայն հնարավորություն կընձեռի դատաքննչական պրակտիկայում բացառել հակասող մեկնաբանությունները և որոշումները, այլ նաև իրական հնարավորություն կընձեռի 14-16 տարեկան անչափահասների կողմից որոշ հանցանքների կատարման դեպքում քննարկվող հանցակազմը տարանջատել միջնորդավորված կատարումից:

Բանալի բառեր՝ անչափահաս, հանցագործություն, անչափահասին հանցանքի կատարմանը հակել, անչափահասին հանցանքի կատարմանը մասնակից դարձնել, անչափահասին հանցագործության ներգրավել, ՀՀ քրեական նոր օրենսգիրք:

УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА СПОСОБСТВОВАНИЯ НЕСОВЕРШЕННОЛЕТНЕМУ В СОВЕРШЕНИИ ПРЕСТУПЛЕНИЯ ИЛИ УЧАСТИЯ В НЕМ В СВЕТЕ НОВОГО УГОЛОВНОГО КОДЕКСА РА

Тумасян Давид Артёмович

*Преподаватель кафедры уголовного права и
криминологии Образовательного комплекса
МВД РА, к.ю.н., доцент*

В статье рассматривается уголовно-правовая характеристика способствования несовершеннолетнему в совершении преступления либо участия в нем, дается сравнительный анализ данного преступления в свете нового и старого Уголовных кодексов РА, анализируется прецедентное право по данному вопросу и раскрываются некоторые законодательные пробелы по анализируемому составу преступления. Статья подытоживается законодательным предложением, направленным на усовершенствование законодательного определения данного состава преступления.

Ключевые слова: несовершеннолетний, преступление, способствование несовершеннолетнему в совершении преступления, участие несовершеннолетнего в преступлении, вовлечение несовершеннолетнего в преступление, новый Уголовный кодекс РА.

CRIMINAL-LEGAL CHARACTERISTICS OF INCITING A JUVENILE TO COMMIT A CRIME OR PARTICIPATION IN IT IN THE LIGHT OF THE NEW RA CRIMINAL CODE

Tumasyan Davit

*Lecturer at the Department of Criminal Law and
Criminology of the Educational Complex of the
Ministry of Internal Affairs of the Republic of Armenia,
PhD in Law, Associate Professor*

The article discusses the criminal-legal characteristics of inciting a juvenile to commit a crime or participation in it, provides a comparative analysis of this crime in the light of the new and old RA Criminal Codes, analyzes the case law on this issue and reveals some legislative gaps according to the analyzed “corpus delicti”. The article is summarized by a legislative proposal aimed at improving the legislative definition of this crime.

Key words: juvenile, crime, inciting a juvenile to commit a crime, participation of a juvenile in a crime, involvement of a juvenile in a crime, the new RA Criminal Code.

Հոդվածը գրախոսվել է՝ 04.10.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 04.10.2023թ.:

«ԲԱՆՏԱՐԿՅԱԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Լազարյան Արփի

*ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի
ինստիտուտի հայցորդ, ՀՀ արդարադատության
նախարարության քրեական օրենսդրության,
քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի
քաղաքականության մշակման վարչության,
քրեական և քրեադատավարական օրենսդրության
մշակման բաժնի պետ, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի
ակադեմիայի քրեական իրավունքի և
քրեաբանության ամբիոնի դասախոս*

Համառոտագիր: Օրենսդրական ներկայիս զարգացումները և առկա իրավակարգավորումների փոփոխությունները միտված են պետության միջազգայնացմանը և իրավական դաշտում միջազգայնորեն ամրագրված՝ մարդու հիմնական իրավունքները սահմանող ակտերի համապատասխանելիության ապահովմանը: Հողվածում քննարկվել և վերլուծվել են միջազգային փաստաթղթերում, մասնավորապես՝ ՄԱԿ-ի՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններում (Նելսոն Մանդելայի կանոնները) օգտագործող «Բանտարկյալ» եզրույթը և ներկայիս իրավակարգավորումների համապատասխանելիությանը նշված հասկացությանը: Հեղինակի կողմից փորձ է արվել սահմանել «Բանտարկյալ» եզրույթի նեղ և լայն հասկացությունը և դրա համատեքստում վերլուծել ներպետական օրենսդրությամբ առկա իրավակարգավորումները:

Բանալի բառեր. ազատագրված, քրեակատարողական, դատավարական, կարգավիճակ:

Միջազգային իրավական ակտերը և դրանցով ամրագրված՝ մարդու հիմնական իրավունքների պաշտպանությանն ուղղված սկզբունքները համարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության մասը:

Վերջին տարիներին պետության միջազգայնացմանն ուղղված քայլերին զուգահեռ՝ ՀՀ օրենսդրության մեջ առավել ընդգծվեցին միջազգային հիմնական սկզբունքների համապատասխանելիությունը և դրանով պայմանավորված՝ տեղի ունեցան մի շարք օրենսդրական փոփոխություններ:

Մասնավորապես՝ 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտան Քրեական, Քրեական դատավարության և Քրեակատարողական նոր օրենսգրքերը:

Նոր ընդունված Քրեակատարողական օրենսգրքի 1-ին հոդվածն ամրագրում է. «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրքը հիմնվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի, միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի վրա, որոնք սահմանում են պատիժների կատարման կարգն ու պայմանները, դատապարտյալների հետ վարվեցողության կանոնները, դատապարտյալների իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև դատապարտյալների նկատմամբ կիրառվող քրեահրավական ներգործության այլ միջոցների կիրառման կարգն ու պայմանները»:

Հայաստանի միջազգայնացման կարևոր քայլերից էր Միավորված ազգերի կազմակերպությանը (այսուհետ նաև՝ ՄԱԿ) անդամակցությունը: 1992 թվականի մարտի 2-ին դառնալով ՄԱԿ-ի անդամ և ընդունելով համամարդկային արժեքները՝ մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության հաստատման սկզբունքները՝ որպես պետական գաղափարախոսության անբաժանելի մաս, Հայաստանն ակտիվորեն մասնակցում է ՄԱԿ-ի շրջանակներում ծավալվող աշխատանքներին և համագործակցում կազմակերպության բազմաթիվ կառույցների և օղակների հետ¹:

ՄԱԿ-ի շրջանակում ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որոնք երաշխավորում են անձի հիմնական իրավունքները, դրանց մի մասը վերաբերում են նաև ազատագրված անձանց: Ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված՝ ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված կարևորագույն փաստաթղթերից է «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները», որը հայտնի է նաև «Նեկսոն Սանդեյլայի կանոններ» անվանմամբ:

¹ <https://www.mfa.am/hy/international-organisations/12> (19.06.2023թ.)

ՄԱԿ-ի՝ «Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները» (Նելսոն Մանդելայի կանոնները, այսուհետ նաև՝ Կանոններ) ընդունվել են 1955 թվականին և վերանայվել 2015 թվականի դեկտեմբերին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից: Կանոններով սահմանվել են բանտերի լավ կառավարման նվազագույն չափանիշները, այդ թվում և «բանտարկյալների» իրավունքներն ապահովելու չափանիշները:

Կանոնները վերանայվել են ութ բովանդակային մասերում՝ արտացոլելու այն չափանիշները, որոնք հայտնվել են ուղղիչ հաստատությունների գործունեության տրամաբանության մեջ, և մարդու իրավունքներում՝ 1955 թվականից ի վեր²:

Անդրադառնալով նշված կանոններին՝ հարկ է նկատել, որ դրանք բաղկացած են 5 գլուխներից և կարգավորում են ազատությունից զրկված անձանց տարատեսակ իրավունքներ, մասնավարապես՝ կանոններում առկա են կարգավորումներ վերջիններիս պահման պայմանների, բժշկական օգնություն ստանալու, կրթության, կրոնական իրավունքների վերաբերյալ: Սակայն այդ իրավունքների մանրամասն վերլուծությանն անդրադառնալուց առաջ հարկ է վերլուծել, թե անձանց ո՞ր շրջանակի նկատմամբ են այս կանոնները կիրառելի:

Այսպես, Կանոնների 1-ին մասը վերաբերում է հիմնարկների ընդհանուր ղեկավարմանը և կիրառելի է բանտարկյալների բոլոր կատեգորիաների նկատմամբ՝ անկախ այն բանից՝ վերջիններս ձերբակալված են քրեական, թե՞ քաղաքական գործով, կամ գտնվում են միայն հետաքննության տակ կամ էլ դատապարտված են՝ ներառյալ այն «բանտարկյալները», ովքեր դատավորների նշանակած «անվտանգության միջոցների» կամ ուղղիչ միջոցների կրող են:

Ինչպես նկատում ենք, թե՛ Կանոնների վերնագրում, թե՛ բովանդակության մեջ խոսվում է «բանտարկյալ» եզրույթի մասին, սակայն ներպետական իրավական համակարգում «բանտարկյալ» հասկացությունը ներկայումս առհասարակ բացակայում է:

Հարկ է նկատի ունենալ, որ 1971 թվականի՝ Հայաստանի Հանրապետության ուղղիչ աշխատանքային օրենսգրքի «Բանտեր» վերտառությամբ 5-

²http://www.csi.am/sites/default/files/library/PRI_NMR-Short-Guide_Armenian.pdf(ՄԱԿ-ի՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ վերանայված կանոններ (Նելսոն Մանդելայի կանոններ) 19.06.2023թ.)

րդ գլխում նշված էր, որ բանտերում պատիժը կրում են՝ բանտարկության ձևով ազատագրվման դատապարտված առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստները, առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարած՝ տասնութ տարին լրացած անձինք, այլ ծանր հանցագործություններ կատարած տասնութ տարին լրացած անձինք, որոնք դրանց համար ազատագրվման են դատապարտվել հինգ տարուց ավել ժամանակով: (...):

Թույլատրվում է ժամանակավորապես բանտում (քննչական մեկուսարանում) պահել՝ այն անձանց, ովքեր ազատագրվման են դատապարտվել ուղղիչ աշխատանքային կամ դաստիարակչական աշխատանքային գաղութում, բայց թողնվել են բանտում (քննչական մեկուսարանում) կամ այնտեղ տեղափոխվել սույն օրենսգրքի 15-րդ և 20-րդ հոդվածներին համապատասխան. տասն օրից ոչ ավելի ժամանակով այն դատապարտյալներին, ովքեր ազատագրվման մեկ վայրից տեղափոխվում են մեկ ուրիշ վայր, ինչպես նաև արքայի դատապարտվածներին, որոնք պահակախմբի հսկողությամբ ուղարկվում են պատիժը կրելու վայրը:

Հեղինակի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում չհաջողվեց ներպետական տեսական գրականության մեջ գտնել «բանտարկյալ» եզրույթի որևէ բացատրություն, իսկ ահա օտարազգի մի շարք գիտնականներ իրենց աշխատանքներում մանրամասն անդրադարձել են նշած հասկացությանը: Մասնավորապես՝ Դ.Վ. Ուսիկը, անդրադառնալով «բանտարկյալ» հասկացությանը, նշում է. «ՄՄԿ-ի որոշ փաստաթղթերում տրված բացատրությունների համաձայն՝ «բանտարկյալ» եզրույթը նշանակում է ցանկացած անձ, ով զրկված է անձնական ազատությունից՝ հանցանք կատարելու համար դատապարտվելու հետևանքով: Այսպիսով՝ «բանտարկյալ» զերույթը համարժեք է օրենսդրությամբ ամրագրված «ազատագրվման դատապարտված» եզրույթին»³:

Գ. Յու. Ֆեդոսենան ավելի լայն իմաստ է տալիս «բանտարկյալ» հասկացությանը: Նա գրում է, որ միջազգային փաստաթղթերում «բանտարկյալ» հասկացությունն օգտագործվում է ինչպես ազատագրվման ձևով պատիժը

³ Տե՛ս՝ **Усик Д. В.** Международно-правовые стандарты по обращению с осужденными и проблемы их отражения в законодательстве об исполнении наказания в виде лишения свободы. Дис. ... канд. юрид. наук. М., 1993, էջ 4:

կրող (այսինքն՝ դատապարտված), այնպես էլ՝ ձերբակալված կամ նախնական կալանքի տակ գտնվող անձանց դեպքում:⁴

Վերը նշված մեկնաբանությունների լույսի ներքո ուսումնասիրելով սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթուղթը՝ Կանոնները, ակնհայտ է, որ դրանում մի առանձին գլուխ նվիրված է տարբեր կատեգորիայի, այսինքն՝ տարբեր դատավարական կարգավիճակ ունեցող անձանց:

Ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ «բանտարկյալ» համարվող անձանց շրջանակը, համաձայն կանոնների, ավելի լայն է: Դա է վկայում անգամ հիշյալ միջազգային իրավական ակտի կառուցվածքը: Այսպիսով՝ «Ա» բաժինը վերաբերում է դատապարտյալներին, «Բ» բաժինը նվիրված է հոգեկան հիվանդներին և մտավոր խնդիրներ ունեցող «բանտարկյալներին», «Գ» բաժինը՝ կալանավորված կամ դատավարության սպասող անձանց, «Դ» բաժինը՝ քաղաքացիական գործերով «բանտարկյալներին», «Ե» գլուխը վերաբերում է «առանց մեղադրանք ներկայացնելու բանտում տեղավորված կամ կալանավորված անձանց»:⁵

Քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածը, որով ամրագրված են օրենսգրքում օգտագործող հիմնական հասկացությունները, անդրադառնալով անձի դատավարական կարգավիճակին, նշում է, որ մեղադրյալ է այն անձը, որի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, և որի նկատմամբ միաժամանակ առկա չէ օրինական ուժի մեջ մտած քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կամ մեղադրական, կամ արդարացման դատավճիռ, արդարացված մեղադրյալ է այն մեղադրյալը, որի նկատմամբ առկա է արդարացման վերդիկտ, իսկ դատապարտված մեղադրյալն այն մեղադրյալն է, որի նկատմամբ առկա է մեղադրական վերդիկտ:

Այսպիսով, նոր քրեական դատավարության օրենսգիրքը, ի տարբերություն նախկին քրեական դատավարության օրենսգրքի, որը որոշ չափով անձի դատավարական կարգավիճակը կապում էր վերջինիս ազատության իրավունքի սահամանափակման հետ (օրինակ՝ կասկածյալ է այն անձը, որը ձերբակալվել է հանցանք կատարելու մեջ կասկածվելու պատճառով),

⁴ Տե՛ս՝ **Федосеева Г. Ю.** Международно-правовые вопросы защиты осужденных. Дис. ... канд. юрид. наук. М., 1994, էջ 37:

⁵ Տե՛ս՝ **Международные акты о правах человека. Сборник документов.** М., 2000, էջեր 190-206:

անձի դատավարական կարգավիճակը ոչ մի կերպ չի կապում վերջինիս ազատության իրավունքի սահամանափակված լինելու հանգամանքի հետ:

Այնուամենայնիվ, Ֆ. Մ. Գորոդինցի համոզմամբ՝ գիտական իրավական գրականության մեջ «Բանտարկյալ եզրույթի օգտագործումը սխալ է»⁶

Վերոգրյալը պատճառաբանելով այն համատեքստում, որ Բանտարկյալների հետ վարվեցողության ոչ բոլոր կանոններն են կիրառելի տարբեր կրկրների օրենսդրական դաշտում, մասնավորապես՝ վկայակոչելով այն հանգամանքը, որ «Կանոններում» առկա է մի առանձին գլուխ (գլուխ «Դ»), որը նվիրված է քաղաքացիական գործով «բանտարկյալներին», սակայն թե՛ ներկայիս, թե՛ նախկին օրենսդրության համաձայն՝ քաղաքացիական գործով անձը չի կարող ազատությունից զրկվել: Ավելին՝ ՀՀ Սահամանադրությունը հստակ ամրագործում է, որ ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները:

Որոշ չափով համաձայնելով Ֆ. Մ. Գորոդինցի՝ վերը նշված տեսակետի հետ և հիմքում ունենալով այն հանգամանքը, որ ներպետական օրենսդրության մեջ բացակայում է «բանտարկյալ» եզրույթը՝ այնուամենայնիվ, կարծում ենք՝ այն պետք է մեկնաբանել լայն և նեղ իմաստով:

Հարկ է նաև արձանագրել, որ Կանոնների մանրամասն հետազոտման արդյունքում ակնհայտ է դառնում, որ այն սկզբունքորեն բաժանված է երկու մասերի՝ «բանտարկյալների» հետ վարվեցողության ընդհանուր կանոններ, որոնք Կանոնների ընդհանուր սկզբունքների 6.1-ին կետի համաձայն կիրառելի են անաչառորեն բոլոր «բանտարկյալների» նկատմամբ՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնական, քաղաքական և այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, ընտանեկան ծագումից կամ սոցիալական դրությունից, և կանոնների երկրորդ հատվածում առանձին գլուխներով նախատեսված են հատուկ կատեգորիայի «բանտարկյալների» վերաբերելի դրույթները:

Ըստ այդմ, ղեկավարվելով Կանոններում արդեն իսկ կատարված բաժանմամբ՝ լայն իմաստով «բանտարկյալ» հասկացության ներքո կարելի է հասկանալ այն բոլոր անձանց, ովքեր ենթարկված են ազատությունից զրկե-

⁶ См. у `Городи́нец Ф. М. Международно-правовые стандарты обращения с осужденными и проблемы их реализации в Российской Федерации. Санкт-Петербург, 2003, էջ 21:

լու առնչությամբ որևէ սահմանափակման կամ զրկման, այդ թվում՝ պատժի կամ հարկադրանքի այլ միջոցի:

Լայն իմաստով այս հասկացության ներքո պետք է հասկանալ նաև այն անձանց, որոնց նկատմամբ նախնական քննության կամ դատական քննության փուլում որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը, տնային կալանքը կամ վարչական հսկողությունը, ինչպես նաև ձերբակալված անձանց՝ հաշվի առնելով Կանոնների «Գ»՝ «կալանավորված կամ դատավարության սպասող անձինք» բաժինը:

Վերոգրայլից բացի՝ հարկ է նկատի ունենալ, որ «բանտարկյալ» եզրույթի ներքո հասկացվում են այն անձինք, որոնց նկատմամբ կիրառվել են անվտանգության միջոցներ:

Հարկ է նկատել, որ Օրենսգրքի ընդունման արդյունքում համակարգային փոփոխությունների ենթարկվեցին մի շարք ինստիտուտներ, որոնց արդյունքում ներդրվեց «Անվտանգության միջոցները» ինստիտուտը: «Անվտանգության միջոցներ» եզրույթը քրեական նախկին օրենսգրքում իր ամրագրումը չէր ստացել, սակայն դրա առանձին տեսակները նախատեսված էին նաև նախկինում, օրինակ՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները:

Օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անվտանգության միջոցը պետական հարկադրանքով ապահովված քրեաիրավական ներգործության միջոց է, որը դատարանի դատավճռով կամ որոշմամբ պետության անունից նշանակվում է պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած անձի նկատմամբ և արտահայտվում է այդ անձին իրավունքներից կամ ազատություններից զրկմամբ կամ դրանց սահմանափակմամբ: Անվտանգության միջոցների նպատակն է կանխել պատժի սպառնալիքով արգելված արարքների կատարումը:»:

Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները դատարանն անձի նկատմամբ նշանակում է, եթե հանգում է հետևության, որ անձը, իր առողջական վիճակով պայմանավորված, կարիք ունի բժշկական միջամտության, որը կապահովի իր կամ այլ անձի անվտանգությունը, ինչպես նաև անվտանգության միջոցների կիրառման նպատակի իրականացումը: Այն դեպքերում, երբ հանցանքի կատարման պահին անմեղսունակության կամ սահմանափակ մեղսունակության վիճակում գտնված կամ հանցանքի կատարումից հետո հոգեկան խնդիրներ դրսևորած կամ ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից, դեղամոլությունից կամ թունամոլությունից բուժ-

ման կարիք ունեցող անձը հոգեկան վիճակով իր կամ այլ անձի համար վտանգավորություն չի ներկայացնում, դատարանն անձի վերաբերյալ անհրաժեշտ նյութերն ուղարկում է առողջապահության համապատասխան մարմին՝ այդ անձի բուժման հարցը լուծելու համար:

Դատարանը հոգեբուժական կազմակերպությունների ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում է նշանակում այն անձի նկատմամբ, որի հոգեկան վիճակը պահանջում է բուժման, խնամքի և հսկողության այնպիսի պայմաններ, որոնք կարող են իրականացվել միայն հիվանդանոցային պայմաններում: Դատարանը հոգեբուժական կազմակերպության հատուկ տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժում է նշանակում պատժի սպառնալիքով արգելված արարք կատարած այն անձի նկատմամբ, որն իր հոգեկան վիճակով վտանգավոր է իր կամ այլ անձի համար և պահանջում է մշտական հսկողություն: Ընդ որում՝ եթե քրեական նախկին օրենսգրքում օրենսդիրը նշում էր, որ անձը կարիք ունի մշտական հսկողության և բուժման, ապա քրեական նոր օրենսգրքում շեշտադրումը դրվում է միայն մշտական հսկողության վրա, քանի որ անձի իրավունքն է հրաժարվել բուժումից:

Հարկ է նշել նաև, որ Քրեական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին) 51-րդ գլխում, այն է՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթի շրջանակներում նախատեսել են մի շարք հատուկ իրավական երաշխիքներ, որոնք ուղղված են նման անձանց պաշտպանությանը: Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հարուցման պահից անձի նկատմամբ անվտանգության միջոցների կիրառմամբ սահմանվում է հսկողություն, իսկ մինչ այդ կիրառված խափանման միջոցը ենթակա է վերացման: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների վարույթում խափանման միջոցներ չեն կարող կիրառվել, նախնական դատալսումների ընթացքում դատարանը խափանման միջոց կիրառելու հարցի փոխարեն քննարկման առարկա է դարձնում անվտանգության միջոց կիրառելու հարցը: Նախնական դատալսումների ընթացքում (խափանման միջոց կիրառելու հարցի քննարկման օրինակով) դատարանը քննարկման առարկա է դարձնում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ կիրառված անվտանգության մի-

ջոցը վերացնելու, փոխելու, դրա ժամկետը երկարաձգելու, իսկ եթե անվտանգության միջոց կիրառված չի եղել՝ այն կիրառելու հարցը:

Վերոգրյալի համատեքստում հարկ ենք համարում արձանագրել, որ անձի նկատմամբ նշանակվող անվտանգության միջոցները, մասնավորապես՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները, նպատակ են հետապնդում կանխել պատժի սպառնալիքով արգելված արարքների կատարումը:

«Բանտարկյալ» հասկացության տակ կարելի է հասկանալ նաև այն անձանց, որոնք փորձաքննություն կատարելու համար տեղավորվել են բժշկական հաստատությունում:

Քրեական դատավարության օրենսգրքի՝ «Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցները» վերտառությամբ 16-րդ գլխի կարգավորումների համաձայն՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցներն են՝ փորձաքննություն կատարելու համար բժշկական հաստատությունում տեղավորելը և անվտանգության միջոցները: Նշված գլխի կարգավորումների համաձայն՝ հոգեկան առողջության խնդիր ունենալու հիմնավոր ենթադրության առկայության դեպքում մեղադրյալը դատարանի որոշմամբ մինչև մեկ ամիս ժամկետով կարող է տեղավորվել բժշկական հաստատությունում՝ դատահոգեբանական, դատահոգեբուժական կամ դատաբժշկական փորձաքննություն կատարելու համար, եթե նա խուսափում է փորձաքննության ենթարկվելուց կամ վտանգ է ներկայացնում հանրության կամ իր համար: Փորձաքննություն կատարելու համար բժշկական հաստատությունում տեղավորելը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ փաստական հանգամանքների բավարար ամբողջությամբ քննիչի կամ դատախազի կողմից հիմնավորվել և դատարանի կողմից պատճառաբանված հաստատվել է հարկադրանքի այդ միջոցի կիրառման անհրաժեշտությունը: Դատական վարությամբ բավարար է դատարանի կողմից հարկադրանքի այս միջոցի կիրառման անհրաժեշտության պատճառաբանված հաստատումը: Փորձաքննություն կատարելու համար բժշկական հաստատությունում տեղավորելու հարկադրանքի միջոցի նկատմամբ վերաբերելի մասով (*mutatis mutandis*) կիրառվում են կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման համար սույն օրենսգրքով սահմանված կանոնները:

Հարկ է նկատի ունենալ, որ եզրույթի լայն մեկնաբանման դեպքում այս հասկացության ներքո կարելի է դիտարկել նաև այն անձանց, ում նկատ-

մամբ որպես հարկադրանքի միջոց է կիրառվել վարչական ձերբակալումը:

Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 259-րդ հոդվածի համաձայն՝ «ԽՍՀ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով ուղղակիորեն նախատեսված դեպքերում, վարչական իրավախախտումները կանխելու նպատակով, եթե սպառվել են ներգործության մյուս միջոցները, անձը պարզելու, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով, եթե տեղում այն կազմելը հնարավոր չէ, և եթե արձանագրություն կազմելը պարտադիր է, գործերի ժամանակին ու ճիշտ քննումը և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով որոշումների կատարումն ապահովելու նպատակով թույլատրվում են անձի վարչական ձերբակալում, անձնական զննում, իրերի զննում և իրերի ու փաստաթղթերի վերցնում»: Այդ օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձի վարչական ձերբակալումը կարող է տևել ոչ ավել, քան երեք ժամ, բացառիկ դեպքերում, հատուկ անհրաժեշտության կապակցությամբ ԽՍՀ Միության և Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերով կարող են սահմանվել վարչական ձերբակալման այլ ժամկետներ:

Նեղ իմաստով «բանտարկյալ» եզրույթի ներքո կարելի է հասկանալ այն անձանց, որոնք դատապարտված են ազատությունից զրկելու հետ կապված պատժի:

2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած Քրեական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ ազատությունից զրկելու հետ կապված պատիժներ են համարվում կարճաժամկետ ազատազրկումը, կարգապահական գումարտակում պահելը, ազատազրկումը, ցմահ ազատազրկումը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ «բանտարկյալ» միջազգային- իրավական եզրույթի օգտագործումը ներպետական օրենսդրական մակարդակում խնդրահարույց է, և այն կարող է մեկնաբանվել ու օգտագործվել միայն որոշակի մասնավոր դրսևորումներով՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ, այդ թվում այն, որ ՀՀ օրենսդրությունը հրաժարվել է «բանտային» համակարգից և ինտեգրել ոչ թե անձին պատժելու, այն վերջինիս վերաինտեգրելու, վերասոցիալականացնելու և հասարակություն վերադարձնելու ճանապարհը:

ПРОБЛЕМЫ ИМПЛЕМЕНТАЦИИ МЕЖДУНАРОДНО-ПРАВОВОГО ТЕРМИНА «ЗАКЛЮЧЕННЫЙ» В ЗАКОНОДАТЕЛЬНОМ РАБОТНИКЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Лазарян Арпи Ашотовна

*Соискатель Института философии, социологии
и права Национальной академии наук Республики
Армения Начальник отдела развития уголовного и
уголовно-процессуального законодательства
Министерства Юстиции Республики Армения
Лектор кафедры уголовного права и криминологии
Образовательного комплекса Министерства
Внутренних Дел Республики Армения*

Современные законодательные разработки и изменения в действующих правовых нормах направлены на интернационализацию государства и обеспечение совместимости актов, определяющих основные права человека, закрепленные международно.

В статье рассматривается и анализируется термин «заключенный», используемый в международных документах, в частности, в Минимальных стандартных правилах обращения с заключенными ООН (Правила Нельсона Манделы), а также совместимость действующих правовых норм с упомянутым понятием. Автор предпринял попытку дать определение понятию термина «заключенный» в узком и широком смыслах, и в его контексте проанализировать действующие правовые нормы отечественного законодательства.

Ключевые слова: заключенный, уголовно-исполнительное, процессуальный, статус.

PROBLEMS OF IMPLEMENTATION OF THE INTERNATIONAL LEGAL TERM "PRISONER" IN THE LEGISLATION OF THE REPUBLIC OF ARMENIA

Lazaryan Arpi

Applicant of the Faculty of Philology, Sociology and Law of the Republic Academy of Sciences. Head of the Criminal Legislation Development Department of the Criminal legislation, Penitentiary and Probation Policy Development division of the Ministry of Justice of the Republic of Armenia. Lecturer of the Chair of Criminal Law and Criminology of the Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia

Modern legislative developments and changes in existing legal norms are aimed at internationalizing the country and ensuring the compatibility of acts that define basic human rights that are internationally enshrined in the legal field.

The article discusses and analyzes the term "prisoner" used in international documents, in particular, in the UN Standard Minimum Rules for the Treatment of Prisoners (Nelson Mandela Rules), and the compatibility of existing legal norms with the mentioned concept. The author made an attempt to define the narrow and broad concept of the term "prisoner" and in its context to analyze the current legal norms of domestic legislation.

Key words: prisoner, penitentiary institution, court, status.

Հոդվածը գրախոսվել է՝ 10.07.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 13.07.2023թ.:

ԼՈՎԱԼ (ՆԵՐՔԻՆ) և ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՆՈՐՄԵՐՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ՏԵՍԱՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Խանդանյան Ռաֆիկ

*Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության
և սահմանադրական իրավունքի ամբիոնի ավագ դասախոս,
ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Հայ-ռուսական համալսարանի դոկտորանտ*

Համառոտագիր: Այս հետազոտական աշխատանքն ուսումնասիրում է ներքին կազմակերպչական հարաբերությունները կարգավորող լոկալ իրավական ակտերի հայեցակարգը և բնույթը՝ իրավունքի ընդհանուր տեսության և պոզիտիվիստական իրավական ընկալման համատեքստում:

Հեղինակը բացահայտում է կորպորատիվ նորմերի և լոկալ կարգավորող իրավական ակտերի միջև եղած տարբերությունները և ուսումնասիրում ներհամայնքային հարաբերությունների կարգավորման ոլորտում տերմինաբանության սահմանման մոտեցումները:

Ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերլուծությունից՝ հեղինակը եզրակացնում է տվյալ երկրում լոկալ ակտերի պետական ճանաչման մեթոդի յուրահատկությունը:

Աշխատանքում առաջարկվում է քննարկվող խնդրի հայեցակարգային և գործնական ասպեկտների ընդհանրացում և համակարգում՝ նպաստելով իրավական համակարգում տեղական լոկալ ակտերի դերի և նշանակության ավելի խոր ընկալմանը:

Բանալի բառեր՝ տեղական իրավական ակտեր, իրավունքի ընդհանուր տեսություն, պոզիտիվիստական իրավական ընկալում ճյուղային պատկանելություն, կորպորատիվ նորմեր, ՀՀ օրենսդրություն:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Տերմինների մասին

Իրավունքի ընդհանուր տեսությունում ներկայացված լոկալ (ներգերատեսչական) հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ օգտագործվում են տարբեր տերմիններ և հասկացություններ՝ «ավտոնո-

միաներ»¹, «կանոնադրական կամ ինքնավար իրավունք»², «լոկալ իրավական ակտեր»³, «ներքին իրավական ակտեր (փաստաթուղթ)»⁴, «կորպորատիվ իրավական ակտեր»⁵, «հասարակական կազմակերպության նորմեր»⁶, «գերատեսչական իրավական ակտեր»⁷, «լոկալ նորմեր (տեղային գործողությամբ նորմեր)»⁸ : Այս հասկացությունների ընտրությունը կախված է մի շարք գործոններից:

Նախ՝ եվրոպական իրավական ավանդույթներում ընդունված է «կորպորատիվ իրավական ակտեր» հասկացությունը, իսկ խորհրդային և հետխորհրդային իրավական համակարգերում օգտագործվում էին (են) առավելապես «լոկալ» կամ «ներքին» իրավական ակտեր եզրույթները: Օրինակ՝ որոշ ռուս տեսաբաններ «կորպորատիվ նորմատիվ իրավական ակտ» և «լոկալ նորմատիվ իրավական ակտ» եզրույթը համարում են նույնաբովանդակ եզրույթներ, պարզապես կարծում են, որ առաջին եզրույթը գործածվում է արևմտյան եվրոպայի երկրներում, իսկ «լոկալ նորմատիվ իրավական ակտ» եզրույթը՝ ռուսական աշխատանքային իրավունքում⁹:

Երկրորդ՝ այս հասկացությունների գործածությունը կախված է նաև իրավունքի ճյուղերից. «կորպորատիվ իրավական ակտ» հասկացությունն առավել բնութագրական է մասնավոր իրավական ոլորտին, իսկ «ներքին իրավական ակտ» հասկացությունը՝ հանրային իրավունքին: Երբեմն նշվում է, որ քաղաքացիական ավանդույթի համաձայն՝ կորպորացիայի հատկանիշներ ունեցող իրավաբանական անձանց ընդունած լոկալ ակտերը կոչվում են կորպորատիվ¹⁰:

ՀՀ օրենսդիրը ներկազմակերպական հարաբերությունները կարգավորող ակտերի անվանման հարցում ունեցել է հստակ դիրքորոշում: Նախ՝ ՀՀ պոզիտիվ իրավունքում «կորպորատիվ իրավական ակտ» եզրույթը չի գործածվում: «Իրավական ակտերի մասին» 2002թ. ՀՀ օրենքում օգտագործվում էր միայն «ներքին» և «լոկալ» իրավական ակտեր հասկացությունները (օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ 21.03.2018թ. ընդունված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում Օրենսդիրը հրաժարվեց «լոկալ» եզրույթից՝ թողնելով միայն «ներքին իրավական ակտ» եզրույթը, սակայն 19.04.2021թ. ընդունված ՀՕ-175-Ն օրենքով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում կատարվեց փոփոխություն և «ներքին» բառից հետո կրկին լրացվել «լոկալ» բառը: Այսպիսով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում գուցահեռաբար գործածվում են ինչպես «ներքին իրավական ակտ», այնպես էլ «լոկալ իրավական ակտ» հասկացությունները:

Հարց է ծագում՝ որո՞նք են «լոկալ» բառի վերականգնման պատճառները: ՀՕ-175-Ն օրենքի նախագծի հիմնավորման մեջ այս մասին ոչինչ նշված չէ¹, ուստի պետք է ենթադրյալ դատողություններ անել: «Իրավական ակտերի մասին» 2002թ. ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված էր.

«Իրավական ակտում դա ընդունող մարմինը նշում է կատարում դրա բնույթի մասին «Ն» (նորմատիվ), «Ա» (անհատական) և «Լ» (ներքին, լոկալ) տառերով»:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, երբ Օրենսդիրը հրաժարվեց «լոկալ» եզրույթից, գործնականում ներքին իրավական ակտերի հերթական համարից հետո ակտի բնույթի մասին նշում կատարելու հարցում խնդիրներ ծագեցին: Եթե ներքին իրավական ակտի բնույթի մասին նշում կատարվեր «Ն» տառով, ապա այն կարող էր նույնացվել նորմատիվ իրավական ակտերի բնույթի մասին նշումի հետ: Պատահական չէ, որ ՀՕ-175-Ն օրենքով ոչ միայն վերականգնվեց «լոկալ» բառը, այլ նաև՝ սահմանվեց, որ ներքին (լոկալ) իրավական ակտի դեպքում ակտի բնույթի մասին նշումը կատարվում է «Լ» տառով («Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մաս):

ՀՀ աշխատանքային օրենսգրքում նույնպես գործածվում է «ներքին (լոկալ) իրավական ակտեր» հասկացությունը (Օրենսգրքի 4-րդ հոդվածի 3-րդ մաս):

Տերմինների ընտրության հարցում կարևոր է նաև տվյալ իրավական համակարգի զարգացման պատմությունը:

1.2. Պատմական տեսանկյունը

Ցարական Ռուսաստանի իրավաբանական գրականությունում «լոկալ» կամ «ներքին» իրավական ակտ հասկացությունները չեն հանդիպում: Այդ ժամանակաշրջանի իրավաբանները լոկալ ակտերի (ժամանակակից ընկալմամբ) էությունը բացատրում էին «ինքնավարություններ (ավտոնոմիաներ)» կամ «կանոնադրական ու ինքնավար իրավունք» հասկացությունների միջոցով: Գերմանացի տեսաբան Ֆ. Ռեգելսբերգերն «ինքնավարություն (ավտոնոմիա)» եզրույթը գործածում էր դրան հարակից՝ լատիներենում «lex» կամ գերմաներենում «Herkommen» բառերին համարժեք իմաստներով, այսինքն՝ որպես իրավաձևավորող գործունեություն: Ավտոնոմիաների տե-

¹ <https://www.e-draft.am/projects/2496/justification>

սակների մեջ նա առանձնացնում էր կորպորատիվ ավտոնոմիաները, այսինքն՝ կորպորատիվ միությունների և դրանց նման փակ շրջանակների անձանց իրավասությունը՝ սահմանելու իրենց իրավունքը, որի գործողությունը սահմանափակվում է այդ միությունների ներքին հարաբերություններով: Նա կորպորատիվ ինքնավարության կանոնները համարում էր օբյեկտիվ իրավունքի աղբյուր²:

Ռուս տեսաբան Վ. Մ. Խվոստովը, շարունակելով կորպորատիվ ինքնավարությունների մասին Ֆ. Ռեգելսբերգերի միտքը, նշում էր.

«Այս տեսակի ինքնավար ստեղծագործությունը, իհարկե, կարող է հենվել միայն գերագույն իշխանության թույլտվության վրա, որին ենթակա են պետությունում առկա բոլոր միությունները: Այն թույլատրելի է միայն գերագույն իշխանության որոշած սահմաններում: Եթե այդ նորմերն ունեն իրավական նորմերին հատուկ ուժ (...), ապա նրանք նույնպես այդ ուժը վերցնում են գերագույն իշխանության թույլտվությունից: Վերջինս կարող է չեղարկել իր թույլտվությունը, որից հետո իրավաբանորեն ինքնավար իրավաստեղծ գործունեությունը պետք է դադարեցվի»³:

Ըստ այս հեղինակի՝ նման ինքնավարությամբ օժտված էին, օրինակ, կառավարության կողմից ստեղծված և նրանց կողմից պահվող հաստատությունները, ինչպիսիք են՝ համալսարանները և այլն:

Ե. Ն. Տրուբեցկոյն իրավունքի ձևերի (պառլամենտական օրենքներ, վարչական կարգադրություններ, դատական պրակտիկա) շարքում առանձնացնում էր կանոնադրական (статутарное) կամ ինքնավար (автономическое) իրավունքը, այսինքն՝ ինքնակառավարվող հասարակական միությունների և հաստատությունների ընդունած նորմերը: Նա կանոնադրական կամ ինքնավար իրավունքը բնորոշում էր հետևյալ կերպ.

«Կանոնադրական կամ ինքնավար իրավունքը հասարակական կամ պետական նպատակներ հետապնդող տարբեր հասարակական միությունների և հաստատությունների իրավունքն է կայացնելու որոշումներ, որոնք պարտադիր են ինչպես այդ միությունների անդամների, այնպես էլ կողմնա-

² Регельсбергеръ Ф. Общее учение о праве. Перевод И. А. Базанова, под ред. проф. Ю. С. Гамбарова. М.: 1897. С. 81.

³ Хвостов В. М. Общая теория права: элементарный очерк. 3-е изд., испр. и доп. Санкт-Петербург; Москва; Варшава. 1906. С. 94.

կի անձանց համար, այնքանով, որքանով նրանք շփվում են այդ կազմակերպությունների հետ»⁴:

Ե.Ն. Տրուբեցկոյի դատողություններից հատկապես պետք է առանձնացնել հետևյալները.

Նախ՝ նա ինքնավար իրավունքի տեսակ էր համարում նաև տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը: Ըստ նրա՝ տեղի բնակիչներն առավել լավ են տեղեկացված առկա խնդիրների մասին, քան իշխանության կենտրոնական մարմինները: Նախապես նշենք, որ իրավունքի հետագա պատմական զարգացումը ցույց տվեց, որ տեղական ինքնակառավարման մարմինների ակտերը և լոկալ (ներկազմակերպական) ակտերը դիտվեցին իրավական ակտի ինքնուրույն (առանձին) տեսակներ:

Երկրորդ՝ տեսաբանը կանոնադրական կամ ինքնավար իրավունքի գործողությունը տարածում էր ոչ միայն կազմակերպության անդամների վրա, այլ նաև տվյալ «կազմակերպության հետ շփվող կողմնակի անձանց վրա»: Համեմատության համար նշենք, որ հայկական պոզիտիվ իրավունքը լոկալ ակտերի գործողությունը տարածում է նաև այն անձանց վրա, ովքեր օգտվում են այդ ակտն ընդունող մարմնի աշխատանքներից կամ ծառայություններից («Իրավական ակտերի մասին» 2002թ. ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ մաս, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ):

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ Խորհրդային իշխանությունների ձևավորման ժամանակաշրջանում, ռուս տեսաբանները հրաժարվեցին օգտագործել «կանոնադրական իրավունք» կամ «ինքնավար իրավունք» ձևակերպումները, քանի որ դրանք համարում էին բուրժուական իրավունքին հատուկ եզրույթներ: Ավելին, այդ ժամանակաշրջանում լոկալ կամ ներքին ակտերի (նորմերի) մասին համալիր հետազոտություններ չեն կատարվել: Խորհրդային պետության և իրավունքի տեսության առաջին դասագրքում, սոցիալական նորմերին և իրավունքի պաշտոնական աղբյուրներին նվիրված թեմաներում լոկալ կամ ներքին իրավական ակտերի մասին հիշատակում չկա⁵, իսկ «Պետական իշխանության այլ ակտեր» բաժնում՝ որ-

⁴ Трубецкой Е. Н. Энциклопедия права. СПб.: Изд. «Лань». 1998. С. 133-134.

⁵ Голунский С. А., Строгович М. С. Теория государства и права: учебник. М.: 1940. С. 161-187.

պես իրավունքի աղբյուր, նշվում է միայն պետական մարմինների և կոմունիստական կուսակցության համատեղ որոշումների մասին⁶:

Հասարակական կազմակերպությունների նորմերի (լոկալ նորմերի)՝ որպես սոցիալական նորմերի ուսումնասիրությունն ակտիվացել է միայն 1960-1970- ականներին: Այդ ժամանակ հասարակական կազմակերպությունների նորմերի (լոկալ նորմերի) վերաբերյալ գրվել են մենագրություններ⁷, ատենախոսություններ⁸ և գիտական հոդվածներ⁹, իսկ դասագրքերում այդ նորմերը հիշատակվում էին սոցիալական չորս հիմնական նորմերի շարքում (իրավական նորմերի, բարոյականության նորմերի և սովորույթների շարքում)¹⁰: Ավելին՝ 1960-ականներին պետության և իրավունքի տեսության առանձին դասագրքերի՝ սոցիալիստական իրավունքի աղբյուրներին նվիրված բաժնում հասարակական կազմակերպությունների՝ պետության կողմից սանկցավորված ակտերին հատկացվել է առանձին պարագրաֆ¹¹:

Այս պատմաշրջանում լոկալ իրավական ակտերի գիտական հետազոտության արդյունքներից պետք է առանձնացնել հետևյալ եզրահանգումները.

Նախ՝ փորձ էր արվում լոկալ նորմերը տարբերակել տեղային նորմերից (Местные нормы): Տեղային նորմեր էին համարվում իշխանության տեղական մարմինների ընդունած նորմերը, իսկ լոկալ նորմերը՝ առանձին կազ-

⁶ Голунский С. А., Строгович М. С. Теория государства и права: учебник. М.: 1940. С. 181.

⁷ Кондратьев Р. И. Сочетание централизованного и локального правового регулирования трудовых отношений. Львов, 1977, Антонова Л. И. Локальное правовое регулирование. Л., 1985.

⁸ Самигуллин В. К. Локальные нормы в советском праве: автореф. дис. ... канд. юрид. наук. Свердловск, 1975, Архипов С.И. Систематизация локальных норм советского права: вопросы теории: автореф. дис. ... канд. юрид. наук. Свердловск, 1987.

⁹ Тарасова В. А. Предмет и понятие локальных норм права // Правоведение. 1968. № 4. Гальперин Л. Б. О специфике локального нормативного регулирования // Правоведение. 1971. № 5, Самигуллин В.К. Локальные нормы и их виды // Правоведение. 1976. № 2.

¹⁰ Нормы общественных организаций: осмысление в советской юридической науке 1960 - 1970 - х годов // Гуманитарные, социально-экономические и общественные науки. 2021. № 4 (Часть 2). С. 15.

¹¹ Общая теория государства и права. Л., Изд. Ленинградского университета. 1961. С.366-369.

մակերպությունների, ձեռնարկությունների, հիմնարկների սահմանած և դրանց շրջանակում գործող նորմերը¹²:

Երկրորդ՝ թեև լոկալ նորմերն ընդունում էին կազմակերպությունները և ձեռնարկությունները, սակայն այդ փաստով կասկածի տակ չէր դրվում այն հանգամանքը, որ այդ նորմերը բխում են պետությունից կամ կապված են պետության հետ: Այս թեզի հիմքում դրվում էր երկու հանգամանք. 1) պետությունն է այդ հիմնարկներին, կազմակերպություններին օժտում իրավական նորմեր սահմանելու լիազորությամբ, 2) պետությունն է, ի դեմս իրավասու մարմինների, հաստատում այդ ձեռնարկությունների, կազմակերպությունների ընդունած կանոնները¹³: Այսպիսով՝ խորհրդային ժամանակաշրջանի գիտնականները հասարակական կազմակերպությունների իրավաստեղծ գործունեությունը, պետական մարմինների և անմիջապես ժողովրդի իրավաստեղծ գործունեության հետ մեկտեղ, դիտում էին որպես իրավաստեղծ գործունեության ինքնուրույն տեսակ¹⁴:

Լոկալ ակտերի՝ որպես ինքնակարգավորման ակտերի ուսումնասիրությունն ակտիվացավ ԽՍՀՄ փլուզումից հետո: Այդ ակտերը դիտարկվում էին որպես ենթանորմատիվային կարգավորման ակտեր կա՛մ գործարքի տեսակներ, կա՛մ իրավաբանական փաստերի տեսակ: Արդյունքում տերմինների, հասկացությունների օգտագործման հարցում ձևավորվեցին խիստ հակասական մոտեցումներ: «Քննարկումների մի հատվածը կարծես տերմինաբանական բնույթ էր կրում՝ ո՞ր ակտերը պետք է կոչվեն լոկալ, այդ հասկացությունը ինչպե՞ս է հարաբերակցվում կորպորատիվ կամ մունիցիպալ ակտերի հետ, այս ակտերից ո՞ր մեկի նկատմամբ կարելի է կիրառել «նորմատիվ իրավական» բնութագիրը: Իրականում տերմինաբանության հարցը ոչ թե պարզապես բառերի, այլ քննարկվող երևույթների էության մասին վեճ է»¹⁵:

¹² **Самигтулин В. К.** Локальные нормы в советском праве: автореф. дис. ... канд. юрид. наук. Свердловск, 1975. С. 5.

¹³ **Авилова О. Е., Блинова О. А., Моисеева О. Г.** Локальные нормы права: осмысление в советской юридической науке // Гуманитарные, социально-экономические и общественные науки. 2019. № 5. С. 91.

¹⁴ **Шебанов А. Ф.** Форма советского права. М.: Юридическая литература, 1968. С.76.

¹⁵ **Давыдова М. Л.** Локальные нормативно-правовые акты: терминологические дискуссии // Право. Журнал Высшей школы экономики. 2021. № 4. С. 8.

Գիտական շրջանառության մեջ դրվեց նաև խորհրդային իրավունքի ավանդույթներին օտար «կորպորատիվ նորմեր» կամ «կորպորատիվ ակտեր» ձևակերպումները, որի պարագայում ծագեց լոկալ և կորպորատիվ ակտերի հարաբերակցության հարցը:

1.3 Լոկալ և կորպորատիվ ակտերի (նորմերի) հարաբերակցությունը

1.3.1. Խնդրի ընդհանուր բնութագիրը

Տեսական աղբյուրների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ «լոկալ ակտեր» և «կորպորատիվ իրավական ակտեր» եզրույթների հարաբերակցության հարցում որոշակիությունը բացակայում է: Լոկալ և կորպորատիվ ակտերի հարաբերակցության վերաբերյալ կարելի է առանձնացնել երեք խումբ մոտեցում. առաջին մոտեցման կողմնակիցները լոկալ և կորպորատիվ ակտերը նույնացնում են, երկրորդները կորպորատիվ ակտերը դիտում են որպես լոկալ ակտի տեսակ, իսկ երրորդ խումբն այս հասկացություններին տալիս է ինքնուրույն նշանակություն, օրինակ՝ կորպորատիվ ակտեր են համարում կորպորացիայի մասնակիցների վարքագծի ներքին կանոնները, իսկ լոկալ ակտ են համարում տեղական ինքնակառավարման մարմինների ընդունած ակտերը¹⁶:

Ինչպես նկատում ենք տեսական գրականությունում՝ այս հասկացությունների հարաբերակցության վերաբերյալ մոտեցումները ոչ միայն հակասական են, այլ երբեմն նաև հասկանալի չեն, քանի որ հեղինակները, որպես կանոն, համակարգային առումով չեն մեկնաբանում իրենց կողմից օգտագործվող ձևակերպումները կամ տրված որակումները: Այսպես՝ ռուս հայտնի տեսաբաններից մեկը ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համակարգում առանձնացնում է «կորպորատիվ և լոկալ նորմատիվ իրավական ակտերը, որոնք ընդունում են կոնկրետ պետական և ոչ պետական կազմակերպությունները (օրինակ՝ ձեռնարկության ներքին աշխատանքային կանոնակարգերը)»¹⁷: Հեղինակը մի կողմից՝ կորպորատիվ և լոկալ նորմատիվ իրավական ակտերն իրարից առանձնացնում է, ինչից կարելի է ենթադրել, որ դրանք իրարից տարբերվում են, մյուս կողմից՝ որևէ կերպ չի բացատրում դրանց տարբերությունը:

¹⁶ Козырева А. Б. Корпоративное правотворчество: теория и практика: автореф. дис. ... канд. юрид. наук. М.: 2016. С. 9.

¹⁷ Карташов В. Н. Теория государства и права: учебное пособие. Ярославль. 2012. С. 142.

1.3.2. Կորպորատիվ նորմերը. սոցիալական, թե՛ իրավական նորմեր:

Այս տերմինների հարաբերակցության հարցն ավելի է խճճվում, երբ պետության և իրավունքի տեսության դասագրքերում կորպորատիվ նորմերն իրավական և սոցիալական այլ նորմերին նվիրված թեմայի շրջանակում դիտարկվում են որպես իրավական բնույթ չունեցող *սոցիալական նորմեր* (ինչպես օրինակ՝ բարոյական կամ կրոնական նորմերն են), *որոնք կարգավորում են* ներկազմակերպական հարաբերությունները: Ընդ որում՝ կորպորատիվ նորմերի՝ որպես սոցիալական նորմերի, հետ մեկտեղ նույն դասագրքերում իրավունքի աղբյուրներին նվիրված թեմայում ներկազմակերպական հարաբերությունները կարգավորող ակտերն անվանվում են լոկալ նորմատիվ իրավական ակտեր: Ասվածն առավել առարկայական ցույց տալու նպատակով մեջքերենք մի քանի հեղինակավոր տեսաբանների դատողություններ:

Այսպես՝ Ն. Ա. Վլասենկոն սոցիալական նորմերի համակարգում առանձնացնում է *կորպորատիվ նորմերը*, որոնք բնութագրում են ոչ պետական միավորումների, կազմակերպությունների, ձեռնարկությունների և հիմնարկների կանոնադրություններում, ծրագրերում ամրագրված վարքագծի կանոններ: Այդ կանոնները վերաբերում են տվյալ կազմակերպության անդամներին: Հեղինակը մեկ այլ՝ նորմատիվ իրավական ակտերի համակարգին նվիրված թեմայի շրջանակներում առանձնացնում է նաև *լոկալ ակտերը* (օրինակ՝ ձեռնարկությունների, այլ կազմակերպությունների կանոնադրությունը)¹⁸: Ինչպես նկատում ենք, հեղինակը կանոնադրության մեջ արտացոլված նորմերը համարում է կորպորատիվ սոցիալական (ոչ իրավական) նորմեր, այնուհետև կանոնադրությունները համարում է լոկալ ակտեր (իրավունքի աղբյուր):

Մեկ այլ դասագրքում նշվում է, որ կորպորատիվ նորմերը կարգավորում են ոչ միայն հասարակական միավորումների, այլ նաև առևտրային բնույթի ոչ պետական կազմակերպությունների հարաբերությունները, իսկ իրավունքի աղբյուրները ներկայացնելիս, որպես ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի տեսակ, նշվում են լոկալ իրավական ակտերը, որոնք ընդունում է ձեռնարկության, հիմնարկի կամ կազմակերպության ղե-

¹⁸ **Власенко Н.А.** Теория государства и права: учебное пособие. 2-е издание. М.: Проспект, 2011. С. 147, 150.

կավարությունը՝ իրենց ներքին գործունեությունը կարգավորելու համար, օրինակ՝ աշխատանքը, ծառայողական կարգապահությունը և այլն¹⁹: Այս դեպքում ընթերցողը կանգնում է կորպորատիվ և լոկալ իրավական նորմերն իրարից տարբերակելու հարցի առաջ:

Ե. Գ. Լուկյանովան կորպորատիվ նորմերը համարում է հասարակական կազմակերպությունների, ձեռնարկությունների անդամների արտաքին վարքագծի կարգավորիչներ, օրինակ՝ ներկազմակերպական կարգապահության կանոնները, հագուստի ձևը սահմանող կանոնները և այլն, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համակարգը ներկայացնելիս կրկին առանձնացնում է լոկալ ակտերը, սակայն, ի տարբերություն վերը նշված հեղինակների, լոկալ ակտեր է համարում «մունիցիպալ մակարդակում միավորումների, ձեռնարկությունների, կազմակերպությունների գործող ակտերը»²⁰: Այս դեպքում կրկին ծագում է այս իրավական երևույթների տարբերակման հարցը:

Մեկ այլ ռուս տեսաբանի դասագրքում իրավական և սոցիալական այլ նորմերին նվիրված թեմայի շրջանակներում կորպորատիվ նորմերը համարվում են սոցիալական նորմերի տեսակ, որոնք ընդունվում են ոչ պետական կազմակերպությունների կողմից և տարածվում տվյալ կազմակերպության անդամների վրա, մինչդեռ իրավունքի պաշտոնական աղբյուրներին նվիրված թեմայի շրջանակներում լոկալ նորմատիվ իրավական ակտերը համարվում են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի տեսակ, որոնք ընդունվում են կազմակերպության կողմից իր իրավասության շրջանակներում և կարգավորում են ներքին հարցեր, օրինակ՝ ներքին աշխատանքային կարգապահության կանոնները²¹: Այս հեղինակի դատողությունների համադրությունից հնարավոր չէ հստակ հասկանալ լոկալ իրավական ակտերի և կորպորատիվ նորմերի հարաբերակցությունը: Ըստ այս հեղինակի՝ և՛ կորպորատիվ ակտերի, և՛ լոկալ նորմատիվ իրավական ակտերի կարգավորման առարկան ըստ էության նույնն է՝ ներկազմակերպական հարաբերությունները: Միգուցե հեղինակը լոկալ իրավական ակտերը և կորպորատիվ ակտերն իրարից տարբերակել է ընդունող սուբյեկտով՝ կոր-

¹⁹ Теория государства и права: учебник. Под ред. **А.С. Пиголкина**. М.: 2005. С. 334, 417.

²⁰ **Лукьянова Е.Г.** Проблемы теории государства и права: учебник для магистратуры. М.: Норма: Инфра-М. 2021. С. 88, 127.

²¹ **Протасов В. Н.** Теория государства и права: учебник. М.: Юрайт, 2018. С. 230, 218.

պորատիվ ակտերն ընդունում են բացառապես ոչ պետական կազմակերպությունները, իսկ ենթաօրենսդրական լոկալ նորմատիվ իրավական ակտերը՝ պետական կազմակերպությունները: Այնուամենայնիվ՝ հեղինակն այս հարցում հստակ դիրքորոշում չի հայտնել:

Այսպիսով՝ ընթերցողի մոտ ծագում է բնական հարց. վերջին հաշվով կորպորատիվ ակտերը (նորմերը) և լոկալ ակտերն իրավակա՞ն, թե՞ սոցիալական նորմեր են, չ՞է որ վերը մեջբերվածից կարելի է հասկանալ, որ երկու նորմերն էլ կարգավորում են նույն ներկազմակերպական բնույթի հարաբերությունները: Իրավունքի ընդհանուր տեսության շրջանակներում սկզբունքային է այն հարցը, թե կորպորատիվ նորմերը (կորպորատիվ ակտերը) պետաիրավական ակտի տեսակնե՞ր են, թե՞ պարզապես պետաիրավական բնույթ չունեցող սոցիալական նորմեր են, ինչպես օրինակ՝ բարոյական կամ կրոնական նորմերը:

Այս հարցում հստակության հնարավոր է հասնել հետևյալ ճանապարհներից որևէ մեկով:

Առաջին տարբերակ: Կարելի է հիմք ընդունել այն մոտեցումը, որ կորպորացիաների ներքին կյանքում ծագող հարաբերությունները կարգավորվում են ոչ թե կորպորատիվ *առանձին* տեսակի սոցիալական նորմերով, այլ սոցիալական տարաբնույթ նորմերով՝ կորպորատիվ սովորույթներով, ավանդույթներով, այդ թվում՝ կորպորատիվ (լոկալ) *իրավական* նորմերով: Այս մոտեցման դեպքում կորպորատիվ նորմերը չպետք է համարել սոցիալական ինքնուրույն նորմերի տեսակ, իսկ պետության և իրավունքի տեսության դասագրքերում՝ իրավական և սոցիալական այլ նորմերին նվիրված թեմայի շրջանակներում կորպորատիվ նորմերը չպետք է առանձնացնել որպես սոցիալական *ինքնուրույն* նորմեր, քանի որ կորպորատիվ տարաբնույթ հարաբերությունները կարգավորվում են այդ կազմակերպությունում ձևավորված տարաբնույթ սոցիալական, այդ թվում՝ լոկալ *իրավական* նորմերով: Այսպես՝ Տ. Կաշանինան կազմակերպությունների ներքին հարաբերությունների կարգավորիչների համակարգում առանձնացնում է ոչ սոցիալական (տեխնիկական) կորպորատիվ նորմեր (օրինակ՝ աշխատակիցների կողմից ամառային և ձմեռային հագուստ կրելու հանձնարարականը) և սոցիալական կորպորատիվ նորմեր: Ընդ որում՝ սոցիալական կորպորատիվ նորմերի համակարգում, ի թիվս կորպորատիվ սովորույթների և ա-

վանդությունների, առանձնացվում են նաև իրավական նորմերը²²: Այս մոտեցման դեպքում գործ ունենք ոչ թե սոցիալական նորմերի առանձին խումբ կազմող՝ կորպորատիվ նորմերի հետ, այլ կորպորացիաների ոլորտում ձևավորված բարոյական նորմերի, սովորությունների և սոցիալական այլ նորմերի հետ:

Երկրորդ տարբերակ: Եթե կորպորատիվ նորմերը դիտվում են որպես ինքնուրույն (առանձին տեսակի) սոցիալական նորմեր, իսկ իրավական ակտերի շարքում առանձնացվում է նաև լոկալ նորմատիվ իրավական ակտը, ապա պետք է հստակ ներկայացնել կորպորատիվ (պետաիրավական ճանաչում չունեցող) նորմերի և լոկալ (պետաիրավական ճանաչում ունեցող) նորմերի կարգավորման առարկաների տարբերությունը: Այսպես՝ դասագրքերից մեկում կարդում ենք.

«Կարևոր է կորպորատիվ նորմերը տարբերակել լոկալ նորմատիվ իրավական ակտերում արտացոլված նորմերից, որոնք թեև գործում են միայն որոշակի կազմակերպության շրջանակներում, սակայն իրավական են, քանի որ առաջացնում են իրավական մեխանիզմներով ապահովված իրավունքներ և պարտականություններ: Այսինքն՝ դրանց խախտման դեպքում հնարավոր է դիմել իրավասու իրավապահ մարմիններին: Այսպես՝ բաժնետիրական ընկերության հիմնադիր փաստաթղթերի դրույթների, օրինակ՝ շահույթի բաշխման կարգի խախտման դեպքում շահագրգիռ սուբյեկտը կարող է որոշումը բողոքարկել դատարանում: Իսկ կուսակցության կանոնադրության խախտմամբ ընդունված որոշումը դատական կարգով բողոքարկման ենթակա չէ»²³:

Ինչպես տեսնում ենք, դասագրքի հեղինակները ներկայացրել են իրավական և կորպորատիվ նորմերի տարբերակման մասին հստակ դիրքորոշում, սակայն վիճահարույց է այն, որ կորպորատիվ և լոկալ նորմերի տարբերակման չափանիշի հարցում առաջնային նշանակություն է տրվել իրավական պաշտպանության կառուցակարգերին: Բանն այն է, որ լոկալ իրավական նորմերը պետության իրավական կառուցակարգերով պաշտպանվում են, քանի որ պետությունը սանկցավորել է այդ լոկալ նորմերը՝ դրանց հաղորդելով պետաիրավական բնույթ: Այլ կերպ ասած՝ կորպորատիվ (ոչ ի-

²² **Капанина Т. В.** Структура права: монография. М.: Проспект. 2015. С. 481-482, 486-490.

²³ Теория государства и права: учебник для вузов. Под ред. **В.М. Корельского и В.Д. Перевалова.** Изд. НОРМА, М.: 2001. С.

րավական) նորմերը տարբերվում են լոկալ իրավական նորմերից ոչ թե այն պատճառով, որ դրանք պարզապես պետության կողմից պաշտպանվում են, այլ այն չափանիշով, որ պետությունը լոկալ նորմերը պետականորեն ճանաչել է, հետևապես՝ պարտավորվել է դրանք պաշտպանել:

Այս պնդումից հետո պետք է առանձին քննարկել հանրային կամ մասնավոր իրավունքի ոլորտներում գործող կազմակերպությունների ներքին հարաբերությունները կարգավորող նորմերը պետության կողմից ճանաչելու (պոզիտիվ-իրավական բնույթ տալու), ինչպես նաև պետության նորմատիվ իրավական համակարգում լոկալ իրավական ակտերի տեղի հարցերը:

2. Լոկալ (ներքին) ակտերի պետական ճանաչման հարցերը

2.1. Ընդհանուր դրույթներ

Հանրային կամ մասնավոր իրավունքի ոլորտներում գործող կազմակերպությունների ներքին հարաբերությունները կարգավորող նորմերին իրավական բնույթ տալու հարցի պատասխանն ուղղակիորեն կախված է իրավաբանական տիպից: Այս հարցում իրավաբան գիտնականների մոտեցումների տարբերության պատճառն այն է, որ նրանք լոկալ ակտերի իրավական բնույթը դիտարկում են տարբեր իրավաբանական տեսանկյունից:

2.2 Լոկալ ակտերի իրավական բնույթն ըստ իրավաբանական տիպերի

Առանձին տեսաբաններ կասկածի տակ են դնում լոկալ նորմատիվ ակտերի իրավաբանական բնույթն այն հիմքով, որ, ի տարբերություն նորմատիվ *իրավական* ակտերի, դրանք չեն ընդունվում պետության կողմից, ուստի իրավական բնույթ չունեն²⁴, կամ լոկալ նորմատիվ իրավական ակտերի

²⁴ Լոկալ ակտերի իրավական բնույթի հարցը քննարկելիս կարևոր է պարզել, թե հեղինակը ինչ իմաստ է դնում «իրավական» եզրույթի ներքո: Երբեմն նորմատիվ *իրավական* ակտի և լոկալ նորմատիվ ակտի (շեշտենք, որ այս դեպքում, իրավական եզրույթը բացակայում է) տարբերական կողմնակիցները նշում ենք, որ թեև ակտերի այս երկու տեսակները նորմատիվ են, այսինքն՝ համապարտադիր են և ընդունվում են օրենսդրությամբ սահմանված կարգով, սակայն իրարից տարբերվում են կարգավորվող հարաբերությունների բնույթով և գործողության շրջանակով: Ի տարբերություն լոկալ նորմատիվ ակտի, նորմատիվ իրավական ակտը կարգավորում է հանրային հարաբերություններ: Իրականում տեղայնությունը (լոկալությունը) նշանակում է տվյալ ակտի սահմանափակ կիրառում այն կազմակերպության շրջանակներում, որի իրավասու մարմինն այն ընդունել է, ինչը, համապատասխանաբար, ենթադրում է դրա պարտադիր լինել միայն խստորեն սահմանված անձանց շրջանակի համար (տե՛ս

համակարգը և ընդունման, փոփոխման կարգը նորմատիվորեն ամրագրված չէ, ուստի դրանք չունեն իրավական բնույթ²⁵: Այս հարցի պատասխանը կախված է նրանից, թե հեղինակն ինչ²⁶ իրավաբանական դիրքերից է այն դիտարկում:

Լոկալ ակտերի իրավական բնույթի համակողմանի քննարկումը հնարավոր է իրավաբանական տիրույթում որպեսզի որոշենք, թե լոկալ ակտերն իրավական բնույթ ունեն, թե՛ ոչ, պետք է հասկանալ, թե դրանք արդյոք իրավունք են, թե՛ ոչ: Նախապես նշենք, որ «լոկալ նորմատիվ ակտերի իրավական բնույթն անհրաժեշտ չափի համոզչությամբ կարող է հիմնավորվել իրավաբանական ցանկացած հայեցակարգի տեսանկյունից»²⁶: Օրինակ՝ լոկալ ակտերի իրավական բնույթն առավել ակնառու կերպով կարելի է հիմնավորել սոցիոլոգիական իրավաբանական հիման վրա, որը իրավունք է համարում ոչ թե պետության սահմանած կանոնները, այլ հասարակությունից, մարդկանց միություններից և միավորումներից բխող կանոնները:

Սույն հետազոտման շրջանակներում կարևոր է պոզիտիվիստական իրավաբանական տեսանկյունից լոկալ ակտերի՝ որպես իրավունք համարելու հարցը, քանի որ այդ ակտերը փաստացի ընդունվում են ոչ պետական ինստիտուտների կողմից:

Տ. Վ. Կաշանինան, կորպորատիվ նորմերի իրավական բնույթը հիմնավորելիս, նշում է, որ իրավունքն ստեղծում են ոչ միայն պետությունը, այլ նաև կորպորացիաները: Հստակ է, որ այս մտքի հեղինակը հիմք չի ընդունում ծայրահեղ լեգիստական (պոզիտիվիստական) իրավաբանականությունը: Թեև նա ընդունում է, որ կորպորատիվ նորմերը, ի տարբերություն օրենսդրական նորմերի (նա այս նորմերին այլ կերպ անվանում է՝ համապետական նորմեր, ընդհանուր գործողության նորմեր), անմիջապես պետությունը չի ընդունում, սակայն այդ նորմերին իրավական բնույթ է հաղորդում այն, որ պետությունը (ընդհանուր գործողության նորմերը) հնարավորություն է տալիս կոլեկտիվին ինքնուրույն կարգավորելու իրենց վարքագիծը, օրենսդիրն

Папуша А. А. Соотношение нормативных правовых актов и локальных нормативных актов // Академический юридический журнал. 2019. № 3 (77). էջ 37):

²⁵ **Мальшева И. В.** Правовой характер локальных нормативных актов // Известия ТулГУ. Экономические и юридические науки. 2016. №2-2. С. 130.

²⁶ **Давыдова М.Л.** Локальные нормативно-правовые акты: терминологические дискуссии // Право. Журнал Высшей школы экономики. 2021. № 4. С. 10.

է նշում կորպորատիվ կարգավորման սահմանները: Բացի այդ, կորպորատիվ նորմերը չպետք է հակասեն համապետական նորմերին: Ըստ հեղինակի՝ ամենից գլխավորը, ինչն ապացուցում է կորպորատիվ նորմերի իրավական բնույթը, այն է, որ այդ նորմերն ապահովված են պետական հարկադրանքով²⁷:

Այսպիսով՝ պոզիտիվիստական իրավաբանական տեսանկյունից ոչ պետական կազմակերպության ընդունած նորմերը կարող են համարվել իրավական, եթե պետությունը որևէ կերպ այն սանկցավորել է (վավերացրել է) և պարտավորվել է այն պաշտպանել:

2.3 Լոկալ ակտերի պետական սանկցավորումը

2.3.1. Լոկալ ակտերի պետական սանկցավորման եղանակները

(a) *Ընդհանուր բնութագիրը*: Ինչպես նշվեց, պոզիտիվիստական իրավաբանական տեսանկյունից ներկազմակերպական հարաբերությունները կարգավորող լոկալ ակտերը սոցիալական այլ նորմերից տարբերակելու համար կարևոր է հասկանալ պետության կողմից դրանք սանկցավորելու (ճանաչելու, վավերացնելու) եղանակները: Եթե ներկազմակերպական հարաբերությունները կարգավորող նորմերը չունենան պետական ճանաչում (օրինակ՝ չեն ընդունվել պետական նորմատիվ իրավական ակտերի հիման վրա), ապա դրանք պետք է համարել սոցիալական նորմեր: Պատահական չէ, որ նույնիսկ խորհրդային ժամանակաշրջանում կորպորատիվ և լոկալ նորմերի տարբերակման կողմնակիցները նշում էին. «Լոկալ իրավական նորմերը կապված են պետական իշխանության հետ, իսկ կորպորատիվ նորմերը՝ հասարակության»²⁸:

Ժամանակակից պայմաններում քիչ հավանական է կազմակերպություն, որի ներքին կարևոր (եական) հարաբերությունները կարգավորող նորմերը պետական իշխանության հետ կապված չլինեն, այլ կերպ ասած՝ որևէ կերպ սանկցավորված չլինեն:

Պետք է քննարկել այն հարցը, թե դոկտրինալ առումով պետությունն ինչ եղանակով կարող է սանկցավորել լոկալ ակտերը, որպեսզի դրանք ձեռք բերեն իրավական բնույթ:

²⁷ **Капанина Т. В.** Структура права: монография. М.: Проспект. 2015. С. 481-482, 486-490.

²⁸ **Самигулин В. К.** Локальные нормы в советском праве: автореф. дис. ... канд. юрид. наук. Свердловск, 1975. С. 13.

(b) *Պոլիտրինալ տեսանկյունը*: Ժամանակակից տեսության մեջ լոկալ իրավական ակտերի (նորմերի) բնորոշումները տալիս, որպես կանոն, նշվում է դրանց՝ պետության կողմից սանկցավորված լինելու մասին, սակայն չեն ներկայացնում սանկցավորման եղանակները: Այսպես՝ երբեմն նշվում է, որ «լոկալ նորմատիվ կարգավորումը պետական կարգավորման շարունակությունն է այն հիմքով, որ պետությունը թույլ է տալիս սուբյեկտների վարքագծի ինքնակարգավորման սահմանափակ հնարավորություն (ենթանորմատիվ կարգավորում) կամ սանկցավորում է լոկալ նորմատիվ ակտերը՝ ճանաչելով նրանց կարգավիճակը որպես իրավական»²⁹, սակայն չի նշվում, թե պետությունը կազմակերպություններին ինքնակարգավորման սահմանափակ հնարավորությունն ինչ իրավական ձևով է տալիս կամ ինչպե՞ս է սանկցավորում լոկալ ակտերը:

Քիչ դեպքերում է, երբ գիտական հոդվածներում կամ պետության և իրավունքի տեսության դասագրքերում լոկալ ակտերի սանկցավորմանը հատուկ տեղ է նվիրվում³⁰: Այդ բացառություններից է 1961թ. Լենինգրադում լույս տեսած դասագիրքը, որի հեղինակները ներկայացնում են հասարակական կազմակերպությունների նորմատիվ ակտերի (*լոկալ ակտերի՝ հեղ.*) սանկցավորման հարցերը: Նախ՝ դասագրքի հեղինակները, նկատի ունենալով տվյալ ժամանակաշրջանում գերակայող էթատիզմը, փաստում են, որ իրավունքի աղբյուր (արտահայտման ձև) համարվում են միայն հասարակական կազմակերպությունների այն նորմատիվ ակտերը, որոնք այս կամ այն ձևով սանկցավորվել են պետության կողմից, քանի որ իրավաձևավորումը պետության բացառիկ իրավասությունն է³¹:

Երկրորդ՝ հեղինակները նշում են, որ առկա են պետության կողմից լոկալ ակտերի սանկցավորման տարբեր ձևեր, սակայն որպես սանկցավորման առավել բնութագրական ձև համարում են պետության կողմից կազմակերպություններին որոշակի հարցերով իրավական ակտ ընդունելու իրավունք վերապահելը (օրինակ՝ արհմիություններին վերապահվել էր տեխնիկական անվտանգության և սանիտարական կանոններ սահմանելու իրա-

²⁹ **Давыдова М.Л.** Локальные нормативно-правовые акты: терминологические дискуссии // Право. Журнал Высшей школы экономики. 2021. № 4. С. 10.

³⁰ **Горшенев В.М.** Санкционирование как вид нормотворческой деятельности органов советского государства // Правоведение. 1959. №1. С. 11-18.

³¹ *Общая теория государства и права. Л., Изд. Ленинградского университета. 1961. С. 367.*

վունք): Որպես լոկալ ակտերի սանկցավորման ձև՝ նշվում էր նաև կոլխոգների կանոնադրության և կոլեկտիվ պայմանագրերի հաստատումը³²:

Իրավունքի տեսության մեջ առանձնացվում է լոկալ ակտերի սանկցավորման երկու եղանակ՝ նախնական և հետագա³³: Նախնական սանկցավորման եղանակ է այն, որ պետությունն ընդհանուր ակտով լիազորում է կազմակերպություններին ընդունել լոկալ ակտեր: Այս հարցով պետության լիազորող նորմը լոկալ իրավաստեղծ գործունեության իրավաբանական հիմքն է: Հետագա սանկցավորման եղանակ է համարվում այն, որ պետությունը հաստատում (գրանցում) է կազմակերպությունների արդեն իսկ ընդունած իրավական ակտերը:

(c) *Լոկալ ակտերի սանկցավորման եղանակները ՀՀ-ում*: ՀՀ-ում լոկալ ակտերի պետական ճանաչման եղանակների հարցը քննարկելիս նախ պետք է նկատի ունենալ՝ այն, որ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում տրված է լոկալ իրավական ակտերի բնորոշումը, դա ինքնին չի նշանակում, որ Օրենսդիրն ունիվերսալ կերպով ճանաչել է կազմակերպությունների՝ ցանկացած հարցով ընդունած լոկալ ակտերի պոզիտիվ-իրավական բնույթը, հետևապես՝ պարտավորվել է դրանք պաշտպանել:

ՀՀ-ում կազմակերպությունների լոկալ ակտերի պետական ճանաչման եղանակը կոնկրետ է, այսինքն՝ Օրենսդիրը սահմանում է այն դեպքերը կամ հարցերը, որոնց վերաբերյալ կազմակերպությունը կարող է ընդունել լոկալ ակտեր: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում՝ լոկալ իրավական ակտերի բնորոշման մեջ նշված է, որ լոկալ ակտերն ընդունվում են՝ նորմատիվ իրավական ակտի հիման վրա և դրան համապատասխան:

Պետության կողմից սահմանված հարցերի կամ դեպքերի վերաբերյալ կազմակերպության ընդունած ակտերը համարվում են պետականորեն ճանաչված, այսինքն՝ իրավական ակտեր: Այսպես՝ ՀՀ քաղ. օր-ի 99 -րդ հոդվածի 2-րդ մասում նշված է.

³² Общая теория государства и права. Л., Изд. Ленинградского университета. 1961. С. 368-369.

³³ **Горшенев В. М.** Санкционирование как вид нормотворческой деятельности органов советского государства // Правоведение. 1959. №1. С. 11-18, **Горшенев В. М.** Способы и организационные формы правового регулирования в социалистическом обществе. М.: Юридическая литература, 1972, **Потапов В. А.** Корпоративные нормативные акты как вид локальных актов: автореф. дис. ... канд. юрид. наук. М.: 2006. С. 10, 22-23.

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարման մարմինների իրավասությունը, ինչպես նաև նրանց որոշումների ընդունման և ընկերության անունից հանդես գալու կարգը սահմանվում են սույն օրենսգրքին, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքին ու ընկերության կանոնադրությանը համապատասխան»:

Այս նորմով Օրենսդիրը սանկցավորել է Ընկերության կառավարման մարմինների իրավասությունը կամ որոշումների ընդունման կարգն ընկերության կանոնադրությամբ սահմանելու հնարավորությունը, հետևապես, պարտավոր է կանոնադրությամբ սահմանված կանոնները պաշտպանել պետական կառուցակարգերով:

ՀՀ քաղ. օր-ում տրված սանկցավորումը կոնկրետացվել է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, որի 10-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված է.

«Ընկերության կանոնադրությունը կարող է պարունակել օրենքին չհակասող այլ դրույթներ, այդ թվում՝

ա) ընկերության կառավարման մարմինների կազմն ու լիազորությունները, այդ թվում՝ ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի (այսուհետ՝ ընդհանուր ժողով) բացառիկ լիազորությունը հանդիսացող հարցերը.

բ) ընկերության կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման կարգը, այդ թվում՝ այն հարցերը, որոնց վերաբերյալ որոշումներն ընդունվում են միաձայն կամ ձայների որակյալ մեծամասնությամբ.

գ) ընկերության մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները.

դ) ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու կարգը.

ե) ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասն այլ անձին փոխանցելու կարգը»:

Ինչպես նկատում ենք, նշված օրենքով սահմանված է, որ Ընկերության կանոնադրությունը կարող է պարունակել օրենքին չհակասող այլ դրույթներ: Այս դեպքում Օրենսդիրը, փաստորեն, ընկերությանը հնարավորություն է տվել օրենքի՝ վերը նշված ցանկում չնախատեսված հարցերը կարգավորել իր կանոնադրությամբ: Միակ պայմանն այն է, որ այդ կարգավորումը չպետք է հակասի ՀՀ պոզիտիվ իրավունքին: Միննույն ժամանակ, պետք է փաստել, որ «ընկերության կանոնադրությունը կարող է պարունակել օրեն-

քին չհակասող այլ դրույթներ» նորմով, ըստ էության, Օրենսդիրը ճանաչել (սանկցավորել) է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը կարող է ցանկացած հարցի վերաբերյալ կանոնադրությամբ նախատեսել օրենքին չհակասող կարգավորում:

Այսպիսով՝ լոկալ ակտերը պետության կողմից սանկցավորվելուց հետո դառնում են պոզիտիվ-իրավական ակտեր:

Հարց է ծագում, թե պետությունը ո՞ր իրավունքի ճյուղերում կարող է սանկցավորել լոկալ ակտերը՝ մասնավոր՝, թե՞ նաև հանրային իրավունքի ոլորտում, այլ կերպ ասած՝ պետք է պարզել լոկալ իրավական ակտերի ճյուղային պատկանելիությունը:

2.3.2. Լոկալ իրավական ակտերի ճյուղային պատկանելիությունը:

Տեսական նշանակություն ունի այն հարցը, թե լոկալ իրավական ակտերում ո՞ր իրավունքի ճյուղի նորմեր կարող են ամրագրվել: Ամենից տարածված մոտեցումն այն է, որ լոկալ իրավական ակտերը պարունակում են մասնավոր իրավունքի նորմեր, մասնավորապես՝ այն մոտեցումը, որ լոկալ իրավական ակտերը պարունակում են աշխատանքային իրավունքի նորմեր: Հետաքրքիրն այն է, որ նման դատողություններ անում են ոչ միայն աշխատանքային իրավունքի, այլ նաև իրավունքի ընդհանուր տեսության մասնագետները: Օրինակ՝ Մ.Ն. Մարչենկոն նշում է, որ լոկալ նորմատիվ իրավական ակտերը պարունակում են աշխատանքային իրավունքի նորմեր և կիրառվում են աշխատանքային իրավունքում, այնուհետև, որպես լոկալ նորմատիվ իրավական ակտի օրինակ, նշում է պետական կազմակերպությունների կանոնադրությունները կամ այլ հիմնադիր փաստաթղթերը³⁴: Եթե լոկալ նորմատիվ իրավական ակտերն աշխատանքային իրավունքի աղբյուր են և պարունակում են միայն աշխատանքային իրավունքի նորմեր, ապա ինչ տրամաբանությամբ է պետական կազմակերպության հիմնադիր փաստաթուղթը որակվում որպես լոկալ նորմատիվ իրավական ակտ. չէ որ պետական կազմակերպությունների հիմնադիր ակտերի հաստատման գործընթացը կարգավորվում է առավելապես հանրային իրավունքի նորմերով:

Բացի այդ, պետական մարմիններն ընդունում են մի շարք իրավական ակտեր, որոնք ունեն ներքին ներգործություն և պարունակում են ոչ թե աշ-

³⁴ **Марченко М. Н.** Источники права: учебное пособие. М.: ТК Велби; Проспект, 2005. С. 262-263.

խատանքային, այլ վարչական իրավունքի նորմեր, այսինքն՝ տարածվում են տվյալ պետական մարմնի աշխատակիցների վրա: Եթե հետևենք Մ.Ն. Մարչենկոյի տրամաբանությանը, ապա պետք է նշենք, որ պետական մարմինների ներքին ազդեցության ակտեր, որոնք պարունակում են վարչական իրավունքի նորմեր, լոկալ նորմատիվ իրավական ակտեր չեն: Վարչական իրավունքի առանձին մասնագետներն իրավացիորեն «լոկալ» տերմինն օգտագործում են պետական մարմինների ներքին ակտերի վերաբերյալ: Օրինակ՝ Դ. Ն. Բախրախը վարչական իրավունքի նորմերի համակարգում առանձնացնում է լոկալ նորմերը, որոնք գործում են առանձին կազմակերպության շրջանակում³⁵:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված չէ, թե լոկալ իրավական ակտերն իրավունքի ո՞ր ճյուղի նորմեր կարող են պարունակել, ուստի կարելի է եզրակացնել, որ նշված օրենքի տեսանկյունից լոկալ իրավական ակտերը կարող են պարունակել ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային իրավունքին վերաբերող դրույթներ: Օրինակ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածում նշվում է գործատուի ներքին իրավական ակտերի մասին, իսկ «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 12-րդ մասում սահմանված է, որ վիճակագրական կոմիտեի նախագահն օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում ընդունում է անհատական և ներքին (լոկալ) բնույթի հրամաններ: Այդ հրամանները կարող են կարգավորել կոմիտեի հանրային իրավական բնույթի ներքին հարաբերություններ:

3. Եզրակացություններ

Պետության և իրավունքի տեսության դասագրքերում չպետք է առանձնացնել ներկազմակերպական հարաբերությունների հատուկ (առանձին) սոցիալական նորմեր, քանի որ ներկազմակերպական հարաբերությունները կարգավորվում են ինչպես սովորույթային, բարոյական նորմերով, այնպես էլ պետության ուղիղ սահմանած (օրինակ՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքը) կամ վավերացված իրավական նորմերով (պետության կողմից վավերացված կազմակերպության կանոնադրությունը):

³⁵ Бахрах Д.Н. Административное право России. 2-е изд., перераб. и доп. М.: Эксмо, 2006. С. 32.

Իրավունքի ընդհանուր տեսությունում ներկազմակերպական (ներգերատեսչական) հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ օգտագործվում են տարբեր տերմիններ և հասկացություններ՝ «լոկալ իրավական ակտ», «ներքին իրավական ակտ (փաստաթուղթ)», «կորպորատիվ իրավական ակտ» և այլն: Տերմինների ընտրությունը կախված է մի շարք գործոններից, մասնավորապես՝ իրավական ավանդույթներից: Եվրոպական իրավական համակարգում ընդունված է «կորպորատիվ իրավական ակտեր» հասկացությունը, իսկ խորհրդային և հետխորհրդային իրավական համակարգերում օգտագործվում էին (են) առավելապես «լոկալ» կամ «ներքին» իրավական ակտ եզրույթները:

Իրավունքի ընդհանուր տեսության և հանրային իրավունքի ոլորտում պետք է հրաժարվել «կորպորատիվ նորմ», «կորպորատիվ ակտ» եզրույթներից: Դրանք առավելագույնս կարող են կիրառվել մասնավոր իրավունքի ճյուղերում: Իրավունքի ընդհանուր տեսությունում գործածելի է «ներքին» կամ «լոկալ» իրավական ակտ համընդհանուր հասկացությունը, որը կարող է ընդգրկել ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր իրավունքի սուբյեկտ համարվող կազմակերպությունների ներքին հարաբերությունների կարգավորումը:

ՀՀ օրենսդիրը ներկազմակերպական հարաբերությունները կարգավորող ակտերի անվանման հարցում ունեցել է հստակ դիրքորոշում: ՀՀ պոզիտիվ իրավունքում «կորպորատիվ իրավական ակտ» եզրույթը չի գործածվում: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում օգտագործվում է «ներքին» և «լոկալ» իրավական ակտեր հասկացությունները:

Լոկալ և կորպորատիվ ակտերի (նորմերի) հարաբերակցության վերաբերյալ մոտեցումները տարբեր են: Եթե կորպորատիվ նորմերը, այնուամենայնիվ, դիտվում են որպես ինքնուրույն (առանձին տեսակի) սոցիալական նորմեր, իսկ իրավական ակտերի շարքում առանձնացվում է նաև լոկալ նորմատիվ իրավական ակտը, ապա պետք է հստակ նշել, որ կորպորատիվ նորմերը, ի տարբերություն լոկալ նորմատիվ իրավական ակտերի, պետաիրավական ճանաչում չունեցող կանոններ են, իսկ լոկալ իրավական ակտերը պետաիրավական ճանաչում ունեցող ակտեր են:

Պոզիտիվիստական իրավաբնկավման տեսանկյունից ոչ պետական կազմակերպության ընդունած նորմերը կարող են համարվել իրավական,

եթե պետությունը որևէ կերպ այն սանկցավորել է (վավերացրել է կամ ճանաչել է):

ՀՀ-ում կազմակերպությունների լոկալ ակտերի պետական ճանաչման եղանակը կոնկրետ է, այսինքն՝ Օրենսդիրը սահմանում է այն դեպքերը կամ հարցերը, որոնց վերաբերյալ կազմակերպությունը կարող է ընդունել լոկալ ակտեր: Պետության սահմանած հարցերի կամ դեպքերի վերաբերյալ կազմակերպության ընդունած ակտերը համարվում են պետականորեն ճանաչված, այսինքն՝ իրավական ակտեր:

ЛОКАЛЬНЫЕ (ВНУТРЕННИЕ) И КОРПОРАТИВНЫЕ НОРМЫ В СИСТЕМЕ СОЦИАЛЬНЫХ НОРМ (ТЕОРЕТИКО- ИСТОРИЧЕСКИЙ АНАЛИЗ)

Ханданян Рафик

Старший преподаватель кафедры теории права и конституционного права Российско-Армянского университета, судья административного Апелляционного суда РА, кандидат юридических наук, доцент, докторант Российско-Армянского университета

Аннотация. Данная исследовательская работа рассматривает понятие и природу локальных правовых актов, регулирующих внутриорганизационные отношения, в контексте общей теории права и позитивистского правового восприятия. Автор выявляет различия между корпоративными нормами и локальными нормативно-правовыми актами, а также исследует подходы к определению терминологии в области регулирования внутриорганизационных отношений. Исходя из анализа законодательства Республики Армения, автор делает вывод о специфичности метода государственного признания локальных актов в данной стране. Работа предлагает обобщение и систематизацию концептуальных и практических аспектов рассматриваемой проблематики, способствуя более глубокому пониманию роли и значения локальных правовых актов в правовой системе.

Ключевые слова: локальные правовые акты, общая теория права, позитивистское правовое восприятие, отраслевая принадлежность, корпоративные нормы, Законодательство Республики Армения.

LOCAL (INTERNAL) AND CORPORATE NORMS IN THE SYSTEM OF SOCIAL NORMS. (THEORETICAL-HISTORICAL ANALYSIS)."

Khandanyan Rafik

*Senior Lecturer of the Department of Theory of Law and Constitutional Law of the Russian-Armenian University,
Judge of the Administrative Court of Appeal of the Republic of Armenia, Candidate of Law, Associate Professor,
Doctoral student of the Russian-Armenian University*

Abstract:

This research paper examines the concept and nature of local legal acts regulating intra-organizational relations within the framework of general legal theory and positivist legal perception. The author identifies differences between corporate norms and local normative-legal acts, and explores approaches to terminology in the field of regulating intra-organizational relations. Based on the analysis of the legislation of the Republic of Armenia, the author concludes about the specificity of the method of state recognition of local acts in this country. The paper offers a synthesis and systematization of conceptual and practical aspects of the discussed issues, contributing to a deeper understanding of the role and significance of local legal acts in the legal system.

Key words: local legal acts, general theory of law, positivist legal perception branch affiliation, corporate norms, legislation of the Republic of Armenia.

Հոդվածը գրախոսվել է՝ 01.08.2023թ.:

Ներկայացվել է տպագրության՝ 07.08.2023թ.:

**ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊԵՐԱԿԱՆ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ-
ՀԵՏԱԽԱՐԱՋԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Հովհաննիսյան Արտակ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի

պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Համառոտագիր: Հոդվածում ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի կարգավորումների լույսի ներքո հետազոտվել են օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեական հետապնդման հարաբերակցության հիմնահարցերը: Հետաքննության նոր մոդելի ներդրումն օպերատիվ-հետախուզական գործունեության և այն իրականացնող մարմինների ստատուսային որոշ հարցերի պատասխանը տվեց, սակայն քրեական հետապնդման կառուցակարգում այդ գործունեության տեղի և դերի վերաբերյալ օրենսդրի մոտեցումը մնաց անհայտ: Ուսումնասիրելով տեսական գրականությունում առկա տեսակետները և վերլուծելով նորմատիվ իրավական ակտերում ամրագրված դրույթները՝ հեղինակը հանգել է որոշակի հետևությունների, առաջարկել քրեադատավարական օրենքում լրացումներ և փոփոխություններ:

Բանալի բառեր՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն, օպերատիվ-հետախուզական միջոցառում, քրեադատավարական ինկորպորացիա, քրեական հետապնդում, գաղտնի քննչական գործողություն, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներ, ապացուցում:

Քրեական հետապնդման հասկացության դոկտրինալ սահմանումներում որպես այս երևույթի հիմնական հատկանիշներ դիտվում են՝

1. քրեական հետապնդումը քրեադատավարական գործունեություն է.
2. այդ գործունեության բովանդակային տարրերն են քրեադատավարական գործողությունները.
3. այն իրականացվում է օրենքով հատկապես որոշված պետական մարմինների, իսկ բացառիկ դեպքերում՝ ֆիզիկական անձանց կողմից.

4. քրեական հետապնդման նպատակը հանցանքի կատարման մեջ մեղադրյալի մերկացումն է:

Քրեական հետապնդման այս կոնստրուկտը նորույթ չէ և առավել ավանդականն է: Քրեական հետապնդման հասկացության վերը նշված տարրերը կարելի է հանդիպել մի շարք հեղինակավոր գիտնականների աշխատություններում՝ Ի. Յա. Ֆոյնիցկու, ով նույնացնում էր քրեական հետապնդումն ու մեղադրանքը¹, Մ. Ս. Ստրոգովիչի, ով խնդրո առարկայի շուրջ արտահայտում էր գրեթե նույնական դատողություններ², Ա. Մ. Լարինի, ով քրեական հետապնդումը դիտարկում էր որպես քրեադատավարական գործունեություն, որի էությունը կոնկրետ անձի կողմից՝ քրեական օրենքով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքի կատարման մասին հետևության ձևակերպման և հիմնավորման մեջ է³:

ՀՀ քրեական դատավարության 1998 թ-ի օրենսգիրքը (այսուհետ՝ նախկին Օրենսգիրք)⁴ ամրագրել էր քրեական հետապնդման հասկացությունը, որում մասնավորապես արտացոլված էին այդ հասկացության հետևյալ հատկանիշները.

1. **բովանդակությունը**՝ դատավարական գործողությունները.
2. **սուբյեկտը**՝ քրեական հետապնդման մարմինները (քննիչը, դատախազը և հետաքննության մարմինը), իսկ օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ տուժողը.
3. **նպատակը**՝ բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդ անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը:

Ինչպես տեսնում ենք, այս հասկացության բովանդակային տարրը դատավարական գործողություններն են, և հետևաբար՝ նախկին Օրենսգրքի հասկացությային ապարատի իմաստով «օպերատիվ-հետախուզական կամ

¹ Фойницкий И.Я. Курс уголовного судопроизводства. Т. 2. – СПб, 1912. С. 3-7.

² Строгович М. С. Уголовное преследование в советском уголовном процессе. Отв. ред. М. М. Гродзинский. М.: 1951. С. 65-66.

³ Ларин А.М. Расследование по уголовному делу: процессуальные функции. – М., 1986. С. 25.

⁴ ՀՕ-248-Ն, ընդունվել է 01.07.1998 թ.-ին, ուժի մեջ է՝ 12.01.1999 թ.-ից:

վարչաիրավական գործունեությունը, եթե նույնիսկ նպատակուղղված են քրեաիրավական խնդիրների լուծմանը, քրեական հետապնդում չեն»⁵:

Սակայն այսպիսի կառուցակարգը հանցավորության դեմ պայքարում հակասական իրավիճակ էր ստեղծում:

Ինչպես գիտենք, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը⁶ ևս այդ գործունեության առջև (ի թիվս այլնի) դրել է հանցավորության դեմ պայքարի խնդիրներ: Այսինքն՝ օպերատիվ-հետախուզական գործունեության առջև հանցավորության դեմ պայքարին առնչվող խնդիրները (այդ թվում՝ հանցանքի բացահայտման) դրվել են՝ անկախ օպերատիվ-հետախուզական գործունեության քրեադատավարական օրենք ինկորպորացնելու հանգամանքից:

Օպերատիվ-հետախուզական օրենքի 4-րդ հոդվածում ամրագրված՝ ՕՀԳ նպատակների (խնդիրների) վերլուծությունից պարզ է դառնում, որ այս գործունեության առջև դրված խնդիրների շարքում սոցիալական առաջնային նշանակություն ունեն հենց հանցավորության դեմ պայքարին առնչվող (քրեաիրավական բնույթի) խնդիրները (ՕՀԳ մասին օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետեր):

Այդ դեպքում հարց է ծագում՝ իրավապահ համակարգի արդյունավետության տեսանկյունից ի՞նչին էր ծառայում օպերատիվ-հետախուզական և քննչական գործունեության ավտոնոմ գործառնության այդ կառուցակարգը, և հանրային-օգտակար ի՞նչ բեռ էր այն կրում, երբ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները քրեական վարույթում կիրառելի էին միայն մասնակիորեն՝ չներկայացնելով էական քրեադատավարական արժեք (հատկապես՝ ապացուցման համար): Ցանկանում ենք մենք, թե՛ ոչ, բայց օպերատիվ-հետախուզական գործունեությունը վաղուց «երաշխավորել» է իր կայուն տեղը ենթադրյալ հանցանքի մեջ մեղավոր անձի պարզմանն ու մերկացմանն ուղղված գործունեությունում:

Իրավիճակն արմատապես փոխվեց Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքում⁷ (այսուհետ՝ քր. դատ. օր.,

⁵ Ղամբարյան Ա. Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդատական վարույթում: Եր.: 2016, էջ 32:

⁶ ՀՕ-223-Ն, ընդունվել է 22.10.2007 թ.-ին, ուժի մեջ է՝ 08.12.2007 թ.-ից:

⁷ ՀՕ-306-Ն, ընդունվել է 30.06.2021 թ.-ին, ուժի մեջ է՝ 01.07.2022 թ.-ից:

քրեադատավարական օրենք) հետաքննության նոր մոդելի ներդրմամբ, որի էական նորամուծություններից են՝

- օպերատիվ-հետախուզական գործունեության ինկորպորացիան քրեադատավարական օրենքում, ինչի արդյունքում՝ օպերատիվ-հետախուզական որոշ միջոցառումներ քրեական վարույթում ձեռք բերեցին ապացուցողական, այն է՝ գաղտնի քննչական գործողության կարգավիճակ (քր. դատ. օր-ի 241-րդ հոդված), իսկ դրանց կատարման արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներն օրենսդիրի կողմից ճանաչվեցին որպես ապացույցի ինքնուրույն տեսակ (քր. դատ. օր-ի 86-րդ հոդված)։

- բովանդակային տեսանկյունից հետաքննությունն օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների կատարումն է, և այն հետապնդում է ոչ թե ընդհանրապես քրեական վարույթին, այլ հատկապես նախաքննությանն օժանդակելու նպատակ (քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ)։

- որպես հետաքննության մարմին՝ ճանաչվում են «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ ՕՀԳ մասին օրենք, օպերատիվ-հետախուզական օրենք) նախատեսված պետական մարմնի համակարգում գործող և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումները (քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետ)։

- քրեական վարույթի շրջանակներից դուրս կատարված օպերատիվ-հետախուզական որոշ միջոցառումների արդյունքները կարող են քրեական վարույթում ճանաչվել որպես քրեադատավարական ապացույց՝ արտավարությամբ փաստաթուղթ (քր. դատ. օր-ի 96-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր, 97-րդ հոդվածի 10-րդ մաս)։

Հարկ ենք համարում նշել նաև, որ քրեադատավարական օրենքում հետաքննության մարմինը դասվեց *վարույթի հանրային մասնակիցների* շարքին։

Այս դրույթների վերլուծությունից կարող ենք հանգել հիմնավոր հետևության, որ հանրային շահերի տեսանկյունից՝ հետաքննության նոր մոդելի ներդրման նպատակը օպերատիվ-հետախուզական գործունեության ռեսուրսը նախաքննության համակողմանիությանը ծառայեցնելն է՝ այն իմաս-

տով, որ հանցագործության բացահայտումը նաև նախաքննության (քննչական գործունեության) խնդիրներից է⁸:

Այսպիսի մոտեցումը պատահական չէ և թելադրված է հատկապես ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ վարույթներով նախաքննության արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ, և բխում է հանցավորության դեմ պայքարում պետական ռեսուրսների օպտիմալ օգտագործման գաղափարից:

Միաժամանակ, «քրեական հետապնդում» և «օպերատիվ-հետախուզական գործունեություն» հասկացությունների հարաբերակցության առումով օրենսդրի մոտեցումներն անհայտ են, քանի որ քր. դատ. օր-ում «քրեական հետապնդում» հասկացությունը սահմանված չէ: Ընդ որում՝ «քրեական հետապնդում» հասկացությունը սահմանելուց հրաժարվելու պատճառները քր. դատ. օր-ի հայեցակարգում⁹ բացահայտված չեն:

Հարկ է նշել նաև, որ քրեադատավարական օրենքում չի օգտագործվում նաև «քրեական հետապնդում իրականացնող մարմին (քրեական հետապնդման մարմին)» տերմինը և հետևաբար՝ թվարկված չեն նաև քրեական հետապնդում իրականացնելու լիազորությամբ օժտված մարմինները (անձինք): Կարծում ենք՝ դա պայմանավորված է «քրեական հետապնդում» հասկացության շուրջ գիտության ներկայացուցիչների միասնական դիրքորոշման բացակայությամբ:

Ինչ վերաբերում է քր. դատ. օր-ում սահմանված «մեղադրանք» հասկացությանը, ապա դրա հատկանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ «մեղադրանք» եզրույթն օրենքում ներկայացված է նյութաիրավական իմաստով (քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետ):

Խնդրո առարկայի պարզաբանման տեսանկյունից «քրեական հետապնդում» հասկացության մեջ մեզ առավել հետաքրքրում է դրա բովանդակային ասպեկտն արտահայտող «դատավարական (վարութային) գործողություն» տարրը:

⁸ Թեև քրեադատավարական օրենքով նախաքննության խնդիրները հռչակված չեն, սակայն այդ օրենքի մի շարք նորմերի վերլուծությունից կարող ենք հանգել հիմնավոր հետևության, որ հանցանքի բացահայտումը նախաքննության խնդիրներից է (տես՝ 110-րդ հոդվածի 6-րդ մաս, 182-րդ հոդվածի 3-րդ մաս, 466-րդ հոդվածի 3-րդ մաս, և այլն):

⁹ Տես ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 10-ի № 9 արձանագրային որոշման հավելված: URL: https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/Mar9-6_1.pdf:

Քրեական հետապնդման նպատակին հասնելու համար առաջնային նշանակություն ունեն վարութային գործողությունների մաս կազմող ապացուցողական գործողությունները, որոնց թվին դասվում են նաև գաղտնի քննչական գործողությունները (քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ և 38-րդ կետեր):

Այլ կերպ ասած՝ գաղտնի քննչական գործողությունները քրեական վարույթի համար նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ապացուցման լիարժեք գործիքներ են: Ավելին, պրակտիկայում շատ հաճախ հենց գաղտնի քննչական գործողությունների արդյունքում հավաքված ապացույցներն են հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին հիմնավոր որոշման կայացման հնարավորություն ստեղծում:

Ընդ որում՝ գաղտնի քննչական գործողությունները տարածվում են ոչ միայն մեղադրյալի նկատմամբ. դրանք կարող են կատարվել նաև դեռևս չհարուցված, այլ կերպ ասած՝ փաստացի քրեական հետապնդման իրականացման պայմաններում՝ մեղադրյալի կարգավիճակ չունեցող այն ֆիզիկական անձի նկատմամբ, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր (քր. դատ. օր-ի 243-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասեր):

Ինչպես ցույց է տալիս այս վերլուծությունը՝ գաղտնի քննչական գործողությունները քրեական հետապնդման կառուցակարգում ունեն ոչ թե օժանդակ, այլ հիմնական դեր և նշանակություն:

Քրեական հետապնդման կառուցակարգում օժանդակ բնույթի մասին կարելի խոսել միայն քրեական վարույթի շրջանակներում կատարվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների առումով: Ինչպես գիտենք, քրեադատավարական օրենքի համաձայն, հետաքննության իրականացման գործիքակազմը ներառում է նաև *ապացուցողական գործողության կարգավիճակ չունեցող* օպերատիվ-հետախուզական միջոցառումները, որոնց կատարման արդյունքում ստացված տվյալների դատավարական նշանակությունն այն է, որ դրանք կարող են օգտագործվել որպես քրեական վարույթ նախաձեռնելու և ապացուցողական գործողության կատարման հիմք (քր. դատ. օր-ի 97-րդ հոդվածի 8-րդ մաս, 173-րդ հոդվածի 6-րդ մաս, 175-րդ հոդվածի 4-րդ մաս, 177-րդ հոդված):

Քննարկվող հիմնախնդրի բացահայտման տեսանկյունից հարկ ենք համարում անդրադառնալ գաղտնի քննչական գործողությունների կատար-

ման ժամանակ անձանց իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության երաշխիքների ապահովման հարցին:

Քրեադատավարական օրենքի համապատասխան նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն անձինք, որոնց նկատմամբ կատարվում են գաղտնի քննչական գործողությունները, իրենց իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանության նույնական երաշխիքներից չեն օգտվում, ինչպես ապացուցողական այլ գործողությունների կատարման ժամանակ: Եվ դա տրամաբանորեն բխում է այդ գործողությունների գաղտնի բնույթից, որը ողջամտորեն ենթադրում է գաղտնի քննչական գործողության նախապատրաստման և կատարման ընթացքում վերը նշված անձանց կողմից տեղեկության ստացման բացառում, ինչն այդ գործողության արդյունավետության պարտադիր և անհրաժեշտ նախապայման է:

Այս հիմնախնդրի հաղթահարման նպատակով օրենսդիրը գաղտնի քննչական գործողությունների կատարումը հնարավոր է համարում միայն դատական երաշխիքների առկայության և դատախազական հսկողության պայմաններում, ընդ որում՝ հետաքննության մարմնին զրկելով այդ գործողությունները նախաձեռնելու լիազորությունից:

Խնդրո առարկայի բացահայտման տեսակետից հարկ ենք համարում նաև անդրադառնալ նաև օժանդակ բնույթ կրող և միաժամանակ ապացույց գեներացնող մեկ այլ՝ փորձագիտական գործունեության՝ քրեական հետապնդման բաղկացուցիչ մաս կազմելու հարցին:

Մեր կարծիքով՝ փորձագիտական գործունեությունը քրեական հետապնդման կառուցակարգի մաս չի կազմում, քանի որ, ի տարբերություն օպերատիվ-հետախուզական գործունեության, փորձագիտական գործունեության առջև հանցավորության դեմ պայքարի և առավել ևս հանցանքի բացահայտման խնդիր դրված չէ, և հետևաբար՝ այդ գործունեության սուբյեկտը՝ փորձագետը, օժտված չէ այդ խնդրի լուծման համար անհրաժեշտ գործիքակազմով: Երկրորդ՝ փորձագետը պրոֆեսիոնալ իրավաբան չէ և իր եզրակացությունում (կարծիքում) իրավաբանական գնահատականներ չի տալիս:

Հետևաբար՝ փորձագետի ու օպերատիվ աշխատակցի միջև այս իմաստով հավասարության նշան դնելն առնվազն հիմնավոր չէ, և օրենսդիրը փորձագետին իրավացիորեն է դասել *քրեական վարույթին օժանդակող* անձանց շարքին:

Ամփոփելով կատարված հետազոտությունը՝ կարող ենք հանգել հիմնավոր հետևության, որ օպերատիվ-հետախուզական գործունեությունը քրեական հետապնդման կառուցակարգի բաղկացուցիչ մասն է:

Ելնելով այդ հետևությունից, ինչպես նաև քրեական դատավարությունում հետաքննության դերի և նշանակության ընդգծման, հետաքննիչի պատասխանատվության բարձրացման տեսանկյունից՝ անհրաժեշտ ենք համարում նաև քրեադատավարական օրենքում սահմանել քրեական հետապնդում իրականացնող մարմինների ցանկը և հետաքննության մարմինն ընդգրկել այդ ցանկում:

ПРОБЛЕМЫ СООТНОШЕНИЯ УГОЛОВНОГО ПРЕСЛЕДОВАНИЯ И ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ: НАУЧНО-ПРАКТИЧЕСКИЙ АНАЛИЗ

Оганесян Артак Робертович

Заместитель начальника Академии

Образовательного комплекса МВД РА,

кандидат юридических наук, доцент,

полковник полиции

Аннотация. В статье, в свете положений нового Уголовно-процессуального кодекса РА, были исследованы проблемы соотношения оперативно-розыскной деятельности и уголовного преследования. Внедрение новой модели дознания дало ответ на некоторые статусные вопросы оперативно-розыскной деятельности и осуществляющих ее органов, однако подход законодателя по отношению места и роли этой деятельности в структуре уголовного преследования остался неизученным. В результате исследования автором были сделаны определенные выводы и внесены предложения по внесению дополнений и изменений в уголовно-процессуальный закон.

Ключевые слова: оперативно-розыскная деятельность, оперативно-розыскное мероприятие, уголовно-процессуальная инкорпорация, уголовное преследование, тайное следственное действие, результаты оперативно-розыскной деятельности, доказывание.

PROBLEMS OF CORRELATION BETWEEN CRIMINAL PROSECUTION AND OPERATIONAL-INVESTIGATIVE ACTIVITIES: A SCIENTIFIC-PRACTICAL ANALYSIS

Hovhannisyan Artak

*Deputy Head of the Educational Complex of the
Ministry of Internal Affairs of the Republic of Armenia,
Candidate of Legal Sciences, Associate Professor*

Abstract: In this article, in light of the provisions of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia, the issues of the correlation between operational-investigative activities and criminal prosecution were explored. The implementation of the new model of inquiry addressed certain status-related questions concerning operational-investigative activities and the organs carrying them out. However, the legislator's approach regarding the place and role of these activities within the structure of criminal prosecution remained uncertain. As a result of the research, the author arrived at specific conclusions and made proposals for introducing amendments and changes to the Criminal Procedure Code.

Key words: operational-investigative activities, operational-investigative measures, criminal procedural incorporation, criminal prosecution, covert investigative action, results of operational-investigative activities, evidence.

Հոդվածը գրախոսվել է՝ 01.09.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 01.09.2023թ.:

ՔՆՆՀԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑԵՐ

Ղամբարյան Արթուր

*Հայ-ռուսական համալսարանի իրավունքի
տեսության և սահմանադրական իրավունքի
ամբիոնի վարիչ, ՀՀ ՊԿՄ իրավագիտության
ամբիոնի պրոֆեսոր, իրավաբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան*

Համառոտագիր: Հոդվածում քննարկվում է քննչական մարմնի ղեկավարի կարգավիճակին առնչվող մի շարք սկզբունքային հարցեր: Հեղինակը վերլուծում է քննչական մարմնի ղեկավարի՝ նախաքննությունը կազմակերպելու գործառնությունը, ներկայացնում է նախաքննության արդյունավետության ընկալումը և այն գնահատելու չափանիշները:

Հոդվածում ներկայացվում են քննչական մարմնի ղեկավարի ստատուսային և ոչ ստատուսային լիազորությունները:

Հատուկ քննարկվում է քննչական մարմնի ղեկավարի՝ քննիչին նախաքննություն կատարելու հանձնարարություն տալու լիազորությունը: Հեղինակը նշում է, որ ՀՀ քր. դատ. օր-ի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ամրագրված է քննչական մարմնի ղեկավարի երկու լիազորություն՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը քննարկելու մասին հանձնարարություն տալու իմպլիցիտ լիազորությունը և նախաքննություն կատարելու մասին հանձնարարություն տալու էքսպլիցիտ լիազորությունը:

Բանալի բառեր: Քննչական մարմնի ղեկավար, քննիչ, դատախազ, նախաքննության արդյունավետություն, նախաքննություն կատարելու հանձնարարություն:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Քննչական մարմնի ղեկավարը. դատավարության սուբյեկտ, թե՛ ոչ

Քննչական մարմնի ղեկավարը քրեական դատավարության դասական սուբյեկտներից չէ: Խորհրդային դատավարական օրենսդրությամբ ի սկզբանե քննչական մարմնի ղեկավարի (քննչական բաժնի պետի) մասին դրույթ

նախատեսված չէր, իսկ գիտության մեջ քննչական մարմնի ղեկավարի քրեական դատավարության սուբյեկտ համարելու հարցը վիճելի էր¹:

1961թ. Խորհրդային Հայաստանի քր. դատ. օր-ում քննչական բաժնի պետի մասին՝ 38. 1-րդ հոդվածն ավելացվել է *12.01.1966թ., որի 1-ին պարբերությունում նշվում էր.*

«Քննչական բաժնի պետը վերահսկողություն է իրականացնում հանցագործությունները բացելու և կանխելու ուղղությամբ քննիչների գործողությունների ժամանակին կատարման նկատմամբ, միջոցներ է ձեռնարկում քրեական գործերով նախաքննության առավել լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ կատարման համար»:

1998թ. ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 31-րդ կետում քննչական բաժնի պետը՝ որպես քրեական դատավարության մասնակից, հիշատակված չէր, իսկ քննչական բաժնի պետի լիազորությունները նախատեսված էր ոչ թե ՀՀ քր. դատ. օր-ի 7-րդ գլխում (մեղադրանքի կողմ), այլ 26-րդ գլխում (նախնական քննություն): Նման կարգավորումը պայմանավորված էր քրեական դատավարության գիտության մեջ քննչական բաժնի պետի լիազորությունների բնույթի հարցի շուրջ միասնական մոտեցման բացակայությամբ: Հեղինակների մի խումբը նշում է, որ քննչական բաժնի պետն իրեն ենթակա քննիչների նկատմամբ պետք է իրականացնի միայն կազմակերպական և վերահսկողական լիազորություններ, իսկ նրա կողմից դատավարական ղեկավարման հնարավորությունը պետք է բացառվի²: Հեղինակների մեկ այլ խումբ փորձում է հիմնավորել քննչական բաժնի պետի կողմից քննության նկատմամբ դատավարական ղեկավարման գործառույթի անհրաժեշտությունը³:

¹ **Попова Т. Ю.** Уголовно-процессуальный статус руководителя следственного органа. М.: Юрлитинформ, 2013. С. 6-25.

² **Հարությունյան Ա.,** Դատախազական հսկողության և գերատեսչական վերահսկողության փոխհարաբերակցությունը: Դատախազությունը ՀՀ-ում, ԵՊՀ, Եր.: 2004, էջ 197-198, **Ղամբարյան Ա.,** Մինչդատական վարույթի բարեփոխումները ՀՀ քրեական դատավարությունում: Եր.: «Օրենք և իրականություն», 2010, էջ 66-67:

³ **Селезнев М.** Ведомственный-процессуальный контроль и прокурорский надзор на предварительном следствии // Законность. 1999, № 1. С. 16, **Хан А. Л.** Система и процессуальный статус органов, осуществляющих досудебную деятельность. Автореф. дис. ... канд. юр. наук. Караганда, 2002. С. 25-26, **Бакрадзе А.** Прокурорский надзор и ведомственный контроль за расследованием преступлении органами МВД // Социалистическая законность. 1970. № 3. С. 39-41.

ՀՀ 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 178-րդ հոդվածի 1-ին մասում քննչական մարմնի մասին դրույթ նախատեսելուց հետո Օրենսդիրը 2021թ. ՀՀ քր. դատ. օր-ով քննչական մարմնի ղեկավարին անվիճելիորեն ճանաչեց որպես քրեական վարույթի հանրային մասնակից: ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետում թվարկված են քրեական վարույթի հանրային մասնակիցները, որոնց ցանկում նշված է նաև քննչական մարմնի ղեկավարը: Քննչական մարմնի ղեկավարի լիազորությունները թվարկված են ՀՀ քր. դատ. օր-ի «քրեական վարույթի հանրային մասնակիցները» վերտառությամբ 5-րդ գլխում:

1.2. Օրենսդրական բնորոշումը

Քննչական **մարմնի ղեկավարը** նախաքննություն կատարելու իրավասություն ունեցող քննչական մարմնի կամ դրա ստորաբաժանման (գլխավոր վարչության, վարչության, բաժնի, բաժանմունքի և այլնի) ղեկավարն է կամ նրա տեղակալն է, որն իր իրավասության սահմաններում կազմակերպում է նախաքննությունը և ապահովում է դրա արդյունավետությունը (ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետ): Օրենսդրական այս բնորոշման կապակցությամբ առկա են որոշ նկատառումներ:

Նախ՝ նախաքննության կազմակերպման գործառույթն ունի սահմանադրական հիմքեր: ՀՀ Սահմանադրության 178-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ քննչական մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում (...) են մինչդատական քրեական վարույթը:

Երկրորդ՝ ՀՀ Սահմանադրության 178-րդ հոդվածում խոսվում է *մինչդատական քրեական վարույթի* կազմակերպման մասին: Մինչդեռ Օրենսդիրն առաջին հայացքից սահմանափակել է քննչական մարմնի ղեկավարի սահմանադրական պատասխանատվության ոլորտը՝ նրա վրա դնելով միայն *նախաքննությունը* կազմակերպելու գործառույթ: Այնուամենայնիվ, «մինչդատական քրեական վարույթ» սահմանադրական հասկացության և «նախաքննություն» քրեադատավարական հասկացության հարաբերակցությունն առանձին քննարկման հարց է:

Երրորդ՝ ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետում տրված օրենսդրական բնորոշումն ընթերցելիս առաջին հայացքից թվում է, որ քննչական մարմնի ղեկավարը կատարում է երկու ինքնուրույն գործառույթ՝ *կազմակերպում է* քննիչի աշխատանքը և *ապահովում է* այդ աշխատանքի արդյունավետությունը:

Թեև օրենսդրական բնորոշմամբ նախաքննության կազմակերպումը և դրա արդյունավետության ապահովումը ձևակերպված են որպես առանձին գործառույթներ, սակայն դրանց միջև սահմանագիծ չկա: Եթե քննչական մարմնի ղեկավարը կոչված է կազմակերպելու քննիչի աշխատանքը (նախաքննությունը), ապա այդ աշխատանքի պատշաճ կազմակերպումն ինքնին ենթադրում է աշխատանքի արդյունավետության ապահովում: Քննիչի աշխատանքի կազմակերպումը ինքնանպատակ չէ. քննչական մարմնի ղեկավարը կազմակերպում է այդ աշխատանքը, որպեսզի այն լինի արդյունավետ, հակառակ դեպքում աշխատանքի կազմակերպումը չի կարող համարվել պատշաճ: Պատահական չէ, որ, ի տարբերություն ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, նույն օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասում օգտագործվում է «նախաքննության **պատշաճ** կազմակերպումը, **այդ թվում՝** դրա արդյունավետությունն ապահովելու նպատակով (...)» ձևակերպումը, որից հասկացվում է, որ նախաքննության պատշաճ կազմակերպումը ներառում է նաև արդյունավետության ապահովումը:

2. Քննչական մարմնի ղեկավարի գործառույթը

2.1. Ընդհանուր դրույթներ

ՀՀ քր. դատ. օր-ում, կախված կոնկրետ իրավական նորմի կարգավորման առարկայից, նախաքննության կազմակերպումը, այդ թվում՝ նախաքննության արդյունավետության ապահովումը, ներկայացվում է երեք տարբերվող շեշտադրություններով. մի դեպքում՝ որպես քննչական մարմնի ղեկավարի գործառույթ (ՀՀ քր. դատ. օր-ի 6-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետ), երկրորդ դեպքում՝ որպես քննչական մարմնի ղեկավարի գործունեության նպատակ (ՀՀ քր. դատ. օր-ի 41-րդ հոդվածի 1-ին մաս), երրորդ դեպքում՝ որպես քննչական մարմնի ղեկավարի պոզիտիվ պատասխանատվության ոլորտ (ՀՀ քր. դատ. օր-ի 39-րդ հոդվածի 3-րդ մաս): Ընդ որում՝ քննչական մարմնի ղեկավարը պատասխանատու է միայն իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչների կողմից իրականացվող նախաքննության պատշաճ կազմակերպման և դրա արդյունավետության համար:

2.2 Նախաքննության կազմակերպումը

Թեև օրենսդիրը նախաքննության կազմակերպման գործառույթը վերապահել է քննչական մարմնի ղեկավարին, սակայն հասկանալի է, որ քննչական մարմնի ղեկավարը նախաքննությունը ինքնին (per se) չի կազմակերպում: Որևէ աշխատանք կամ գործունեություն առաջին հերթին կազմակեր-

պում է այն մարմինը, որն իրականացնում է այդ գործունեությունը: Այս տեսանկյունից՝ քննչական մարմնի ղեկավարը կարող է կազմակերպել իր վարչաարական աշխատանքը, բայց ո՛չ քննիչի իրականացրած նախաքննությունը: Նախաքննության առաջնային կազմակերպողը նախաքննություն իրականացնող քննիչն է:

Նկատի ունենալով ասվածը՝ քննչական մարմնի ղեկավարի կողմից «նախաքննության կազմակերպում» ասելով պետք է հասկանալ նրա կողմից իրավաբանական կամ փաստացի այնպիսի գործողությունների կատարում, որոնք քննիչի համար ստեղծում են արդյունավետ (պատշաճ) նախաքննություն իրականացնելու անհրաժեշտ պայմաններ:

Նախաքննության կազմակերպման դատավարական գործառույթը կարող է իրականացվել տարաբնույթ կազմակերպա-իրավական միջոցներով⁴: Նախաքննության կազմակերպման իրավական (դատավարական) միջոցներն ամրագրված են ՀՀ քր. դատ. օր-ում, օրինակ՝ նախաքննության կազմակերպման դատավարական միջոց է քննչական մարմնի ղեկավարի՝ քննչական խումբ ստեղծելու լիազորությունը:

Նախաքննության կազմակերպման գործառույթի իրականացման կազմակերպական միջոցներից են՝ ինդրահարույց հարցերի վերաբերյալ խորհրդակցություններ կազմակերպելը, քննչական աշխատանքին վերաբերող օրենսդրական փոփոխություններին և նախադեպային որոշումներին քննիչներին ծանոթացնելը, այլ պետական մարմինների կամ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների հետ քննիչի հարաբերությունները կազմակերպելը, քննչական գործողություն կատարելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներով ապահովելու ուղղությամբ կազմակերպական միջոցներ ձեռնարկելը, իրեղեն ապացույցները քննչական ստորաբաժանումում պահպանելու համար պայմաններ ստեղծելու, իրեղեն ապացույցները փորձագիտական կազմակերպությունը փոխանցելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելը, փորձաքննության եզրակացությունը ժամանակին ստանալու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը և այլն:

⁴ Պետրոսյան Կ.Խ., Նախաքննության գիտական կազմակերպման հիմնահարցերը: Եր.: 2001, Հովհաննիսյան Բ.Մ., Քննչական և օպերատիվ հետախուզական մարմինների փոխգործողության տակտիկան: Եր.: 1981:

Նախաքննության պատշաճ կազմակերպման լավագույն ճանապարհին աշխատանքի պլանավորումն է: Օրինակ՝ ՀՀ քննչական կոմիտեում գործում է ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 12.03.2015թ. № 11 հրամանով հաստատված՝ քննության պլանավորման աշխատանքների կազմակերպման միասնականության վերաբերյալ ուղեցույց (այսուհետ՝ Ուղեցույց), որի 2-րդ կետի համաձայն՝ քննության պլանավորումը մտածողական գործընթաց է, որը ներառում է առերևույթ հանցագործության հանգամանքների բացահայտմանն ուղղված աշխատանքների բովանդակությունը և հաջորդականությունը: Պլանավորման առանցքը քննչական վարկածների առաջադրումն է՝ դրանց յուրաքանչյուրի ստուգման նպատակով (բացահայտման ենթակա հանգամանքների շրջանակի որոշում): Պլանավորման բովանդակությունը ենթադրում է՝ 1) վարկածների առաջադրում, 2) վարկածի վերլուծությունից բխող պարզաբանման ենթակա հանգամանքների և հարցերի սահմանում, 3) նախատեսված գործողությունների կատարման ժամկետների և հաջորդականության, ինչպես նաև կատարողների որոշումը և այլն:

Քննության պլանը թեև կազմում է նախաքննություն կատարող քննիչը, սակայն նա այն համաձայնեցնում է անմիջական վերադասի հետ, այնուհետև՝ ներկայացնում է տվյալ ստորաբաժանման ղեկավարի հաստատմանը: Աշխատանքների ամփոփման ժամանակ ստուգվում են քննիչի քննության պլանով նախատեսված աշխատանքների կատարման վիճակը, չկատարված աշխատանքների պատճառները և դրանց կատարման հեռանկարը (Ուղեցույցի 12-13-րդ կետեր): Ուղեցույցի 14-րդ կետում ուղիղ սահմանված է, որ քննիչի անմիջական վերադասը պատասխանատվություն է կրում ենթակա քննիչների պլանավորման աշխատանքների պատշաճ կազմակերպման և արդյունավետության ապահովման համար⁵:

2.3. Նախաքննության արդյունավետության ապահովումը

2.3.1. «Արդյունավետություն» և «ռեզուլտատիվություն» տերմինները: Հայկական իրավաբանական լեզվամտածողության մեջ «Էֆեկտիվություն» և «ռեզուլտատիվություն» տերմինների միջև տարբերակում չի դրվում, թեև «ռեզուլտատիվություն» բառը տարբեր հայերեն բառարաններում օգտա-

⁵ https://www.investigative.am/news/view/planavorum_hrman.html

գործվում է⁶:

Խորհրդային իրավագիտության մեջ էֆեկտիվության և ռեզուլտատիվության միջև նույնպես տարբերակում չէր դրվում: Այսպիսով՝ Ի. Լ. Պետրովսկին էֆեկտիվություն ասելով հասկանում էր գործողության արդյունքի և նպատակի համընկնումը⁷: Հայ իրավաբանները, անտեսելով «իրավունքի տնտեսագիտական» ուսմունքը, որևէ իրավաբանական գործընթացի էֆեկտիվությունն ըստ էության նույնացնում են այդ գործունեության ռեզուլտատիվության հետ. գործընթացը համարվում է արդյունավետ, եթե հնարավոր է եղել հասնել նախատեսված արդյունքին: Հիմնականում էական նշանակություն չէր տրվում այն հարցին, թե ինչ՞ ռեսուրսների օգտագործմամբ է հնարավոր եղել հասնել այդ արդյունքին:

«էֆեկտիվություն» կատեգորիան ի սկզբանե օգտագործվել է կառավարման գիտությունում: Այն քրեական դատավարության գիտություն է ներթափանցել այն ժամանակ, երբ փորձ է արվել կիրառել սովորական օգտագործել իրավական խնդիրները լուծելու համար: Հետևաբար, անդրադառնալով այս հասկացությանը, պետք է ապավինել կառավարման գիտությունների հասկացությանին ապարատին, որտեղ «էֆեկտիվություն» և «ռեզուլտատիվություն» տերմինները տարանջատվում են:

Կառավարման գիտության մեջ նշվում է, որ էֆեկտիվությունը (efficiency, эффективность) ձեռք բերված արդյունքի և օգտագործված ռեսուրսների միջև հարաբերակցությունն է, իսկ ռեզուլտատիվությունը (effectiveness, результативность) պլանավորված գործունեության իրականացման և պլանավորված արդյունքներին հասնելու աստիճանն է:

Կախված ծախքերի և արդյունքների համադրությունից՝ առանձացվում է էֆեկտիվության (эффективность) որոշման երեք դասական մոտեցում: Ավանդաբար էֆեկտիվ է համարվում՝ 1) *նախատեսված* արդյունքներին *նվազագույն* ծախքերով հասնելը. 2) *առավելագույն* հնարավոր արդյունքներին *նախատեսված* ծախքերով հասնելը. 3) *առավելագույն* արդյունքներին *նվազագույն* ծախքերով հասնելը: Երրորդ տարբերակը հնարավոր է միայն

⁶ Ռուս-հայերեն բառարան // Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիա: Լեզվի Ինստիտուտ: Եր.: 1957, էջ 751.

⁷ См.: Эффективность правосудия и проблема устранения судебных ошибок. Монография. / Руководитель авторского коллектива **И.Л. Петрухин**. Отв. ред. **В.Н. Кудрявцев**. М.: Институт государства и права Академии наук СССР, Часть 1. 1975.С. 35-36.

նորարարությունների ներդրման կամ լրացուցիչ ռիսկերի ընդունման դեպքում⁸: Այսպիսով՝ էֆեկտիվությունը (эффективность) որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն ռեսուրսները (ծախքերը), որոնց միջոցով ձեռք է բերվում որոշակի արդյունք⁹:

Նշվածից պարզ է դառնում, որ ռեզուլտատիվության (effectiveness, результативность) համեմատությամբ էֆեկտիվությունը (efficiency, эффективность) առավել լայն հասկացություն է. այն ոչ միայն արդյունքին հասնելն է, այլ նաև այդ արդյունքի և դրան հասնելու ռեսուրսների համադրությունն է:

Քրեադատավարական ոլորտում «արդյունավետություն» բառն օգտագործելիս՝ պետք է նկատի ունալ ոչ թե գործունեության պարզ ռեզուլտատիվությունը, այսինքն՝ պլանավորված նպատակին (արդյունքին) հասնելու հանգամանքը, այլ գործունեության արդյունքների և դրանց հասնելու ռեսուրսների համադրությունը: Օրինակ՝ եթե քննիչը բարդություն չներկայացնող որևէ վարույթ դատարան է ուղարկում հինգ տարում, ապա այս գործունեությունը ռեզուլտատիվ է, քանի որ արդյունքն այնուամենայնիվ առկա է՝ վարույթն ուղարկվել է դատարան, իսկ դատարանը կայացրել է մեղադրական վերդիկտ, սակայն նախաքննությունը ժամանակային ռեսուրսների օգտագործման տեսանկյունից արդյունավետ չէ: Այս իմաստով՝ քննչական մարմնի ղեկավարը նախաքննության արդյունավետությունն ապահովելիս պետք է միջոցներ ձեռնարկի, որպեսզի հնարավոր լինի կոնկրետ գործով պլանավորված նպատակին (արդյունքին) հասնել՝ նվազագույն ռեսուրսների (ծախքերի) օգտագործմամբ: Ավելին՝ քննչական մարմնի ղեկավարը պետք է փորձի օրենքով նախատեսված շրջանակներում քննչական աշխատանքին ներգրավել այնպիսի նորարարական միջոցներ (օրինակ՝ տեխնիկական աշխատակիցների կողմից քրեական գործի նյութերի թվայնացումը), որ հնարավոր լինի նվազագույն ծախքերով հասնել առավելագույն արդ-

⁸ Сандлер Д. Г. Эффективность – универсальная цель развития: от индивида до экономики // Современная конкуренция / Journal of Modern Competition. 2008. № 6 . С. 72-73.

⁹ Цветков Ю.А. Концепция эффективности следственной деятельности // Следственная деятельность. Книга II. Quo vadis?: монография / под ред. докт. юрид. наук Н.А. Колоколова. М.: Юрлитинформ, 2021. С.50-51.

յունքների¹⁰:

Իսկ որո՞նք են այն չափանիշները, որոնց հիման վրա պետք է գնահատել, թե քննչական մարմնի ղեկավարն արդյոք պատշաճ կերպով կատարե՞լ է նախաքննության կազմակերպման իր գործառնությունը:

2.3.2. Նախաքննության արդյունավետության չափանիշները

(a) **Դեկտրինալ մոտեցումը:** Նախաքննության արդյունավետության որոշման չափանիշների հարցն ուսումնասիրել է Յու. Ա. Յվետկովը, ով ոչ միայն տեսաբան է, այլ նաև ՌԴ քննչական կոմիտեի աշխատակից է: Նա նշում է.

«Քննչական գործունեության արդյունավետության չափանիշը, որը բնութագրում է դրա արդյունքները, այնպիսի տեղեկատվական-իրավական արտադրանքի (քրեական գործի) ստեղծումն է, որի հիման վրա դատարանը կայացնում է օրինական և հիմնավորված մեղադրական դատավճիռ, կամ քննիչը կայացնում է օրինական և հիմնավորված որոշում հանցադեպի կամ հանցակազմի բացակայության հիմքով քրեական վարույթը կարճելու մասին: Այնուամենայնիվ, հնարավոր չի լինի կառուցել քննիչի քրեական դատավարական գործունեության արդյունավետության ավարտված հայեցակարգ՝ առանց հասկանալու, թե որոնք են այդ գործունեության ծախսերը»¹¹:

Նա առանձնացնում է քննչական գործունեության ծախսերի երեք պայմանական խումբ:

1) Նյութական ծախսեր, որոնք ներառում են նյութական և տեխնիկական միջոցները, աշխատավարձը, փորձագիտական հաստատությունների ծառայությունների վճարը և այլն): Այս խումբ ծախսերը կարող են ունենալ դրամական միավորներով ճշգրիտ արտահայտություն:

2) Ժամանակային ծախսեր, որոնք թեև ենթակա են քիչ թե շատ ճշգրիտ հաշվարկի, բայց չեն կարող արտահայտվել դրամական միավորներով: Այն հիմնականում ներառում է այն ծախսերը, որոնք չափվում են քննության նպատակներին հասնելու համար անհրաժեշտ ժամանակի միավորներով

¹⁰ Այս մասին տե՛ս **Ղամբարյան Ա.**, Տեղեկատվական հասարակությունում նախաքննության արդյունավետ կազմակերպման ռազմավարությունը // Օրինականություն, 2016, № 94, էջեր 21-30:

¹¹ **Цветков Ю.А.** Концепция эффективности следственной деятельности // Следственная деятельность. Книга II. Quo vadis?: монография / под ред. докт. юрид. наук **Н.А. Колоколова**. М.: Юрлитинформ, 2021. С. 53.

(հանցագործությունների մասին հաղորդումների քննության և ստուգման ժամկետ):

3) Հումանիտար ծախքեր, որոնք հաշվելն ամենադժվարն է, քանի որ կապված են մարդու և իրավաբանական անձանց իրավունքների սահմանափակման հետ, կոնկրետ քննիչի անձնային արդյունավետության հետ:

Արդյունավետության տեսանկյունից վնասակար պետք է համարել այն պրակտիկան, երբ քննչական մարմնի ղեկավարը հաշվետու ժամանակաշրջանի վերջում վիճակագրական ցուցանիշները բարելավելու նպատակով բոլորին (այդ թվում՝ փորձառու քննիչներին) ներգրավում է բարդություն չներկայացնող դեպքերով քրեական վարույթների ավարտման գործին: Այս ակնթարթային արդյունքին հասնելու բացասական հետևանքն այն է, որ վնասվում է բարդ դեպքերով վարույթների արդյունավետությունը¹²:

Քննչական պրակտիկայում դեռևս չեն մշակվել այնպիսի համակարգեր, որոնք հնարավորություն կտան ճշգրիտ գնահատել նախաքննության կազմակերպման արդյունավետությունը: ՀՀ քննչական կոմիտեում աշխատանքի արդյունավետության բարձրացումը խթանելու նպատակով ներդրվել են քննիչի, քննչական ստորաբաժանման աշխատանքները գնահատելու տարբեր համակարգեր, որոնցից միայն անուղղակի կերպով կարելի է հասկանալ, թե քննչական աշխատանքի արդյունավետությունը որոշելու համար ինչ գործոններ են կարևորվում:

(b) Արդյունավետության որոշման անուղղակի չափանիշները: ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 08.12.2021թ. № 167-Լ հրամանով (փոփոխություններ կատարելու մասին 25.01.2023թ. № 33-Լ հրամանով) ներդրվել է ՀՀ քննչական կոմիտեի տարվա (լավագույն) ստորաբաժանումներ և տարվա (լավագույն) քննիչ ճանաչելու համակարգ: Հաստատված կարգի 14-րդ կետում նշված է, որ Կոմիտեի՝ տարվա ստորաբաժանում ճանաչելու նպատակով ներկայացվում են հաշվետու տարվա կտրվածքով տվյալ ստորաբաժանմանը վերաբերելի հետևյալ տվյալները՝

¹² **Цветков Ю.А.** Концепция эффективности следственной деятельности // Следственная деятельность. Книга II. Quo vadis?: монография / под ред. докт. юрид. наук **Н.А. Колоколова**. М.: Юрлитинформ, 2021. С. 50-51.

1) նախաձեռնված քրեական վարույթների թիվը, ընթացքը և դրանք ավարտելու ժամկետները՝ ըստ հանցանքի տեսակների (ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր)։

2) կազմված մեղադրական եզրակացությունների, բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու համար եզրափակիչ ակտերի (բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին որոշումների) թիվը։

3) մեղադրական եզրակացությամբ նախաքննությունն ավարտած քրեական վարույթներով մեղադրանք ներկայացված (առաջադրված) անձանց թիվը՝ նշելով ըստ դրվագների, թե որ հոդվածներով է մեղադրանքներ ներկայացվել (առաջադրվել)։

4) կարճված քրեական վարույթների թիվը՝ նշելով կարճման որոշումների հիմքերը՝ արդարացնող և ոչ արդարացնող, ինչպես նաև ոչ արդարացնող հիմքերով կարճված վարույթներով այն անձանց թիվը, որոնց նկատմամբ կայացվել է կարճման որոշում։

5) բացահայտված քրեական վարույթների թիվը։

6) քրեական վարույթներով կալանքը որպես խափանման միջոց կիրառելու, կալանքի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ դատարան ուղարկված միջնորդությունների, ինչպես նաև դատարանի կողմից բավարարված միջնորդությունների թիվը։

7) քրեական վարույթներով դատարանի թույլտվությամբ իրականացվող քննչական գործողությունների, այդ թվում՝ գաղտնի քննչական գործողությունների կատարման համար դատարան ներկայացված միջնորդությունների, ինչպես նաև դատարանի կողմից բավարարված միջնորդությունների թիվը։

8) քրեական վարույթներով հանրային քրեական հետապնդում հարուցելու, չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին միջնորդությունների, ինչպես նաև բավարարված միջնորդությունների թիվը։

(...)

10) քրեական վարույթներով ձերբակալված անձանց թիվը՝ նշելով հիմքերը։

11) քրեական վարույթներով բացահայտված գույքային վնասի վերականգնման ուղղությամբ ձեռնարկված միջոցները։

(...)

13) առավել բարդ, բազմադրվագ կամ հասարակական հնչեղություն ունեցող քրեական վարույթներով նախաքննության իրականացումը և այլն:

ՀՀ քննչական կոմիտեում ներդրվել են նաև քննիչի աշխատանքը գնահատելու չափորոշիչներ՝ ըստ դատարան ուղարկված քրեական վարույթների քանակի, կարճված վարույթների քանակի, քրեական հետապնդման ժամկետները կասեցված վարույթների քանակի և այլն: Այսպես՝ ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 30. 06. 2023թ. № 173-Լ հրամանով հաստատված կարգի 30-րդ կետի համաձայն՝ քննիչի եռամսյակային աշխատանքը գնահատվում է հետևյալ չափորոշիչներով՝

1) դատարան ուղարկված քրեական վարույթները՝ ըստ հետևյալ միավորների.

ա. ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքով յուրաքանչյուր քրեական վարույթ - 2 միավոր,

բ. միջին ծանրության հանցագործության դեպքով յուրաքանչյուր քրեական վարույթ - 3 միավոր,

գ. ծանր հանցագործության դեպքով յուրաքանչյուր քրեական վարույթ - 4 միավոր,

դ. առանձնապես ծանր հանցագործության դեպքով յուրաքանչյուր քրեական վարույթ - 5 միավոր (...)¹³:

Կրկին նշենք, որ այս տվյալների վերլուծության անմիջական նպատակը նախաքննության արդյունավետությունը գնահատելը չէ, սակայն այս ցանկում նշված տվյալներից կարելի է ենթադրել, թե նախաքննության արդյունավետությունը որոշելու համար ինչ գործոններ կարող են հաշվի առնվել:

4. Քննչական մարմնի ղեկավարի լիազորությունները

4.1. Ընդհանուր դրույթներ

Քննչական մարմնի ղեկավարի լիազորությունները սահմանված են ՀՀ քր. դատ. օր-ի 40-րդ հոդվածի 1-ին մասով: Այս կապակցությամբ պետք է նշել մի քանի նկատառում:

Նախ՝ քննչական մարմնի ղեկավարի լիազորությունները կոչված են ապահովելու քննչական մարմնի՝ նախաքննությունը կազմակերպելու սահմանադրական գործառույթը: Օրենսդիրը չի կարող քննչական մարմնին վե-

¹³ <https://www.investigative.am/news/view/173-l-hramany-30-hunisi.html>

րապահել այնպիսի լիազորություններ, որոնք ակնհայտորեն դուրս են նախաքննության կազմակերպման գործառույթից:

Երկրորդ՝ ՀՀ քր. դատ. օր-ի 1-ին հոդվածն անուղղակիորեն արգելում է այլ օրենքներով քննչական մարմնի ղեկավարին դատավարական բնույթի լիազորություններ վերապահել: Օրինակ՝ «Քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով քննչական մարմնի ղեկավարին չի կարող վերապահվել քննչական գործողություններին մասնակցելու լիազորություն, քանի որ դա իր բնույթով դատավարական է, իսկ այդ լիազորությունը ՀՀ քր. դատ. օր-ով նախատեսված չէ: Այլ օրենքներով քննչական մարմնի ղեկավարին կարելի է վերապահել վարչական լիազորություններ, օրինակ՝ քննիչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացումը:

Երրորդ՝ ՀՀ քր. դատ. օր-ի 40-րդ հոդվածի 1-ին մասով թվարկված լիազորությունները սպառիչ չեն: Քննչական մարմնի ղեկավարն իրականացնում է ՀՀ քր. դատ. օր-ի այլ հոդվածներով նախատեսված՝ իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

4.2. Քննչական մարմնի ղեկավարի լիազորությունների դասակարգումը

4.2.1. Լիազորությունները դատավարականի և կազմակերպականի դասակարգելու խնդիրը: Քրեական դատավարության գիտության մեջ երկար տարիներ քննչական մարմնի ղեկավարի լիազորությունները դասակարգվում էին կազմակերպականի և դատավարականի: Օրինակ՝ քննչական մարմնի ղեկավարի՝ առանձին ապացուցողական կամ վարութային այլ գործողություններ կատարելու հանձնարարությունը համարվում էր դատավարական, իսկ նախաքննության կատարելու հանձնարարություն տալը՝ կազմակերպական: Նման դասակարգումը միգուցե պայմանավորված էր այն հանգամանքով, որ դատավարական օրենքով քննչական մարմնի ղեկավարի՝ նախաքննության կազմակերպման գործառույթն ամրագրված չէր, իսկ քննչական մարմնի ղեկավարի դատավարական սուբյեկտ լինելու հարցը որոշակիացված չէր:

ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քր. դատ. օր-ով՝ քննչական մարմնի և նրա ղեկավարի՝ նախաքննությունը պատշաճ կազմակերպելու գործառույթն ամրագրելուց և նրան դատավարության անվերապահ սուբյեկտ ճանաչելուց հետո պետք է վերանայել քննչական մարմնի ղեկավարի դատավարական օրենքով ամրագրված լիազորությունները դատավարականի և կազմակերպականի բաժանելու մոտեցումը: Բանն այն է, որ քննչական մարմնի ղե-

կավարի այսպես կոչված կազմակերպական լիազորությունները դատավարականացվել են և՛ ամրագրման ձևով, և՛ բովանդակությամբ: Այսպես՝ քննչական մարմնի ղեկավարի օրենքով սահմանված լիազորությունները դատավարական են ոչ միայն նրա համար, որ դրանք ամրագրված են դատավարական օրենքով, այլ նաև այն պատճառով, որ այսպես կոչված կազմակերպական բնույթի լիազորությունները գործառության լիարժեք տեսանկյունից են համարվում դատավարական. այդ լիազորություններն անմիջապես բխում են քննչական մարմնի ղեկավարի՝ նախաքննությունը կազմակերպելու սահմանադրական-դատավարական գործառույթից:

4.2.2. Քննչական մարմնի ղեկավարի ստատուսային և ոչ ստատուսային լիազորությունները:

Քննչական մարմնի ղեկավարի ստատուսային (գործառության) լիազորությունները տվյալ սուբյեկտի գործառության իրականացնելու համար անհրաժեշտ հնարավորություններն են: Առանց ստատուսային լիազորությունների՝ քննչական մարմնի ղեկավարը չի կարող իրականացնել նախաքննության պատշաճ կազմակերպման իր գործառույթը:

Ոչ ստատուսային լիազորություններն անմիջապես չեն վերաբերում քննչական մարմնի ղեկավարի գործառության իրականացմանը, սակայն այդ լիազորությունների միջոցով քննչական մարմնի ղեկավարը հնարավորություն է ստանում արդյունավետ կենսագործել ստատուսային լիազորությունները: Օրինակ՝ քննչական մարմնի ղեկավարն օրենքով իրավասու է ծանոթանալու իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի կողմից իրականացվող վարույթի նյութերին: Այս լիազորությունն ինքնին չի առնչվում քննչական մարմնի ղեկավարի՝ նախաքննության պատշաճ կազմակերպման գործառույթին, ուստի այն ոչ ստատուսային լիազորություն է: Սակայն նյութերին ծանոթանալու ոչ ստատուսային լիազորության իրագործման միջոցով քննչական մարմնի ղեկավարը կարող է իրականացնել քննիչի կողմից ապացուցողական և վարության այլ գործողությունների կատարմանը հետևելու ստատուսային լիազորություն: Քննչական մարմնի ղեկավարը, բնականաբար, չի կարող հետևել քննիչի կողմից քննչական գործողությունների կատարմանը՝ առանց վարույթի նյութերին ծանոթանալու:

ՀՀ քր. դատ. օր-ի 40-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված են քննչական մարմնի ղեկավարի ստատուսային հետևյալ լիազորությունները.

1) նախաքննության կատարումը հանձնարարում է իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչին.

2) վարույթն իր ենթակայության ներքո գործող մի քննիչից հանձնում է մյուսին.

3) վարույթից հեռացված քննիչին որոշմամբ փոխարինում է իր անմիջական ենթակայության ներքո գործող այլ քննիչով.

4) իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի կողմից իրականացվող վարույթով իր ենթակայության ներքո գործող քննիչներին հանձնարարում է առանձին ապացուցողական կամ վարույթային այլ գործողությունների կատարումը, եթե բացակայում է վարույթը քննչական խմբի կողմից իրականացնելու անհրաժեշտությունը.

5) որոշում է կայացնում նախաքննությունն իր ենթակայության ներքո գործող քննիչներից կազմված քննչական խմբի կողմից կատարելու վերաբերյալ, իսկ վերադաս դատախազի նախաձեռնությամբ՝ քննչական այլ մարմինների ղեկավարների հետ միասնական որոշում է կայացնում նախաքննությունը համատեղ քննչական խմբի կողմից կատարելու վերաբերյալ.

6) հետևում է իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի կողմից ապացուցողական և վարույթային այլ գործողությունների, դատախազի որոշումների, դատախազի և իր հանձնարարությունների կատարմանը, քրեական հետապնդման և կալանավորման ժամկետների պահպանմանը.

ՀՀ քր. դատ. օր-ի 40-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված են քննչական մարմնի ղեկավարի ոչ ստատուսային հետևյալ լիազորությունները.

1) ապահովում է վերադարձված վարույթի նյութերով վարույթը շարունակելու մասին դատախազի հանձնարարության կատարումը.

2) որոշում է կայացնում նախաքննությունն անձամբ կատարելու մասին՝ օգտվելով քննիչի համար սույն օրենսգրքով սահմանված բոլոր լիազորություններից.

3) ծանոթանում է իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի կողմից իրականացվող վարույթի նյութերին.

4) իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի միջնորդությամբ իր իրավասության սահմաններում ներկայացնում է քննչական փո-

խօսողության խնդրանք, իսկ նման խնդրանք ստանալու դեպքում իր իրավասության սահմաններում ապահովում է դրա կատարումը:

4.2.3. Վերադաս և անմիջական վերադաս քննչական մարմնի ղեկավարի լիազորությունները: Օրենսդիրը տարանջատել է նաև վերադաս և անմիջական վերադաս քննչական մարմնի ղեկավարի լիազորությունները: Օրինակ՝ քննչական մարմնի ղեկավարի՝ նախաքննության կատարումը հանձնարարում է իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչին, իսկ քննչական խումբ կարող է ստեղծել իր ենթակայության ներքո գործող քննիչներից: Վերջին դեպքում պարտադիր չէ, որ քննիչները լինեն քննչական մարմնի ղեկավարի անմիջական ենթակայության ներքո: **Նախաքննության մարմնում քրեադատավարական վերադասությունը կարգավորվում է ՀՀ քր. դատ. օր-ի 187-րդ հոդվածով:**

5. Քննչական մարմնի ղեկավարի առանձին լիազորությունների մեկնաբանությունը

5.1. Ընդհանուր դրույթներ

Որոշակի մեկնաբանման կարիք ունեն քննչական մարմնի ղեկավարի՝ նախաքննություն կատարելու հանձնարարություն տալու և հսկող դատախազի ակտերի վերաբերյալ առարկություն ներկայացնելու լիազորությունները:

5.2. Նախաքննություն կատարելու հանձնարարությունը և դրա բացակայության հետևանքները

ՀՀ քր. դատ. օր-ի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն.

«Քննչական մարմնի ղեկավարը նախաքննության կատարումը հանձնարարում է իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչին»:

Նախ՝ նշված լիազորության մեջ ուղիղ նշված է միայն նախաքննություն կատարելու հանձնարարության մասին, սակայն այն պետք է դիտարկել քննիչի՝ առերևույթ հանցագործության հատկանիշների առկայության դեպքում քրեական վարույթ նախաձեռնելու և նախաքննության կատարման անմիջապես ձեռնամուխ լինելու լիազորության հետ համակարգային կապերի ներքո (ՀՀ քր. դատ. օր-ի 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ): Քննիչն առանց քրեական վարույթ նախաձեռնելու նախաքննություն չի կարող կատարել, ուստի նա պետք է նախ՝ լուծի քրեական վարույթ նախաձեռնելու հարցը, այնուհետև՝ ձեռնամուխ լինի նախաքննության կատարմանը: Ասվածը նշանակում է, որ ՀՀ քր. դատ. օր-ի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կե-

տում ըստ էության ամրագրված է քննչական մարմնի ղեկավարի երկու լիազորություն՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը քննարկելու մասին հանձնարարություն տալու իմպլիցիտ լիազորությունը և նախաքննություն կատարելու մասին հանձնարարություն տալու էքսպլիցիտ լիազորությունը:

Երկրորդ՝ Քննչական մարմնի ղեկավարի այս լիազորության դատավարական արժեքը էապես բարձրացել է, քանի որ այն դարձել է կոնկրետ վարույթով պատշաճ քննիչի նույնականացման միակ հիմքը: Օրենքով «գործը քննիչի վարույթ ընդունելու մասին» որոշում այլևս նախատեսված չէ, ուստի առավել քան ակնհայտ է, որ քննիչի՝ կոնկրետ վարույթով նախաքննություն կատարելու իրավասուբյեկտության ծագման հիմքը քննչական մարմնի ղեկավարի՝ նախաքննություն կատարելու հանձնարարությունն է: Այս լիազորության իրականացման հարցում պետք է լինել ուշադիր:

Քննարկվող լիազորության կրողը քննիչի անմիջական վերադասն է, ուստի գործնականում այդ լիազորության իրականացման կառուցակարգը հետևյալն է: Քննչական մարմնի ստորաբաժանման պետը, օրինակ՝ մարզային քննչական վարչության պետը (այսուհետ՝ Վարչության պետը) հիմնականում մակագրության ձևով հանձնարարություն է տալիս համապատասխան տեղակալին կամ բաժնի պետին (ով ունի անմիջական ենթակա քննիչներ) *կազմակերպել* նախաքննությունը (չշփոթել քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու և նախաքննություն կատարելու հանձնարարության հետ), իսկ վերջիններս քրեական վարույթ նախաձեռնելու հարցի լուծումը և նախաքննության կատարումը (այսուհետ՝ կնշվի նախաքննություն կատարել, որը ներառում է նաև քրեական վարույթ նախաձեռնելու հարցի լուծումը) հանձնարարում է իր անմիջական ենթակայության ներքո գործող որևէ քննիչին:

Վարչության պետը պետք է հստակ գիտակցի, թե ինչ հանձնարարություն է տալիս. նա հանձնարարում է իր տեղակալին *կազմակերպել*² նախաքննությունը, թե՞ *կատարել* նախաքննություն: Եթե Վարչության պետն իր տեղակալին հանձնարարում է կատարել նախաքննություն, ապա այս պարագայում նա դառնում է ՀՀ քր. դատ. օր-ի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված լիազորության կրողը, իսկ իր տեղակալը՝ իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչ, ով պետք է կատարի նախաքննություն: Վարչության պետի կողմից իր տեղակալին նախաքննություն կատարելու հանձնարարության դեպքում տեղակալը չի կարող նա-

խաբնության կատարումը վերահանձնարարել իրեն անմիջական ենթակայության ներքո գործող քննիչին: Այսպես՝ թիվ 16956722 քրեական վարույթի նյութերով հսկող դատախազը մեղադրական եզրակացությունը չհաստատելու և վարույթի նյութերը նախաքննության մարմնին վերադարձնելու 08.02.2023թ. որոշման մեջ նշել է.

«Քրեական գործի նախաքննությունը քննչական բաժնի պետի կողմից հանձնարարվել է քննչական բաժնի պետի տեղակալին, ինչի վերաբերյալ քրեական գործն ուղարկելու վերաբերյալ կից գրության վրա կատարվել է համապատասխան գրառում՝ մակագրություն: Քննչական բաժնի պետի տեղակալը, հանդիսանալով իրեն ենթակա քննիչների անմիջական վերադասը, նախաքննությունն իրեն անմիջական ենթակա որևէ քննիչի չի հանձնարարել, ինչի մասին է վկայում ինչպես քրեական գործն ուղարկելու վերաբերյալ կից գրության վրա, այնպես էլ քրեական վարույթի նյութերում դրա վերաբերյալ որևէ գրառման՝ մակագրության բացակայությունը: Այսինքն, քննչական բաժնի պետի հանձնարարության առկայության և քննչական բաժնի պետի տեղակալի հանձնարարության բացակայության պայմաններում, բաժնի պետի տեղակալը հանդիսացել է միակ պաշտոնատար անձը, ով իրավասու է եղել իրականացնել նախաքննություն: Քրեական գործն առանց հանձնարարության բաժնի պետի տեղակալի փոխարեն վարույթ ընդունելուց հետո ավագ քննիչի կողմից, առանց իրավաչափ հիմքի, իրականացվել է նախաքննություն, և քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատախազին: Վերադասի՝ քրեական գործով նախաքննություն իրականացնելու հանձնարարության բացակայության պայմաններում ավագ քննիչը չի ունեցել քրեական գործով նախաքննություն կատարելու իրավասություն».

Քննիչը որևէ դեպքում չի կարող շրջանցել քննչական մարմնի ղեկավարին և նրա փոխարեն կոնկրետ դեպքով ինքն իրեն (փաստացի գործողություններով) վերապահել նախաքննություն կատարելու լիազորություն. դա քննչական մարմնի ղեկավարի բացառիկ իրավասությունն է: Այս տեսանկյունից՝ ՀՀ քր. դատ. օր. 41-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (քննիչը կազմում է քրեական վարույթ նախաձեռնելու վերաբերյալ արձանագրություն և անմիջապես ձեռնամուխ լինում նախաքննության կատարմանը) պետք է կարդալ նույն օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հետ համակցված:

Քննչական մարմնի ղեկավարի՝ նախաքննություն կատարելու հանձնարարություն տալու լիազորության դատավարական արժեքը բարձրանալուն զուգահեռ խստացվել է նաև դրա հետ կապված նորմերը խախտելու հետևանքը: Եթե բացակայում է քննչական մարմնի ղեկավարի՝ նախաքննություն կատարելու հանձնարարությունը, ապա քննիչը չունի կոնկրետ դեպքով նախաքննություն կատարելու իրավասություն. նրա ձեռք բերած տվյալները կճանաչվեն անթույլատրելի (ՀՀ քր. դատ. օր-ի 97-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ): Այսպես՝ վերը նշված թիվ 16956722 քրեական վարույթի նյութերով հսկող դատախազը նաև նշել է, որ նախաքննությունն իրականացվել և ապացույցները ձեռք են բերվել ոչ պատշաճ սուբյեկտի կողմից: Մեղադրական եզրակացության մեջ վկայակոչվել են ապացույցներ, որոնք ձեռք են բերվել ոչ պատշաճ սուբյեկտի կողմից՝ քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի կողմից, հետևաբար, դրանք քրեական գործով վարույթում մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և չեն կարող որպես ապացույց օգտագործվել:

Նման իրավիճակներից խուսափելու նպատակով.

1) քննչական մարմնի ղեկավարը հանցագործության մասին գրավոր հաղորդում ստանալիս անմիջական ենթակա քննիչին պետք է մակագրության ձևով ուղիղ հանձնարարի՝ լուծել քրեական վարույթ՝ նախաձեռնելու հարցը և կատարել նախաքննություն:

1.1. Եթե քննչական մարմնի ղեկավարը դեռևս իներցիայի ուժով հանձնարարել է քննիչին ուսումնասիրել հանցագործության մասին հաղորդումը, սակայն նախաքննություն կատարելու հանձնարարության մասին էքսպլիցիտ (ուղիղ) չի նշել, ապա «հանցագործության մասին հաղորդումն ուսումնասիրելու» հանձնարարությունը պետք է մեկնաբանել տարածական՝ դրա մեջ ներառելով նաև նախաքննություն կատարելու իմպլիցիտ հանձնարարությունը: Բանն այն է, որ նյութերի նախապատրաստման փուլի վերացման և քրեական վարույթ նախաձեռնելու գրեթե ինքնաշխատ համակարգի ներդրման պայմաններում քննչական մարմնի ղեկավարը, «Հանցագործության մասին հաղորդումն ուսումնասիրելու» հանձնարարություն տալով, ըստ էության իմպլիցիտ (անուղղակի) կամք է արտահայտել անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում վարույթ նախաձեռնելու և նախաքննություն կատարելու մասին:

2. Եթե հերթապահ քննիչը ստացել է հանցագործության մասին բանավոր հաղորդում (ահազանգ), ապա դեպքի վայր մեկնելուց և տեղում բանավոր հաղորդումն արձանագրելուց և վարույթ նախաձեռնելուց հետո պետք է, բնականաբար, կատարի նախաքննություն (օրինակ՝ դեպքի վայրի զննություն):

Այս պարագայում, Քննչական մարմինների՝ հերթապահ քննիչներ սահմանելու գերատեսչական (յուկալ) ակտերում պետք է ամրագրել կանոն՝ ըստ որի քննիչի անմիջական ղեկավարը հերթապահ քննիչին տալիս է վարույթ նախաձեռնելուց հետո նախաքննություն կատարելու **ընդհանրական** հանձնարարական: Հերթապահ քննիչին տրված՝ նախաքննություն կատարելու ընդհանրական հանձնարարությունն ունի sui generis (ինքնատիպ) բնույթ, քանի որ այն ոչ թե կոնկրետ դեպքով (ad hoc) է, այլ ընդհանրական-պրոսպեկտիվ է: Բոլոր դեպքերում հերթապահ քննիչին նախաքննություն կատարելու մասին նման ինքնատիպ հանձնարարություն տալը կհամապատասխանի ՀՀ քր. դատ. օր-ի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի էությանը, ուստի հերթապահ քննիչը կհամարվի նախաքննություն կատարող պատշաճ սուբյեկտ:

5.3. Հսկող դատախազի ակտերի վերաբերյալ առարկություններ կայացնելը

ՀՀ քր. դատ. օր-ի 40-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում ամրագրված է քննչական մարմնի ղեկավարի՝ հսկող դատախազական ակտերի վերաբերյալ առարկություն ներկայացնելու լիազորություն:

«Իր անմիջական ենթակայության ներքո գործող քննիչի կողմից իրականացվող վարույթով հսկող դատախազի հանձնարարությունների կամ վարույթային ակտերի, այդ թվում՝ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման վերաբերյալ եռօրյա ժամկետում առարկություն է ներկայացնում վերադաս դատախազին՝ չկասեցնելով հանձնարարության կամ որոշման կատարումը»:

Քննչական մարմնի ղեկավարն այս լիազորությունը կարող է իրականացնել երկու իրավիճակում. 1) հսկող դատախազի ակտը հասցեագրված է քննչական մարմնի ղեկավարին. 2) հսկող դատախազի ակտը հասցեագրված է վարույթն իրականացնող քննիչին: Առաջին իրավիճակում հսկող դատախազի ակտը քննչական մարմնի ղեկավարի կողմից վիճարկելն ինքնին հասկանալի է, սակայն պարզաբանման կարիք ունի քննիչին հասցեագր-

ված՝ հսկող դատախազի ակտերի վերաբերյալ քննչական մարմնի ղեկավարի կողմից առարկություն ներկայացնելու լիազորությունը:

Այս լիազորությունն ինքնատիպ է այն իմաստով, որ հսկող դատախազի ակտերի վերաբերյալ առարկություն ներկայացնելու լիազորությունը վերապահվել է մի սուբյեկտի (քննչական մարմնի ղեկավարին), որն այդ ակտի անմիջական հասցեատերը չէ: Սովորական պայմաններում քննիչին հասցեագրված դատախազական ակտերի վերաբերյալ առարկություն պետք է ներկայացնի քննիչը, քանի որ նա՝ որպես վարույթն իրականացնող մարմին, պետք է սկզբունքային դիրքորոշում հայտնի, թե արդյոք համաձայն է հսկող դատախազի ակտի հետ, թե՞ ոչ:

Օրենսդիրը, քննիչի փոխարեն առարկություն ներկայացնելու լիազորությունը նաև քննչական մարմնի ղեկավարին վերապահելով, օգտագործել է իրավական սուբստիտուցիայի (լատիներեն՝ *substitutio* – փոխարենը դնել, փոխարենը տալ) ինստիտուտը: Այս պարագայում քննչական մարմնի ղեկավարը հանդես է գալիս որպես քննիչի սուբստիտուտ, այսինքն՝ քննչական մարմնի ղեկավարը քննիչին հասցեագրված դատախազական ակտի վերաբերյալ առարկություն ներկայացնելու հարցով հաղես է գալիս քննիչի փոխարեն: Օրենսդիրը կարող է սուբստիտուցիաներ օգտագործել, եթե առկա են կոնկրետ նպատակներ:

Քննչական մարմնի ղեկավարին քննիչի սուբստիտուտ համարելը պայմանավորված է առավելապես քննչական մարմինների և դատախազության փոխհարաբերություններում առկա որոշակի բացասական հանգամանքներով: Հսկող դատախազի ակտերի վերաբերյալ քննիչի կողմից առարկություն ներկայացնելը դատախազները երբեմն ընկալում են խիստ բացասական, և այն դառնում է քննիչի դեմ «պատերազմ» հայտարարելու անձնական պատճառ, օրինակ՝ հսկող դատախազը չնչին առիթով քննիչին հեռացնում է վարույթին մասնակցելուց, ներկայացնում է կարգապահական վարույթ հարուցելու միջնորդություններ և այլն: Օրենսդիրը, դատախազական ակտերի վերաբերյալ առարկություն ներկայացնելու լիազորությունը նաև քննչական մարմնի ղեկավարին վերապահելով, փորձել է քննիչին զերծ պահել դատախազական հնարավոր «հետապնդումներից»:

Իրավունքի պարզ տրամաբանությունը հուշում է, որ քննչական մարմնի ղեկավարը կարող է այս լիազորությունը գործադրել, եթե քննիչն առարկություն ունի հսկող դատախազի հանձնարարության վերաբերյալ (օրեն-

քով այս մասին էքսպլիցիտ նշված չէ): Ուստի քննչական մարմնի ղեկավարը քննիչին հասցեագրված դատախազական ակտի վերաբերյալ առարկություն ներկայացնելիս պետք է աշխատակարգային եղանակով պարզի նախաքննություն կատարող քննիչի դիրքորոշումը: Քննչական մարմնի ղեկավարի կողմից (քննիչի դիրքորոշմանը հակառակ) հսկող դատախազի ակտի վերաբերյալ առարկություն ներկայացնելը հակասում է այս լիազորության էությանը:

Վերադաս դատախազը քննչական մարմնի ղեկավարի առարկությունն ստանալիս, պետք է ելնի այն կանխավարկածից, որ քննչական մարմնի ղեկավարը ներկայացնում է քննիչի դիրքորոշումը: Այս կանխավարկածը հերքվում է, եթե քննիչը գրավոր կամարտահայտությամբ տեղեկացնում է վերադաս դատախազին, որ չի կիսում քննչական մարմնի ղեկավարի առարկությունը: Նման դեպքում վերադաս դատախազը պետք է համարի, որ առարկություն չի ներկայացվել, և այդ մասին տեղեկացնի քննչական մարմնի ղեկավարին:

Ասվածը չի վերաբերում այն իրավիճակին, երբ վերադաս դատախազի գնահատմամբ հսկող դատախազի վարության ակտն *ակնհայտորեն* հակասորինական է: Այս դեպքում վերադաս դատախազը որոշման մեջ նշում է, որ հիմք է ընդունում հանրայնության սկզբունքը և գործում է ի պաշտոնե (*ex officio*)՝ անկախ քննչական մարմնի ղեկավարի կամ քննիչի առարկություն ներկայացնելու կամ այն հետ կանչելու հանգամանքից:

6. Եզրակացություններ

ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ քր. դատ. օր-ով քննչական մարմնի և նրա ղեկավարի՝ նախաքննությունը պատշաճ կազմակերպելու գործառնություն ամրագրելուց և նրան դատավարության անվերապահ սուբյեկտ ճանաչելուց հետո պետք է վերանայել քննչական մարմնի ղեկավարի՝ դատավարական օրենքով ամրագրված լիազորությունները դատավարականի և կազմակերպականի բաժանելու մոտեցումը: Քննչական մարմնի ղեկավարի այսպես կոչված կազմակերպական լիազորությունները դատավարականացվել են:

Քննչական մարմնի ղեկավարի լիազորությունները բաժանվում են երկու խմբի՝ ստատուսային և ոչ ստատուսային լիազորությունների: Ստատուսային լիազորությունները քննչական մարմնի ղեկավարի գործառնություն իրականացնելու համար անհրաժեշտ հնարավորություններն են: Առանց

ստատուսային լիազորությունների՝ քննչական մարմնի ղեկավարը չի կարող իրականացնել նախաքննության պատշաճ կազմակերպման իր գործառույթը:

ՀՀ քր. դատ. օր-ի 40-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում ըստ էության ամրագրված է քննչական մարմնի ղեկավարի երկու լիազորություն՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը քննարկելու մասին հանձնարարություն տալու իմպլիցիտ լիազորությունը և նախաքննություն կատարելու մասին հանձնարարություն տալու էքսպլիցիտ լիազորությունը:

Օրենսդիրը, քննիչի փոխարեն առարկություն ներկայացնելու լիազորությունը նաև քննչական մարմնի ղեկավարին վերապահելով, օգտագործել է իրավական սուբստիտուցիայի ինստիտուտը, որի դեպքում քննչական մարմնի ղեկավարը հանդես է գալիս որպես քննիչի սուբստիտուտ:

ОТДЕЛЬНЫЕ ВОПРОСЫ ПРОЦЕССУАЛЬНОГО СТАТУСА РУКОВОДИТЕЛЯ СЛЕДСТВЕННОГО ОРГАНА

Гамбарян Артур

Заведующий кафедрой теории права и конституционного права Российско-Армянского университета, профессор кафедры юриспруденции Академии государственного управления Республики Армения, доктор юридических наук, профессор, заслуженный юрист Республики Армения

Аннотация. В статье рассматривается ряд принципиальных вопросов, касающихся статуса руководителя следственного органа. Автор анализирует функцию руководителя следственного органа по организации предварительного следствия, представляет трактовку эффективности предварительного следствия и критерии его оценки.

В статье приводятся статусные и нестатусные полномочия руководителя следственного органа. Отдельно обсуждается полномочие руководителя следственного органа на дачу следователю поручения о проведении предварительного следствия.

Автор отмечает, что в пункте 1 части 1 статьи 40 УК РА закреплены два полномочия руководителя следственного органа: implicit-полномочие на дачу поручения о рассмотрении вопроса об инициировании уголовного производства и explicit-полномочие на дачу поручения о проведении предварительного следствия.

Ключевые слова: руководитель следственного органа, следователь, прокурор, эффективность предварительного следствия, поручение производства предварительного следствия.

CERTAIN ISSUES OF THE PROCEDURAL STATUS OF THE HEAD OF THE INVESTIGATIVE BODY

Ghambaryan Artur

Russian-Armenian University

Head of the Department of Legal Theory and Constitutional Law,

Professor of the Department of Jurisprudence of the Academy of

Public Administration of the Republic of Armenia, Doctor of

Law, Professor, Honored Lawyer of the Republic of Armenia

Summary: The article discusses a number of fundamental issues related to the status of the head of the investigative body. The author analyzes the function of organizing the preliminary investigation of the head of the investigative body, presents the perception of the effectiveness of the preliminary investigation and the criteria for evaluating it. The article presents the status and non-status powers of the head of the investigative body. The authority of the head of the investigative body to instruct the investigator to conduct a preliminary investigation is specifically discussed. The author notes that in Article 40, Part 1, Clause 1 of the RA Criminal Procedure Code, two powers of the head of the investigative body are established: the implicit power to give an order to discuss the issue of initiating criminal proceedings and the explicit power to give an order to conduct a preliminary investigation.

Key words: head of the investigative body, investigator, prosecutor, effectiveness of preliminary investigation, assignment to conduct preliminary investigation.

Հոդվածը գրախոսվել է՝ 25.07.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 01.08.2023թ.:

ԿԱՇԱՌՔԻ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՅԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Մելիքյան Մելիք

*ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի
իրավական փորձաքննությունների ծառայության
գլխավոր մասնագետի պաշտոնակատար,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ*

Համառոտագիր: Հանցագործության պրովոկացիան, մի շարք երկրների (որոնց շարքում նաև Հայաստանի Հանրապետության) օրենսդրությամբ չունենալով կոդիֆիկացված առանձին սահմանում, նորմավորված դրսևորվում է կաշառքի կամ առևտրային կաշառքի պրովոկացիայի հանցակազմերի վերաբերյալ իրավանորմերում:

Չնայած այն հանգամանքին, որ տվյալ իրավակազավորումներում գործածվում է «պրովոկացիա» տերմինը, այնուամենայնիվ, դրանց բովանդակային ուսումնասիրությունից երևում է, որ դրանք որոշակիորեն տարբերվում են հանցագործության պրովոկացիայի դասական ընկալումներից և առանձին բաղադրիչներից:

Վերոգրյալն ինքնին հանգեցնում է կաշառքի պրովոկացիայի հանցակազմի տեսական մեկնաբանություններում իրարամերժ հայեցակետերի ձևավորմանը, և միաժամանակ պատճառ հանդիսանում գործնականում օրենսդրական կարգավորումների ճշգրիտ կիրառման համար, ինչպիսի խնդիրների առկայության հիմնական պատճառն էլ հանդիսանում են քննարկվող հանցատեսակի վերաբերյալ օրենսդրական առերևույթ բացերը:

Նշվածի կապակցությամբ ուսումնասիրվել են ներպետական և արտասահմանյան փորձը, դոկտրինալ հայեցակետերը և իրավակիրառ պրակտիկայում ձևավորված էմպիրիկ փորձը, որոնց համակցմամբ, հնարավոր է եղել հիշյալ հիմնախնդիրների շուրջ հանդես գալ նոր՝ գիտականորեն հիմնավորված թեզերով և առաջարկներով:

Մասնավորապես, աշխատանքի արդյունքում կատարված եզրահանգումներով ամփոփվել են, ինչպես քննարկվող հանցագործության կիրառման արդի հիմնահարցերը, այնպես էլ ուղենշվել այն անհրաժեշտ լրամշակումները, որոնք նպատակամետ կլինեն հաղթահարելու այն խոչընդոտները, որոնք ի հայտ են գալիս տեսական և գործնական ասպեկտներում:

Բանալի բառեր. Հանցագործության պրովոկացիա, կաշառք, իրավանորմ, քրեական օրենսգիրք, արտասահմանյան երկրների փորձ, էմպիրիկ փորձ, դոկտրինալ հայեցակետեր, օրենսդրություն, տեսություն:

Հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ համընդհանուր ճանաչում ունեցող բնորոշման բացակայության պայմաններում այն քրեական իրավունքի տարբեր աղբյուրներում դրսևորվում է տարակերպ:

Ինչպես 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Նախկին օրենսգիրք), այնպես էլ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքում (այսուհետ՝ Գործող օրենսգիրք) կաշառքի պրովոկացիան ըստ էության հանդիսանում է հանցագործության պրովոկացիայի մասնավոր դրսևորում, որն իր մեջ ներառում է հանցագործության պրովոկացիայի որոշ տարրեր:

Արտասահմանյան երկրների փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկրներում, ևս, հանցագործության պրովոկացիայի առավել առանցքային դրսևորումներն ամփոփված են կաշառքի պրովոկացիայի հանցակազմի վերաբերյալ կարգավորումների ներքո:

Ուշագրավ է, որ չնայած տվյալ կարգավորումներում «պրովոկացիա» տերմինի գործածման, այնուամենայնիվ, դրանք որոշակիորեն տարբերվում են հանցագործության պրովոկացիայի դասական ընկալումներից և ներհատուկ գծերից, ինչն էլ առաջ է բերում տարբեր խնդրահարույց հարցեր, որոնք էլ հանդիսանում են սույն աշխատանքի հետազոտության առարկան:

Նախկին օրենսգրքի 350-րդ հոդվածով քրեական կաշառքի կամ առևտրային կաշառքի պրովոկացիա է համարվում հանցագործության արհեստական ապացույցներ ստեղծելու կամ շանտաժի նպատակով պաշտոնատար անձին կամ առևտրային կամ այլ կազմակերպություններում կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթներ իրականացնող անձին, առանց նրա համաձայնության դրամ, արժեթղթեր, այլ գույք տալու կամ գույքային բնույթի ծառայություններ մատուցելու փորձը:

Գործող օրենսգրքի 477-րդ հոդվածի համաձայն կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիան սահմանված է որպես՝ հանցագործության կամ դրան անձի մասնակցության արհեստական ապացույց ստեղծելու կամ շանտաժի նպատակով կաշառք կամ մասնավոր ոլորտում կաշառք ստանալու սուբյեկտին առանց նրա համաձայնության գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ այլ առավելություն առաջարկելու կամ տրամադրելու փորձը:

Քննարկվող հանցատեսակի ներպետական կարգավորումներին հարանման են Ռուսաստանի (քրեական օրենսգրքի 304-րդ հոդված), Ղրղստանի (քրեական օրենսգրքի 343-րդ հոդված), Տաջիկիստանի (քրեական օրենսգրքի 321-րդ հոդված, Թուրքմենստանի (քրեական օրենսգրքի 199-րդ հոդված) քրեական օրենսգրքերում նախատեսված՝ կաշառքի և (կամ) առևտրային կաշառքի համար նախատեսված հանցատեսակները:

Հարկ է նշել, որ Նախկին օրենսգրքի և Գործող օրենսգրքի 477-րդ հոդվածների միջև էական փոփոխություններ չեն կատարվել¹, ուստի սույն հետազոտության շրջանակներում այն աղբյուրների ուսումնասիրությունը, որոնք վերաբերում են Նախկին օրենսգրքի 350-րդ հոդվածին, շարունակում են պահպանել իրենց իրավական արժեքն ու արդիականությունը:

Ինչպես Նախկին օրենսգրքի 350-րդ, այնպես էլ Գործող օրենսգրքի 477-րդ հոդվածների կարգադրությունների բովանդակային վերլուծությունը ցույց է տալիս, որ անձը՝ ում նկատմամբ կատարվում է հանցավոր ոտնձգությունը, բնավ կարող է հաղորդակից չլինել ոտնձգողի հանցավոր գործողություններին, ինչպիսի օրինակ կարող է լինել իր նկատմամբ հետազայում որպես շանտաժի կամ կեղծ ապացույցի առարկա հանդիսացող համապատասխան առարկայի՝ գաղտնի եղանակներով փոխանցումը, ինչի վերաբերյալ առկա է նաև էմպիրիկ փորձ:

Այսպես, Նախկին օրենսգրքի կաշառքի կամ առևտրային կաշառքի պրովոկացիայի համար քրեական պատասխանատվություն սահմանող 350-րդ հոդվածով դատարան ուղարկված թվով երկու գործերով առաջադր-

¹ Այս մասով տե՛ս **Ա.Գաբուզյան, Ա.Մարգարյան, Տ.Միմոնյան** «ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների եվ նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց», Եվրոպայի խորհուրդ, 2022 թվական, էջ 463:

ված մեղադրանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կատարված հանցավոր արարքներում տուժողներն ընդհանրապես անտեղյակ են եղել իրենց նկատմամբ կատարվող ոտնգործողություններից:

Թիվ ԵԿԴ/0335/01/10 քրեական գործով Ս.Բ.-ին մեղադրանք է առաջադրվել և հետագայում վերջինս մեղավոր է ճանաչվել այն բանի համար, որ նա հանդիսանալով համապատասխան համալսարանի ամբիոնի նախկին աշխատակցուհի և լարված հարաբերությունների մեջ գտնվելով նույն ամբիոնի այլ աշխատակցուհու հետ, վերջինիս կողմից իրականում կատարված հանցագործության արհեստական ապացույցներ ստեղծելու նպատակով կատարել է կաշառքի պրովոկացիա, այսինքն՝ գնացել է համալսարան իր մոտ եղած բանալիով բացել է ամբիոնի մուտքի դուռը, գաղտնի ներս է մտել ու առանց կարգադրիչ գործառույթներ իրականացնող անձի՝ Ի.Բ.-ի համաձայնության, գաղտնի 500.000 ՀՀ դրամ գումար դրել է վերջինիս աշխատասեղանի դարակում և աննկատ հեռացել²:

Տեսությունում, մեկնաբանվելով քննարկվող հանցակազմը, նույնպես չի բացառվել դրա օբյեկտիվ կողմի իրականացումը՝ տուժողի համար բացարձակապես աննկատ եղանակով և նշվել է հետևյալը *«Հանցակազմի պարտադիր հատկանիշ է պաշտոնատար անձի կամ առևտրային կամ այլ կազմակերպություններում կարգադրիչ կամ կառավարման այլ գործառույթներ իրականացնող անձի համաձայնության բացակայությունը: (...) [Կ]աշառք տալու փորձն իրականացվում է խաբեությամբ, քողարկված ձևով, գաղտնի (օրինակ՝ հանցավորը կաշառքի առարկան դնում է պաշտոնատար անձի սեղանի դարակում կամ պայուսակի մեջ (...)) և այլն»*³:

Ստացվում է, որ Նախկին օրենսգրքի 350-րդ հոդվածի նկարագրական մասի և դրա տեսական մեկնաբանության, ինչպես նաև էմպիրիկ փորձի համաձայն՝ կաշառքի պրովոկացիան կարող է դրսևորվել տուժողի կողմից միանգամայն աննկատ, այսինքն՝ առանց պրովատորի և անձի միջև հաղոր-

² Տե՛ս թիվ ԵԿԴ/0335/01/10 քրեական գործը՝ հետևյալ հղմամբ <http://www.datalex.am/?app=AppSmartSearch> (18.09.2023թ.), տե՛ս նաև ԵԿԴ/0042/01/13 քրեական գործը նույնանման փաստական հանգամանքներով՝ հետևյալ հղմամբ http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=14355223812296504 (18.09.2023թ.):

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով). /Երևանի պետ. համալս. – Եր.: ԵՊՀ հրատ., 2012, էջեր 1026-1028:

դակցման, ինչպիսի իրողությունը փաստորեն շարունակվում է նաև Գործող օրենսգրքի 477-րդ հոդվածի համանման ձևակերպումներով՝ հակասելով հանցագործության պրովոկացիայի էությանը:

Նման հակասությունը պայմանավորված է նրանով, որ հանցագործության պրովոկացիան թեև իրականացվում է պրովակատորի կողմից գործադրված քողարկված և տուժողի համար դրա իրական նպատակներն անհայտ լինելու պայմաններում, սակայն ամեն դեպքում պրովակատորի և տուժողի միջև առաջանում է համապատասխան հաղորդակցում, որը միտված է անձի մոտ հանցանք գործելու վճռականություն առաջանալուն:

Մինչդեռ, ՀՀ քրեական օրենսգրքի 477-րդ հոդվածի նկարագրական մասի վերլուծությունից ստացվում է, որ չի բացառվում նաև պրովակատորի և տուժողի միջև որևէ հաղորդակցման ի սպառ բացակայությունը և միայն հանցագործության առարկան փոխանցելով կատարվում է հանցագործության պրովոկացիա, ինչը սակայն տվյալ երևույթի ոգուն համահունչ լինել չի կարող:

Հատկանշական է, որ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 304-րդ հոդվածի (Կաշառքի կամ առևտրային կաշառքի պրովոկացիա՝ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումների ոլորտում պետական կամ համայնքային կարիքները բավարարելու համար) վերաբերյալ դոկտրինալ հայեցակետ է արտահայտվել այն մասին, որ տվյալ հանցագործության առկայությունը պետք է ենթադրի համապատասխան պաշտոնատար անձի համաձայնության բացակայություն, որն արտահայտվում է տյալ հոդվածի իմաստով հանցագործության առարկան ստանալու **բացահայտ** մերժմամբ: Մինչդեռ, Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 304-րդ հոդվածի դրույթներից բխում է, որ կաշառքի վերաբերյալ կեղծ ապացույցի ստեղծումը կատարվում է, ոչ թե հանցագործության պրովոկացիայի դեպքում դրսևորվող ներգործությամբ, այլ հանցագործն ընդամենը ստեղծում է միայն տուժողների կողմից կաշառք ստանալու պատրանք, ինչը չի տեղավորվում հանցագործության պրովոկացիայի էության շրջանակների մեջ⁴:

⁴ St' u **Борков В.Н., Николаев К.Д.** Пробелы уголовного закона не могут компенсироваться нарушением правил квалификации // Вестник Томского государственного университета. Право. 2020, № 36, էջեր 30-39:

Բացի այդ, ՌԴ Գերագույն դատարանը՝ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ ՌԴ քրեական օրենսգրքի 304-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվությունը վրա է հասնում միայն այն դեպքում, երբ հանցավորն արհեստական ապացույց ստեղծելու կամ շանտաժ կատարելու միտումով փորձում է մատուցել հանցագործության առարկան, իսկ անձն **ակնհայտորեն** հրաժարվում է դրա ընդունումից⁵:

Քննարկվող հիմնահարցը կարող է ստեղծել նաև գործնական խնդիրներ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 477-րդ և ՌԴ քրեական օրենսգրքի 304-րդ հոդվածներում նկարագրված արարքի՝ տուժողի համար լիովին գաղտնի լինելու պայմաններում կատարվելու պարագայում, կարող է առաջ գալ կատարված արարքը որպես ապացույցների կեղծման մեկ այլ հանցատեսակով և ոչ կաշառքի պրովորակացիաով որակելու խնդիրը:

Կարծիքներ կան, որ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 304-րդ հոդվածը, դա ոչ թե պրովորակացիայի, այլ իրականում կաշառք ստանալու փաստի կամ կաշառքի առարկայի վերաբերյալ ապացույցների կեղծման մասին է⁶:

Վերոգրյալից հետևում է, որ այնքանով որքանով ՀՀ քրեական օրենսգրքի 477-րդ հոդվածը և ՌԴ քրեական օրենսգրքի 304-րդ հոդվածների շարադրանքից չի բացառվում, որ դրանց օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել տուժողի համար անհայտ կերպով, դրանով քննարկվող հանցագործության ար-

⁵ St' u Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 09.07.2013 № 24 «О судебной практике по делам о взяточничестве и об иных коррупционных преступлениях» // СПС «КонсультантПлюс»:

⁶ St' u **Иванов В.Д.** Уголовно-правовое понятие провокации преступления и ее правовые последствия // Научные труды РАЮН : в 3-х т. Т. 2. Вып. 3. М., 2003., էջեր 453-457, **Метельский П.С.** Уголовно-правовая характеристика провокации взятки либо коммерческого подкупа // Вестник НГУ. Серия: Право. 2006. Т. 2. № 2, էջեր 115-124, **Фомин М.А.** Фальсификация результатов оперативно-розыскной деятельности. Մոսկվա, 2018. Էջ 193, **Шкабин Г.С.** Понятие провокации преступления в отечественном законодательстве, էջեր 174-179, **Кудрявцев В.Н.** Российское уголовное право. Особенная часть (главы автора **Кудрявцева В.Н.**) : учебник, էջ 407:

տաքին հատկանիշներն առերևույթ նմանվում են արհեստական ապացույց ստեղծելու եղանակով սուտ մատնություն կատարելու հետ:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 476-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի կարգավորումից, որով քրեական պատասխանատվություն է սահմանված՝ մեղադրանքի արհեստական ապացույց ստեղծելու զուգորդմամբ՝ իրավասու մարմնին հանցագործության դեպքի կամ անձի կողմից հանցանք կատարելու մասին սուտ տեղեկություն տալու համար, ինչը նույնությամբ արտացոլում և անգամ կրկնում է կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիայի այն դրսևորումները, որոնք ուղեկցվում են արհեստական ապացույց ստեղծելու միտումով:

Այս դիրքորոշումն էլ ավելի է ամրապնդվում նաև՝ վերը նշված դոկտրինալ այն հայեցակետերով, որ ՀՀ և ՌԴ քրեական օրենսգրքերում ամրագրված վերոնշյալ հանցագործությունները հանդիսանում են ոչ թե դասական իմաստով հանցագործության պրովոկացիա՝ իրեն բնորոշ տարրերով, այլ իրականում հանդիսանում են կաշառք ստանալու փաստի կամ կաշառքի առարկայի վերաբերյալ արհեստական ապացույցների ստեղծման մասնավոր դրսևորումներ:

Նշվածի կապակցությամբ իրավացիորեն փաստվել է, որ անձի նկատմամբ՝ արհեստական ապացույցներ ստեղծելու նպատակով հանցավորի կողմից հանցագործության առարկայի «սողոսկումը», հանգեցնում է պատասխանատվության ոչ թե ՌԴ քրեական օրենսգրքի 304-րդ, այլ ելնելով այն կատարող սուբյեկտի առանձնահատկություններից՝ օրենսգրքի 306-րդ հոդվածի 3-րդ մասով (դիտավորությամբ սուտ մատնությունը՝ մեղադրանքի արհեստական ապացույց ստեղծելով) կամ 303-րդ (Ապացույցների և օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների կեղծում) կամ համապատասխան հիմքերի առկայության դեպքում՝ 285-րդ (Պաշտոնեական լիազորությունների չարաշահում) կամ 286-րդ (պաշտոնեական լիազորությունների անցում) հոդվածներով⁷:

Ամփոփելով կարելի է արձանագրել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 477-րդ հոդվածի նկարագրական մասի ձևակերպումը՝ իրավական որոշակիության տեսանկյունից, այնքանով, որքանով չի բացառում տվյալ հանցագործության

⁷ См. у Жарких И.А. Провокация преступления в сфере незаконного оборота наркотических средств, էջեր 78-91:

իրականացումն ընդհանրապես տուժողի հետ չհաղորդակցվելով, ոչ միայն չի բխում հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ ընդհանրացված, ինչպես նաև սույն աշխատանքով ներկայացված ընկալումներից, այլև ինքնին հակաիրավական արարքին գնահատական տալու և որակելու տեսանկյունից ստեղծում է խնդրահարույց իրավիճակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 476-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ արհեստական ապացույց ստեղծելու եղանակով սուտ մատնություն կատարելու հանցակազմի հետ մրցակցության տեսանկյունից:

Նման պայմաններում, առաջարկվում է կաշառքի պրովոկացիայի վերաբերյալ հանցակազմի ձևակերպումը լրամշակել՝ տուժողի կողմից ակնհայտ կերպով հանցագործության առարկան ստանալու առաջարկից հրաժարվելու դեպքում հանցավորի կողմից տվյալ անձի նկատմամբ հոգեբանական ազդեցություն գործադրելու եղանակով վերջինիս հանցագործության առարկան ստանալուն հրահրելու պայմանը, ինչն էլ էլակետային կհամարվի արարքում՝ կաշառքի կամ առևտրային կաշառքի պրովոկացիայի հանցակազմի տարրերի առկայությունը որոշելիս:

ПРОБЛЕМЫ ПРОВОКАЦИИ ВЗЯТКИ В СВЕТЕ ОСОБЕННОСТЕЙ ПРОВОКАЦИИ ПРЕСТУПЛЕНИЯ

Меликян Мелик Арташесович

*И.о. главного эксперта службы правовой
экспертизы аппарата Кассационного суда
Республики Армения соискатель кафедры
уголовного права юридического факультета ЕГУ*

Провокация преступления, не имея в законодательстве ряда стран (в числе которых и Республика Армения) отдельного кодифицированного определения, нормированно проявляется в правовых нормах относительно состава преступления провокации взятки или коммерческой взятки.

Несмотря на то обстоятельство, что в этих правоведениях используется термин «провокация», тем не менее, из их содержательного изучения видно, что они несколько отличаются от классического восприятия и отдельных компонентов провокации преступления.

Вышесказанное само по себе приводит к формированию в теоретических интерпретациях состава преступления провокации взятки взаимоисключающих точек зрения, и одновременно является причиной точного применения законодательных регулирований на практике, основной причиной наличия каких проблем являются кажущиеся законодательные пробелы относительно рассматриваемого вида преступления.

В связи с этим были изучены внутригосударственный и зарубежный опыт, доктринальные аспекты и эмпирический опыт, сформировавшийся в правоприменительной практике, при совмещении которых было возможно выступить с новыми научно обоснованными тезисами и предложениями по упомянутым проблемам.

В частности, с выводами, сделанными в результате работы, были обобщены как актуальные проблемы применения рассматриваемого преступления, так и намечены необходимые доработки, которые будут направлены на преодоление препятствий, возникающих в теоретическом и практическом аспектах.

Ключевые слова: провокация преступления, взятка, правовые нормы, Уголовный кодекс, опыт зарубежных стран, эмпирический опыт, доктринальные аспекты, законодательство, теория.

PROBLEMS OF PROVOCATION OF A BRIBE IN THE LIGHT OF THE PECULIARITIES OF PROVOCATION OF A CRIME

Melik Melikyan

*Acting Chief Expert of the Legal Expertise Service
of the Cassation Court of Republic of Armenia
Applicant of the Department of Criminal Law
YSU Faculty of Law*

Provocation of a crime, without having a separate codified definition in the legislation of a number of countries (including the Republic of Armenia), is normalized in the legal norms regarding the composition of the crime of provocation of a bribe or commercial bribe.

Despite the fact that the term "provocation" is used in these legal studies, nevertheless, from their meaningful study it is clear that they differ somewhat from the classical perception and individual components of the provocation of a crime.

The above in itself leads to the formation of mutually exclusive points of view in theoretical interpretations of the crime of provocation of a bribe, and at the same time is the reason for the precise application of legislative regulations in practice, the main reason for the existence of which problems are apparent legislative gaps regarding the type of crime under consideration.

In this regard, domestic and foreign experience, doctrinal aspects and empirical experience formed in law enforcement practice were studied, with the combination of which it was possible to come up with new scientifically based theses and proposals on the mentioned problems.

In particular, with the conclusions drawn as a result of the work, both the actual problems of the application of the crime in question were summarized, and the necessary improvements were outlined, which will be aimed at overcoming obstacles arising in theoretical and practical aspects.

Key words: provocation of crime, bribe, legal norms, Criminal Code, experience of foreign countries, empirical experience, doctrinal aspects, legislation, theory.

Հոդվածը գրախոսվել է՝ 29.09.2023թ.:

Ներկայացվել է տպագրության՝ 29.09.2023թ.:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌԵՑԻԴԻՎԱՅԻՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Մնացականյան Արտակ

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնամեթոդական
և զարգացման վարչության պետ, իրավաբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ,
ոստիկանության փոխգնդապետ*

Ռեցիդիվային հանցավորության հանրային վտանգավորությունը: ՀՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածով (հանցագործությունների ռեցիդիվը) սահմանվում է.

1. Հանցագործությունների ռեցիդիվ է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելն այն անձի կողմից, որը դատվածություն ունի դիտավորյալ հանցագործության կատարման համար:

2. Հանցագործությունների ռեցիդիվը գնահատելիս հաշվի չի առնվում այն դատվածությունը, որը՝

1) վերացվել է օրենքով սահմանված կարգով,

2) առաջացել է մինչև անձի 18 տարին լրանալը կատարված հանցագործության հետևանքով,

3) առաջացել է ազատությունից զրկելու հետ չկապված պատիժ նշանակելու հետևանքով:

Պետք է նշենք, որ կրիմինալոգիայում ռեցիդիվ է համարվում ոչ միայն դիտավորյալ հանցանքի կատարումը դիտավորյալ հանցագործության համար դատվածություն ունեցող անձի կողմից, այլև փաստացի ռեցիդիվը, այսինքն՝ հանցանքի կատարումն այն անձի կողմից, ով նախկին հանցագործության համար պատասխանատվության չի ենթարկվել, կամ ով ազատվել է պատասխանատվությունից ոչ արդարացուցիչ հիմքով, կամ այն անձի կողմից, ում դատվածությունը մարվել կամ հանվել է: Դեռ ավելին, ներկայումս կրիմինալոգիայում շրջանառության մեջ է անգգույշ հանցագործությունների ռեցիդիվի հասկացությունը¹:

¹ Տե՛ս Ա.Հ.Գաբրույան, «Կրիմինալոգիա (դասախոսություններ)», ԵՊՀ, 2011թ., էջ-102:

Ռեցիդիվային հանցավորությանը բնորոշ է թերևս հանրային ամենաբարձր վտանգավորությունը, իսկ այդ հանցավորության կենտրոնում նախկինում արդեն դիտավորությամբ հանցանք կատարած անձն է: Քննարկվող հանցավորության հանրային վտանգավորությունը կարելի է փաստել և՛ հանցագործության, և՛ այն կատարող անձի առանձնահատկություններով:

Ռեցիդիվային հանցավորության մասին խոսելիս պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնենք այն հանգամանքի վրա, որ դա կատարվում է ոչ առաջին անգամ, և, ի տարբերություն առաջնային հանցավորության, այստեղ սկսում է աշխատել դիալեկտիկայի օրենքը, այն է՝ որևէ երևույթի շարժման՝ զարգացման ներքին գործընթացը: Հանցագործությունից հանցագործություն փոխվում են ինչպես քանակական, այնպես էլ որակական հատկանիշները²: Այստեղ դիալեկտիկական օրենքի զարգացման գործընթացը ռեցիդիվային հանցավորության մեջ կարելի է մեկնաբանել որպես յուրաքանչյուր նոր կատարվող հանցագործության հետ վերջինիս հանրային վտանգավորության բարձրացմամբ: Այս պարագայում ռեցիդիվային հանցավորության հանրային վտանգավորությունն իր մեջ ներառում է ոչ միայն քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածով նախատեսված հանցանքի տեսակները (ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր), այլ նաև կատարված հանցագործության կազմակերպվածությունը, դրա բացահայտման դժվարությունը, այն կատարող անձի բացահայտման և պատասխանատվության ենթարկելու բարդությունները:

Վերոգրյալից կարելի է ենթադրել, որ ռեցիդիվային հանցավորությունն առաջնային հանցավորության համեմատ շատ ավելի վտանգավոր է, ինչը բացատրվում է նաև ռեցիդիվային հանցագործություն կատարող անձի (այսուհետ՝ հանցագործ) առանձնահատկություններով: Մասնավորապես կարելի է առանձնացնել հանցագործին բնութագրող հետևյալ հատկանիշները.

1. Հանցագործն առաջնային հանցագործությանը հաջորդող յուրաքանչյուր հանցագործություն կատարելուց հետո ձեռք է բերում որոշակի փորձ և հմտություններ:

2. Հանցագործի հանրային վտանգավորության մասին վկայում է այն հանգամանքը, որ վերջինիս հանցավոր վարքագիծը չի փոխվում նույնիսկ

² Տե՛ս **Марцев А.И.** Диалектика и вопросы теории уголовного права. - Красноярск, 1990. - էջ-27:

պետության կողմից նախորդ հանցագործությունների համար նշանակված պատժի կրման դեպքում:

3. Հանցագործի հակաիրավական նկրտումները չեն չեղոքացվում քրեաիրավական, կրիմինալոգիական և քրեակատարողական միջամտության դեպքում, ինչը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ ամրապնդվել է հանցագործի հակասոցիալական բնութագիրը³:

Հանցագործն ունենում է անձնային հատկանիշների որոշակի փոփոխություններ, մասնավորապես՝ ավելանում է հանցավոր փորձ ձեռք բերելու ձգտումը, արմատանում է հակասոցիալական վարքագիծը, ինչն իր հերթին տանում է նրան, որ հանցագործը խնդրահարույց իրավիճակներում ավելի հաճախ ընտրում է խնդրի լուծման հանցավոր ճանապարհը: Յուրաքանչյուր նոր հանցագործություն կատարելիս նա ավելի մանրակրկիտ է մոտենում հանցագործության նախապատրաստմանը և գործիքների ընտրությանը, դառնում է հանցավոր ենթամշակույթի կրողն ու տարածողը, հանցագործության կատարման մեջ ներգրավվում է նոր անձանց (հետազոտությունները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր ռեցիդիվիստ միջին հաշվով 9 անձի ներգրավվում է հանցագործությունների մեջ⁴): Վերոգրյալից կարելի է եզրահանգել, որ ռեցիդիվի ընթացքում հանցագործի հանրային վտանգավորությունն անհամեմատ ավելի է մեծանում, քան առաջնային հանցավորության սուբյեկտինը: Ձեռք բերված հմտությունները նպաստում են, որպեսզի հանցագործը հետզհետե ավելի ծանր հանցագործություններ կատարի, մեծացնի առաջնային հանցավորության մեջ ներգրավվող անձանց (այդ թվում է անչափահասների քանակը), համախմբի իր շուրջ հակահասարակական և հակաիրավական հայացքներ ունեցող անձանց (հանցագործներին, հանցավոր ենթամշակույթը կրող անձանց):

Ռեցիդիվային հանցավորության կանխումը

Ռեցիդիվային հանցավորության կանխումից խոսելիս նախ պետք է նշենք, որ հանցավորությունը համակարգային և ինքնազարգացող երևույթ է, որի առանձին տարրերի միջև առկա է սերտ կապ և փոխազդեցություն, և ռեցիդիվային հանցավորության կանխման հաջողությունը մեծ հաշվով

³ Տե՛ս **Филимонов В.Д.** Общественная опасность личности отдельных категорий преступников и ее уголовно-правовое значение. Томск, 1973. էջ-42-47:

⁴ Տե՛ս **Ա.Զ. Գաբրուլյան**, «Կրիմինալոգիա (դասախոսություններ)», ԵՊՀ, 2011թ., էջ-103:

կախված է ընդհանուր հանցավորության կանխման արդյունավետությունից:

Ռեցիդիվային հանցավորության կանխումն ընդհանուր կանխման մաս է, որին բնորոշ է որոշակի առանձնահատկություններ: Ռեցիդիվային հանցավորության կանխումը ենթադրում է նպատակային հակազդեցություն հանցավորությունը պայմանավորող պատճառների և պայմանների վրա: Այդ հակազդեցությունն իրականացվում է ընդհանուր սոցիալ-տնտեսական, սոցիալ-կրիմինալոգիական և անհատական մակարդակներում:

Հանցավորության հիմնական, բազիսային պատճառներն ունեն սոցիալ-տնտեսական բնույթ, և գլխավորապես այդ ոլորտում իրագործված պետական և հասարակական միջոցառումները կարող են դրական արդյունք տալ հանցավորության և հատկապես ռեցիդիվային հանցավորության կանխման գործում:

Սոցիալ-տնտեսական միջոցներով ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարը պետք է ընթանա մի քանի ուղղություններով: Այդ ուղղություններից առաջինը և ամենագլխավորը պետության այնպիսի քաղաքականության և սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացումն է, որոնք կհանգեցնեն տնտեսության աճին, կնպաստեն արտադրության և առևտրի զարգացմանը և՛ երկրի ներսում, և՛ արտաքին տնտեսական հարաբերություններում, ինչը հնարավորություն կընձեռի բավարարել բնակչության օրեցօր աճող պահանջմունքները և նոր աշխատատեղերի ստեղծման շնորհիվ իջեցնել գործազրկության աղետալի չափերի հասնող մակարդակը ՀՀ-ում: Նման իրավիճակի ստեղծումը կնպաստի ինչպես ընդհանուր, այնպես էլ ռեցիդիվային հանցավորության մակարդակի իջեցմանը: Պետության կողմից սոցիալ-տնտեսական մեթոդների կիրառման հաջորդ ուղղությունը, որն անմիջականորեն միտված է ռեցիդիվային հանցավորության կանխմանը, նախկինում հանցանք կատարած անձանց առջև ծառացած կանոնադրյալ կենսական խնդիրների լուծումն է: Նման միջոցառումները բազմազան են և կարող են իրագործվել միայն պետության հատուկ քաղաքականության և առանձնակի հոգածության պայմաններում:

Կարևորագույն խնդիր է նախկինում հանցանք կատարած անձանց աշխատանքով ապահովելը, քանզի հանցանքների և այլ հակաիրավական արարքների կատարումը մեծապես պայմանավորված է նրանց ֆինանսական վիճակով: Գործազրկությունը և դրա արդյունքում ֆինանսական մի-

ջոցներից, հետևաբար նաև ինքնուրույնությունից զուրկ լինելն անձի մոտ ձևավորում են ֆրոստրացնող հոգեվիճակ, որից ազատվելուն ուղղված գործողությունները հաճախ կարող են հակաիրավական, հանցավոր բնույթ կրել:

Սոցիալ-տնտեսական, դաստիարակչական, գաղափարախոսական մեթոդների հետ մեկտեղ ռեցիդիվային հանցավորության կանխման գործում արդյունավետ կիրառվում են նաև պետաիրավական մեթոդները: Վերջիններս պետության կողմից օրենքներում ամրագրված ձևերի և միջոցների ամբողջություն են, որոնց միջոցով իրականացվում է անձի իրավական վիճակին վերաբերող նորմերի անշեղ կատարումը, ապահովվում է իրավահարաբերությունների մասնակիցների իրավաչափ վարքագիծը, կանխվում և վերացվում են անձանց իրավունքների և ազատությունների խախտումները: Ռեցիդիվային հանցավորության կանխման պետաիրավական մեթոդները բխում են պետության և հասարակության շահերից, ուղղված են նախկինում հանցանք կատարած անձանց իրավագիտակցության բարձրացմանը: Այս մեթոդներն ուղղված են թե՞ ընդհանուր, թե՞ մասնավոր կանխմանը և դիալեկտիկապես փոխկապակցված են միմյանց հետ:

Ռեցիդիվային հանցավորության կանխմանն ուղղված միջոցառումները կառավարվում են համապատասխան պետական մարմինների կողմից: Դրանք հիմնականում նպատակ են հետապնդում վերացնելու այն անբարենպաստ և բացասական պայմանները, որոնք առկա են նախկինում հանցանք կատարած անձանց անմիջական շրջապատում և կարող են վերջիններիս նոր հանցավոր վարքագծի դրսևորման նախապայման լինել:

Այսպիսով՝ կարելի է նշել, որ ռեցիդիվային հանցավորության դեմ պայքարի գործում կառավարումը նպատակաուղղված, գիտականորեն հիմնավորված գործընթաց է, որը կանոնակարգում է նախկինում հանցանք կատարած անձանց շրջանում կանխարգելիչ գործունեություն իրականացնող բազմաթիվ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների գործունեությունը: Վերջին հաշվով, պետք է փաստել, որ հասարակական միջոցառումների համակարգը՝ ուղղված ռեցիդիվային հանցավորության կանխմանը, իր հիմքում ունի դաստիարակչական և կանխարգելիչ մեթոդների ազդեցությունը, որն ուղղված է իրավախախտում թույլ տված կամ

հակաօրինական վարքագիծ դրսևորելու հակված անձանց հանցանք կատարելուց հետ պահելուն⁵:

ՀՀ-ում ռեցիդիվային հանցավորության կանխման առկա իրավիճակը և խնդիրները Ռեցիդիվային հանցավորության կանխման հիմնական սուբյեկտը պետությունն է, որն իրականացնում է ընդհանուր սոցիալ-տնտեսական կանխման միջոցառումներ, իսկ կրիմինալոգիական և անհատական կանխումն իրականացնում է իրավապահ մարմինների միջոցով: Այն, որ ռեցիդիվային հանցավորության կանխումը խիստ արդիական խնդիր է, դրա մասին վկայում է վիճակագրությունը:

Աղյուսակ 1⁶

Հ/Հ	ՏԱՐԵԹԻՎ	ԴԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ
1.	2018	331
2.	2019	337
3.	2020	242
4.	2021	531
5.	2022	562

Ինչպես երևում է աղյուսակ 1-ում, դատվածություն ունեցող անձանց կողմից կատարվող հանցագործությունների քանակը, ըստ էության, վերջին հինգ տարիների ընթացքում աճել է, և այն հանգամանքը, որ ՀՀ-ում 2020 թվականի տվյալների համեմատությամբ ռեցիդիվային հանցավորությունը հաջորդող երկու տարիների ընթացքում կրկնապատկվել է, սա արդեն իսկ ազդակ է, որ ռեցիդիվային հանցավորության կանխումը, մեղմ ասած, ճիշտ ուղղությամբ չի ընթացել:

Ներկայումս ռեցիդիվային հանցավորության կանխման ուղղությամբ թերևս ամենաստացված մեթոդներից կարելի է նշել պետաիրավական մեթոդները՝ պետության կողմից օրենքներում ամրագրված ձևերի և միջոցների

⁵ Տե՛ս **Գ. Մահակյան**, «Ռեցիդիվային հանցավորության կանխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Պետություն և իրավունք 3-4, 2014թ., ԵՊՀ, Երևան, էջեր-77-79:

⁶ Տվյալները տրամադրվել են ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի կողմից 31.01.2023թ.: Նշված տվյալների մեջ ընդգրկված են ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ կատարված հանցագործությունների քանակը:

ամբողջությունը: Դատվածությունն ունեցող անձի վերասոցիալականացման ուղղությամբ մի շարք կարգավորումներ են նախատեսվել ինչպես ՀՀ քրեակատարողական օրենսգրքով⁷, այնպես էլ այլ իրավական ակտերով⁸, որոնք վերաբերում են նշված անձանց կրթության և աշխատանքային զբաղվածության առանձնահատկություններին, վերասոցիալականացման ընթացքում հսկողություն և վերահսկողություն իրականացնելուն⁹:

Սրան զուգահեռ՝ պետությունը որոշակիորեն սահմանափակում է դատվածությունն ունեցող անձանց աշխատանք ունենալու հնարավորությունները: Մասնավորապես «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ պետական ծառայությունն ընդգրկում է դատական ծառայությունը, քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության գորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը¹⁰: Նշված պետական ծառայությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերով սահմանվում են հետևյալ դրույթները՝

- Դատական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը՝ որը... դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար կամ ազատությունից զրկելու հետ կապված պատիժ է կրել՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից.

⁷ Տե՛ս ՀՀ քրեակատարողական օրենսգիրք՝ ընդունված 15.06.2022թ., ՀՕ-246-Ն, հոդվածներ 8, 10, 19,20:

⁸ Տե՛ս Պրոբացիայի մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 17.05.2016թ., ՀՕ-48-Ն, հոդված 28:

⁹Տե՛ս Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության համայնքային ոստիկանության գործունեության կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 18-ի թիվ 1233-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 06.11.2014 թվականի թիվ 1254-Ն որոշման 25-րդ կետի 4-րդ ենթակետը:

¹⁰ Տե՛ս Հանրային ծառայության մասին ՀՀ օրենք՝ ընդունված 23.03.2018թ., ՀՕ-206-Ն, հոդված 3-րդ:

- Դատական կարգադրիչների ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, որը՝ ... դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը հանված կամ մարված լինելու հանգամանքից¹¹.

- Քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարում են... ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքում¹²...

- Դիվանագիտական ծառայության պաշտոնի չեն կարող նշանակվել այն անձինք, որոնք՝ ... դատապարտվել են հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով չի հանվել կամ չի մարվել¹³.

- Մաքսային ծառայության պաշտոնի չեն կարող նշանակվել այն անձինք, ովքեր՝ ... դատապարտվել են հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ¹⁴.

- Հարկային ծառայության պաշտոնի չի կարող նշանակվել այն անձը, ով՝ ... դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ¹⁵.

- Փրկարարական ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, որը՝ ... դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար¹⁶.

- Պայմանագրային զինվորական ծառայության չի կարող ընդունվել այն քաղաքացին՝ ... որի նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, կամ որն ունի չհանված կամ չմարված դատվածություն¹⁷.

¹¹ Տե՛ս Դատական դեպարտամենտում ծառայության մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 13.06.2018թ., ՀՕ-336-Ն, հոդված 13, 44:

¹² Տե՛ս Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 23.03.2018թ., ՀՕ-205-Ն, հոդված 37:

¹³ Տե՛ս Դիվանագիտական ծառայության մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 24.10.2001թ., ՀՕ-248-Ն, հոդված 25:

¹⁴ Տե՛ս Մաքսային ծառայության մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 03.07.2002թ., ՀՕ-402-Ն, հոդված 9:

¹⁵ Տե՛ս Հարկային ծառայության մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 03.07.2002թ., ՀՕ-407-Ն, հոդված 13:

¹⁶ Տե՛ս Հայաստանի փրկարար ծառայության մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 08.07.2005թ., ՀՕ-171-Ն, հոդված 29:

¹⁷ Տե՛ս **Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին** ՀՀ օրենքը՝ ընդունված 15.11.2017թ., ՀՕ-195-Ն, հոդված 30:

- Ազգային անվտանգության մարմիններում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով՝ ... դատապարտվել է հանցագործություն կատարելու համար¹⁸.

- Ոստիկանությունում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին... ով դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար¹⁹.

- Քրեակատարողական ծառայությունում որպես քրեակատարողական ծառայող ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով՝ ... դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը հանված կամ մարված լինելու հանգամանքից²⁰.

- Հարկադիր կատարման ծառայությունում որպես հարկադիր կատարող ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով՝ ...դատապարտվել է հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ²¹.

- Հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունի այն անձը, որը՝ ...դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ²².

- Անձը չի կարող լինել փաստաբան, եթե նա՝ ...դատապարտվել է դիտավորյալ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ²³.

- Դատախազ չի կարող նշանակվել այն անձը, որը՝ ... դատապարտվել է դիտավորյալ հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից²⁴.

¹⁸ Տե՛ս Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 11.05.2003թ., ՀՕ-532-Ն, հոդված 14:

¹⁹ Տե՛ս Ոստիկանությունում ծառայության մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 03.07.2002թ., ՀՕ-401-Ն, հոդված 11:

²⁰ Տե՛ս Քրեակատարողական ծառայության մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 08.07.2005թ., ՀՕ-160-Ն, հոդված 14:

²¹ Տե՛ս Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 18.02.2004թ., ՀՕ-40-Ն, հոդված 9:

²² Տե՛ս Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 23.08.2018թ., ՀՕ-206-Ն, հոդված 14:

²³ Տե՛ս Փաստաբանության մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 14.12.2004թ., ՀՕ-29-Ն, հոդված 33:

- Քննչական կոմիտեում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, որը՝... դատապարտվել է հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից²⁵.

- Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը՝... որը դատապարտվել է հանցագործության համար՝ անկախ դատվածությունը մարված կամ հանված լինելու հանգամանքից²⁶:

Նշված կարգավորումներից պարզ է դառնում պետության դիրքորոշումն առ այն, որ դատվածություն ունեցող անձանց կարիք բացարձակապես չկա պետական ծառայությունում կամ առհասարակ պետական հիմնարկներում: Նախատեսելով դատվածություն ունեցող անձանց աշխատելու հնարավորությունների սահմանափակումներ՝ մեր կարծիքով, պետության համար այս հանգամանքն առաջացնում է նշված անձանց այլ աշխատանքով ապահովելու լրացուցիչ պարտավորություն: Ներկայումս դատվածություն ունեցող անձանց նկատմամբ ոստիկանության և պրոբացիոն ծառայության կողմից իրականացվող վարչական հսկողությունը հիմնականում ձևական բնույթ է կրում և սահմանափակվում է պարբերաբար արձանագրություններ կազմելով, քանզի վերջիններս դատվածություն ունեցող անձանց կացարանով ապահովելու կամ աշխատանքի տեղավորելու ուղղությամբ հստակ գործիքակազմ չունեն: Աշխատանքով ապահովելու հիմնական գործառնություն իրականացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալությունը, սակայն եթե ուսումնասիրենք գործակալության կողմից առաջարկվող աշխատատեղերը, ապա դրանք հիմնականում հետևյալ հաստիքներն են՝ բանվոր, հավաքարար, մատուցող (վարձատրությունը՝ նվազագույն աշխատավարձի չափով), մյուս հաստիքների համար պահանջվում է կամ մասնագիտական կրթություն, կամ աշխատանքային ստաժ²⁷:

²⁴ Տե՛ս Դատախազության մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 17.11.2017թ., ՀՕ-198-Ն, հոդված 34:

²⁵ Տե՛ս ՀՀ քննչական կոմիտեի մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 19.05.2014թ., ՀՕ-25-Ն, հոդված 17:

²⁶ Տե՛ս Հակակոռուպցիոն կոմիտեի մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 24.03.2021թ., ՀՕ-147-Ն, հոդված 15:

²⁷ Զբաղվածության պետական գործակալությունից աշխատանքային կարգով քննարկման ընթացքում նշեցին, որ նախատեսվել էր ազատագրկման ձևով պատժի

Դատվածությունն ունեցող անձանց աշխատանքով ապահովելու՝ պետության գործառույթն իրականացվում է ««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» ՀՀ կառավարության 17.05.2014 թվականի թիվ 534-Ն որոշմամբ սահմանված կարգով²⁸: Նշված կարգով սահմանվում է՝ գործազուրկը ճանաչվում է անմրցունակ, եթե՝...անձը վերադարձել է ազատագրված վայրերից...: Անմրցունակ անձանց աշխատանքով ապահովելուն ուղղված միջոցառումներն իրականացվում են կա'մ գործատուին միանվագ դրամական փոխհատուցում տալու, կա'մ զբաղվածության պետական գրասենյակի միջնորդությամբ ազատագրված վայրերից վերադարձած անձանց հարմար աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման միջոցով: Հարմար աշխատանքի տեղավորված յուրաքանչյուր անմրցունակ անձի համար մեկ տարի ժամկետով (ամսական կտրվածքով) գործատուին տրվում է փոխհատուցում՝ տվյալ անմրցունակ անձի համար սահմանված ամսական աշխատավարձի հիսուն տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափը:

Առաջին հայացքից պետությունը կարծես թե տեսականորեն կարգավորել է մասնավոր ոլորտի կողմից դատվածությունն ունեցող անձանց աշխատանքով ապահովելու գործընթացը՝ սահմանելով որոշակի արտոնություններ, սակայն որքանո՞վ են այս կարգավորումները գործնականում աշխատում... Այս տեղեկատվությունն ստանալու համար դիմել ենք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալություն, որտեղից ստացված պատասխանը ներկայացնում ենք ամբողջությամբ.

«Ի պատասխան Միասնական սոցիալական ծառայություն հասցեագրված Ձեր 3.02.2023 թվականի թիվ ԸԳ/7996-2023 դիմումի՝ հայտնում եմ, որ

կրման ավարտին վեց ամիս մնացած դատապարտյալների համար իրականացնել մասնագիտական կրթություն, սակայն ինչ-ինչ պատճառներով դա չի իրականացվել:

²⁸ Տե՛ս ««Զբաղվածության մասին» հայաստանի հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» ՀՀ կառավարության 17.05.2014 թվականի թիվ 534-Ն որոշման 13-րդ, 14-րդ, 15-րդ հավելվածները:

նշված խմբի անձինք (նկատի ունի դատվածություն ունեցող անձինք) «Աշխատաշուկայում անմրցունակ, ազատագրկման վայրերից վերադարձած, հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում» ծրագրում չեն ընդգրկվել:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ 2020-2022 թթ-ին ՄՄԾ տարածքային կենտրոններում ազատագրկման վայրերից վերադարձած 137 աշխատանք փնտրող անձ ստացել է խորհրդատվություն, որից 43-ը հաշվառվել է, 1-ն ընդգրկվել է «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրման» ծրագրում, 6-ը՝ տարածքային կենտրոնների աջակցությամբ տեղավորվել աշխատանքի:»:

Այս տեղեկատվությունից կարելի է վեր հանել հետևյալ վիճակագրությունը.

1. Հինգ տարվա ընթացքում դատվածություն ունեցող որևէ անձ չի ընդգրկվել գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագրում (խնդրել ենք ներկայացնել 2018-2022թթ. տեղեկատվությունը).
2. Երկու տարվա ընթացքում «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրման» ծրագրում ընդգրկվել է ընդամենը մեկ դատվածություն ունեցող անձ.
3. Երկու տարվա ընթացքում պետության աջակցությամբ աշխատանքի է տեղավորվել դատվածություն ունեցող ընդամենը վեց անձ:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ դատվածություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման հարցում պետության նախատեսած կարգավորումները, մեղմ ասած, չեն աշխատում: Այս գործընթացի ձախողման հնարավոր օբյեկտիվ պատճառ կարող է լինել այն, որ դատվածություն ունեցող անձինք (ռեցիդիվիստները) դժվար են անցնում վերասոցիալականացման ուղին, և օրինական աշխատանքով զբաղվելուն խոչընդոտում է նաև հանցավոր ենթամշակույթը: Սակայն «Սոցիալական արդարություն» ՀԿ-ի կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ իրենց

ծրագրում ընդգրկված շահառուների (նկատի ունի դատապարտյալներին) 95 %-ը ցանկություն էր հայտնել աշխատելու և հաստատական էր գտնելու օրինական աշխատանք²⁹:

Կարծում ենք՝ հանցագործի վերասոցիալականացման և հատկապես աշխատանքով ապահովման գործող կարգավորումներն արդյունավետ չեն և՛ առաջարկվող աշխատաշուկայի, և՛ հանցագործի ու մասնավոր ոլորտի մոտ աշխատանքի տեղավորման մոտիվացիա ստեղծելու առումներով: Պետությունը պետք է կանխումն այնպես իրականացնի, որ դատվածություն ունեցող անձն իր գոյությունը պահպանելու և նվազագույն սոցիալական պայմաններն ապահովելու համար հանցավոր գործունեության իրական այլընտրանք ունենա:

Արդարացիորեն կարող է հարց առաջանալ, թե ինչու՞ պետք է պետությունը հակաիրավական, հակաբարոյական կայուն վարքագիծ ունեցող անձին «արժանապատիվ» աշխատանք առաջարկի, իսկ օրինապահ քաղաքացին իր ուժերով ցածր վարձատրվող աշխատանքով պահպանի իր գոյությունը, պատասխանը հետևյալն է. օրինապահ քաղաքացին արդեն իսկ ընտրել է իր իրավական կայուն վարքագիծը, վերջինիս համոզելու խնդիր չկա, իսկ պրոֆեսիոնալ հանցագործը, ըստ էության, ունի «մասնագիտություն», որին լավագույնս տիրապետում է, և որն ապահովում է իր նյութական բարեկեցությունը, դա հանցագործությունն է, և պետությունը, այո՛, պետք է համոզի, պարտադրի, նաև խնդրի, որպեսզի դատվածություն ունեցող անձը փոխի իր «մասնագիտությունը»։ Օրինակ՝ պատկերացնենք արհեստավարժ մանկավարժին համոզում ենք՝ հրաժարվի իր մասնագիտությունից և զբաղվի անասնապահությամբ:

Ռեցիդիվային հանցավորության կանխման վերաբերյալ առաջարկություններ

Ռեցիդիվային հանցավորության կանխման համար անհրաժեշտ է օրինապահ վարքագիծ ընտրելու իրական մոտիվացիա ստեղծել հանցագործների մոտ: Մոտիվացիայի անքակտելի մաս է կազմում պահանջմունքը, որը հազեբանների մեծ մասը դիտում է որպես կարիք:

²⁹ Տե՛ս «Ձեռնարկ պատժից ազատման նախապատրաստվող դատապարտյալների սոցիալական վերականգնման վերաբերյալ», «Սոցիալական արդարություն» ՀԿ, Երևան 2011, էջ 13:

Մարդու պահանջմունքները ենթարկվում են որոշակի դասակարգման: Այսպես, առանձնացվում են **նյութական** (սննդի, հագուստի, բնակարանի և այլն), **հոգևոր** (շրջապատը և ինքն իրեն ճանաչելու, ստեղծագործելու, գեղագիտական և այլն) և **սոցիալական** (շփվելու, աշխատելու, շրջապատի կողմից ընդունվելու, ինքնահաստատման և այլն) պահանջմունքներ³⁰:

Մասնագիտական գրականության մեջ ռեցիդիվային հանցավորության կանխման հիմնական առաջարկվող միջոցառումները կապված են վերը նշված պահանջմունքների բավարարման հետ, մասնավորապես՝

1. Ապահովել ազատազրկման վայրերից վերադարձած անձանց կացարաններով (նյութական պահանջմունք).
2. Վերականգնել ազատազրկման վայրերից վերադարձած անձանց դրական կապերը, նպաստել սոցիալականացման գործընթացին, ապահովել անձի ինտեգրումն ընդհանուր հասարակություն (հոգևոր պահանջմունք).
3. Ապահովել ազատազրկման վայրերից վերադարձած անձանց աշխատանքով (սոցիալական պահանջմունք):

Վերը նշված միջոցառումների իրականացման հարցում պետք է կարևորվի պետության և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը և ներգրավվածությունը: Շատ կարևոր է նաև ուսումնասիրել արտասահմանյան երկրների փորձն այս ոլորտում: Օրինակ՝ ԱՄՆ-ն՝ որպես աշխարհում ամենամեծաքանակ դատապարտյալներ ունեցող երկիր, ունի որոշակի հաջողություններ ռեցիդիվային հանցավորության կանխման ոլորտում: Այստեղ նույնպես կարևորվում է հասարակական կազմակերպությունների դերը, մասնավորապես ԱՄՆ-ի Իլինոյս նահանգում գործում են «JUST of Dupage»³¹, իսկ Նյու-Յորքում «Exodus Transitional Community»³² հասարակական կազմակերպությունները, որոնք հիմնադրվել են նախկին դատապարտյալների նախաձեռնությամբ: Այս կազմակերպությունների գործունեության հիմնական նպատակն ազատազրկման վայրերից վերադարձած անձանց աջակցելն է, վերասոցիալիզացիային և օրինապահ վարքագծի ձևավորմանը նպաստելը, որն իրականացվում է հոգևոր, ֆինանսական և

³⁰ Տե՛ս **Ա. Գաբուզյան**, «Հանցավոր վարքագծի մոտիվացիա» ուսումնական ձեռնարկ, հեղինակային հրատարակչություն, ԵՊՀ, Երևան 2017, էջ 13:

³¹ Տե՛ս <https://justofdupage.org/>, վերջին այցելության ամսաթիվ՝ 10.03.2023թ.:

³² Տե՛ս <https://www.etcny.org/>, վերջին այցելության ամսաթիվ՝ 10.03.2023թ.:

տեղեկատվական օգնություն ցուցաբերելու միջոցով: Այս կազմակերպությունները ֆինանսավորվում են ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական աղբյուրներից (նվիրատվություններ, եկեղեցու աջակցություն և այլն):

Մեր կարծիքով, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ պետք է ստեղծել հատուկ դատապարտյալների համար նախատեսված ժամանակավոր կացարաններ, եթե ոչ անվճար, ապա գոնե շուկայական գներից ավելի մատչելի, քանի որ հատկապես երկարաժամկետ ազատազրկման ձևով պատիժ կրած անձինք հիմնականում կացարաններից գուրկ են լինում, իսկ սա անձի ամենատարրական նյութական պահանջմունքի բավարարման կարևորագույն խնդիր է:

Ազատազրկման վայրերից վերադարձած անձանց վերասոցիալականացմանը նպաստող կարևորագույն միջոցառումներից մեկը, թերևս, դատվածություն ունեցող աշխատող անձանց արհեստակցական միություններ ստեղծելն է, որը կնպաստի արդեն իսկ օրինապահ վարքագիծ ձևավորած նախկին դատապարտյալների կողմից նոր վերադարձած անձանց հոգեբանական աջակցություն ցուցաբերելուն և հասարակության մեջ սահուն ինտեգրվելուն:

Վերը նշված միջոցառումներից զատ ռեցիդիվային հանցավորության կանխման կարևորագույն միջոցառումը դատվածություն ունեցող անձանց աշխատանքով ապահովելն է: Այտեղ պետք է երկու մոտեցում.

1. Դատապարտյալների մոտ առաջացնել աշխատելու մոտիվացիա.
2. Տնտեսվարող սուբյեկտների մոտ ստեղծել դատվածություն ունեցող անձանց աշխատանքի ընդունելու մոտիվացիա:

Կարծում ենք՝ վերը նշված միջոցառումները պետք է իրականացնել համակարգային մոտեցմամբ՝ ներգրավելով պետության ամբողջ ռեսուրսները և ներուժը.

1. Անհրաժեշտ է համագործակցել տնտեսվարող սուբյեկտների հետ, որպեսզի վերջիններս ներկայացնեն իրենց մոտ առկա թափուր հաստիքների քանակը և պահանջվող հմտությունները (մասնագիտություն, կրթություն, որակավորում և այլն):
2. Անհրաժեշտ է վերլուծել և հաշվառել դատապարտյալներին, որոնց ազատազրկման պատժատեսակի կրման ավարտից մնացել է մինչև մեկ տարի ժամկետ:

3. Պետք է կազմակերպել դատապարտյալների ուսուցումը (կրթությունը) ներկայացված թափուր հաստիքներին համապատասխան (ի դեպ՝ կրթությունը կարող է իրականացվել ինչպես առանձին կազմակերպությունների ներգրավմամբ, այնպես էլ տնտեսվարող սուբյեկտների կազմում գործող կրթական հաստատություններում):
4. Բարեհաջող ավարտած և որակավորում ստացած դատապարտյալներին տեղավորել աշխատանքի համապատասխան կազմակերպությունում:

Այս ամենի բարեհաջող իրականացման համար անհրաժեշտ է իրավական կարգավորումներով ամրապնդել որոշ երաշխիքներ, որոնք կապահովեն վերը նշված մոտիվացիաները.

1. Ամրագրել, որ պետության կողմից աշխատանքի տեղավորման աջակցությունը տրամադրվում է միայն մեկ անգամ, և այս ընթացքում դատվածություն ունեցող անձի հանցագործություն կատարելու դեպքում վերջինս այլևս զրկվում է պետության աջակցությունից:
2. Կրթություն ստանալու մոտիվացիա ստեղծելու համար պետք է ուսումը բարեհաջող ավարտելու և որակավորում ստանալու հանգամանքը դիտվի որպես դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հիմք:
3. Դատապարտյալի կողմից ապագայում իր օրինապահ վարքագիծը կանխատեսելու և սոցիալականացումը պատկերացնելու նպատակով անհրաժեշտ է հստակ տեղեկացնել, թե տվյալ որակավորումն ստանալու դեպքում որտեղ է աշխատելու և ինչքան է վարձատրվելու:

Ինչ վերաբերում է տնտեսվարող սուբյեկտների մոտ դատվածություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորելու մոտիվացիայի ստեղծմանը, ապա այստեղ պետք է հաշվի առնենք, որ վերջիններիս գործունեության հիմնական նպատակը եկամուտ ստանալն է, այս առումով պետությունը պետք է այնպիսի արտոնություն սահմանի, որ ներկայիս շուկայական հարաբերություններում ձեռք տա տնտեսվարող սուբյեկտին: Մեր կարծիքով, ներկայումս գործող կարգավորումը որոշակի փոփոխությունների դեպքում նույնպես կարող է աշխատել, օրինակ՝ գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման մեթոդը պետք է նախատեսվի սահմանված ամսական աշխատավարձի հիսուն տոկոսի չափով՝ առանց սահմանափակումներ

րի (նկատի ունենք գործող կարգավորումը՝ ոչ ավել, քան նվազագույն ասական աշխատավարձի չափը): Նշված արտոնությունը պետք է գործի ոչ թե մեկ տարի, ինչպես հիմա է նախատեսված, այլ ամբողջ դատվածության ժամանակահատվածում, կարծում ենք՝ այս մոտեցումն արդար կլինի պետության կողմից դատվածությանն առնչվող աշխատանքի ընտրության սահմանափակումներ նախատեսելու տեսանկյունից:

Հաշվի առնելով ռեցիդիվային հանցավորության հանրային մեծ վտանգավորությունը (հանցավոր ենթամշակույթի տարածման, անչափահասների առաջնային հանցավորության ներգրավման, առհասարակ հանցավորության մեջ պրոֆեսիոնալիզմի բարձրացման առումներով)՝ կարծում ենք, որ այս հանցավորության կանխման վրա ծախսվող հսկայական ռեսուրսներն արդարացված կլինեն:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПРЕДОТВРАЩЕНИЯ РЕЦИДИВНОЙ ПРЕСТУПНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Мнацаканян Артак Самвелович

*Начальник управления по учебно-методической
работе и развитию Образовательного комплекса
МВД Республики Армения, кандидат юридических
наук, доцент, подполковник полиции*

Об актуальности профилактики рецидивных преступлений свидетельствуют статистические данные, согласно которым за последние два года число преступлений, совершаемых лицами, имеющими судимость, в Армении удвоилось. В этом смысле очень важно предусмотреть и осуществлять научно обоснованные и системные мероприятия, поскольку рецидивному преступлению характерно, пожалуй, самая высокая общественная опасность, в центре которой лицо, в прошлом уже умышленно совершившее преступление.

Ключевые слова: преступник, общественная опасность, рецидив, работа, ресоциализация, профилактика.

SOME ISSUES OF PREVENTING CRIMINAL RECIDIVISM IN THE REPUBLIC OF ARMENIA

Mnatsakanyan Artak

Head of Educational-Methodical and Development Department

Educational Complex of the Ministry

of Internal Affairs of the Republic of Armenia

Police Lieutenant Colonel, PhD in Law, Associate Professor

The relevance of criminal recidivism is evidenced by statistical data according to which in the past two years the number of crimes committed by previously convicted persons in the Republic of Armenia has doubled. In this regard, it is of utmost importance to plan and implement scientifically proven and systemized measures since the criminal recidivism having in the center a person who has previously committed a crime with intent, is characterized with perhaps the highest level of danger to the public.

Key words: criminal, danger to the public, recidivism, work, resocialization, prevention.

Հոդվածը գրախոսվել է՝ 15.03.2023թ.:

Ներկայացվել է տպագրության՝ 18.03.2023թ.:

ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Մուրադյան Մանուկ

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ոստիկանության գնդապետ*

Համառոտագիր: Ցանկացած գործունեության համար օրենսդիրն ուղղակի կամ անուղղակի ձևով սահմանում է խնդիրներ: Այդպիսիք են վարույթի ճիշտ (օրինական) իրականացումը, վարույթի ընթացքում սոցիալ-իրավական վեճի ժամանակին քննելը և լուծելը: Վարության գործունեության խնդիրներին ենթադասվում է ամբողջ դատավարական գործընթացը, որի օրինական և ժամանակին իրականացումն արդարադատության կայացման երաշխիքներ են:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել ենթադրյալ խախտված իրավունքների և ազատությունների համապատասխան հայցով պաշտպանության ժամանակահատվածի հաշվարկի որոշ առանձնահատկությունները ՀՀ վարչական դատավարությունում: Աշխատանքում էական շեշտադրում է կատարվել առանձին հայցատեսակների դեպքում դատարանի հայց ներկայացնելու ժամկետի մեկնարկի և ավարտի հաշվարկի վերաբերյալ հարցերին: Աշխատանքում հիմնահարցը դիտարկվել է նաև դատարանի մատչելիության իրավունքի լույսի ներքո:

Բանալի բառեր: վարչական դատավարություն, հայց ներկայացնելու ժամկետ, ժամկետի սկիզբ, ժամկետի ընթացք, ժամկետի ավարտ:

1. Դատավարական ժամկետների ընդհանուր բնութագիրը և գործառնությունը

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ վարչ. դատ. օր.) «Օրենսգրքի գործողության ոլորտը» վերտառությամբ 1-ին հոդվածի համաձայն՝ օրենսգիրքը սահմանում է ՀՀ վարչական դատարանում, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում և ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական պալատում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների

ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական և վարչական ակտերի, գործողությունների կամ անգործության դեմ ֆիզիկական և իրավաբանական անձանց դատական պաշտպանության իրավունքի իրականացման կարգը, ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հիման վրա հարկային մարմնի կողմից օրենքով պահպանվող գաղտնի տեղեկություն ստանալու վերաբերյալ դիմումների քննության կարգը, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց դեմ վարչական մարմինների և պաշտոնատար անձանց հայցադիմումների քննության կարգը: Այսպիսով՝ վարչական դատավարությունն իրականացվում է որոշակի դատավարական ձևի շրջանակներում: Վարությամբ իրավունքի բոլոր ճյուղերում կիրառելի է «դատավարական ձև» հասկացությունը¹: Ամենաընդհանուր բնորոշմամբ այն դատավարական գործողությունների վարույթի կարգն է՝ դատավարական առանձին գործողությունների իրականացման պայմանները, օրենքով սահմանված ժամկետներում և ձևով դրանց իրականացման կարգը և արդյունքների պաշտոնական ամրագրումը: Ինչպես տեսնում ենք, դատավարական ձևի համակարգում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում դատավարական ժամկետների ինստիտուտը:

Պետության կողմից սահմանվող ժամկետային սահմանափակումները հետապնդում են որոշակի նպատակներ: Այդպիսի նպատակներից են՝ օրինականության ապահովում իրավակիրառ գործունեությունում, դատավարության մասնակիցների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ապահովումը, դատավարական հարաբերություններում հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից և այլն: Դժվար կլինի կանխել անարդարությունը, եթե դատարաններից պահանջվի քննել բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով հնացած, ոչ արժանահավատ և ոչ ամբողջական ապացույցների հիման վրա՝ հեռավոր անցյալում տեղի ունեցած գործեր: Ժամկետային սահմանափակումների առումով պետությունները նույնպես հայեցողական լիազորություն ունեն որոշելու, թե դատարանի մատչելիությունն ինչպես պետք է

¹ Ст'я Шпилев В. Н. Содержание и формы уголовного судопроизводства. Минск. 1974, էջեր 102-103. Дудоров. Т.Д. Доктринальное толкование категории “Уголовно-процессуальная форма” и ее роль в механизме правового регулирования уголовно-процессуальных отношений. Вестник ВГУ. Серия право. 2009г/1, С. 394-395:

սահմանափակվի²:

Առհասարակ դատավարական ձևում ժամկետի գործառույթը հասկանալու համար այն անհրաժեշտ է դիտարկել ժամանակի պրիզմայի ներքո: «Ժամանակ» և «ժամկետ» հասկացությունները հարաբերակցվում են որպես ամբողջը և մասը³:

Բացատրական բառարաններում ևս «ժամկետ» հասկացությունը մեկնաբանվում է որպես ժամանակի մի որոշակի հատված, ինչ-որ բանի վրա հասնելու պահ⁴:

Ժամանակն օբյեկտիվ հասկացություն է, ժամկետը՝ սուբյեկտիվ: Ժամկետը ժամանակի որոշակի հատվածն է, որի առաջանալու կամ ավարտվելու հետևանքով ծագում, փոփոխվում կամ դադարում են իրավահարաբերությունները: Թեև ժամկետների սկիզբն ու ավարտը հաստատվում են կողմերի, օրենսդրի կամ դատարանների կամքով, այնուամենայնիվ, նրա ընթացքը կամային ներգործությունից անկախ է⁵: Ժամկետի օբյեկտիվ հիմք, ըստ Գ. Պ. Բուժինսկասի, ժամանակն է, որն արտացոլվում է իր իսկ հոսքը կառավարելու համար մարդկանց կողմից սահմանված սուբյեկտիվ երևույթի՝ ժամկետի մեջ: Ժամկետը՝ որպես ժամանակի չափիչ, ազդում է ոչ թե ինքն իր վրա, այլ մարդակային վարքագծի, և որպես օբյեկտիվ երևույթի՝ ժամանակի չափիչ, ժամկետը կարող է կանգ առնել⁶:

Իրավաբանական գրականության մեջ հանդիպում ենք իրավաբանական այս կամ այն վարույթի շրջանակներում «ժամկետ» հասկացության տարբեր բնորոշումների, որոնք առավելապես նման են կամ ունեն փոխլրացնող բովանդակություն: Ընդհանուր մոտեցումն այնպիսին է, որ յուրաքանչյուր ժամկետ մարդային գործունեության ժամանակի ընդհանուր հոսքի մի հատված է, ինչպես նաև այդ գործունեությունը ժամանակային սահ-

² St' u Case of Stubbings and Others v. The United Kingdom, Judgment, 22.10.1996, կետեր 51, 55 (<https://www.refworld.org/cases/ECHR/3ae6b6191c.html> վերջին մուտքը՝ 30.07.2023 թ.):

³ St' u **Стаховский Д. В.** О понятии сроков в административном праве. Проблемы экономики и юридической практики // **Издательский дом Юр-БАК.** Выпуск №2 2012 г. С. 176.

⁴ St' u **Даль В.** Толковый словарь живого великорусского языка. Т. IV. – М., 1980. С. 304. **Ожегов С. И., Шведова Н. Ю.** Толковый словарь русского языка. – М., 1999. С. 760.

⁵ St' u Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ / Շեղ. Խոմբ: Գիտ. խմբ՝ **Ա. Դամբարյան, Մ. Սուրադյան.** – 4 -րդ լրամշակված հրատ.-Եր.: «Լուսաբաց հրատարակչատուն», 2023. Էջ 261:

⁶ St' u **Бужинская Г.П.** Процессуальные сроки в советском гражданском судопроизводстве: Дис. ... канд. юрид. наук. М., 1987. С. 41.

մաններով կանոնակարգելու միջոց: Պ. Ի. Ժիգալկինը «Ժամկետ» ասելով հասկանում է օրենքով սահմանված ժամանակահատված (ժամանակաշրջան, պահ) կամ օրենքի պահանջներին համապատասխան՝ մարդկանց կամային գործողություններ, որոնց լրանալու կամ սկսվելու հետ օրենքը կապում է որոշակի իրավական հետևանքների առաջացումը⁷:

Ի.Վ. Պանովան, անդրադառնալով վարչական իրավախախտումների վերաբերյալ դատավարական ժամկետներին, ընդգծում է, որ դրանք օրենքով նախատեսված կամ իրավասու մարմնի (պաշտոնատար անձի) կողմից սահմանված ժամանակային հատվածներ են, որոնց ընթացքում պետք է կամ կարող են կատարվել առանձին դատավարական գործողություններ⁸: Սկզբունքորեն նույնական բնորոշում է տվել Ա. Ս. Դուգենեցը⁹: Լ. Վ. Կովալը ժամկետները դիտարկում է որպես վարչական վարույթային գործընթացների սուբյեկտների միջև հարաբերությունների կարգավորման կարևորագույն գործիք, և որ դրանք ունեն կարևոր նշանակություն վերջիններիս իրավունքների և պարտականությունների իրականացման տեսանկյունից¹⁰:

Ա. Ցուկերմանը դատավարության տևողությունը (ժամկետների սահմանումը և դրանց պահպանումը) համարում էր արդարադատության չափման երեք գործոնից մեկը: Մնացած երկուսն են սոցիալ-իրավական վեճին ճիշտ լուծում գտնելը (ճշմարտությունը) և կատարված ծախսերը¹¹: Իրավաբանական գրականության մեջ խոսվում է նաև դատավարական ժամկետների, դրանց պահպանման և վարույթի որակի հավասարակշռված հարաբերակցության մասին: Ընդգծվում է, որ դրանց ողջամիտ հարաբերակցությունը ոլորտում պետության զարգացվածության աստիճանի ցուցիչ է¹²:

Ժամկետների դերն իրավաբանական վարույթի ընթացքում հնարավոր չէ թերագնահատել: Այս տեսանկյունից արժեքավոր են մինչհեղափոխական

⁷ Տե՛ս **Стаховский Д.В.** Նշված աշխատություն, С. 176.

⁸ Տե՛ս **Панова И. В.** Производство по делам об административных правонарушениях: Монография. – Саратов, 1999. С. 104

⁹ Տե՛ս **Дугенец А. С.** Процессуальные сроки в производстве по делам об административных правонарушениях: Монография. – М.: ВНИИ МВД России, 2002. С. 18.

¹⁰ Տե՛ս **Коваль Л. В.** Административно-деликтное отношение. – Киев, 1979. С. 175.

¹¹ Տե՛ս **Zuckerman, A.** Assessment of Cost and Delay — a Multinational Perspective. In XI World Congress on Procedural Law: Procedural Law on the Threshold of the New Millennium. Wien, Universitat. (1999). Pp. 41—42.

¹² Տե՛ս **Белякович Е. В.** Категория срока в административно-процессуальном праве. Вестник РУДН. Серия: Юридические науки. Т. 25. № 4. 2021. С. 806.

տեսաբանների դիտարկումները: Կ. Ի. Մալիշևը ընդգծում է, որ վարույթի կարգը և սահունությունն ապահովելու համար էապես կարևորվում են ժամկետային սահմանները, հակառակ պարագայում գործ ենք ունենալու քառսի հետ¹³: Դ. Ազարևիչը ևս բարձր է գնահատել վարույթային ժամկետների դերակատարությունը: Չնայած խոսքը քաղաքացիական դատավարության մասին է, սակայն կարծում ենք, որ դա չի փոխում հիմնահարցի կարևորության վերաբերյալ ընդգծումները նաև վարչական դատավարությունում: Հեղինակը նշում է, որ վարույթային գործողությունները պետք է ունենան հայտնի ժամանակային սահմաններ. դա կարևորվում է ոչ միայն մասնավոր, այլ նաև հանրության շահի տեսանկյունից. հեշտացնում է իրավունքների իրականացումը և ամրապնդում է հասարակության ներսում օրինականության նկատմամբ վստահությունը¹⁴:

Ինչ վերաբերում է ազգային օրենսդրությանը, ապա, որպես այդպիսին, ՀՀ վարչ. դատ. օր-ով տրված չէ դատավարական ժամկետների բնորոշումը: Հիմք ընդունելով ՀՀ վարչ. դատ. օր. 51-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը և կարևորելով կատարված վերլուծությունները՝ կարելի է արձանագրել, որ *դատավարական ժամկետը ՀՀ վարչ. դատ. օր-ով և այլ օրենքներով սահմանված, իսկ օրենքով սահմանված չլինելու դեպքում՝ դատարանի կողմից նշանակված որոշակի ժամանակահատված է, որի ընթացքում դատարանը, կողմերը և գործի մյուս մասնակիցներն իրավունք ունեն (պարտավոր են) կատարելու օրենքով նախատեսված դատավարական գործողություններ*:

2. Դատավարական ժամկետների հաշվարկն ըստ հայցատեսակների

2.1. Ընդհանուր դրույթներ

Դատավարական ժամկետների համակարգում առանձին քննարկման առարկա է ենթադրյալ խախտված իրավունքների և ազատությունների համապատասխան հայցով պաշտպանության ժամանակահատվածը: Դատարանի խնդիրն է պարզել՝ արդյոք հայցվորը պահպանե՞լ է իր ենթադրյալ խախտված իրավունքները վերականգնելու համար նախատեսված ժամանակահատվածը, թե՛ ոչ: Հատկանշական է, որ այս դեպքում, հայցվորի պահանջից (հայցի տեսակից) կախված, տարբեր են իրավունքները վերականգ-

¹³ См. у **Мальшев К.** Курс гражданского судопроизводства. Т. I. Изд-е 2-е. – СПб., 1876. С 368.

¹⁴ См. у **Азаревич Д.** Судостроительство и судопроизводство по гражданским делам Университетский курс. Т. II. Судопроизводство. – Варшава, 1900. С. 2.

նելու համար նախատեսված ժամանակահատվածները: Այսինքն՝ ՀՀ վարչ. դատ. օր-ը սահմանում է վարչական դատարանի մատչելիության ժամկետային սահմանափակումները՝ ըստ հայցատեսակների ամրագրելով այն իրավադարեցնող դատավարական ժամկետները, որոնց ընթացքում համապատասխան սուբյեկտը կարող է դիմել վարչական դատարան: Ավելին՝ ՀՀ վարչ. դատ. օր-ի 80-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե լրացել են հայցադիմում ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետները, իսկ ժամկետները վերականգնելու մասին միջնորդությունը վարչական դատարանը մերժել է:

ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներում (10.12.2013 թվականի թիվ ՄԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՄԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՄԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՄԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՄԴՈ-1222 և այլն), անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրելել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ, ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում, դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը:

Թեև դատարանի մատչելիության իրավունքն ուղղակիորեն ամրագրված չէ Կոնվենցիայի 6-րդ հոդվածում, սակայն ՄԻԵԴ-ը այն ճանաչել է որպես արդար դատաքննության իրավունքի անբաժանելի տարր: Այսպես, Եվրոպական դատարանի կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է անձի իրավունքներին և պարտականություններին առնչվող հայցով դատարան դիմելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է դատարան դիմելու, այն է՝ դա-

տարանում հայց հարուցելու իրավունքը, որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից: Դատական վարույթի արդարությունը, հրապարակայնությունը և արագությունը, անշուշտ, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացների ընթացք չի տրվում: Դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն արդարադատություն իրականացնելիս, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում¹⁵: Մինչդեռ Եվրոպական դատարանի տեսանկյունից դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ չէ և կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Մակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ անձը չգրկվի այդ իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը¹⁶: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը չի կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, և եթե համաչափության առումով առկա չէ ողջամիտ հարաբերակցություն ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակների միջև¹⁷: Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական

¹⁵ St' u **Kreuz v. Poland** գործով (զանգատ թիվ 28249/95) Եվրոպական դատարանի 19.06.2001 թ. վճիռ, կետ 52:

¹⁶ St' u **Tolstoy Miloslavsky v. The United Kingdom** գործով (զանգատ թիվ 18139/91) Եվրոպական դատարանի 13.07.1995 թ.-ի վճիռ, կետ 59:

¹⁷ St' u **Khalifaoui v. France** գործով (զանգատ թիվ 34791/97) Եվրոպական դատարանի 14.12.1999 թ. վճիռ, կետ 36:

որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին՝ հասնելու իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը¹⁸:

2.2 Վիճարկման հայցի միջոցով վարչական ակտի վիճարկման ժամկետի հաշվարկը

2.2.1. Ընդհանուր դրույթներ

ՀՀ վարչ. դատ. օր. 65-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանում գործը հարուցվում է հայցի հիման վրա, այսինքն՝ գործի հարուցման հիմքը հայցն է: Նույն օրենսգրքի 66-69-րդ հոդվածներում նախատեսված են կոնկրետ հայցատեսակները: Ի տարբերություն, օրինակ, քաղաքացիական դատավարության՝ վարչական դատարան ներկայացված հայցի տեսակից կարելի է պատկերացնել հայցվորի պահանջի էությունը: Սույն հոդվածի քննարկման առարկա է ոչ թե հայցատեսակներից յուրաքանչյուրի առարկան և բովանդակությունը, այլ հայց ներկայացնելու ժամկետների հիմնահարցը:

Այսպես՝ ՀՀ վարչ. դատ. օր. 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել վիճարկման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ *վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահից*»: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն *ուժի մեջ է մտնում* այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով *սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից*, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ: Իսկ նույն օրենքի 58-րդ հոդվածը կարգավորում է գրավոր վարչական ակտ ընդունելու հարաբերությունները: Մասնավորապես՝ գրավոր վարչական ակտն ընդունված է համարվում այդ ակտը վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրվելու օրվանից: Այստեղ անհրաժեշտ է տարբերակել *«ընդունված համարել»* և *«ուժի մեջ մտնել»* հասկացությունները: Հատկան-

¹⁸ Տե՛ս «Փարիզյան սուրճ ֆակտորի» ՄՊԸ-ն ընդդեմ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության մտավոր սեփականության գործակալության թիվ ՎԴ/3317/05/17 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 14.05.2019թ. որոշում: (տե՛ս, Dumitru Gheorghe v. Romania գործով (զանգատ թիվ 33883/06) Եվրոպական դատարանի 12.04.2016 թ. վճիռը, կետ 28):

շական է, որ վիճարկման հայցի պարագայում հայցը դատարան ներկայացնելու համար օրենսդիրը կարևորել է ոչ թե վարչական ակտի ընդունված համարելու, այլ ուժի մեջ մտնելու հանգամանքը:

ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ *գրավոր վարչական ակտի ընդունումը բավարար չէ իրավական համակարգում ի հայտ գալու և գործելու համար. դրա համար անհրաժեշտ է, որ օրենքով սահմանված կարգով այդ վարչական ակտը մտնի ուժի մեջ: ՀՀ վճռաբեկ դատարանը, առաջնորդվելով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը երաշխավորելու անհրաժեշտությամբ, արձանագրել է, որ վարչական ակտի վիճարկման պարագայում անձի՝ դատարանի դիմելու համար սահմանված ժամկետի հոսքը սկսվում է այն պահից, երբ վարչական ակտի հասցեատերը տեղեկացել է իր նկատմամբ տվյալ վարչական ակտի ընդունման մասին, այլ խոսքով՝ օրենքով սահմանված կարգով վարչական ակտի ուժի մեջ մտնելուց հետո*¹⁹:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով *հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է* այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը *հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը* (ՀՀ վարչ. դատ. օր. 51-րդ հոդվածի 4-րդ մաս, Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մաս): Այս տեսանկյունից անհրաժեշտ է հստակեցնել այն հարցը, որ օրենսդիրը տարբերակել է «ժամկետի սկիզբ» և «ժամկետի ընթացք» եզրույթները, այսպես՝ ժամկետի ընթացքը (հոսելը, հոսքը) հաշվարկվում է՝ հիմք ընդունելով ժամկետի սկզբին հաջորդող օրը, ամիսը կամ ամսաթիվը: *Այլ կերպ՝ ժամկետի սկիզբը (օրինակ՝ վիճարկման հայցի դեպքում վարչական ակտի ուժի մեջ մտնելու պահը (ՀՀ վարչ. դատ. օր. հոդված 72, մաս 1, կետ 1) ժամկետների հաշվարկման ելակետն է:*

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման մեջ «**ժամկետի հոսք**» ձևակերպումը (հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործի շրջանակներում խոսվում է բացառապես վարչական ակտի ուժի մեջ մտնելու իրավակարգավորման մասին) նույնացվել է «**ժամկետի սկիզբ**» հասկացության հետ: Անհրաժեշտ է նշել, որ, գործի առանձնահատկությունները հաշվի առնելով

¹⁹ Տե՛ս Երևանի քաղաքապետարանն ընդդեմ Արմենուհի Դալիբալյանի թիվ ՎԴ/2499/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 10.12.2014 թ. որոշումը:

(սոցիալ-իրավական վեճի առարկան), Վճռաբեկ դատարանն առհասարակ անդրադարձ չի կատարել հայցով դատարան դիմելու *Ժամկետի ընթացքի հաշվարկին* (Ժամկետի հաշվարկի կարգին, որը վերաբերում է ՀՀ վարչ. դատ. օր. 51-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորման առարկային) առնչվող հարցերին, սակայն նշված հասկացությանին ապարատի պարզաբանման տեսանկյունից նման անհրաժեշտությունն առկա է:

Պետք է տարանջատել *«Ժամկետի սկիզբ»* և *«Ժամկետի ընթացք»* եզրույթները: Մասնավորապես՝ դիտարկվող իրավակարգավորումների պարագայում *«Ժամկետի սկիզբը»* անհարժեշտ է կապել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի (*գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից*) և ՀՀ վարչ. դատ. օր. 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հետ (*Հայց ներկայացնելու ժամկետները*), իսկ *«Ժամկետի ընթացքի»* հաշվարկման համար ելակետային համարել, ինչպես նշվեց, ՀՀ վարչ. դատ. օր. 51-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումները, համաձայն որոնց՝ *տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն* սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա *Ժամկետի սկիզբը*: Այլ կերպ՝ *վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրը համարվում է (համընկնում է) վարչական ակտի բողոքարկման ժամկետի սկիզբ, բայց ոչ մի պարագայում չի կարող համարվել ժամկետի ընթացքի (հաշվարկն սկսելու) օր:*

Փորձենք ասվածը պարզաբանել օրինակով: Եթե պատկերացնենք, որ վարչական ակտն ընդունվել է 01.01.2022 թվականին և օրենքով սահմանված կարգով իրազեկվել է հասցեատիրոջը 02.01.2022 թվականին, և հաշվի առնելով, որ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից՝ այս դեպքում՝ 03.01.2022 թվականին (*Ժամկետի սկիզբ*), և ղեկավարվելով ՀՀ վարչ. դատ. օր. 51-րդ հոդվածի 4-րդ մասի և ՄՆորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումներով (*տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն* սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ

վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը), ապա ենթադրյալ խախտված իրավունքների և ազատությունների (կամ այն իրավունքների և ազատությունների, որոնք անմիջականորեն կարող են խախտվել) համապատասխան հայցով պաշտպանության ժամանակահատվածի (այս պարագայում՝ 2 ամիս) ընթացքը պետք է հաշվարկել 04.01.2022 թվականից (ժամկետի ընթացք)²⁰:

²⁰ ԵՂ/21745/02/21 քաղաքացիական գործի շրջանակներում «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերությունը հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ «168 ժամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության՝ գործարար համբավն արատավորող տեղեկությունները հերքելու և գրապարտության հետևանքով գործարար համբավին պատճառված 2.000.000 դրամի չափ վնասի հատուցում բռնագանձելու պահանջների մասին: Դիտարկվող գործի շրջանակներում Վերաքննիչ դատարանը եկել է հետևյալ եզրակացության. ՀՀ քաղ. օր. 331-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցային վաղեմություն է համարվում իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածը: Վերաքննիչ դատարանը սույն դատական ակտով արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից բազմիցս արտահայտվել է այն դիրքորոշումը, ըստ որի՝ այն դեպքում, երբ վիճող կողմը դիմում է ներկայացրել հայցային վաղեմություն կիրառելու վերաբերյալ, դատարանների օրակարգային խնդիրն է դառնում պարզել այն իրական ժամանակահատվածը, երբ հայցվորը հետամուտ է եղել իր իրավունքների դատական կարգով պաշտպանությանը (տե՛ս օրինակ՝ Սերգեյ Սարգսյանի ընդդեմ Արա Սարգսյանի և մյուսների թիվ ԵԿԴ/0881/02/12 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 28.11.2014 թվականի որոշումը): ՀՀ վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ օրենսդիրը, մի կողմից սահմանելով ժամկետների հաշվարկման սկիզբը, մյուս կողմից հստակ սահմանել է նաև այդ ժամկետների հաշվարկման կարգը: Ընդ որում՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով և սույն դեպքում նաև ՀՀ քաղ. օր-ով սահմանված ժամկետի հաշվարկի նույնաբովանդակ կարգավորումները կիրառելի են նաև հայցային վաղեմության ժամկետների նկատմամբ: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ օրենսդիրը տարբերակել է «ժամկետի սկիզբ» և «ժամկետի ընթացք» եզրույթները, այսպես՝ ժամկետի ընթացքը հաշվարկվում է հիմք ընդունելով ժամկետի սկզբին հաջորդող օրը, ամիսը կամ ամսաթիվը: Այլ կերպ ասած՝ օրենսդիրն առանձին ժամկետներ սահմանելիս հատուկ նորմերով սահմանում է այն ամիսը, ամսաթիվը, որով պետք է որոշվի ժամկետի սկիզբը, իսկ ժամկետի ընթացքը սկսվում է օրենքով սահմանված ժամկետի սկզբին հաջորդող օրվանից: Այսինքն՝ սույն դեպքում օրենսդիրը ՀՀ քաղ. օր-ի 1087.1 հոդվածի 13-րդ մասով սահմանել է ժամկետի սկիզբը, որը հիմք պետք է ընդունվի ժամկետի ընթացքը որոշելիս և որին հաջորդող օրվանից պետք է սկսվի ժամկետի ընթացքը: Իրավունքի խախտման մասին իմանալուն հաջորդող օրվանից իրավունքի պաշտպանության դիմելու կանոն սահմանելու նպատակն անձի՝ օրենքով սահմանված գործողությունների կատարման համար նախատեսված ժամկետների լիարժեք, ամբողջական պահպանման անհրաժեշտությունն է: Նույն տրամաբանությամբ է, որ օրինակ դատական ակտերի բողոքարկման ժամկետների սկիզբը կապվում է հրապարակման, կայացման կամ ստացման օրվա հետ, սակայն

Դատական պրակտիկայում հիմնահարցի վերաբերյալ առկա է տարբերակված մոտեցում: Մասնավորապես՝ Գ. Մ. ընդդեմ Ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ նաև՝ Ոստիկանություն)՝ 30.11.2021 թվականի թիվ 2113857432 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին դատական ակտով դատարանն անդրադարձել է վիճարկման հայցի շրջանակում վարչական ակտի դատական կարգով բողոքարկման ժամկետի հաշվարկի խնդրին և արձանագրել, որ սույն գործի փաստերի համաձայն՝ հայցվորը Ոստիկանության 30.11.2021 թվականի թիվ 2113857432 որոշումը ևս բողոքարկել է վարչական կարգով, որի արդյունքում ընդունվել է Ոստիկանության պետի 24.01.2022 թվականի թիվ 7-13 947 որոշումը, որպիսի որոշումը հայցվորն ստացել է 28.02.2022 թվականին (հիմք՝ DLEO1024238449AM ծրար), ինչից հետևում է, որ Դատարան դիմելու երկամսյա ժամկետն սկսել է հոսել դրան հաջորդող օրվանից՝ 01.03.2022 թվականից՝ ավարտվելով 01.05.2022 թվականին²¹: Նման ձևակերպումն անորոշություն է առաջացնում հետևյալ պատճառներով՝

(1) նախ՝ առնվազն հնարավորություն չի տալիս պարզելու վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրը, բողոքարկման ժամկետի սկիզբը և բողոքարկման ժամկետի ընթացքը որոշակիացնող օրը:

(2) Դատարանն արձանագրում է, որ բողոքարկման երկամսյա ժամկետն սկսել է հոսել դրան (*որոշումը հայցվորի կողմից ստացվել է*) հաջորդող օրվանից (01.03.2022): Հիմք ընդունելով վերը նշված պարզաբանումը՝ մեր գնահատմամբ ***28.02.2022 թվականին հաջորդող օրը ոչ թե բողոքարկման ժամկետի ընթացքը որոշակիացնող օրն է, այլ ընդամենը վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրն է (այն համընկնում է բողոքարկման ժամկետի հաշվարկի սկզբի, այլ ոչ թե ընթացքի ժամկետի հետ)***, իսկ դրան հաջորդող օրը, համաձայն ՀՀ վարչ դատ. օր. 51-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումների (*տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի*

ժամկետի ընթացքը սկսվում է հրապարակման, կայացման կամ ստացման օրվան հաջորդող օրվանից:

²¹ Տե՛ս թիվ ՎԴ/3594/05/22 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 16.06.2022թ. որոշումը (http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809973188 վերջին մուտքը՝ 19.01.2023թ.):

կամ վրա հասած իրադարձությանը **հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը**), կլինի բողոքարկման ժամկետի ընթացքի հաշվարկման օրը:

Դատարանի կողմից, վարչական ակտի վիճարկման հայցի շրջանակներում բողոքարկման ժամկետի մեր գնահատմամբ վիճելի հաշվարկի հիմքում ընկած է այն խնդիրը, որ դատարանը չի առանձնացրել (1) վարչական ակտի վիճարկման ժամկետի սկզբի և (2) դատավարական ժամկետների հաշվարկի ընթացքի մեկնարկի վերաբերյալ հարցերը: Այլ կերպ՝ օրենսդիրը, մի կողմից սահմանելով ժամկետների հաշվարկման սկիզբը, մյուս կողմից՝ հստակ սահմանել է նաև այդ ժամկետների հոսքի հաշվարկման կարգը:

2.2.2 Վիճարկման հայցի միջոցով վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից վարչական ակտի հասցեատիրոջ համար բարենպաստ վարչական ակտի բողոքարկման ժամկետների հաշվարկի առանձնահատկությունները

Որոշակի առանձնահատկություններ առկա են այն դեպքերում, երբ վիճարկման հայցի միջոցով վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից վիճարկվում է վարչական ակտի հասցեատիրոջ համար բարենպաստ վարչական ակտը (ՀՀ վարչ. դատ. օր. 83-րդ հոդված, մաս 1, կետ 5): Այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ եթե անձը վարչական ակտի հասցեատեր չէ, կամ չի հանդիսանում վարչական վարույթի մասնակից, ով վարչական վարույթում իր դիմումի համաձայն կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ չի ներգրավվել որպես երրորդ անձ, ում իրավունքները կամ օրինական շահերը կարող էին շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով, ապա նա չի կարող վարչական ակտի մասին իրազեկված լինել օրենքով նախատեսված կարգով, հետևաբար, տվյալ անձի համար վարչական ակտը, ինչպես վարույթի մասնակցի համար է նախատեսված, ծանուցման հաջորդող օրը («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մաս, 59-րդ հոդվածի 1-ին մաս) ուժի մեջ մտնել չի կարող: Ակնհայտ է, որ նրա համար չի կարող հոսել նաև այն ժամկետը, ինչի համար պարտադիր նախապայմաններից է վարչական ակտի ուժի մեջ մտնելը: Բոլոր այն դեպքերում, երբ վարչական ակտը վիճարկում է վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող (վարույթի շրջանակներում երրորդ անձ չհանդիսացող) և ենթադրաբար

վարչական ակտի գոյության մասին չիրագեկված անձը, ապա պետք է ելնել այն հանգամանքից, որ վիճարկման հայց ներկայացնելու **Ժամկետի սկիզբ** է ոչ թե վարչական ակտի հասցեատեր հանդիսացող անձի ծանուցվելու օրվա հաջորդ օրը, այլ վարչական ակտի հասցեատիրոջ այն փաստական գործողությունների մեկնարկը կամ դրա հետ կապված այլ գործընթացները, որոնք կարող են հուշել հասցեատեր չհանդիսացող անձին այն մասին, որ իր իրավունքները խախտվել են կամ կարող են խախտվել վերջինիս գործողությունների (վարչական ակտի) արդյունքում: Չիրագեկվելու պարագայում բողոքարկման ժամկետը չի կարող հոսել, իսկ եթե օրենքով նախատեսված կարգով չի իրագեկվել, սակայն հասցեատիրոջ փաստական գործողություններից հնարավոր էր կռահել իրավունքների ենթադրյալ խախտման կամ դրա հնարավորության մասին, ապա կարելի է արձանագրել, որ բողոքարկման ժամկետի սկզբի հարցը որոշակի է:

Հիմնահարցի շրջանակում էապես կարևորվում է ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը²²: Մասնավորապես՝ Ս.Բ.-ն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի գործի շրջանակներում անձը հայցադիմում է ներկայացրել Դատարան (հայցադիմումն առաջին անգամ ներկայացվել է 17.12.2018 թվականին, ըստ էության որոշման ընդունումից մոտավորապես 5 տարի անց)՝ պահանջելով մասնակի անվավեր ճանաչել Քաղաքապետի 15.04.2014 թվականի թիվ 1447-Ս որոշումը և որպես հետևանք անվավեր ճանաչել Քաղաքապետի 21.05.2014 թվականի թիվ 1936-Ս որոշումը, Քաղաքապետի և Ա.Ճ.-ի միջև 26.05.2014 թվականին կնքված հողամասի առուվաճառքի պայմանագիրը և 03.06.2014 թվականին Ծարավ Աղբյուրի փողոց, թիվ 177/1 հասցեում գտնվող գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված գրանցումը (հատոր 1-ին, գ.թ. 3-8, 62-69): Դատարանի 25.12.2018 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է, իսկ 11.02.2019 թվականի որոշմամբ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է, հայցադիմումն ընդունվել է վարույթ և հրավիրվել է նախնական դատական նիստ (հատոր 1-ին, գ.թ. 121-128):

Հայցվորը հայցադիմումին կից ներկայացրել է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն՝ այն հիմնավորումնե-

²² Տե՛ս Մամվել Բարխոյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/12262/05/18 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 21.05.2021թ. որոշումը:

րով, որ ինչպես ինքը, այնպես էլ գույքի նախկին սեփականատեր Սերգեյ Լո-
ռեցյանը **խնդրի մասին տեղեկացել են մայթը քանդելու ժամանակ, իսկ 15.04.2014 թվականի վիճարկվող ակտի մասին իրազեկվել են 05.10.2018 թվա-
կանին**: Դատարանը 11.02.2019 թվականի որոշմամբ Սամվել Բարխոյանի
ներկայացրած՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու
մասին միջնորդությունը բավարարել է այն պատճառաբանություններով, որ
հիմնական հայցապահանջով վարչական ակտի գոյության մասին հայցվորի
ավելի վաղ տեղեկանալու վերաբերյալ այլ ապացույցի բացակայության
պայմաններում Դատարանը հայցվորի կողմից նշված փաստարկով հաս-
տատված է համարել, որ վերջինս վիճարկվող վարչական ակտի գոյության
մասին (որը ընդունվել էր **15.04.2014 թվականին**) տեղեկացել է իր միջնոր-
դության մեջ նշված ժամկետում²³, որպիսի ժամկետից հաշվված էլ երկամս-
յա ժամկետում՝ **17.12.2018 թվականին** ներկայացրել է հայցադիմումը: Այս-
պիսով՝ հայցվորի՝ բաց թողնված ժամկետի վերականգնման միջնորդությու-
նը բավարարվել է՝ հիմքում ունենալով այն փաստական հանգամանքը, որ
ակտի գոյության մասին հայցվորն իմացել է ի պատասխան հայցվորի
**16.11.2018 թվականի հ. Բ-3569 դիմումի՝ Քաղաքապետարանի 21.11.2018
թվականի թիվ 19/Բ3569 գրությունից**: Այլ կերպ՝ դատարանը հայցվորի մա-
սով վարչական ակտի գոյության մասին իրազեկման (ուժի մեջ մտնելու) և
այն բողոքարկելու ժամկետի սկզբի որոշակիացման համար հիմք է համա-
րել նշված գրությունը:

Մեկ այլ գործի շրջանակներում²⁴ Վերաքննիչ դատարանը (բաց թողն-

²³ Սույն գործի փաստերից բխում է, որ ի պատասխան հայցվորի ներկայացուցիչ Է. Նալբանդյանի **25.09.2018 թվականի հ. Ն-1261 գրության՝ Քաղաքապետարանը 05.10.2018 թվականի գրությամբ հայտնել է**, որ ք. Երևան, Ծարավ Աղբյուրի փողոց, թիվ 177/1 հասցեում գտնվող հողամասը ներկայացվել է աճուրդային կարգով վաճառքի, և Քաղաքապետի 21.05.2014 թվականի թիվ 1936-Ա որոշմամբ հողամասն օտարվել է (հատոր 1-ին, գ.թ. 108): Իսկ ի պատասխան հայցվորի **16.11.2018 թվականի հ. Բ-3569 դիմումի՝ Քաղաքապետարանը 21.11.2018 թվականի թիվ 19/Բ3569 գրությամբ հայտնել է**, որ Ավան վարչական շրջանի Ծարավ Աղբյուրի փողոց, թիվ 177/1 հասցեում Քաղաքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչության կողմից ձեռնարկված համապատասխան միջոցների արդյունքում քանդ-
ված մայթը վերականգնվել է (հատոր 1-ին, գ.թ. 87):

²⁴Տե՛ս ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի թիվ ՎԴ/11986/05/18 վարչական գործով 16.12.2019թ. որոշումը: Սույն գործի շրջանակներում վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

ված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդությունը մերժելու մասին 15.10.2019 թվականի որոշման դեմ Հ.Մ.-ի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը), անդրադառնալով ներկայացված միջնորդությանը, նախ՝ արձանագրել է, որ սույն գործով որպես վկա կանչված Գ. Մաժումյանի տված վկայության համաձայն հայցվորը կատարվող շինարարության մասին տեղեկացել է **26.06.-29.06.2018** թվականին ընկած ժամանակահատվածում: Հատկանշական է, որ հայցվորն այս հանգամանքը ո՛չ ՀՀ վարչական դատարանում գործի քննության ժամանակ, ո՛չ վերաքննիչ բողոքով չի վիճարկել, այլ ընդունել է, որ *կատարվող շինարարական աշխատանքների մասին տեղեկացել է դեռևս 2018 թվականի հունիսին (փաստացի շինարարական աշխատանքների կատարման ընթացքում, ոչ թե օրենքով նախատեսված կարգով վարչական ակտին իրազեկվելու պահից)*, սակայն, ըստ հայցվորի, իր իրավունքների խախտման մասին վերջինս տեղեկացել է միայն **10.11.2018** թվականին, երբ պարզվել է, որ *շինարարությունն առաջացրել է բազմաթիվ անհարմարություններ՝ խոչընդոտելով լույսի ներթափանցմանը, խանգարելով դեպի տան հետնամաս տեղաշարժվելուն և առաջացնելով նմանատիպ խնդիրներ*: Որից հետո հայցվորը դիմել է պատասխանող վարչական մարմնին, ստացել վիճարկվող շինարարության պատճենը և սահմանված ժամկետում դիմել ՀՀ վարչական դատարան:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ շինարարական աշխատանքների մեկնարկն արդեն իսկ ողջամիտ ազդակ պետք է լիներ հայցվորին՝ իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի վերաբերյալ, և ամեննին պարտադիր պայման չէ, որ հայցվորը կառուցվող շինության վերջնական տեսքի պայմաններում գնահատեր իր իրավունքների հնարավոր խախտված լինելու հանգամանքը: Այլ կերպ՝ վարչական ակտը բողոքաբերի համար ուժի մեջ է մտել շինարարության մեկնարկով:

Մեկ այլ գործի շրջանակներում Վճռաբեկ դատարանն արտահայտել է փոքր-ինչ տարբերակված դիրքորոշում²⁵: Մասնավորապես, նշվում է, որ

²⁵ Տե՛ս Գարեգին Հարությունյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ **ՎԴ/3118/05/19** վարչական գործով **ՀՀ Վճռաբեկ դատարանի 10.11.2020թ. որոշումը**: Այս գործի շրջանակներում Վերաքննիչ դատարանը գտել է, որ վիճարկվող վարչական ակտի վերաբերյալ Արմենուհի Հարությունյանն իրազեկված էր ավելի վաղ, քան հայցվորը վկայակոչել է իր միջնորդության մեջ: Բացի այդ, Վերաքննիչ դատարանը փաստել է, որ Արմեն Չատյանի կողմից պահպանվել է համապատասխան պաստառ-վահանակը տեղադրված լինելու պահանջը, որը հիմնավորվում է վերաքննիչ բողոքին կից

կառուցապատողի կողմից շինարարությունն սկսելը դեռևս չի փաստում այն մասին, որ հայցվորը պետք է անպայման եզրակացներ, որ Ղեկավարի կողմից Ա.Չ.-ին 25.12.2018 թվականին տրամադրվել է թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունը, որով վերջինիս տրվել է իրավունք՝ վիճելի հասցեում բնակելի տուն կառուցելու համար: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Ղեկավարի տեղակալի 07.03.2019 թվականի պատասխան գրությունից հետո է միայն Գ.Հ.-ն իրազեկվել, որ Ա.Չ.-ին Ղեկավարի կողմից 25.12.2018 թվականին տրամադրվել է թիվ 23/35-23 շինարարության թույլտվությունը Երևանի Կենտրոն վարչական շրջանի Այգեստան 10-րդ փողոցի թիվ 17/2 հասցեում շինարարություն իրականացնելու նպատակով, որով խախտվում են կամ կարող են խախտվել հայցվորի իրավունքները: Այսինքն՝ Գ.Հ.-ն մինչև 12.03.2019 թվականը տեղեկացված չէր վարչական ակտի գոյության մասին, հետևաբար, վերջինս, չհանդիսանալով վարչական ակտի հասցեատեր, վիճարկման հայց ներկայացնելու ժամկետը բաց է թողել՝ հարգելի պատճառով, և այդ մասին իրազեկվելուց հետո երկու ամսվա ընթացքում՝ 26.04.2019 թվականին, վիճարկման հայցով դիմել է դատարան:

Դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ պրակտիկայում ***վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի համար բողոքի իրավունքի իրականացման ժամկետի սկիզբը*** դատարանը կապում է մի դեպքում շինարարական աշխատանքների փաստացի մեկնարկի, իսկ մեկ այլ դեպքում՝ վարչական մարմնին ուղղված շինարարական թույլտվության վերաբերյալ գրավոր հարցման պատասխանն ստանալու օրվա հետ:

Իրավունքների հնարավոր խախտման փաստի (պահի) արձանագրման վերաբերյալ կարևոր է նաև այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.02.2008 թվականի N 11-Ն հրամանով (***ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատա-***

ներկայացված լուսանկարների համակարգչային պատճեններով: Վերաքննիչ դատարանը նաև նշել է, որ շինարարության իրականացման սկզբնաժամկետի վերաբերյալ Քաղաքապետարան ներկայացված համապատասխան դիմումի մասին ծանուցմամբ հիմնավորվում է, որ շինարարությունը փաստացի սկսված է եղել 21.02.2019 թվականից՝ նույն թվականի փետրվարի 20-ից շինհրապարակում պատահականապես տեղադրված լինելու պայմաններում: Հետևաբար, Վերաքննիչ դատարանը գտել է, որ շինարարության, ինչպես նաև շինարարության թույլտվության մասին Արմենուիի Հարությունյանը, հետևապես նաև հայցվորն իրազեկված են եղել 21.02.2019 թվականից:

րում» շինարարական նորմերը հաստատելու մասին) հաստատված «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում ՀՀ ՇՆ I-3.01.01-2008» (կարգ) չափորոշիչի 7-րդ կետի համաձայն՝ մինչև շենքի և շինության շինարարության սկիզբը անհրաժեշտ է, շինարարության կատարման նախագծի լուծումներին համապատասխան, իրականացնել տեղում շինարարական հրապարակի (ուղեգծի) հատկացումը, *շինարարական հրապարակի անհրաժեշտ ցանկապատումը (պահպանական, պաշտպանական կամ ազդանշանային)*, երկրաբաշխական նշահարման հիմքի ստեղծումը, մոտեցման ճանապարհների կառուցումը, պահեստային տնտեսության ստեղծումը և շինարարության կարիքների համար անհրաժեշտ ծավալի կենցաղային նշանակության ու կոմունալ տնտեսության շինությունների նախապատրաստումը՝ հաշվի առնելով գոյություն ունեցող շենքերի ու շինությունների՝ այդ նպատակների համար ժամանակավոր օգտագործման հնարավորությունը: Այս տեսանկյունից կարևոր են նաև ՀՀ Երևան քաղաքի ավագանու 16 մարտի 2012 թվականի N 405-Ն «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի՝ Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին որոշմամբ հաստատված կարգի (Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների) 6-րդ կետի 3-րդ ենթակետի այն իրավակարգավորումը՝ համաձայն որի լրացուցիչ պայմաններ են կառուցապատվող օբյեկտին հարող տարածքում կամ դրան կից ճանապարհային երթևեկության մասնակիցների, ինչպես նաև *այլ անձանց անվտանգության, իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով անհրաժեշտ իրազեկումն ու պայմանների ապահովումը*, ինչպես նաև «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարման կարգը հաստատելու մասին» ՀՀ քաղաքաշինության նախարարի 14.01.2008 թվականի թիվ 07-Ն հրամանով հաստատված կարգի պահանջները²⁶: Այս և այլ կազմակերպա-

²⁶ Կարգի 4-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մինչև շինարարություն սկսելը հասարակությանն իրազեկելու նպատակով շինարարության համար հատկացված շինհրապարակի ցանկապատի /այդ թվում՝ ճանապարհաշինական աշխատանքների ուղեգծի/ առավել տեսանելի տեղամասում տեղադրվում է հատուկ վահանակ, որը պետք է պարունակի պատվիրատու և կապալառու կազմակերպությունների տվյալների, ծրագրի անվանման ու նպատակային նշանակության, շինարարական աշխատանքների սկզբի և ավարտի ժամկետների, իսկ ՀՀ պետական բյուջեի (այդ թվում՝ պետությանը

տեխնիկական գործոնները բավարար են հիմնավորելու այն փաստը, որ վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձը հնարավորություն ունի գնահատելու *իր իրավունքների հնարավոր խախտված լինելու կամ խախտվելու հանգամանքը առնվազն շինարարական աշխատանքների մեկնարկի (դրա վերաբերյալ շինհրապարակում փակցվող համապատասխան իրազեկումներից) և (կամ) դրա վերաբերյալ վարչական մարմիններին ուղղված հարցումների պատասխաններից*:

Եթե դատական պրակտիկայում վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի համար նեգատիվ հետևանքներ առաջացնող ակտի բողոքարկման ժամկետի հաշվարկն սկզբունքորեն կապվում է շինարարական աշխատանքների մեկնարկն ազդարարող որևէ գործընթաց սկսելն ակնհայտ լինելու փաստի և (կամ) դրա վերաբերյալ վարչական մարմիններին ուղղված հարցումների պատասխանների հետ, ապա վիճելի է դատարանների՝ նման կարգավիճակ ունեցող անձի կողմից վիճարկման հայց ներկայացնելու ժամկետները հաշվարկելիս ՀՀ վարչ. դատ. օր. 72-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված երկամսյա ժամկետի վերաբերյալ իրավակարգավորումներով առաջնորդվելու մոտեցումը՝ այն պարագայում, երբ այդ նորմի հիմքով հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածների իրավակարգավորումների համաձայն օրենքով նախատեսված կարգով վարույթի մասնակիցներին վարչական ակտի ընդունման մասին իրազեկելու հաջորդ օրվանից²⁷: Իսկ վարչական ակտի հասցեատեր

տրամադրված վարկային և դրամաշնորհային) միջոցների կամ դրանց ներգրավմամբ և համայնքային բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարական աշխատանքների դեպքում նաև շինարարության նախահաշվային արժեքի մասին տեղեկատվություն՝ պահպանելով վահանակը մինչև ավարտը:

²⁷ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարույթի մասնակիցներին վարչական ակտի ընդունման մասին իրազեկում է սույն հոդվածով նախատեսված հանձնման կամ հրապարակման եղանակով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջն ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև հանձնման այնպիսի եղանակներով, որոնք թույլ են տալիս հաստատել հասցեատիրոջ կողմից ակտն ստանալու կամ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված լինելու փաստը: Որպես կանոն, գրավոր վարչական ակտի հանձնումը պետք է կատարվի ակտը վարույթի մասնակիցներին ստորագրությամբ

չհանդիսացող անձի պարագայում նման իրազեկում չէր կարող լինել, և, հետևաբար, չէր կարող հոսել մի ժամկետ, որը նախատեսված է տվյալ դեպքում վարչական վարույթի մասնակիցների համար:

Ինչպես տեսնում ենք, այս պարագայում տեղի չի ունենում վարչական ակտի ծանուցում դասական իմաստով: Վարչական ակտը հասցեատեր չհանդիսացող անձի համար ուժի մեջ մտած է համարվում վերջինիս կամ ակտի հասցեատիրոջ ակտիվ գործողությունների արդյունքում, ինչի մասին արդեն խոսվել է: Պրակտիկայում, երբ վարչական ակտը հասցեատիրոջ համար առաջացնում է դրական հետևանք (բարենպաստ վարչական ակտ), վարչական մարմինը, օրինակ, շինթույլտվության ակտում չի նշում ակտի բողոքարկման ժամկետը և մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին կարող է այդ ակտը բողոքարկվել: **Հատկանշական է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի «ը» կետի համաձայն՝ գրավոր վարչական ակտը պետք է պարունակի նշում՝ ակտի բողոքարկման ժամկետի և մարմնի, ներառյալ՝ դատարանը, որին կարող է այդ ակտը բողոքարկվել:**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ այն դեպքում, երբ գրավոր վարչական ակտում դրա բողոքարկման ժամկետը նշված չի լինում, ապա վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում, իսկ համապատասխան տեղեկատվությունը նախատեսված լինելու դեպքում (այսինքն՝ վարչական մարմինը պահպանել է վարչական ակտին ներկայացվող պարտադիր պայմաններից մեկը) գործում է վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից բողոքարկման համար նախատեսված 2-ամսյա ժամկետը: Հատկանշական է, որ նշված կարգավորումը վերաբերում է վարչական կարգով բողոքարկման

առձեռն հանձնելու միջոցով: Նույն մասով նախատեսված հանձնման մյուս միջոցները կիրառվում են այն դեպքում, երբ որևէ հիմնավոր պատճառով ստորագրությամբ առձեռն հանձնելու հնարավորություն չկա, այդ թվում՝ եթե հասցեատերն ինքը խնդրել է օգտագործել հանձնման այլ միջոցներ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վարչական ակտի հրապարակումը կատարվում է վարչական մարմնի տեղեկագրում կամ այլ պաշտոնական տեղեկագրում հրատարակելով կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակելով:

հետ կապված հարաբերություններին²⁸։ Վարչական դատավարության օրենսգիրքը չի կարգավորել նշված հարցը, և պրակտիկայում դատարանները բողոքարկման ժամկետի հաշվարկի համար հիմք են ընդունում 2- ամսյա ժամկետը։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի «ը» կետի համաձայն, վարչական ակտին ներկայացվող պահանջներից է ոչ միայն այն մարմնի և ժամկետի նշումը, ում պետք է բողոքարկել (ըստ էության վերադաս վարչական մարմին վերադասության կարգով բողոքի մասով), *այլ դատարանի վերաբերյալ նշումը և հետևաբար՝ նաև դատարան բողոք ներկայացնելու (հայց ներկայացնելու) ժամկետի նշումը*, կարել է եզրակացնել, որ այն դեպքերում, երբ անձը, ով վարչական ակտի հասցետեր չէ կամ վարույթին ներգրավված չէ որպես երրորդ անձ և այդ ակտի գոյության մասին իմանում է ոչ թե օրենքով նախատեսված կարգով իրազեկվելու ճանապարհով, ապա պետք է նույնացնել այնպիսի իրավիճակի հետ, երբ վարչական ակտում բացակայում է վարչական ակտի բողոքարկման մարմնի (այս դեպքում դատարանի) կամ բողոքարկման ժամկետի նշումը, ինչը տվյալ անձին հնարավորություն է տալիս բողոք ներկայացնել վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում՝ կիրառելով միջճյուղային անալոգիա։ Այսինքն՝ իրազեկված չլինելը նույնացվում է վարչական ակտի մեջ դատարան բողոքարկելու հնարավորության և ժամկետների վերաբերյալ նշման բացակայության կառուցակարգի հետ։

2.3 Պարտավորեցման հայցի դեպքում հայց ներկայացնելու ժամկետի հաշվարկը

Ինչ վերաբերում է պարտավորեցման հայցին, ապա այստեղ բողոքարկման ժամկետների հաշվարկի որոշակիացման համար ևս անհրաժեշտ է հիմնահարցը դիտարկել սույն աշխատանքի շրջանակներում քննարկման առարկա դարձած *«ժամկետի սկիզբ»* և *«ժամկետի ընթացք»* եզրույթների լույ-

²⁸ **Հովհաննիսյան Գ.**, Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն.- Եր.։ «Հանրային դիվանագիտություն» բարեգործական ՀԿ, 2020, էջ՝ 89-90։ Հատկանշական է, որ հեղինակը հիմնահարցին անդրադարձել է վարչական բողոքի շրջանակներում, սակայն հիմնահարցի նման լուծումն ընդունելի է նաև վիճարկման հայց ներկայացնելու ժամկետի թույլատրելիության մասով։

սի ներքո: ՀՀ վարչ. դատ. օր. 72-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտավորեցման հայց վարչական դատարան կարող է ներկայացվել ***երկամսյա ժամկետում՝ վարչական ակտի ընդունումը մերժելու մասին իրազեկվելու պահից:*** Մինչև բողոքարկման ժամկետի սկզբի որոշակիացմանն անդրադառնալը հակիրճ ներկայացնենք նշված հայցատեսակի բովանդակությանը:

ՀՀ վարչ. դատ. օր. 67-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորեցման հայցով հայցվորը կարող է պահանջել, որ ընդունվի այն բարենպաստ վարչական ակտը, ***որի ընդունումը մերժել է վարչական մարմինը:*** Պարտավորեցման հայցը ներառում է վերը նշված միջամտող վարչական ակտը վարչական մարմնի կողմից վիճարկելու պահանջը: Այսինքն՝ դատարանին ուղղված առաջնային պահանջը ոչ թե մերժում պարունակող վարչական ակտի իրավաչափությունն ստուգելն է, այլ վարչական մարմնին պարտավորեցնելը՝ ընդունել բարենպաստ վարչական ակտ, որի ընդունումը մերժվել է: Սակայն սա նշանակում է նաև, որ պարտավորեցման հայց ներկայացնելու համար պարտադիր նախապայման է ***բարենպաստ վարչական ակտի ընդունումը վարչական մարմնի կողմից մերժելը*** (մերժման վերաբերյալ վարչական ակտի առկայություն): Հիմնահարցին անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ պարտավորեցման հայցը, բարենպաստ վարչական ակտն ընդունելու պահանջից բացի, իրավունքի ուժով ներառում է նաև վարչական ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտի վիճարկման պահանջը՝ անկախ հայցվորի կողմից այդպիսի պահանջ ներկայացնելու հանգամանքից: Օրենսդրի կողմից նման պայմանի սահմանումը բխում է վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքից այնքանով, որքանով անձը չի կարող հայցել իր համար բարենպաստ վարչական ակտի ընդունում, քանի դեռ այդպիսի ակտի ընդունումը մերժելու մասին միջամտող վարչական ակտն օրենքով սահմանված կարգով վերացված չէ: Ըստ այդմ՝ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորեցման հայցի քննության արդյունքներով գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս հայցը բավարարելու դեպքում վարչական դատարանը վարչական մարմնին բարենպաստ վարչական ակտ ընդունելը պարտավորեցնելու հետ մեկտեղ պետք է անվավեր ճանաչի վարչական ակտն ըն-

դուները մերժելու վերաբերյալ որոշումը²⁹:

Վերադառնալով բուն ժամկետների հաշվարկին՝ օրենսդիրը պարտավորեցման հայց ներկայացնելիս **ժամկետի սկզբի** համար որպես փաստական հանգամանք նախատեսում է ոչ թե վարչական ակտի ուժի մեջ մտնելու, այլ *վարչական ակտի ընդունումը մերժելու մասին իրազեկվելու պահը: Այլ կերպ՝ կոնկրետ դեպքում կիրառելի չէ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասը* (գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից), սակայն կարևոր է նշված հոդվածով նախատեսված կարգով վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելը:

Ինչ վերաբերում է քննարկվող հայցատեսակի պարագայում դատական կարգով բողոքարկման ժամկետի ընթացքի հաշվարկին, ապա հիմք պետք է ընդունել *ՀՀ վարչ. դատ. օր. 51-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումները*՝ համաձայն որոնց տարիներով, ամիսներով կամ օրերով *հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը: Այլ կերպ՝ բարենպաստ վարչական ակտ ընդունելը մերժելու վերաբերյալ վարչական ակտի մասին հասցեատիրոջն իրազեկելու օրը համարվում է (համընկնում է) վարչական ակտի բողոքարկման ժամկետի սկիզբը, քայց ոչ մի պարագայում չի կարող համարվել ժամկետի ընթացքը որոշակիացնող օր:*

Փորձենք ասվածը պարզաբանել օրինակով: Եթե պատկերացնենք, որ բարենպաստ վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ վարչական ակտը (միջամտող վարչական ակտ) ընդունվել է 01.01.2022 թվականին և օրենքով սահմանված կարգով իրազեկվել է հասցեատիրոջը 02.01.2022 թվականին (այստեղ օրենսդիրը բավարարվել է իրազեկման փաստով, և որպես այդպիսին ակտի ուժի մեջ մտնելու հարց դրված չէ) և ղեկավարվելով

²⁹ Տե՛ս Կարեն Սարգսյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/6495/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թ. որոշումը և Լուսինե Ավագյանի ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/2191/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.06.2017թ. որոշումը:

ՀՀ վարչ դատ. օր. 51-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումներով (*տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը*), *սպա ենթադրյալ խախտված* իրավունքների և ազատությունների համապատասխան հայցով պաշտպանության ժամանակահատվածի (այս պարագայում՝ 2 ամիս) ընթացքը պետք է հաշվարկել 03.01.2022 թվականից:

Պրակտիկայում հնարավոր են դեպքեր, երբ վարչական մարմինն ընդունում է վարչական ակտը, սակայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով (գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, *եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ*) սահմանում է այդ ակտի ուժի մեջ մտնելու այլ ժամկետ: Այս դեպքում ևս, չնայած այն հանգամանքին, որ դիտարկվող վարչական ակտն ուժի մեջ է մտնելու ավելի ուշ, որևէ բան չի կարող խոչընդոտել անձին պարտավորեցման հայց ներկայացնել **մերժման վերաբերյալ ակտի իրազեկման**, այլ ոչ թե ուժի մեջ մտնելու պահից: Այստեղ և նախորդ օրինակում կարևոր է այն հանգամանքը, որ անձի համար բացասական ազդեցությունը, ըստ էության, մեկնարկում է ոչ թե վարչական ակտի ուժի մեջ մտնելով, այլ մերժման վերաբերյալ իրազեկվելու պահից: Ինչպես արդեն նշել ենք, պարտավորեցման հայցի դեպքում դատարանին ուղղված առաջնային պահանջը ոչ թե մերժում պարունակող վարչական ակտի իրավաչափությունն ստուգելն է, այլ վարչական մարմնին պարտավորեցնելը ընդունել բարենպաստ վարչական ակտ, որի ընդունումը մերժվել է: Նման դիտարկման համար բավարար հիմք է համարվում ՀՀ վարչ. դատ. օր. 67-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը, որի համաձայն պարտավորեցման հայցը **ներառում է** վարչական մարմնի կողմից սույն հոդվածի 1-ին մասում նշված միջամտող վարչական ակտը վիճարկելու պահանջը: Սա նշանակում է, որ մերժման վիճարկումը ինքնուրույն պահանջ չի կարող լինել³⁰, հակառակ դեպքում կա-

³⁰ ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով պարտավորեցման հայցի առանձնահատկություններին, արձանագրել է, որ պարտավորեցման հայցի բուն նպատակն անձի համար բարենպաստ վարչական ակտի ընդունմանը հասնելն է, և եթե վարչական

րող ենք խնդիր ունենալ ժամկետների այլ հաշվարկի հետ՝ վիճարկման հայցի ժամկետների կիրառմամբ:

2.4. Գործողությունների կատարման հայցի դեպքում հայց ներկայացնելու ժամկետների հաշվարկը

2.4.1. Ընդհանուր դրույթներ

Ինչ վերաբերում է գործողությունների կատարման հայցին, ապա օրենսդիրը, կապված առանձին փաստական հանգամանքներից, նախատեսել է բողոքարկման տարբեր ժամկետներ: Այսպես, ՀՀ վարչ. դատ. օր. 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի շրջանակներում կարգավորված է բողոքարկման ժամկետի սկզբի և բուն ժամկետի հետ կապված հարաբերությունները:

Այստեղ հնարավոր են հետևյալ իրավիճակները՝

(1) ՀՀ վարչ. դատ. օր. 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի հիմքով օրենսդիրը որպես բողոքարկման ժամկետ է սահմանել մեկ ամիսը, իսկ այդ *ժամկետի սկիզբ*՝ վարչական մարմնի կողմից գործողության կատարումը մերժելու մասին իրազեկվելու պահը: Այս դեպքում վարչական մարմինը մերժում է (պրակտիկայում, որպես կանոն, դա տեղի է ունենում գրության միջոցով իրազեկվելու ձևով) կատարել անձի կողմից պա-

դատարանը ձեռք բերված ապացույցների շրջանակում և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա հաստատված է համարում հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, վերջինս պետք է կայացնի հայցը բավարարելու վերաբերյալ գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ անվավեր ճանաչելով վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ որոշումը և պարտավորեցնելով վարչական մարմնին ընդունել այդ վարչական ակտը: Այլ կերպ ասած՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ միջամտող վարչական ակտի իրավաչափությունը պարտավորեցման հայցի շրջանակներում չի քննվում վիճարկման հայցի քննության համար սահմանված կարգով և ձեռք բերված ապացույցների շրջանակում, և դատական ակտի կայացման պահին գործող օրենքների հիման վրա հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը հաստատվելն ինքնին հանգեցնում է վարչական մարմնի կողմից հայցվող վարչական ակտն ընդունելը մերժելու վերաբերյալ միջամտող վարչական ակտի անվավերության: Այս մասին մանրամասն տես՝ Բեդկյան Հ. Պարտավորեցման հայցերով ապացուցման բեռի բաշխման հիմնախնդիրները վարչական դատավարությունում: Պետություն և իրավունք: Էջ 72: Կարեն Սարգսյանն ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության թիվ ՎԴ/6495/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.12.2016 թ. որոշումը:

հանջվող գործողությունը: Դատական կարգով բողոքարկման *Ժամկետի ընթացքի* հաշվարկի համար հիմք են ՀՀ վարչ. դատ. օր. 51-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումները՝ համաձայն որոնց տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

(2) Գործողությունների կատարման հայցի շրջանակներում հնարավոր մեկ այլ իրավիճակ է ՀՀ վարչ. դատ. օր. 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքը: Այսպես, երբ լրացել է հայցվող գործողության կատարման համար սահմանված ժամկետը, և վարչական մարմինը ո՛չ մերժել է դրա կատարումը, ո՛չ էլ կատարել է գործողությունը (վարչական մարմնի իրավական անգործություն), ապա անձն իրավունք ունի գործողությունների կատարման հայց ներկայացնել դատարան երկամսյա ժամկետում, երբ լրացել է հայցվող գործողության կատարման համար սահմանված ժամկետը: Այսինքն՝ օրենսդիրն այս պարագայում բողոքարկման *Ժամկետի սկիզբ* է համարում վարչական մարմնից պահանջվող գործողության կատարման ժամկետի լրանալու օրը: Իսկ *Ժամկետի ընթացքի* հետ կապված հարաբերությունների կարգավորման հարցում կիրառելի են ՀՀ վարչ. դատ. օր. 51-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումները: Նման իրավիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ, օրինակ, քաղաքացին դիմում է ներկայացնում վարչական մարմնին որևէ տեղեկանք ստանալու համար (պարտադիր է, որ իրավական ակտով սահմանված լինի կոնկրետ տեսակի տեղեկանքը տալու ժամկետը), սակայն վարչական մարմինն իրավական ակտով նախատեսված ժամկետում չի արձագանքում քաղաքացու պահանջին:

(3) Հաջորդ իրավիճակը հնարավոր է նախորդ 2 դեպքերի բացակայության պայմաններում: Այսինքն՝ քաղաքացու մի այնպիսի պահանջի դեպքում (գործողություն կատարելու), որին վարչական մարմինը ո՛չ մերժում է (որպես կանոն՝ մերժումն իրականացվում է գրությամբ), ո՛չ էլ այդ վարչական մարմնի կողմից կոնկրետ գործողության կատարումը սահմանափակված է ժամկետով: Այլ կերպ՝ նման իրավիճակը հնարավոր է, երբ վարչական մարմինը չի մերժել անձին՝ կոնկրետ գործողությունը կատարելու մեջ,

և այդ գործողության կատարումն ինքնին սահմանափակված չէ ժամկետով: Եթե առաջին 2 դեպքերում բողոքարկման ժամկետի սկիզբն օրենսդիրը կապում է հայցվող գործողությանը վարչական մարմնի՝ մի դեպքում մերժման ձևով արձագանքի (իրազեկվելու), մյուս դեպքում՝ անգործության ձևով «արձագանքի» հետ (գործողության կատարման համար նախատեսված ժամկետում պահանջին չարձագանքելը), ապա 3-րդ դեպքում անձի համար բողոքարկման *ժամկետի սկիզբ* է գործողություն կատարելու համար անձի կողմից դիմում ներկայացնելու պահը (այդ պահից եռամսյա ժամկետում): Իսկ *ժամկետի ընթացքի* հետ կապված հարաբերությունների կարգավորման հարցում կիրառելի են ՀՀ վարչ դատ. օր. 51-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումները³¹:

³¹ Պրակտիկայում հնարավոր է նաև այնպիսի իրավիճակ, երբ գործողությունների կատարման հայցապահանջ ներկայացնելու անհրաժեշտություն է առաջանում ոչ թե պահանջվող գործողության կատարումը վարչական մարմնի կողմից մերժելու, պահանջվող գործողության կատարման համար սահմանված ժամկետը լրանալու կամ երբ դիմում է ներկայացվել հայցվող գործողությունը կատարելու համար և առկա չեն նախորդ 2 դեպքերը (այսինքն՝ բոլոր 3 դեպքերում առկա են վարչական մարմնին ուղղված որոշակի գործողություն կատարելու որոշակի «ակտիվ» պահանջ (ՀՀ վարչ դատ. օր. հոդված 72, մաս 1, կետ 3, «ա-գ» ենթակետեր)), այլ վարչական մարմինը պետք է կատարի օրենքի պոզիտիվ պահանջից բխող որոշակի գործողություններ և ձևական իմաստով, ըստ էության, օբյեկտիվորեն պետք է բացակայի անձի կողմից դիմում ներկայացնելու որևէ պահանջ: Այսպես՝ ՀՀ աշխ. օր. 130-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ աշխատանքային պայմանագրի լուծման օրը...: Ակնհայտ է, որ վերջնահաշվարկի օր է համարվում աշխատանքային պայմանագրի լուծման օրը: Այսինքն՝ օրինակ՝ ոստիկանության ծառայողի պարագայում վարչական մարմնի կողմից կոնկրետ գործողություն կատարելը (լրիվ վերջնահաշվարկը կատարելը) վարչական մարմնի պարտականությունն է, որի համար անձի դիմում ներկայացնելու պահանջը բացակայում է: Նման հայցապահանջի համար(տեքստուալ իմաստով), հաշվի առնելով ՀՀ վարչ. դատ. օր. 72-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ կետի, «ա-գ» ենթակետերը, առաջին հայացքից կարելի է ասել, որ որևէ հայցատեսակ նախատեսված չէ՝ այն հիմնավորմամբ, որ հոդվածում նշված դեպքերով օրենքը պահանջում է գործողություն կատարելու համար անձի կողմից վարչական մարմնին ուղղված պահանջ (այդպիսին է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի ՎԴ/6048/05/19 վարչական գործով 30.04.2021 թվականի որոշման շրջանակներում արտահայտած իրավական դիրքորոշում, ինչի մասին կխոսենք ստորև): Հատկանշական է, որ պրակտիկայում նման վեճերը քննության են առնվում ՀՀ վարչ. դատ. օր. 10-րդ հոդվածի «...հանրային ծառայությունից ազատելու հետ կապված վեճերի շրջանակում»: Սակայն քննարկվող օրինակում գործողություն կատարելը վարչական մարմնի պարտականությունն է, որը վարչական մարմինը չի կատարել: Կարծում ենք, որ

2.4.2 Ֆիկտիվ ակտի դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը տրամադրելու համար վարչական մարմին և դատարան դիմելու ժամկետների հաշվարկի առանձնահատկությունները

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե դիմումով հայցվում է ուրոշակի փաստ հաստատելու կամ արձանագրելու վերաբերյալ վարչական ակտի ընդունում, որով սահմանված իրավունքներն անձինք կարող են հավաստել սահմանված ձևի փաստաթղթով, **ապա փաստաթուղթը չստացած անձն ազատվում է այն պատասխանատվությունից կամ պարտականություններից**, որոնք օրենքով սահմանվում են այդ փաստաթուղթը չունենալու համար: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված փաստաթուղթն **իր նախաձեռնությամբ** կամ

այս իրավիճակում ճիշտ է ՀՀ վարչ. դատ. օր. 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «բ» ենթակետով նախատեսված հիմքը (երկամսյա ժամկետ): Նման տեսակետը հիմնավորվում է այն տրամաբանությամբ, որ, նախ, ՀՀ վարչ. դատ. օր. 68-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումն առնվազն թույլ չի տալիս հետևություն անել առ այն, որ գործողությունների կատարման հայցին պետք է նախորդի վարչական մարմնին պարտադիր դիմելու և մերժում ստանալու գործընթացը և ՀՀ վարչ. դատ. օր. 72-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ կետի «բ» ենթակետի պարագայում օրենսդրի ձևակերպումը չպետք է մեկնաբանել բացառապես դիմում ներկայացնելուց հետո վարչական մարմնի իրավական անգործության պարագայում դատարան դիմելու լույսի ներքո. օրենսդիրն ընդամենը նշում է, որ «երբ լրացել է հայցվող գործողության կատարման համար սահմանված ժամկետը»՝ առանց շեշտելու, որ դրան պետք է նախորդի անձի՝ վարչական մարմին ուղղված վերջինիս վրա օրենքի ուժով դրված գործելու պարտականությունը կատարելու դիմումը, քանզի օրենքի ուղղակի պահանջով վարչական մարմինն ուներ ակտիվ գործելու պարտականություն: Այդպիսին է ՀՀ աշխ. օր. 130-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավիճակը: ՀՀ վարչ. դատ. օր. 68-րդ հոդվածի 1-ին մասի և 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «ա-գ» ենթակետերի համակարգային մեկնաբանությունը թույլ է տալիս արձանագրել, որ «բ» ենթակետով նախատեսված դեպքում դատարան կարելի է հայց ներկայացնել ոչ միայն որևէ գործություն կատարելու պահանջով վարչական մարմնին դիմելու և վերջինս հնարավոր անգործության պարագայում, այլև այն դեպքերում, երբ վարչական մարմինն օրենքով նախատեսված կոնկրետ ժամկետներում չի կատարում օրենքով իր վրա դրված կոնկրետ գործողություն կատարելու պարտականությունը: Վարչական մարմնի՝ նշված ձևով անգործության բողոքարկման ժամկետի սկիզբ ՀՀ աշխ. օր.-ի 130-րդ հոդվածի 1-ին մասի և ՀՀ վարչ. դատ. օր. 72-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետի հիմքով պետք է համարել պայմանագիրը լուծելու օրը (կամ վարչական մարմնի ազատման հրաման ընդունելու օրը): Իսկ ժամկետի ընթացքի հետ կապված հարաբերությունների կարգավորման հարցում կիրառելի են ՀՀ վարչ. դատ. օր. 51-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումները:

համապատասխան դիմումի հիման վրա դիմող անձին է տրամադրում վարչական ակտն ընդունելու ժամկետը լրանալուց հետո՝ ոչ ուշ, քան յոթնօրյա ժամկետում: Վերոգրյալ իրավակարգավորումներից հետևում է, որ օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու հետևանքով ֆիկցիայի ուժով ընդունված վարչական ակտը դիմող անձին է տրամադրվում կա՛մ վերջինիս դիմումի հիման վրա, կա՛մ վարչական մարմնի նախաձեռնությամբ: Ընդ որում՝ նորմերի համակարգային վերլուծության արդյունքում դժվար չէ նկատել, որ օրենսդիրը սահմանել է նաև, որ ֆիկցիայի ուժով ընդունված վարչական ակտը դիմող անձին է տրամադրվում վարչական ակտն ընդունելու ժամկետը լրանալուց հետո՝ ոչ ուշ, քան յոթնօրյա ժամկետում:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ³² նշված ժամկետը վերաբերելի է միայն վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտը տրամադրելուն:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է նաև, որ վերոգրյալ ժամկետը կիրառելի չէ վարչական մարմնից բարենպաստ վարչական ակտ հայցող անձանց նկատմամբ, քանի որ վերջիններիս համար օրենքով սահմանված չէ որևէ ժամկետ՝ ֆիկցիայի ուժով ընդունված վարչական ակտը վարչական մարմնից ստանալուն ուղղված գործողություններ նախաձեռնելու, այդ թվում՝ վարչական մարմնին դիմում ներկայացնելու համար, հետևաբար՝ վարչական մարմինը պարտավոր է ֆիկցիայի ուժով ընդունված վարչական ակտը տրամադրել դիմող անձին՝ այդ մասին նրա կողմից ներկայացված դիմումի հիման վրա և անկախ այն հանգամանքից, թե երբ է ներկայացվել այդ դիմումը:

Այն, որ **օրենքով սահմանված չէ որևէ ժամկետ** բարենպաստ վարչական ակտ հայցող անձանց համար ֆիկցիայի ուժով ընդունված վարչական ակտը վարչական մարմնից ստանալուն ուղղված **գործողություններ նախաձեռնելու մասով**, անվիճելի է, սակայն անորոշ է մնում այն հարցը, թե վարչական մարմինն ամեն դեպքում ինչ ժամկետներում պետք է տրամադրի ֆիկցիայի ուժով ընդունված փաստաթուղթը, երբ այն տրամադրելու նախաձեռնությամբ հանդես է գալիս դիմող անձը: Այս անորոշության պատճառը «-

³² Տե՛ս Սիրուն Մկրտչյանի ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0511/05/22 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.02.2023 թ. որոշումը:

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի ձևակերպումն է, երբ օրենսդիրը, (1) *առնվազն տեքստուալ իմաստով, յոթօրյա ժամկետում վարչական մարմնի՝ փաստաթուղթը տրամադրելու պարտականությունը կապում է 2 դեպքերի հետ (վարչական մարմնի նախաձեռնություն և դիմող անձի նախաձեռնություն), (2) սակայն չսահմանելով դիմողի համար նման նախաձեռնությամբ վարչական մարմնին դիմելու ժամկետ, ամեն դեպքում վարչական մարմնի փաստաթուղթը տրամադրելը կապում է վարչական ակտն ընդունելու ժամկետը լրացած լինելու փաստի հետ*: Եթե փորձենք օրինակով ցույց տալ, ապա կունենանք այսպիսի իրավիճակ. ընդունենք՝ վարչական ակտի ընդունման ժամկետը լրանում է 01.01.2023 թվականին (պետք է հիշել, որ օրենքով սահմանված չէ ժամկետում չընդունված փաստաթուղթը վարչական մարմնից պահանջելու դիմողի համար որևէ ժամկետային սահմանափակում), և քաղաքացին այդպիսի պահանջով դիմում է վարչական ակտի ընդունման ժամկետը լրանալուց, օրինակ՝ 3 ամիս անց. սա նշանակում է, որ կոնկրետ իրավիճակում համապատասխան պահանջի դեպքում այդ փաստաթուղթը *վարչական ակտն ընդունելու ժամկետը լրանալուց հետո՝ ոչ ուշ, քան յոթնօրյա ժամկետում տրամադրելու պարտականությունն* օբյեկտիվորեն հնարավոր չէ պահպանել:

Վարչական մարմնի կամայականություններից խուսափելու համար, կարծում ենք, օրենքով պետք է սահմանվի նաև քաղաքացու դիմումի հիման վարչական մարմնի կողմից նշված փաստաթուղթը (ֆիկտիվ ակտը) տրամադրելու ժամկետային պարտականություն:

Հաշվի առնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի տառացի բովանդակությունը՝ պետք է համաձայնել Վճռաբեկ դատարանի այն դիրքորոշման հետ, որ վարչական մարմնի անգործության իրավական հետևանքի՝ ֆիկցիայի ուժով վարչական ակտի ընդունված լինելու առկայությունը վարչական մարմնից բարենպաստ վարչական ակտ հայցող անձին բնավ **չի պարտավորեցնում անմիջապես ձեռնամուխ լինել այդ վարչական ակտը ձեռք բերելուն**: Գործնականում հնարավոր է, երբ ֆիկցիայի ուժով ընդունված վարչական ակտն անմիջապես ստանալու անհրաժեշտությունը բացակայի՝ հաշվի առնելով առաջին հերթին այն հանգամանքը, **որ փաստաթուղթը չստացած անձն ազատվում է այն պատասխանատվությունից կամ պարտականություններից,**

որոնք օրենքով սահմանվում են այդ փաստաթուղթը չունենալու համար: Սակայն կարող է վարչական ակտը ֆիկցիայի ուժով ընդունվելու փաստը վրա հասնելուց տևական ժամանակ անց օբյեկտիվորեն առաջանալ այն ստանալու անհրաժեշտությունը: Նման դեպքերում ֆիկցիայի ուժով ընդունված վարչական ակտը տրամադրելու պահանջով անձը կարող է վարչական մարմնին դիմել այն ժամանակ, երբ առաջանում է նման անհրաժեշտությունը, որպիսի պարագայում վարչական մարմինը պարտավոր է այն տրամադրել, սակայն օրենսդրական՝ վերը նշված անհատականությունների պատճառով վարչական մարմինները պրակտիկայում «սահմանում են» («որոշում են») նման բովանդակությամբ դիմումներին արձագանքելու ինքնուրույն ժամկետներ³³:

Վարչական մարմնի նախաձեռնության բացակայության պարագայում (երբ լրացել է նաև վարչական ակտը յոթ օրվա ընթացքում տալու ժամկետը) հարց է առաջանում՝ կարո՞ղ է անձը պաշտպանվել նման անգործությունից. պատասխանը՝ ոչ, քանզի վարչական մարմնի նման անգործությունից պաշտպանվելու հայցատեսակի՝ գործողության կատարման հայցի որևէ ենթատեսակ (ՀՀ վարչ. դատ. օր. 72-րդ հոդվածի 1-ին մաս, կետ 3, ենթակետեր «ա» - «գ») առնվազն դրանց պրակտիկայում տրված մեկնաբանության շրջանակներում³⁴ հնարավորություն չի տալիս անձին առանց նախապես վարչական մարմնին համապատասխան դիմում ներկայացնելու վարչական մարմնի գործողությունը և անգործությունը վիճարկել դատական կարգով: Մասնավորապես՝ ՀՀ վարչ. դատ. օր. 72-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել գործողության կատարման հայցի դեպքում՝

³³ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում հայցվորին տրամադրելու վերաբերյալ որևէ ապացույց գործում առկա չէ: Փոխարենը գործում առկա է ապացույց այն մասին, որ հայցվորը 25.11.2021 թվականին դիմում է ներկայացրել Երևանի քաղաքապետարան՝ պահանջելով տրամադրել վերոգրյալ ֆիկտիվ վարչական ակտը (գ.թ.10): Վերոգրյալ դիմումն ստանալու փաստը հաստատող ծանուցագրում, բանալի թիվ 2186289, ծածկագիր թիվ 2186289202111251, նշում է արվել այն մասին, որ դիմումի պատասխանը կտրվի 30 օրվա ընթացքում (գ.թ.10): Այս հանգամանքը նորմալ է գնահատվել նաև Վճռաբեկ դատարանի կողմից: Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանը ժամկետների հաշվարկը կապել է ֆիկտիվ վարչական ակտը տրամադրելու համար վարչական մարմնի կողմից սահմանված 30-օրյա ժամկետի հետ:

³⁴ Նման պրակտիկայի հետ մեր անհամաձայնությունը տե՛ս [31]-րդ հղման մեջ:

ա. մեկամսյա ժամկետում՝ վարչական մարմնի կողմից գործողության կատարումը մերժելու մասին իրազեկվելու պահից,

բ. երկամսյա ժամկետում այն պահից, երբ լրացել է հայցվող գործողության կատարման համար սահմանված ժամկետը,

գ. եռամսյա ժամկետում այն պահից, երբ դիմում է ներկայացվել հայցվող գործողությունը կատարելու համար, եթե առկա չեն սույն կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված դեպքերը:

Այսպիսով՝ գործողության կատարման հայցադիմումը դատարան ներկայացնելը պայմանավորված է գործողության կատարում հայցող անձի դիմումի առնչությամբ վարչական մարմնի դրսևորած վարքագծով: Այս առումով օրենսդիրն ամրագրել է, որ՝

ա. այն դեպքում, **երբ անձի դիմումը** վարչական մարմնի կողմից մերժվում է, այսինքն՝ դիմումի առնչությամբ անգործություն չի ցուցաբերվում, ապա գործողության կատարման հայցը դատարան կարող է ներկայացվել այդ մերժման մասին հայցվորի իրազեկվելու պահից հաշված մեկամսյա ժամկետում,

բ. այն դեպքում, **երբ անձի դիմումի** առնչությամբ վարչական մարմնին անգործություն է ցուցաբերում, ապա գործողության կատարման հայցը դատարան կարող է ներկայացվել հայցվող գործողության կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց հետո երկամսյա ժամկետում,

գ. վերը նշված երկու դեպքերի բացակայության դեպքում գործողության կատարման հայցը դատարան կարող է ներկայացվել հայցվող գործողությունը **կատարելու համար դիմում ներկայացնելու** պահից եռամսյա ժամկետում:

Վերոգրյալ իրավակարգավորումներից բխում է, որ գործողության կատարման հայցադիմումը դատարան ներկայացնելը (դատավարական ժամկետների մասով) պայմանավորվելով գործողության **կատարում հայցող անձի դիմումի առնչությամբ** վարչական մարմնի վարքագծով (գործողություն և անգործություն)՝ օրենսդիրը, փաստորեն, որպես գործողության կատարման հայց հարուցելու պարտադիր նախապայման **նախատեսել է վարչական մարմնին դիմում ներկայացնելը**, ինչը և երևում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ

մասի փաստակազմի վերլուծությունից³⁵: Նման տեսակետը բխում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումից: Իր որոշումներից մեկում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ բոլոր այն դեպքերում, երբ շա-

³⁵ Այստեղ անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ արդյո՞ք վարչական մարմնի կողմից գործողության կատարման ձևով իր վրա դրված պարտականությունը չկատարելը (Վարչական մարմինը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված փաստաթուղթն իր նախաձեռնությամբ կամ համապատասխան դիմումի հիման վրա դիմող անձին է տրամադրում վարչական ակտն ընդունելու ժամկետը լրանալուց հետո՝ ոչ ուշ, քան յոթնօրյա ժամկետում) չի ենթադրում արդեն իրավական վեճի առկայություն և արդյո՞ք նման անգործությունը չի տալիս անձին առանց վարչական մարմնին դիմելու գործողության կատարման հայցապահանջ ներկայացնելու իրավունք: Կարծում ենք, որ վարչական մարմնի վրա դրված պարտականության չկատարելը (գործողության չկատարումը) խոսում է իրավական վեճի առկայության մասին և կարող է հիմք լինել գործողության կատարման հայց ներկայացնելու համար՝ անկախ այն հանգամանքից, որ պրակտիկայում և ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման հիման վրա մինչև նման հայց հարուցելը պարտադիր նախապայման է հայցվող գործողությունը կատարելու պահանջով վարչական մարմնին դիմած լինելու և հայցվող գործողությունը կատարելու դիմումը վարչական մարմնի կողմից մերժվելու կամ անգործություն դրսևորած լինելու փաստերի առկայությունը: Մակայն հարցի նման լուծումը հնարավոր ենք համարում միայն այն դեպքերում, երբ օրենսդիրը, բացի պետության (վարչական մարմնի) ակտիվ գործողությունների օրենսդրական պահանջից, անձի վրա չի դնում, որպես այլընտրանք, նաև կոնկրետ գործողությունը կատարելու համար դիմում ներկայացնելու ուղիղ օրենսդրական պահանջ: Այդպես կարող է լինել, օրինակ, վերը դիտարկված վերջնահաշվարկ կատարելու վարչական մարմնի պարտականությունը չկատարելու դեպքում (Տե՛ս՝ հղում [31]): Իսկ այն դեպքերում, երբ օրենսդիրը նման գործողություն կատարելու պահանջ ներկայացնելու օրենսդրական հնարավորություն է տվել նաև անձին, ինչպիսին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի դեպքն է, ապա գործողությունների կատարման հայց կարելի է ներկայացնել միայն այն դեպքում, երբ սպառում ենք նաև անձի դիմումով վարչական մարմնի գործելու պարտականության հնարավորությունը: Հատկանշական է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը քննարկվող իրավիճակից որոշակիորեն տարբերակված հարցադրումների շրջանակում անդրադարձել է հիմնահարցին (ՎԴ/13116/05/21): Նշվում է, որ բոլոր այն դեպքերում, երբ հանրային իշխանության մարմնի և անձի միջև տարաձայնությունն առկա է հանրային իշխանության մարմնի նախաձեռնությամբ ընդունված վարչական ակտի, կատարված գործողության կամ գործողություն ձեռնարկելու իրական վտանգի կապակցությամբ, մինչև ՀՀ վարչական դատարանի դիմելը նախապես վարչական մարմին դիմելու պայմանն ինքնապատակ է, քանզի նշված դեպքերում արդեն իսկ ձևավորված է դատական պաշտպանության իրավունքն իրացնելու անհրաժեշտ պայմանը՝ կողմերի միջև վեճը: Բնարկե, դիրքորոշման մեջ չի խոսվում մեր կողմից քննարկվող իրավիճակում իրավական վեճի առկայության մասին, սակայն կարծում ենք, որ խնդիրը համարժեք լուծում պետք է ստանա նաև այդ դեպքի համար:

հագրգիռ անձինք դատական պաշտպանության են դիմում գործողության կատարման հայցով, ապա մինչև հայց հարուցելը պարտադիր նախապայման է հանդիսանում հայցվող գործողությունը կատարելու պահանջով վարչական մարմնին դիմած լինելու և վարչական մարմնի կողմից հայցվող գործողությունը կատարելու դիմումը մերժած լինելու կամ անգործություն դրսևորած լինելու փաստերի առկայությունը³⁶:

Վճռաբեկ Դատարանը ՎԴ/0511/05/22 որոշման մեջ³⁷ անդրադարձել է նաև այն հարցին, թե վարչական մարմնի՝ վերը նշված անգործության պարագայում հայցվորի մոտ ծագե՞լ է արդյոք դատական պաշտպանության իրավունքն իրացնելու իրավական շահ: Մասնավորապես՝ Դատարանն արձանագրում է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում բացակայում է 25.11.2021 թվականին Երևանի քաղաքապետարան մուտքագրված դիմումին 30 օրվա ընթացքում, այսինքն՝ 27.12.2021 թվականը ներառյալ (ժամկետի վերջին օրը՝ 25.12.2021 թվականը և դրան հաջորդող օրը՝ 26.12.2021 թվականը ոչ աշխատանքային են), հայցվող գործողությունը կատարելու, այն է՝ ֆիկտիվ վարչական ակտը հայցվորին տրամադրելու վերաբերյալ ապացույցը, որպիսի պարագայում գործում է այն կանխավարկածը, որ հայցվորի կողմից 25.11.2021 թվականին Երևանի քաղաքապետարան ներկայացված դիմումով վերջինս դրսևորել է անգործություն, ինչի հետևանքով հայցվորի մոտ ծագել է դատական պաշտպանությունն իրացնելու իրավունք, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վերջինս այդ իրավունքը կարող էր իրացնել ՀՀ վարչ. դատ. օր. 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողության կատարման հայցի շրջանակներում՝ նույն օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետով սահմանված ժամկետում՝ համաձայն որի հայցը վարչական դատարան կարող է ներկայացվել գործողության կատարման հայցի դեպքում՝ երկամսյա ժամկետում՝ այն պահից, երբ լրացել է հայցվող գործողության կատարման համար սահմանված ժամկետը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն աշխատանքի ուսումնասիրման առարկայի մեջ չի մտնում այս պարագայում ճիշտ հայցատեսակը որոշելը,

³⁶ Տե՛ս «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության թիվ ՎԴ/6048/05/19 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2021 թվականի որոշումը:

³⁷ Տե՛ս Սիբուն Մկրտչյանն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի թիվ ՎԴ/0511/05/22 վարչական գործով 07.02.2023թ. որոշումը:

այդ իսկ պատճառով ուղղակի կարձանագրենք, որ առհասարակ անհասկանալի է բովանդակային իմաստով ՀՀ վարչ. դատ. օր. 68-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի տարբերությունը կամ, առհասարակ, 2-րդ մասի գարծնական նշանակությունը՝ հատկապես հաշվի առնելով, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով անձն ազատվում է այն պատասխանատվությունից կամ պարտականություններից, որոնք օրենքով սահմանվում են այդ փաստաթուղթը չունենալու համար: Կարծում ենք, որ ՀՀ վարչ. դատ. օր. 68-րդ հոդվածի 1-ին մասն ամբողջությամբ նախատեսում է յուրիսդիկցիոն բավարար հիմքեր «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված փաստակազմի պարագայում վարչական մարմնի հնարավոր անգործության իրավիճակում անձի՝ դատական պաշտպանության իրավունքի իրացման համար³⁸:

Հատկանշական է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ/0511/05/22 վարչական գործով 07.02.2023 թվականին կայացված որոշման պատճառաբանական մասի մի հատվածի վերաբերյալ առկա է հատուկ կարծիք: Կիսում ենք հատուկ կարծիքում արտահայտված այն դիրքորոշումը, որ ֆիկտիվ վարչական ակտը տրամադրելու համար վարչական մարմին դիմելուց և օրենքով սահմանված ժամկետում պատասխան չստանալուց հետո ֆիկտիվ ակտ ստանալու նպատակով հայցվորը կարող է իր իրավունքն իրացնել ՀՀ վարչ. դատ. օր. 68-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով, քանի որ նշված հոդվածի 1-ին մասով սահմանված գործողության կատարման հայց ներկայացնելու համար, որպես նախապայման, օրենսդիրը սահմանել է վարչական մարմնին դիմելու և հայցվող գործողության կատարումը վերջինիս կողմից մերժ-

³⁸ Այստեղ կարող է հարց առաջանալ այն տրամաբանությամբ, որ ՀՀ վարչ. դատ. օր. 68-րդ հոդվածի 1-ին մասից երևում է, որ պահանջվող գործողությունը կամ դրանից ձեռնպահ մնալը չպետք է ուղղված լինեն վարչական ակտի ընդունմանը, իսկ ֆիկտիվ ակտի պահաջի դեպքում դա կարծես այդպես է: Կարծում ենք, որ վարչական ակտ չընդունվելու հետևանքով վարչական ակտն ընդունված համարվելու դեպքում օրենքով նախատեսված համապատասխան փաստաթուղթը տրամադրելու պահանջն ուղղված չէ վարչական ակտի ընդունմանը, այլ այստեղ գործ ունենք արդեն ընդունված փաստաթղթի տրամադրման հետ, ինչը գործողության կատարման դասական օրինակ է և ամբողջությամբ տեղավորվում է ՀՀ վարչ. դատ. օր. 68-րդ հոդվածի 1-ին մասին փաստակազմի շրջանակներում:

վելու, այսինքն՝ ռեալ ակտ ընդունելու կամ դիմումի առնչությամբ անգործություն ցուցաբերելու փաստերի առկայությունը:

Սույն աշխատանքում արտահայտած մոտեցման շրջանակներում խնդիր ենք տեսնում հատուկ կարծիքով ներկայացված այն դիրքորոշման հետ, որ ՀՀ վարչ. դատ. օր. 68-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ՀՀ վարչական դատարան դիմելու իրավական շահը՝ նշված մասով դատարան դիմելու հիմքն առաջանում է այն ժամանակ, երբ դիմողը ձեռնամուխ է լինում ֆիկցիայի ուժով իրեն տրամադրված իրավունքի իրականացմանը, և վարչական մարմինն արգելում է նշված իրավունքի իրականացումը, այսինքն՝ ստեղծում է խոչընդոտներ, կասկածի տակ է դնում անձի ֆիկցիայի իրավունքը, որպիսի իրավունքի պաշտպանության նպատակով միայն անձը կարող է դիմել ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ վարչ. դատ. օր. 68-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողության կատարման հայցի շրջանակներում, և նույն օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետները չեն կարող տարածվել սույն դեպքի վրա:

Նախ՝ հստակեցման կարիք ունեն հատուկ կարծիքում առկա այն ձևակերպումները՝ համաձայն որոնց. *«Վարչական մարմինն արգելում է նշված իրավունքի իրականացումը, այսինքն՝ ստեղծում է խոչընդոտներ, կասկածի տակ է դնում անձի ֆիկցիայի իրավունքը»*: Վերացարկվելով նշված ձևակերպումների տակ դրված տրամաբանությունից, կարծում ենք, որ վարչական մարմինը նման խոչընդոտներ կարող է առաջացնել կա՛մ մեկ այլ միջամտող ակտով (օրինակ՝ իրավունքի իրականացումն արգելելը) կա՛մ այլ ռեալ գործողություններով խոչընդոտներ ստեղծելով: Երկու դեպքում էլ ՀՀ վարչ. դատ. օր. 68-րդ հոդվածը 2-րդ մասը ճիշտ իրավական հիմք չի կարող լինել՝ հետևյալ հիմնավորմամբ. օրինակ՝ եթե վարչական մարմինն այլ վարչական ակտով արգելել է իրավունքի իրականացումը, ինչպես նշվում է հատուկ կարծիքում, ապա այս դեպքում ճիշտ հայցատեսակը կլինի վիճարկման հայցը, որով անձը կվիճարկի իր լեգիտիմ իրավունքի (ինչը նա արդեն ունի) իրականացմանը միջամտող վարչական ակտը: Իսկ եթե խոչընդոտները կդրսևորվեն կոնկրետ գործողություններով (ռեալ ակտ), և այդ գործողությունները վերացնելու պահանջ ներկայացվի անձի կողմից և կստանա մերժում, ապա անձը կարող է ՀՀ վարչ. դատ. օր. 68-րդ հոդվածի 1-ի մասի հիմքով իրականացնել իրավունքների պաշտպանություն, և անհրաժեշտ չի լինի ՀՀ վարչ. դատ. օր. 68-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով պահանջ ներկայացնել:

Այս ամենի արդյունքում, վարչական դատարան դիմելու ժամկետների հաշվարկը կկատարվի սույն աշխատանքի շրջանակներում կատարված վերլուծությունների հիման վրա՝ մի դեպքում՝ վիճարկման հայցի համար նախատեսված ժամկետներում (ՀՀ վարչ. դատ. օր. հոդված 72, մաս 1, կետ 1), մյուս դեպքում՝ գործողությունների կատարման հայցի համար նախատեսված ժամկետներում (ՀՀ վարչ. դատ. օր. հոդված 72, մաս 1, կետ 3, ենթակետ «ա»):

2.5 Ճանաչման հայցի դեպքում հայց ներկայացնելու ժամկետի հաշվարկը

Դատարան բողոքարկման ժամկետների իմաստով նախորդ հայցատեսակներից էապես տարբերվում են ճանաչման հայցի միջոցով դատարան դիմելու ժամկետները: ՀՀ վարչ. դատ. օր. 69-րդ հոդվածը նախատեսում է ճանաչման հայցի 3 ենթատեսակ: Դրանք են՝ (ա) որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը ճանաչելու հայցը, (բ) վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու հայցը, (գ) այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հայցը³⁹: ՀՀ վարչ. դատ. օր. 72-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա-գ» ենթակետերը սահմանում են հայց ներկայացնելու ժամկետները (ժամկետի սկիզբը):

Այսպես՝ վարչական ակտի առ ոչինչ լինելը ճանաչելու պահանջով հայց ներկայացնել կարելի է անկախ ժամկետից: Այսինքն՝ օրենսդիրն այս ենթատեսակի դեպքում չի նախատեսել ժամկետային որևէ սահմանափակում: Նման իրավակարգավորման առկայության դեպքում անիմաստ է դառնում «ժամկետի սկիզբ» և «ժամկետի ընթացք» հասկացությունների լույսի ներքո դիտարկել հայց ներկայացնելու ժամկետների հաշվարկի հիմնահարցը:

³⁹ ՀՀ վարչ. դատ. օր. 69-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված ճանաչման հայցի պարագայում դատարանին նման պահանջ ներկայացնելու իրավունք ունենալու համար անհրաժեշտ է, որ հայցվորն արդարացիորեն շահագրգռված լինի ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝ 1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ. 2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ 3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու հայցի դեպքում 5 տարվա ընթացքում՝ վարչական ակտն ուժը կորցնելու, գործողության կամ անգործության սպառվելու պահից:

Որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը ճանաչելու պահանջի դեպքում հայց կարելի ներկայացնել իրավահարաբերության ծագման կամ դադարման պահից՝ 5 տարվա ընթացքում: Նշված հայցատեսակի պարագայում բողոքարկման ժամկետի սկզբի որոշակիացման տեսանկյունից անհրաժեշտ է պարզել իրավահարաբերության ծագման կամ դադարման պահը: ՀՀ վարչ. դատ. օր. 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հայցը կարող է հարուցվել վարչական դատարան, եթե օբյեկտիվորեն հնարավոր չէ ենթադրաբար խախտված իրավունքի պաշտպանությունն իրականացնել ՀՀ վարչ. դատ. օր. 66-68-րդ հոդվածներով (դրանցից որևէ մեկով) նախատեսված որևէ հայցատեսակի ներկայացմամբ: Սա նշանակում է նաև, որ եթե հնարավոր է անձի խախտված որևէ իրավունքի դատական պաշտպանության հնարավորությունն ՀՀ վարչ. դատ. օր. 66-68-րդ հոդվածներով նախատեսված հայցատեսակներից որևէ մեկով, ապա չի կարող քննության ընդունվել միևնույն սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության համար ՀՀ վարչ. դատ. օր. 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հայցատեսակով ներկայացված պահանջ:

Այստեղ պետք է կարևորել նաև այն հանգամանքը, որ խոսքն այս դեպքում չի վերաբերում այն իրավիճակներին, երբ անձի ենթադրաբար խախտված իրավունքի դատական պաշտպանությունը պետք է իրականացվեր ՀՀ վարչ. դատ. օր. 66-68-րդ հոդվածներով կամ դրանցից որևէ մեկով նախատեսված որևէ հայցատեսակի ներկայացման միջոցով, սակայն դա հնարավոր չէ, օրինակ՝ նշված հայցատեսակներով հայց ներկայացնելու դատավարական ժամկետներն սպառված լինելու պատճառով:

Գործերից մեկով հայցատեսակի առանձնահատկությունների վերաբերյալ իր հիմնավորումներում Վերաքննիչ դատարանն ընդգծում է, որ ՀՀ վարչ. դատ. օր. 69-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հայցատեսակով հայցի առարկան հանգում է հետևյալին. օբյեկտիվ իրականության մեջ վարչական մարմնի և շահագրգիռ անձի միջև ձևավորվել է փաստաթղթավորված որևէ իրավահարաբերություն, մինչդեռ շահագրգիռ անձը պահանջում

է ճանաչել այդ իրավահարաբերության փաստացի բացակայությունը, կամ օբյեկտիվ իրականության մեջ վարչական մարմնի և շահագրգիռ անձի միջև չեն ձևավորվել փաստաթղթավորված իրավահարաբերություններ, մինչդեռ շահագրգիռ անձը պահանջում է ճանաչել այդ իրավահարաբերությունների փաստացի գոյությունը⁴⁰: Այս տրամաբանությամբ՝ որպես դատարան հայց ներկայացնելու ժամկետի սկիզբ պետք է դիտարկել օբյեկտիվ իրականության մեջ վարչական մարմնի և շահագրգիռ անձի միջև փաստաթղթավորված իրավահարաբերությունների ձևավորման պահը կամ վարչական մարմնի և շահագրգիռ անձի միջև փաստաթղթավորված իրավահարաբերությունների դադարման պահը: Իսկ ժամկետի ընթացքի հետ կապված հարաբերությունների կարգավորման հարցում կիրառելի են ՀՀ վարչ. դատ. օր. 51-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումները:

3. Վարչական մարմնի կողմից դատարան դիմելու առանձին դեպքերով ժամկետի հաշվարկի առանձնահատկությունները

ՀՀ վարչ. դատ. օր. 3-րդ հոդված 1-ի մասի (Վարչական դատարան դիմելու իրավունքը) և ՀՀ վարչ. դատ. օր. 66-69-րդ հոդվածներով նախատեսված հայցատեսակների բովանդակությունները համադրելու արդյունքում կարելի է փաստել, որ սկզբունքորեն հայցվոր կողմը ֆիզիկական և իրավաբանական անձինք են, իսկ պատասխանող կողմը՝ վարչական մարմինը:

Հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ (1) ֆիզիկական կամ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, եթե օրենքով նախատեսված է, որ վարչական պատասխանատվության կարող է ենթարկել միայն դատարանը. (2) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջով, եթե օրենքով դա վերապահված է դատարանին. (3) ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի՝ իրավասության վերաբերյալ վեճով, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով. (4) ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի՝ սույն

⁴⁰ Տե՛ս Թիվ ՎԴ/6689/05/22 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 04.01.2023թ. որոշումը

օրենսգրքի 29.2-րդ գլխով նախատեսված դեպքերում:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ վարչ. դատ. օր. 3-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ դատարան դիմելու իրավունքը չի կարող երաշխավորվել ՀՀ վարչ. դատ. օր. 66-69-րդ հոդվածներով նախատեսված որևէ հայցատեսակով: Պրակտիկայում դատարանները նման պահանջներն ընդունում են ՀՀ վարչ. դատ. օր. 3-րդ հոդվածով նախատեսված դատարան դիմելու նյութական իրավունքը հիմքով: Այս հարցի քննարկումը չի մտնում սույն հետազոտության շրջանակների մեջ, սակայն առանձին հարցադրումներ են առաջանում դատարան դիմելու ժամկետի սկզբի և ժամկետի ընթացքի որոշակիացման հետ: Նման իրավիճակներում անհավասար պայմաններ են ստեղծվում մի կողմից անձերի (ֆիզիկական և իրավաբանական), մյուս կողմից՝ վարչական մարմիններ և դրանց պաշտանատար անձանց ներկայացված հայցատեսակներին ներկայցվող ոչ միայն ժամկետային, այլև բովանդակային հարցերի տեսանկյունից:

Օրինակ՝ դատարան դիմելու ժամկետների իմաստով իրավական որոշակիության տեսանկյունից անհարկի բարդացված մեխանիզմ է կիրառվում այն դեպքում, երբ հայցապահանջը վերաբերում է ֆիզիկական կամ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելուն, եթե օրենքով նախատեսված է, որ վարչական պատասխանատվության կարող է ենթարկվել միայն դատարանը:

Այսպես՝ ՀՀ վարչ. դատ. օր. 29-րդ գլուխը կարգավորում է դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկությունները: Համապատասխան գլխի 214-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերը հարուցվում են ՀՀ ՎԻՎՕ-ով նախատեսված անձանց հայցադիմումով: Հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցադիմումը դատարան է ներկայացվում ՀՀ ՎԻՎՕ 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետում («Վարչական տույժ նշանակելու ժամկետները»): Հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում՝ բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում՝ բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի: Այ-

սինքն՝ վարչական տույժ նշանակելու ընդհանուր ժամկետը և, որ նույն է, վարչական պատասխանատվության վաղեմության ժամկետը երկու ամիսն է: Նախ՝ ՀՀ ՎԻՎՕ 37-րդ հոդվածի համապատասխան իրավակարգավորումը վերաբերում է վարչական տույժ նշանակելու ժամկետին, այլ ոչ թե վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցադիմումը դատարան ներկայացնելու ժամկետին: Սակայն ՀՀ վարչ. դատ. օր. 214-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումը բլանկետային հղման եղանակով ՀՀ ՎԻՎՕ 37-րդ հոդվածի վարչական տույժ նշանակելու ընդհանուր ժամկետը դիտարկում է որպես դատավարական ժամկետ, այն է՝ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցադիմումը դատարան ներկայացնելու ժամկետ: ՀՀ ՎԻՎՕ 223-րդ հոդվածը թվարկում է այն վարչական իրավախտումները, որոնք քննում է Վարչական դատարանը⁴¹: Իսկ ՀՀ ՎԻՎՕ 37-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված հայցադիմումներով համապատասխան վարչական տույժը նշանակվում է ՀՀ վարչ. դատ. օր-ով սահմանված ժամկետում: Ավելին՝ ՀՀ վարչ. դատ. օր. 84-րդ հոդվածի համաձայն՝ գործը դատաքննության նախապատրաստելը և բուն դատաքննությունը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետներում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին գործերի քննության և լուծման համար սույն օրենսգրքով սահմանված են որոշակի ժամկետներ: Հատկանշական է, որ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթի քննության համար օրենքով որևէ հատուկ ժամկետ սահմանված չէ, իսկ դատաքննությունն իրականացվում է ողջամիտ ժամկետների շրջանակներում: Այսինքն՝ ՀՀ ՎԻՎՕ 37-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումը, որպես վարչական տույժ նշանակելու ընդհանուր ժամկետ, չի կաշկանդում Վարչական դատարանին, այլ կերպ՝ նորմի հասցեատերը վարչական տույժ նշանակելու ժամկետի իմաստով վարչական դատարանը չէ: Անկախ այն հանգամանքից, որ ձևավորված դատական պրակտիկայի համաձայն դատարանները ևս հայց ներկայացնելու ժամկետի համար հիմք են ընդունում ՀՀ ՎԻՎՕ 37-րդ հոդվածով սահմանված երկամսյա ժամկետը, որի կարգավորման առարկան վարչական տույժ նշանակելուն է վերաբերում, կարծում ենք, որ այս

⁴¹ Հիմնահարցը դիտարկում ենք հատկապես այն տեսանկյունից, երբ հայցվորի կարգավիճակում հանդես գալու իրավունք ունի վարչական մարմինը:

Ժամկետը պետք է հստակեցվի վերաբերելի նորմերի կարգավորման առարկայի շրջանակներում:

Այստեղ մնում է այն հանգամանքի պարզումը, թե ո՞ր պահից է հոսում դատարան դիմելու երկամսյա ժամկետը: Պետք է կարևորել մի հանգամանք, որ վարչական դատարանի քննությանն ընդդատյա վարչական իրավախախտումների պարագայում վարչական մարմնի կողմից հայցադիմում ներկայացնելուն նախորդում է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմումը: ՀՀ ՎԻՎՕ 254-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում կատարելու մասին արձանագրությունը կազմում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները (պաշտոնատար անձինք), *իսկ վարչական դատարանի իրավասությանը վերապահված հարցերով, կախված իրավախախտման տեսակից, այդ ոլորտի լիազորված, իրավասու մարմինը*: Եթե ընդունենք, որ վարչական դատարան հայց ներկայացնելու ժամկետի որոշակիացման իմաստով հիմք է ընդունվում ՀՀ ՎԻՎՕ 37-րդ հոդվածի 1-ին մասի երկամսյա ժամկետը (ավելի կոնկրետ՝ իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում), ապա անհրաժեշտ է հասկանալ՝ ի՞նչ ժամկետներ ունի վարչական մարմինը վարչական իրավախախտման արձանագրությունը կազմելու համար: ՀՀ ՎԻՎՕ-ում նման էքսպլիցիտ ժամկետ բացակայում է: Այդ ժամկետն ունի իմպլիցիտ լուծում: ՀՀ ՎԻՎՕ 255-րդ հոդված 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են՝ դրա կազմելու ամսաթիվն ու տեղը, արձանագրությունը կազմող անձի պաշտոնը, անունը, հայրանունը, ազգանունը. տեղեկություններ խախտողի անձի մասին. վարչական իրավախախտման կատարման տեղը, ժամանակը... ՀՀ ՎԻՎՕ 258-րդ հոդվածի համաձայն՝ *Վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով, եթե արձանագրություն կազմելը պարտադիր է, երբ տեղում այն կազմել հնարավոր չէ, խախտողը ոստիկանության աշխատողի կողմից կարող է բերվել ոստիկանություն*: Նորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս արձանագրելու, որ իրավախախտման օրը և արձանագրության կազմման օրը համընկնում են:

Հայց ներկայացնելու երկամսյա ժամկետի հաշվարկի համար, կարծում ենք, ճիշտ է խնդիրը դիտարկել *«Ժամկետի սկիզբ»* և *«Ժամկետի ընթացք»*

եզրույթների լույսի ներքո: Մասնավորապես՝ դիտարկվող իրավակարգավորումների և դրանց վերաբերյալ կատարված վերլուծությունների պարագայում **«Ժամկետի սկիզբը»** է վարչական իրավախախտման օրը, իսկ **«Ժամկետի ընթացքի»** հաշվարկման համար ելակետային է **ՀՀ վարչ. դատ. օր. 51-րդ հոդվածի 4-րդ մասի և Մշտրմատիվ իրավական ակտերի մասին՝ ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորումները**՝ համաձայն որոնց տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը: Պրակտիկայում (առանձին դեպքերում) նշված հայցադիմումի պարագայում **«Ժամկետի սկզբի»** և **«Ժամկետի ընթացքի»** գնահատման հարցերն այլ մեկնաբանություն են ստանում կամ առհասարակ չեն տարանջատվում:

Այսպես՝ թիվ ՎԴ/5995/05/20 վարչական գործում դատարանն արձանագրել է, որ ՀՀ ոստիկանության ՀՈԲ պրոֆիլակտիկայի տեսուչի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվել է 30.06.2020 թվականին, մինչդեռ հայցադիմումն առձեռն Դատարան է ներկայացվել միայն 01.09.2020 թվականին, այսինքն՝ վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հայցադիմումը ներկայացվել է դատավարական երկամսյա ժամկետը լրանալուց հետո⁴²: Եթե ընդունենք, որ արձանագրությունը կազմվել է 30.06.2020 թվականին (ժամկետի սկիզբ), ապա ժամկետի ընթացքը (հիմք՝ ՀՀ վարչ. դատ. օր. 51-րդ հոդվածի 4-րդ մաս և Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մաս իրավակարգավորումները) անհրաժեշտ էր հաշվել 01.07.2020 թվականից, իսկ երկամսյա ժամկետի ավարտը կլիներ 01.09.2020 թվականը: Այսինքն՝ հայցադիմումն առնվազն այս հիմքով վերադարձման ենթակա չէր: Թերևս այս կանոնից միակ բացառությունը կարող են լինել այն դեպքերը, երբ ժամկետի վերջը համընկնում է համապատասխան ամսաթվի չունեցող ամսվան, ապա դատավարական ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը (ՀՀ վարչ. դատ. օր. հոդված 52, մաս 2): Քննարկվող օրինակը վերաբերելի չէ սույն բացառությանը:

4. Եզրակացություններ

⁴² Տե՛ս թիվ ՎԴ/5995/05/20 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 17.09.2020թ.-ի որոշումը՝ (http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809948733 վերջին մուտքը՝ 15.08. 2023)

Ենթադրյալ խախտված իրավունքների և ազատությունների համապատասխան հայցով պաշտպանության ժամանակահատվածի օրենսդրական ամրագրումն ինքնանպատակ չէ. այն հետապնդում է որոշակի նպատակներ: Այդպիսի նպատակներից են՝ օրինականության ապահովումն իրավակիրառ գործունեությունում, դատավարության մասնակիցների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի ապահովումը, դատավարական հարաբերություններում հավանական պատասխանողի պաշտպանությունը ժամկետանց հայցերից և այլն: Դժվար կլինի կանխել անարդարությունը, եթե դատարաններից պահանջվի քննել բավականաչափ ժամանակահատված անցած լինելու պատճառով հնացած, ոչ արժանահավատ և ոչ ամբողջական ապացույցների հիման վրա հեռավոր անցյալում տեղի ունեցած գործեր:

Հիմք ընդունելով ՀՀ վարչ. դատ. 51-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը և կարևորելով հիմնահարցի վերաբերյալ դոկտրինալ տեսակետները՝ հոդվածում եզրակացվել է, որ *դատավարական ժամկետը ՀՀ վարչ. դատ. օր-ով և այլ օրենքներով սահմանված, իսկ օրենքով սահմանված չլինելու դեպքում՝ դատարանի կողմից նշանակված որոշակի ժամանակահատված է, որի ընթացքում դատարանը, կողմերը և գործի մյուս մասնակիցներն իրավունք ունեն (պարտավոր են) կատարելու օրենքով նախատեսված դատավարական գործողություններ:*

Աշխատանքում ենթադրյալ խախտված իրավունքների և ազատությունների համապատասխան հայցով պաշտպանության ժամանակահատվածի հաշվարկի լույսի ներքո պարզաբանվել է «ժամկետի սկիզբ» և «ժամկետի ընթացք» օրենսդրական հասկացությունների բովանդակությունը, ինչպես նաև կարևորվել է այն, որ յուրաքանչյուր հայցատեսակի դեպքում ժամկետի սկիզբը և դրա հաշվարկի ընթացքը (հաշվարկի սկիզբը) տարբեր են, ինչն ունի օրենսդրական ամրագրում: Աշխատանքում եզրակացվել է, որ տարբեր են վիճարկման հայցի միջոցով վարչական ակտի հասցեատեր չհանդիսացող անձի կողմից վարչական ակտի հասցեատիրոջ համար բարենպաստ վարչական ակտի բողոքարկման և վարչական ակտի հասցեատիրոջ կողմից վիճարկման հայցի միջոցով հայց ներկայացնելու ժամկետների սկզբի և ընթացքի, ինչպես նաև ժամկետների ավարտի հաշվարկները:

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ СРОКОВ ОБРАЩЕНИЯ В СУД В АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

Мурадян Манук

*Начальник Образовательного комплекса МВД РА,
кандидат юридических наук, доцент,
полковник полиции*

Аннотация. Для любой деятельности законодатель прямо или косвенно устанавливает задачи. Таковыми являются правильное (законное) осуществление производства, своевременное рассмотрение и разрешение социально-правового спора в ходе производства. К задачам производственной деятельности относится весь судебно-процессуальный процесс, законное и своевременное осуществление которого является гарантией справедливого судопроизводства.

Цель данной статьи - представить некоторые особенности расчета периода защиты предполагаемых нарушенных прав и свобод по соответствующему иску в административном судопроизводстве РА. Основной акцент сделан на вопросах, касающихся начала и окончания срока подачи иска в суд по отдельным видам исков. Проблема была рассмотрена также в свете права на доступ к правосудию.

Ключевые слова: административное судопроизводство, срок подачи иска, начало срока, течение срока, окончание срока.

SOME FEATURES OF THE TERMS OF APPEAL TO THE COURT IN ADMINISTRATIVE ARBITRATION

Muradyan Manuk

Head of the Educational Complex of the Ministry

of Internal Affairs of the Republic of Armenia,

PhD in Legal Sciences, Associate Professor, Police Colonel

Annotation. For any activity, the legislator directly or indirectly defines problems. Such are the correct (legal) implementation of the proceedings, the timely examination and resolution of the socio-legal dispute during the proceedings. The entire judicial process is subordinated to the problems of administrative activity, the legal and timely implementation of which are guarantees of justice.

The purpose of this article is to present some features of the calculation of the period of protection of alleged violation of rights and freedoms in the RA administrative proceedings. The paper has placed a significant emphasis on the issues regarding the calculation of the start and end of the time period for submitting a claim to the court in the case of individual types of lawsuits. The paper also considered the issue from the perspective of the right of access to court.

Key words: administrative proceedings, deadline for filing a claim, time period for filing a claim, beginning of the time period, course of the time period, end of the time period.

Հոդվածը գրախոսվել է՝ 01.09.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 18.09.2023թ.:

**ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱԴԱՊՏԱՑԻԱՅԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՈՒՍՈՒՄՆԱԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ**

Նազարյան Նաիրա

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական
կենտրոնի հատուկ պատրաստականության
կրթաճյուղի ավագ դասախոս, հ.գ.թ.,
ոստիկանության փոխգնդապետ*

Համառոտագիր: Հոդվածում ներկայացվում են մասնագիտական ադապտացիայի մի շարք առանձնահատկություններ: Դիտարկվում է մասնավորապես ապագա ոստիկանների՝ ուսումնաձառայողական գործունեությանը հարմարման գործընթացի յուրատիպությունը՝ ելնելով այն հանգամանքից, որ ցանկացած գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է այն իրականացնող սուբյեկտի՝ այդ գործունեությանը ադապտացիայի հաջողությամբ: Սովորողների ադապտացիան մասնագիտական գործունեության կարևորագույն փուլերից է, որն անմիջականորեն ազդում է դրա ընթացքի և արդյունքի վրա: Քննարկվում են ուսումնաձառայողական գործունեությանը սովորողների հարմարման ադապտացիայի չափանիշները, ցուցանիշները և հիմնական բաղադրիչները:

Բանալի բառեր՝ անձ, ուսումնաձառայողական գործունեություն, ադապտացիա, հարմարում, դեզադապտացիա, մասնագիտական կարևոր անձնային որակներ

Անձի՝ որպես գործունեության սուբյեկտի ադապտացիայի հիմնախնդիրը շարունակում է պահպանել իր արդիականությունը, քանի որ աշխատանքի արդյունավետությունը և հուսալիությունը, հետագա աշխատանքի որակը մեծապես պայմանավորված են աշխատակցի մասնագիտական գործունեությանը հարմարվածության հաջողությամբ: Բազմաթիվ հետազոտություններ փաստում են, որ կադրերի հնարավոր և փաստացի արտահոսքի վրա հաճախ ազդում են ադապտացիոն դժվարությունները՝ պատճառելով տնտեսական, սոցիալ-հոգեբանական և բարոյական կորուստներ, ընդ

որում՝ ոչ միայն առանձին աշխատակցին, այլև արտադրությանը, կոլեկտիվին, կազմակերպությանը, ողջ հասարակությանը¹: Մինչդեռ ադապտացիոն գործընթացը հաճախ բավականաչափ ուշադրության չի արժանանում, և աշխատակցի հարմարումը տեղի է ունենում տարերայնորեն: Անձնակազմի հետ տարվող հոգեբանական աշխատանքների կարևոր ուղղություններից պետք է լինի ուսումնածառայողական գործունեությանը հարմարման հնարավորինս սահուն գործընթացի ապահովումը:

Ինչպես հայտնի է, մասնագիտական ադապտացիան գործունեության նոր ձևերի մեջ ընդգրկվելու /աշխատանքային, ուսումնական/, գործունեության նոր կամ վերափոխվող համակարգին հարմարվելու գործընթացն է²: Ադապտացիայի անհրաժեշտությունը ծագում է մասնագիտական գործունեության տարբեր շրջաններում, մասնագիտական կարգավիճակի, գործունեության բովանդակության, կոլեկտիվում և ղեկավարության հետ փոխհարաբերությունների և ցանկացած այլ փոփոխության դեպքում:

Բարդ և պատասխանատու աշխատանքը ուստիկանության ծառայողներից պահանջում է ադապտիվ առավել բարձր հնարավորություններ և ենթադրում է ադապտիվ գործընթացների յուրատիպ ընթացք՝ պայմանավորված գործունեության առանձնահատկություններով:

Ուստիկանության ծառայողի մասնագիտական ադապտացիան նրա ակտիվ հարմարումն է մասնագիտական գործունեության բովանդակությանը, պայմաններին, նորմերին և արժեքային կողմնորոշումներին, կոլեկտիվի ավանդույթներին, երբ ողջամիտ ժամանակահատվածում ծառայողը կարողանում է յուրացնել մասնագիտական անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ, բարձրացնել մասնագիտական գիտելիքների մակարդակը, կոլեկտիվում հաստատել համագործակցային հարաբերություններ, պահպանել աշխատանքից բավարարվածության զգացումը, որոնք մասնագիտությանը հաջող տիրապետելու և իրականացնելու նախապայմանն են:

Ուստիկանի մասնագիտական ադապտացիայի գործընթացի մեկնարկը տրվում է ուսումնառության շրջանում սովորողների՝ ուստիկանության ու-

¹ St' u **Лукашевич Н. П.** Психология труда: Учеб. пособие / **Н. П. Лукашевич, И. В. Сингаевская, Е. И. Бондарчук.** — 2-е изд., доп. и пере-раб. — К.: МАУП, 2004. — 112 с., էջ 52

² St' u **Шарафутдинова Н.В.** Социально-психологический тренинг профессионального общения: учебно-методическое пособие / **Н.В.Шарафутдинова, И.В.Семчук.-М.:** Московский университет МВД России имени **В.Я.Кикотя**, 2017.-117с. , էջ 42

սումնական հաստատության՝ որպես ժամանակավոր յուրատիպ միջավայրի պայմաններին հարմարումից: Ոստիկանության ուսումնական հաստատության սովորողների մասնագիտական ադապտացիան նրանց հարմարումն է ապագա մասնագիտական գործունեության բովանդակությանը, պայմաններին, նորմերին և արժեքային կողմնորոշումներին³:

Սովորողների ադապտացիան մասնագիտական գործունեության կարևորագույն փուլերից է, որն անմիջականորեն ազդում է դրա ընթացքի և արդյունքի վրա: Ադապտացիայի գործընթացն անընդմեջ է, քանի որ անձի զարգացմանը զուգընթաց փոխվում է նրա պահանջմունքադրապատճառային ոլորտը, և մարդը ստիպված է մշտապես հարմարվել գործունեության նոր ձևերին ու դրանց պայմաններին, նոր դերերին, նոր իրողություններին⁴:

Ապագա ոստիկանների ուսումնական գործունեությունն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք անդրադառնում են սովորողների ադապտացիոն գործընթացի վրա: Այսպես, ՀՀ ՆԳՆ կրթահամալիրում ուսումնական գործունեությունը համատեղվում է ծառայողական գործունեության հետ, խստիվ կանոնակարգված է և վերահսկվում է պաշտոնատար անձանց կողմից, ընթանում է աստիճանակարգվածության սկզբունքի ներքո և այլն: Հարկ է նշել, որ այս առանձնահատկությունները էլ ավելի են բարդացնում սովորողների ադապտացիայի գործընթացը:

Սովորողների հարմարման գործընթացում կարելի է առանձնացնել ադապտացիայի մի շարք բաղադրիչներ: Այսպես, ուսումնական բաղադրիչը ենթադրում է ուսումնական ծրագրի յուրացում, նոր գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ձեռքբերում: Ծառայողական բաղադրիչը ենթադրում է ծառայողական պարտականությունների յուրացում և պատշաճ իրականացում: Սոցիալ-հոգեբանական բաղադրիչը ենթադրում է նոր սոցիալական դերի ու կարգավիճակի յուրացում, ներգրավում կոլեկտիվի մեջ, միջանձնային հարաբերությունների հաստատում և այլն: Կենցաղային բաղադրիչը ենթադրում է հարմարում ուսումնածառայողական միջավայրի ռե-

³ St' u Подготовка выпускников образовательных учреждений МВД России к службе в органах внутренних дел: Сборник аналитических и методических материалов.-М.: ИМЦ ГУК МВД России, 2003.-216с. /Сост. **А.В.Дулов, Е.В.Лапшин, Е.В.Орлов**/, էջ 40

⁴ St' u **Резепин А.В.** Психолого-педагогические аспекты воспитательной работы руководителей учебно-сроевых подразделений вуза МВД России: Методическое пособие.- М.: ИМЦГУК МВД России, 2003. -96 с., էջ 24

ժմին, օրակարգին, կարգուկանոնին, այլ պայմաններին:

Ապագա ոստիկանների մասնագիտական ադապտացիայի մասին կարելի է պատկերացում կազմել հետևյալ չափանիշների միջոցով.

- ծառայողական գործունեության շարժառիթների և նպատակների գիտակցում,

- մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների տիրապետում,

- նոր սոցիալական դերի և կարգավիճակի յուրացում, ընդգրկում կոլեկտիվի մեջ, միջանձնային հարաբերությունների հաստատում,

- մասնագիտական կարևոր որակների մշակում,

- անձնային արժեքային կողմնորոշումների վերակառուցում և մոտեցում մասնագիտական խմբի արժեքային կողմնորոշումներին,

- մասնագիտական գործունեության բոլոր բաղադրիչների՝ դրա խնդիրների, առարկայի, միջոցների, մեթոդների, արդյունքների, պայմանների ընդունում, մասնագիտության նորմերի և պահանջների յուրացում⁵:

Ելնելով մասնագիտական ադապտացվածության վերոնշյալ չափանիշներից՝ կարելի է սահմանել դրանց հետևյալ ցուցանիշները.

- անհրաժեշտ և պահանջվող գիտելիքների ծավալը, ակադեմիական առաջադիմությունը,

- մասնագիտական կարևոր կարողությունների և հմտությունների մակարդակը, մասնագիտական խնդիրներ լուծելու կարողությունը,

- ծառայողական գործունեության օբյեկտիվ ցուցանիշները /տույժերի և խրախույսների առկայությունը/,

- մասնագիտական կարևոր անձնային որակների ձևավորվածությունը,

- ադապտիվ կարողությունների և նյարդահոգեկան կայունության մակարդակը /վարքի կայունությունը, իրավիճակին տրվող հակազդումների ադեկվատությունը, վարքի ոչ կոնֆլիկտայնությունը, մասնագիտական մոտիվացիոն համակարգի ձևավորվածությունը, ակտիվ դիրքը և այլն/,

- մասնագիտության նորմերի և արժեքային կողմնորոշումների մասին պատկերացումների ձևավորվածությունը, դրանք ընդունելու և դրան-

⁵ St' u Подготовка выпускников образовательных учреждений МВД России к службе в органах внутренних дел: Сборник аналитических и методических материалов.-М.: ИМЦ ГУК МВД России, 2003.-216с. /Сост. **А.В.Дулов, Е.В.Лапшин, Е.В.Орлов**/, էջ 36-37

ցով առաջնորդվելու պատրաստակամությունը, հետաքրքրությունը ուսումնաձառայողական գործունեության նկատմամբ,

-կոլեկտիվում ունեցած հեղինակությունը, հարգանքը, ինքնազգացողությունը, բավարարվածությունը խմբի սոցիալ-հոգեբանական մթնոլորտով և խմբին պատկանելիությամբ, միջանձնային զարգացած կապերը խմբում, համատեղ արդյունավետ աշխատելու կարողությունը և այլն,

-սեփական գործունեությունը, ուսուցումը, կենցաղը կազմակերպելու ունակությունը, պատասխանատվության գիտակցումը սեփական վարքի համար և այլն,

- առողջական վիճակից գանգատներով բուժվելու դիմելու հաճախականությունը⁶:

Այսպիսով, սովորողի՝ ուսումնաձառայողական գործունեությանը ադապտացիան ենթադրում է մասնագիտական գործունեության նորմերի, արժեքների ու պահանջների յուրացում և ընդունում, համատեղ գործունեության իրականացում, հարաբերությունների աստիճանակարգմանը, ինչպես նաև աշխատանքի և հանգստի ռեժիմին հարմարում, համազգեստի կրման կանոնների ու պատշաճ արտաքին տեսքի պահպանում, մտավոր և ֆիզիկական կարողությունների համախմբում, կարճ ժամանակամիջոցում մեծ քանակությամբ նոր ինֆորմացիայի վերամշակում, այսինքն՝ կենսագործունեության կազմակերպում բոլորովին նոր պայմաններում: Միաժամանակ, տեղի է ունենում անձի արժեքամոտիվացիոն ոլորտի վերակազմավորում, սովորողներն ընդունում և յուրացնում են նոր սոցիալական դերերն ու կարգավիճակը, ընդգրկվում են կոլեկտիվի մեջ, հաստատում միջանձնային հարաբերություններ, յուրացնում և հետևում ձևավորված պահանջներին, ավանդույթներին ու նորմերին:

Ուսումնաձառայողական գործունեության յուրատիպությունը սովորողներից պահանջում է որոշակի անձնային որակների առկայություն, որոնք կնպաստեն գործունեության նոր պայմաններին ադապտացիայի հաջողությամբ:

⁶Տե՛ս Подготовка выпускников образовательных учреждений МВД России к службе в органах внутренних дел: Сборник аналитических и методических материалов.-М.: ИМЦ ГУК МВД России, 2003.-216с. /Сост. **А.В.Дулов, Е.В.Лапшин, Е.В.Орлов**/, էջ 39-40: Резепин А.В. Психолого-педагогические аспекты воспитательной работы руководителей учебно-срочных подразделений вуза МВД России: Методическое пособие.- М.: ИМЦГУК МВД России, 2003. -96 с., էջ 24

յանը և սահուն ընթացքին: Ուսումնասիրելով սովորողի անձնային առանձնահատկությունները /կոնֆլիկտայնություն, հաստատականություն, ճկունություն, նորմատիվություն, ագրեսիվություն, տագնապայնություն և այլն/, ընդունակությունները /հարմարողականություն, նյարդահոգեկան կայունություն, հաղորդակցական ունակություններ, ինտելեկտ և այլն/, միջանձնային հարաբերությունների բնույթն ու ոճը՝ կարելի է կանխորոշել աղապտացիոն հնարավոր դժվարությունների շրջանակն ուսումնաձառայողական գործունեության ընթացքում:

Բացի անձնային գործոններից՝ աղապտացիոն գործընթացի հաջողությունը մեծապես կախված է ուսումնաձառայողական միջավայրի սոցիալ-հոգեբանական մթնոլորտից: Վերջինս հանդես է գալիս և՛ որպես աղապտացիոն գործընթացների գնահատման չափանիշ, և՛ որպես այդ գործընթացների վրա էապես ազդող գործոն, քանի որ աղապտացիան ընթանում է անմիջականորեն խմբում և խմբի միջոցով: Եթե ուսումնական խմբում սովորողն իրեն հարմարավետ չի գգում, ապա նրա հաջող աղապտացիան կասկածահարույց է՝ անկախ այն հանգամանքից, թե նա որքանով է ուսումնական և ձառայողական գործունեությունն առերևույթ նորմալ իրականացնում: Կոլեկտիվում աղապտացիոն դժվարությունները կարող են սովորողի վերաբերմունքը բացասական ուղղությամբ փոխել մասնագիտության հանդեպ, խաթարել դրա յուրացումը, թուլացնել սովորելու դրական մոտիվացիան և ունենալ այլ անցանկալի հետևանքներ:

Հարկ է նշել, որ սովորողի աղապտացիայի ընթացքի և արդյունավետության վրա ազդում են մի շարք գործոններ, ինչպիսիք են ուսումնաձառայողական գործունեության բովանդակությունը և որակը, սովորողի մասնագիտական ուղղվածությունը և մոտիվացիան /նպատակները, շարժառիթները, դիրքորոշումները, հետաքրքրությունները, մղումները, տրամադրություններ, ինքնազգացողությունը և այլն/, սովորողի անձնային որակները, ուսումնաձառայողական միջավայրի սոցիալ-հոգեբանական մթնոլորտը /կոլեկտիվի ղեկավարման ոճը, խմբային կարծիքները, տրամադրությունները, խմբի որակական կազմը, խմբում ձևավորված միջանձնային հարաբերությունների բնույթը/ և այլն⁷:

⁷ St' u **Резепин А.В.** Психолого-педагогические аспекты воспитательной работы руководителей учебно-сроевых подразделений вуза МВД России: Методическое пособие.- М.: ИМЦГУК МВД России, 2003. -96 с., էջ 226

Սովորողների մասնագիտական պատրաստվածության մեջ թերությունները, նրանց մասնագիտական ուղղվածության և առաջիկա ծառայողական գործունեությանը հոգեբանական պատրաստականության անբավարար ձևավորվածությունը կարող են հանգեցնել մասնագիտական դեգադապտացիայի, որը դրսևորվում է ծառայության նկատմամբ մոտիվացիայի թուլացմամբ, մասնագիտության ընտրությունից հիասթափությամբ, ծառայության առաջին տարիներից ուստիկանությունից ազատման ձգտումով: Դեգադապտացիայի տագնապալի նշաններից են հաճախակի կրկնվող կոնֆլիկտները ծառայակիցների և ղեկավարների, դասախոսների հետ, կարգապահական խախտումները, ցածր առաջադիմությունը, տրամադրության ցածր ֆոնը, բուռն հուզական հակազդումները, ոչ ադեկվատ արարքները, մարմնական գանգատներով հաճախակի բուժկետ դիմելը և այլն⁸:

Վերոնշյալ առանձնահատկությունները պետք է հաշվի առնել ուսումնածառայողական գործունեությունը կազմակերպելիս և դրանց հիման վրա անհրաժեշտ աշխատանքներ իրականացնել հատկապես այն սովորողների հետ, ովքեր կարիք կունենան առավել մեծ հոգեբանական աջակցության, ինչը թույլ կտա բարձրացնել ուսումնածառայողական գործունեությանը սովորողների հարմարման աստիճանը և ապահովել պատշաճ մասնագիտական պատրաստականության մակարդակ:

Այսպիսով՝ սովորողների ծառայողամասնագիտական գործունեության արդյունավետությունը կախված է նրանց մասնագիտական գիտելիքների մակարդակից, ծառայողամասնագիտական ուղղվածությունից և մասնագիտական որակների ձևավորվածությունից: Այս ցուցանիշները հիմնականում որոշում են ապագա ուստիկանների մասնագիտական ադապտացիայի հեռանկարը՝ կանխորոշելով հետագա մասնագիտական գործունեության արդյունավետությունը և հուսալիությունը:

⁸ St' u Подготовка выпускников образовательных учреждений МВД России к службе в органах внутренних дел: Сборник аналитических и методических материалов.-М.: ИМЦ ГУК МВД России, 2003.-216с. /Сост. А.В.Дулов, Е.В.Лапшин, Е.В.Орлов/, с 2 39

ОСОБЕННОСТИ АДАПТАЦИИ УЧАЩИХСЯ К УСЛОВИЯМ УЧЕБНО-СЛУЖЕБНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Назарян Наира Мамбреевна

Старший преподаватель кафедры спецподготовки

Учебного центра Образовательного комплекса МВД РА,

канд.псих.наук, подполковник полиции

Аннотация. В статье представлены некоторые особенности процесса адаптации к профессиональной деятельности. Рассмотрена специфика процесса адаптации будущих сотрудников полиции к учебно-служебной деятельности, исходя из того, что эффективность любой деятельности во многом зависит от того, насколько успешно проходит адаптация субъекта к деятельности. Адаптация учащихся является одним из важнейших этапов профессиональной деятельности, что напрямую влияет на ее ход и результат. Обсуждаются критерии, показатели и основные компоненты адаптации учащихся к учебно-служебной деятельности.

Ключевые слова: профессиональная деятельность, личность, адаптация, приспособление, профессиональная адаптация, дезадаптация, профессионально важные личностные качества.

THE FEATURES OF ADAPTATION TO THE CONDITIONS OF EDUCATIONAL AND SERVICE ACTIVITY

Nazaryan Naira

Senior Lecturer of the Training Center of Educational

Complex of the Ministry of Internal Affairs of the Republic

of Armenia, PhD of Psychological Sciences, Lieutenant Colonel

The article presents some features of professional adaptation. The peculiarity of the process of adaptation of future police officers to the educational activity is considered, based on the fact that the effectiveness of any activity is largely depends on how successful the subject's adaptation to the activity is. Adaptation of

students is one of the most important stages of professional activity, which directly affects its course and result. The criteria, indicators and main components of adaptation of students to educational activities are discussed.

Key words - professional activity, personality, adjustment, adaptation, professional adaptation, disadaptation, professional important personal qualities.

Հոդվածը գրախոսվել է՝ 14.07.2023թ.:

Ներկայացվել է տպագրության՝ 14.07.2023թ.:

**ՓՈՔՐ ՀԻՂՐՈԿԱՅԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ
ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Սանթրոսյան Աշոտ

*ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների
ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի
Էկոլոգիական փորձաքննությունների
բաժնի պետ*

Իշխանյան Յուրի

*ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների
ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի
Էկոլոգիական փորձաքննությունների
բաժնի փորձագետ*

Համառոտագիր: Հնդվածում ներկայացվում է ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի, ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից իրականացված ուսումնասիրությունների, ստուգումների և հսկողական գործառնությունների արդյունքում տրամադրված՝ ՀՀ տարածքում շահագործվող փոքր հիդրոէլեկտրակայաններում (ՀԷԿ) ջրաչափական սարքերի բացակայության, ինչպես նաև փոքր ՀԷԿ-երի գլխամասային հատվածում ձկնապաշտպան կառույցների և ձկնանցարանների բացակայության փաստերի վերլուծության հիման վրա էկոլոգիական փորձագիտական հետազոտության շրջանակներում շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցության գնահատականի գիտամեթոդական հիմնավորումը: Ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել են նաև ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրառի չափաքանակների բազմակի անգամ գերազանցման փաստեր, ինչն էլ հակասել է ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված պահանջների, որոշ դեպքերում էլ փոքր ՀԷԿ-երում բնապահպանական թողքերի ծավալների չպահպանմանը: Հետազոտության արդյունքում հիմնավոր գնահատական է տրվել մասնավորապես Եղեգիս գետի էկոհամակարգին պատճառված զգալի վնասի կամ հետագայում վնասի առաջացման նոր սպառնալիքների առնչությամբ:

Բանալի բառեր. փոքր ՀԷԿ, էկոլոգիական խնդիրներ, շրջակա միջավայրը, հողային ռեսուրսներ, ՓՀԷԿ-երի ազդեցություն, կենդանական աշխարհ, ՓՀԷԿ-երի ջրային ծավալների հաշվարկ:

ՀՀ բնապահպանության նախարարության, «ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության ու այլ շահագրգիռ կողմերի և մասնագետների ներգրավմամբ փորձագիտական խմբի կողմից 2014-2018թթ. ընթացքում իրականացվել են «Աջակցություն փոքր ՀԷԿ-երին վերաբերող բարեփոխումներ՝ գետային էկոհամակարգերի կայուն օգտագործման նպատակով հանրության և ՀՀ բնապահպանության նախարարության երկխոսության միջոցով» և «Աջակցություն նոր բարեփոխումներին փոքր ՀԷԿ-երի բնագավառում ՔԿՀ - կառավարություն երկխոսության միջոցով» ծրագրերը, որոնց շրջանակներում փորձագիտական խումբը մշտադիտարկել է ՀՀ-ում գործող 125 փոքր ՀԷԿ-եր:

Ուսումնասիրելով վերը նշված մշտադիտարկումների արդյունքները՝ մենք, միևնույն ժամանակ, հետազոտություններ ենք իրականացրել ՀՀ Վայոց ձորի Եղեգիս գետի և նրա վտակների վրա կառուցված փոքր ՀԷԿ-երի նախագծային պլանին շինարարական համապատասխանության և ջրային ռեսուրսների օգտագործման ու թողքի ապահովման սահմանափակումների պահպանման առնչությամբ:

Ընդհանուր առմամբ՝ շրջակա միջավայրի վրա հիդրոէներգետիկայի վնասակար ազդեցությունը բաղկացած է երեք ասպեկտներից.

1. հողերի ողողում,
2. տեղումների և քաղցրահամ ջրերում էկոհամակարգի համար անհրաժեշտ սննդարար նյութերի հոսքերի սահմանափակում,
3. ձկների միգրացիայի ճանապարհների արգելափակման հետևանքով պոպուլյացիայի նվազում կամ վերացում:

Փոքր հիդրոէլեկտրակայանների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա ուսումնասիրելուց մենք տարանջատել ենք հիդրոէներգետիկայի օբյեկտների շինարարության և շահագործման ժամանակահատվածները: Նախ՝ հարկ է նշել, որ շինարարության ժամանակահատվածում շինարարության տարածքում խախտվում է բնական լանդշաֆտը, ճանապարհների անցկացման և արտադրական բազայի շինության ընթացքում կտրուկ բարձրանում է աղմուկի մակարդակը: Ջուրը, որը օգտագործվել է շինարարական աշխատանքներում, մեխանիկական խառնուրդի հետ (ավազի, կավի մասնիկներ և այլն) վերադարձվում է գետ:

Ընդհանուր առմամբ փոքր ՀԷԿ-րի շինարարությունը խաթարում է գետերի էկոլոգիական հավասարակշռությունը հետևյալ կերպ.

- խախտում է գետերի ջրային և ջերմային ռեժիմները,
- խոչընդոտում է ձկների բազմանալուն,
- փոփոխում է վերարտադրման պայմանները և այլն:

Սովորաբար վերին հոսանքում (բյեֆում) ջրի մակարդակի բարձրացումը տեղի է ունենում շինարարության ժամանակահատվածում: Գրունտային ջրերի մակարդակի բարձրացման արդյունքում զգալի մակերեսով մոտակա հողամասերը ջրածածկվում են:

Այսպես, ջրհավաք ավազանների (ջրամբարների) կառուցման ժամանակ հողերի և նրանց բնորոշ էկոհամակարգի ոչնչացումը տեղի է ունենում նաև ջրով (աբրազիա): Սովորաբար քայքայման ընթացքը շարունակվում է տասնամյակներ, և հետևանքը լինում է այն, որ տեղի է ունենում ջրերի կեղտոտում և տիղմակալում: Այսինքն՝ ջրհավաք ավազանների շինարարության հետ են կապված գետի ջրաբանական ռեժիմին բնորոշ էկոհամակարգի և հիդրոբիոնոտի տեսաբանային կազմի խախտումները:

Շահագործման ժամանակահատվածում ջրամբարներում տեղի է ունենում ջրերի կտրուկ տաքացում, որը ինտեսիֆիկացնում է ջրերում թթվածնի կորուստը և ջերմային աղտոտվածությամբ պայմանավորված այլ գործընթացներ, որոնք կուտակված կենսածագում ունեցող նյութերի հետ պայմաններ են ստեղծում ջրամբարների տիղմակալմանը և ջրիմուռների ինտենսիվ զարգացմանը, որոնք էլ պատճառ են դառնում ձկների հիվանդությունների աճի:

Փոքր ՀԷԿ-երի շահագործման՝ էկոհամակարգի վրա պոտենցիալ ազդեցություններից են՝ ջրի պղտորության բարձրացումը, սարքավորումների շահագործման աղմուքը և վիբրացիան, գետերի հոսքի և հատակի ֆիզիկական փոփոխությունները:

Գետի հատակում առկա բարձր պղտորվածությունը կարող է ազդել ձկների վերարտադրության վրա հետևյալ կերպ՝ կրկնակի նստվածքը կարող է բերել ձկնկիթի հատիկների, թրթուրների և կերի խախտմանը, կախյալ վիճակում նստվածքների բարձր պարունակությունը կարող է բնական ձվադրատեղից հասունացած առանձնյակների արտահոսք առաջացնել:

Անհրաժեշտ է նշել, որ հիդրոէներգետիկայի օբյեկտի ազդեցությունն արտահայտվում է՝

- ձկների միգրացիայի ուղիների փակմամբ,
- վերարտադրման պայմանների փոփոխմամբ,

- ջրաչափիչներում ձկների հնարավոր ոչնչացմամբ,
- ձկների կերի բազայի փոփոխմամբ,
- վերարտադրման պայմանների փոփոխմամբ:

Այս առումով՝ նշված անցանկալի հետևանքների կանխման նպատակով փոքր ՀԷԿ-երի նախագծերում նախատեսվում են ձկնանցարաններ և ձկնապաշտպան կառույցներ:

Հայաստանում Վայոց ձորի Եղեգիս գետի և վտակների վրա կառուցված փոքր ՀԷԿ-երը պատկանում են դերիվացիոն փոքր հիդրոէլեկտրակայանների դասին: Նշված օբյեկտներում կատարված հետազոտությունների արդյունքում արձանագրվել են բնապահպանական օրենսդրության և ջրօգտագործման թույլտվության մի շարք էական պայմանների խախտումներ:

1. որոշ փոքր ՀԷԿ-երում բացակայում են ջրաչափական սարքավորումները,

2. բացակայում են կամ՝ չեն ծառայում իրենց նպատակին կառուցված ձկնանցարանները, ձկնապաշտպան կառույցները,

3. հետազոտվող տարածքներում տեղակայված 2 ՀԷԿ-եր կառուցված են շինարարության համար արգելված սողանքային տեղաշարժերի գոտում,

4. տեղադրված չեն ջրի օգտագործման և էկոլոգիական թողքի և ձկնանցարանի ջրահոսի ծավալների ավտոմատ կառավարման համակարգեր,

5. ձկնապաշտպան ցանցավանդակների փոխարեն տեղադրված են աղբորսիչ ճաղավանդակներ, որոնց ճեղքերի միջև հեռավորությունը 2.5-3.0 սմ է, հետևաբար, դրանք չեն կարող ապահովել մանրաձկան անվտանգությունը (տե՛ս նկար 3):



Նկար 1. Կառուցված ձկնանցարանը նախագծին չի համապատասխանում և չի կարող ծառայել իր նպատակին:



Նկար 2. Նախագծի համաձայն ճիշտ կառուցված ձկնանցարանը:



Նկար 3. Գլխամասում բացակայում են ձկնապաշտպան ցանցավանդակները:

Ջրամատակարարման համակարգում հիդրոտուրբինի առկայության դեպքում՝ հիդրոէլեկտրակայանների կողմից արտադրվող էլեկտրաէներգիայի համար անհրաժեշտ ջրի հոսքի մեծությունը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 14-ի N 225-Ն որոշմամբ հաստատված «...Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 3-ի «Ջրերի հաշվառման այլընտրանքային կարգը հաստատելու մասին» N 499-Ն որոշման հավելվածում կատարված փոփոխությունների 5.2 կետով նախատեսված հետևյալ բանաձևով՝

$$Q = E / 9,81 \times \Delta H \times t \times \eta_{\text{տ}} \times \eta_{\text{գ}}, \quad (1)$$

որտեղ՝

Q -ն ջրի հոսքն է (լսմ/վ),

E -ն՝ փաստացի արտադրված էլեկտրաէներգիան (կՎտ/ժամ),

ΔH -ը հաշվարկային ճնշումն է (մ),

t -ն գեներատորի աշխատած ժամանակահատվածը (ժամ),

$\eta_{\text{տ}}$, տուրբինի օգտակար գործողության գործակիցը (ՕԳԳ),

$\eta_{\text{գ}}$, գեներատորի օգտակար գործողության գործակիցը,

իսկ 9.81 արժեքը՝ ազատ անկման արագացումն է ($g = 9,8 \text{ մ/վրկ}^2$)»:

Ներկայացված բանաձևի ուսումնասիրության և գործնական կիրառության արդյունքում մեզ համար պարզ դարձավ, որ բանաձևն ունի լրամշակման կարիք, մասնավորապես, վերոնշյալ որոշմամբ սահմանված բանաձևում անհրաժեշտ է.

1. տուրբինի օգտակար գործողության գործակիցը (ՕԳԳ) որոշելիս, բացի գործարանային տվյալներից, նաև հաշվի առնել սարքավորումների մշակվածության աստիճանը՝ հաշվարկման վերաբերյալ մեթոդի մշակումն իրականացնելով մշտադիտարկման արդյունքների հիման վրա [6],

2. նույն բանաձևում սահմանել նաև կիրառվող գործակիցների որոշման կարգը:

Այդուամենայնիվ, պետք է նշել, որ կարելի է բացառել վերոնշյալ հաշվարկը, եթե նշված օբյեկտներում տեղադրվելին ջրի օգտագործման, էկոլոգիական թողքի և ձկնանցարանի ջրահոսի ծավալների ավտոմատ կառավարման համակարգեր:

Եղեգիս գետի վրա կառուցված են «Եղեգիս-1» (ըստ ՀՕԿՀ-ի տեղեկանքի՝ դերիվացիայի երկարությունը՝ 4000մ), «Եղեգնաձոր» (ըստ նախագծի՝ 3250մ, 54մ), «Եղեգնաձոր ՓՀԷԿ-1» (ըստ նախագծի՝ 2650մ), «Եղեգիս-3» (ըստ նախագծի՝ դերիվացիայի երկարությունը՝ 1391մ), «Եղեգիս-2» (ըստ նախագծի՝ դերիվացիայի երկարությունը՝ 2138մ), «Եղեգ» ՓՀԷԿ (ըստ նախագծի՝ դերիվացիայի երկարությունը՝ 1924մ), «Գողթանիկ» (ըստ նախագծի՝ դերիվացիայի երկարությունը՝ 1400մ), «Եղեգիս» (դերիվացիայի երկարությունը՝ 2450մ), «Տիգրան Մեծ» (ըստ նախագծի՝ դերիվացիայի երկարությունը՝ 2691մ): Նշված փոքր ՀԷԿ-երի դերիվացիայի գումարային երկարության (21898.54մ) և Եղեգիս գետի երկարության տոկոսային հարաբերությունը կազմում է **45.6%**, ինչը նշանակում է, որ Եղեգիս գետը **ծանրաբեռնված է**:

Հարկ է նշել, որ մեծաքանակ ջրհավաք ավազանների մերձակա հողերի գրունտային ջրերի մակարդակի բարձրացման արդյունքում կարող է տեղի ունենալ նշված հողերի որակական փոփոխություն (ճահճացում) և բերրիության նվազում: Այսինքն՝ տեղի է ունենում տարածքի էկոհամակարգի քայքայում:

Ջրհավաք ավազանների առկայությունը նպաստում է դրանց ափամերձ հողերի քայքայմանը (լվացմանը), որը և պատճառ է դառնում ջրերի աղտոտմանը և ավազաններում տիղմի ավելացմանը: Ավազաններում ջրի տակ կուտակված օրգանական նյութերի (ծառերի ճյուղեր, հողի հումուս և այլն) տարրալուծման արդյունքում տեղի է ունենում ջրի որակի փոփոխություն:

Պետք է նշել նաև, որ ջերմ կլիմայական ժամանակահատվածում ջրահավաք ավազաններում տեղի է ունենում ջրերի էական տաքացում, որի

հետևանքով ջրում առկա թթվածինը նվազում է, և այլ նեգատիվ գործընթացներ են տեղի ունենում (ջերմային աղտոտվածություն), նաև ավելանում են ջրի գոլորշիացման ծավալները:

Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ կարելի է հանգել հետևյալ եզրակացության. Եղեգիս գետի ծանրաբեռնվածության արդյունքում ներկայումս տեղի է ունենում գետի հիդրոլոգիական ռեժիմի և տարածաշրջանի էկոհամակարգի լուրջ փոփոխություն: Այս առումով կարևոր է նաև նշել, որ 28.06.2019թ. ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» № ՀՕ-98-Ն ՀՀ օրենքը՝ համաձայն որի. «.... նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերը մերժվում են նաև, եթե՝ 1) բ. որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավել է,»:

Ստեղծված բնապահպանական խնդիրները լուծելու, ջրօգտագործման ժամանակ ջրաէկոհամակարգի պահպանությունն ու հավասարակշռությունն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել սահմանել փոքր ՀԷԿ-երի կառուցման և շահագործման համար չափորոշիչներ, որոնք կկանխարգելեն կամ կնվազեցնեն շրջակա միջավայրի վրա փոքր ՀԷԿ-երի վնասակար ազդեցությունները:

Այս առումով, հարկ է նշել, որ ՀՀ Կառավարությունն արդեն իսկ հավանություն է տվել «Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման եւ շահագործման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափորոշիչներ հաստատելու մասին» արձանագրային որոշման նախագծին, որով շրջակա միջավայրի վրա փոքր հիդրոէլեկտրակայանների վնասակար ազդեցությունները կանխարգելելու կամ նվազեցնելու նպատակով դրանց կառուցման և շահագործման համար նախատեսվել են որոշակի չափորոշիչներ: Ի դեպ, նախատեսված չափորոշիչների գործողությունը չի տարածվում փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման կամ շահագործման համար արդեն իսկ ջրօգտագործման թույլտվություն ստացած փոքր հիդրոէլեկտրակայանների վրա:

Այսպիսով՝ կատարված հետազոտությունների արդյունքում պարզ է դառնում, որ Եղեգիս գետի և նրա վտակների վրա գործող փոքր ՀԷԿ-երի և առկա ոռոգման համակարգերի գործունեության արդյունքում Եղեգիս գետի էկոհամակարգին պատճառվում է զգալի վնաս՝ գետի ծանրաբեռնվածությամբ:

յան արդյունքում ներկայումս որպես հետևանք տեղի է ունենում գետի ջրի նվազեցում, ինչի արդյունքում գետի ջրային ռեսուրսի էկոլոգիական հավասարակշռությունը չի պահպանվում՝ վերանում է տեղի կենսաբազմազանությունը, տեղի է ունենում գետի հիդրոլոգիական ռեժիմի և տարածաշրջանի էկոհամակարգի լուրջ փոփոխություն, կամ ստեղծվում են հետագայում վնասի առաջացման նոր սպառնալիքներ:

Այնուամենայնիվ, փոքր հիդրոէներգետիկան կարելի է դասել էլեկտրաէներգիայի արտադրության առավել «մաքուր» տեսակին: Փոքր ՀԷԿ-երը վնասակար արտանետումներով չեն աղտոտում մթնոլորտային օդը, նման կառույցները մեծ ներդրումներ չեն պահանջում, իսկ կատարված ծասերը փոխհատուցվում են անհամեմատ արագ կերպով: հարկ է նշել նաև, որ նման օբյեկտները տարածաշրջանի սեյսմիկ դաշտի վրա չեն ազդում և անվտանգ են բնական երկրաշարժերի դեպքում, չեն ազդում բնակչության ապրելակերպի և տեղանքի կլիմայական պայմանների վրա:

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք:
2. «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» 28.06.2019թ. № ՀՕ-98-Ն ՀՀ օրենքը:
3. ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության ջրավազանային տարածքների՝ խմելու-կենցաղային, գյուղատնտեսական նպատակներով ջրի պահանջարկի, ինչպես նաև բնապահպանական թողքերի գնահատումները սահմանելու մասին» 30 հունիսի 2011 թվականի N 927-Ն որոշումը:
4. ՀՀ կառավարության 25.01.2018թ. №57 որոշումը 2011 թվականի հունիսի 30-ի N 927-Ն որոշման N 1 հավելվածի փոփոխություն:
5. ՀՀ կառավարության «Ջրերի հաշվառման այլընտրանքային կարգը հաստատելու մասին» 2003 թվականի ապրիլի 3-ի N 499-Ն որոշում
6. ՀՀ կառավարության 14 մարտի 2019 թվականի N 225-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 3-ի «Ջրերի հաշվառման այլընտրանքային կարգը հաստատելու մասին» N 499-Ն որոշման հավելվածում լրացումները և փոփոխությունները կատարել մասին:

ОЦЕНКА ВОЗДЕЙСТВИЯ НА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ ПРИ ЭКСПЛУАТАЦИИ МАЛЫХ ГИДРОСТАНЦИЙ В РАМКАХ ЭКОЛОГИЧЕСКИХ ЭКСПЕРИМЕНТИЗ

Ашот Велиханович Сантросян

*Начальник отдела экологической
экспертизы Национального бюро
экспертиз НАН Республики Армения*

Юрий Рубенович Ипханиян

*Эксперт отдела экологической
экспертизы Национального бюро
экспертиз НАН Республики Армения*

В статье в пределах экологического экспертного исследования проведено научно методический анализ, в результате чего обосновано воздействия малых ГЭС на окружающую среду. В основе анализа лежат представленные результаты исследований органов по охране окружающей среды и надзору за недрами РА и результаты проведенных исследований, проверок и контроля управлением водных ресурсов министерства охраны РА об отсутствии счетных приборов, также рыбоохранных и рыбоходных строений на малых гидроэлектростанциях эксплуатируемых на территории РА, а также исследований действующих малых гидроэлектростанциях на реке Егегис.

В процессе экспертного исследования выявлены также многократное превышение разрешенного объема водозабора, что является нарушением требований статьи 27 кодекса о воде РА, и как следствие, возможно нарушение величины экологического стока воды. В результате исследования дана основательная оценка в частности существенному вреду или потенциально возможному вреду, нанесенному экосистеме в частности реке Егегис.

Ключевые слова: экологические проблемы малых ГЭС, окружающая среда, воздействие малых ГЭС на земельные ресурсы, проблемы расчета объема воды малых ГЭС, воздействие малых ГЭС на животный мир.

ASSESSMENT OF THE IMPACT ON THE ENVIRONMENT DUE TO THE OPERATION OF SMALL HYDRO-STATIONS WITHIN THE SCOPE OF ECOLOGICAL EXPERTISE

Ashot Santrosyan

*Head of Ecological Expertise Department,
“National Bureau of Expertises”*

*State Non-Profit Organization of the
National Academy of Sciences of the
Republic of Armenia*

Yuri Ishkhanyan

*Expert of Ecological Expertise Department,
“National Bureau of Expertises”*

*SNPO of the National Academy of
Sciences of the Republic of Armenia*

In the article, within the framework of an ecological expert study, a scientific and methodological analysis was carried out, as a result of which the impact of small hydropower plants on the environment was substantiated. The analysis is based on the presented results of studies of the environmental protection and subsoil supervision bodies of the Republic of Armenia and the results of studies, inspections and control by the Water Resources Department of the Ministry of Protection of the Republic of Armenia on the absence of counting devices, as well as fish protection and fish passage structures at small hydroelectric power plants operated on the territory of the Republic of Armenia, and also studies of operating small hydroelectric power plants on the Yeghegis River.

During the expert study, a multiple excess of the permitted volume of water intake was also revealed, which is a violation of the requirements of Article 27 of the RA Water Code, and as a result, a violation of the ecological water flow is possible. As a result of the study, a thorough assessment was given, in particular, of significant harm or potential harm caused to the ecosystem, in particular to the Yeghegis River.

Key words. Ecological problems, small HPS, environment, impact on animals, water volume calculation.

Հոդվածը գրախոսվել է՝ 17.02.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 24.03.2023թ.:

ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Սաֆարյան Ամալյա

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի
պետության և իրավունքի տեսության և
սահմանադրական իրավունքի ամբիոնի
դոցենտ, ոստիկանության փոխգնդապետ,
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ասպիրանտ*

Զիլաբյան Նաիրի

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի
ակադեմիայի իրավագիտության
ֆակուլտետի 2-րդ կուրսի սովորող,
ոստիկանության ավագ սերժանտ*

Մարդու իրավունքները մասնագիտական գրականության մեջ ներկայացվում են որպես անհատի ազատության չափ, սակայն յուրաքանչյուր անձի ազատությունը պետք է ներդաշնակորեն գուգակցվի այլոց ազատության հետ: Անհատական ազատության ցանկացած սահմանադրական սահմանափակում ենթադրում է, որ այն պայմանավորված է պաշտպանության ենթակա հասարակական արժեքների բախման հնարավորությամբ: Ուստի, նման սահմանափակումը ճանաչվում է իրավունքի կողմից: Սահմանափակումն ուղղված է բախվող սահմանադրաիրավական արժեքների միջև համապատասխան ներդաշնակության ապահովմանը: Ձևական իրավական առումով մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը նշանակում է օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դրանց իրականացման իրավական անհնարիությունը կամ հավասարապես օրենքով սահմանված՝ դրանց ծավալի կրճատումը: Այսպիսով՝ իրավունքների և ազատությունների սահմանափակումն իրավունքների և ազատությունների ծավալի նվազեցման իրականացումն է օրենսդրությամբ սահմանված հիմքերով և կարգով:

Ընդհանրացնելով՝ նշենք, որ մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումները կարող են իրականացվել հետևյալ եղանակներով՝

ա) արգելքներ, որոնք կարող են լինել հարաբերական (իրավունքի կամ ազատության իրականացման որոշակի տարբերակի արգելում, այսինքն՝

վարքագծի սահմանների որոշում) և բացարձակ (իրավունքի կամ ազատության ամբողջ ծավալի իրականացման արգելում, բացարձակ արգելք),

բ) կասեցում՝ մարդու իրավունքների և ազատությունների գործողության ժամանակավոր դադար,

գ) իրավասու պետական մարմինների ներխուժում (ակտիվ գործողությունների միջոցով) մարդու իրավունքների և ազատությունների ոլորտ,

դ) պարտականություն,

ե) պատասխանատվություն¹:

Աներկբա է, որ սահմանադրական նորմերը պետք է ոչ միայն հռչակեն մարդու սահմանադրական իրավունքները, այլև առավելագույնս հստակ սահմանեն դրանց իրացման երաշխիքները, պետության պարտավորությունները, առանձին իրավունքների սահմանափակման թույլատրելի շրջանակները: Ավելին, մարդու իրավունքները պետք է դիտարկվեն որպես իրագործելի իրավունքներ, իսկ դրանց սահմանափակումները պետք է բխեն միջազգային իրավունքի նորմերից, լինեն համարժեք, չաղավաղեն իրավունքի բովանդակությունն ու իմաստը, հստակ սահմանվեն օրենքով, զուգակցվեն պետության համարժեք պարտականություններով²:

Հարկ է նկատել, որ մարդու իրավունքներն արդյունավետ են իրացվում, երբ այդ գործընթացի մասնակիցները պահպանում են օրենսդրության ընթացակարգային նորմերի պահանջները, ինչի արդյունքում օրենքով սահմանված իրավաբանական ընթացակարգերը երաշխավորում են մարդու իրավունքներն ու ազատությունները՝ նպաստելով դրանց իրացմանը:

Ընդամին, հիմնական իրավունքների սահմանափակման հիմնախնդրի քննարկման շրջանակն ընդգրկում է նաև միջազգային իրավական պրակտիկան: Համաձայն ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրա-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ/ընդհանուր խմբագրությամբ՝ **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի.** – Եր.: «Իրավունք», 2010թ. էջ 509:

² Տե՛ս **Գ.Բ. Դանիելյան, Վ. Ա. Այվազյան, Ա. Ա. Մանասյան,** «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում» (գիտագործնական հետազոտություն). Եր.: Հայրապետ հրատ., 2015 էջ 136:

վունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան, իսկ սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները³:

Իր հերթին միջազգային փորձը վկայում է, որ իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք պարտավոր է ենթարկվել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք օրենքով սահմանված են բացառապես մյուսների իրավունքների ու ազատությունների պատշաճ ճանաչումն ու հարգումն ապահովելու և դեմոկրատական հասարակարգում բարոյականության արդարացի պահանջները, հասարակական կարգը և ընդհանուր բարեկեցությունը բավարարելու նպատակով⁴: Ըստ էության հիմնական իրավունքը կարող է սահմանափակվել միայն այլ հիմնական իրավունքի իրականացումը կամ սահմանադրական արժեքի պաշտպանությունն ապահովելու նպատակով այնքանով, որքանով դա բացարձակապես անհրաժեշտ է, համաչափ է հետապնդվող նպատակին՝ հաշվի առնելով տվյալ հիմնական իրավունքի հիմնական բովանդակությունը^{5, 6, 7}:

Հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող պահանջների կապակցությամբ իր դիրքորոշումը 2021թ. մայիսի 7-ի ՄԴՈ-1592 որոշման մեջ հայտնել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը՝ արձանագրելով, որ սահմանափակման նպատակի իրավաչափությունը Սահմանադրությամբ սահմանված լինելն է և սահմանափակման համար ընտրված մի-

³ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 81 (ՀՀ Սահմանադրություն: Ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ի ՀՀ հանրաքվեով: Սահմանադրության փոփոխությունները կատարվել են 2005 թ. նոյեմբերի 27-ի և 2015 թ. դեկտեմբերի 6-ի ՀՀ հանրաքվեներով, ՀՀՊՏ Հատուկ թողարկում, Հոդ. 1118, 21. 12. 2015):

⁴ Տե՛ս «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» 1948թ. դեկտեմբերի 10-ի միջազգային հռչակագիր, հոդված 29 (ՀՀՊՏ 1948.12.10 217 Ա ի ի):

⁵ Տե՛ս Հունգարիայի Հիմնական օրենքի հոդված 1 (3) : (Ընդունվել է 2011 թվականի ապրիլի 25-ին, ուժի մեջ է մտել 2012թվականի հունվարի 1-ին: Հասանելի աղբյուր՝ <https://worldconstitutions.ru/?p=298> 15.03.2023)Ջ

⁶ Տե՛ս Շվեյցարիայի համադաշնության Սահմանադրության հոդված 36 (Ընդունվել է 1999թվականի ապրիլի 18-ին: Հասանելի աղբյուր՝ <https://worldconstitutions.ru/?p=298> 15.03.2023)

⁷ Տե՛ս Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքի հոդված 16 (Ընդունվել է 1949 թվականի մայիսի 23-ին: Հասանելի աղբյուր՝ <https://worldconstitutions.ru/?p=298> 15.03.2023):

ջոցների պիտանիությունը, անհրաժեշտությունը, համարժեքությունը սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը⁸:

Մեր կարծիքով՝ իրավունքների սահմանափակման երևույթը չունի միանշանակ պատասխան այն հարցերին, թե ի՞նչն է հանդիսանում իրավունքի սահմանափակում և ո՞ր կետում է դա տեղի ունենում: Թերևս պետք է համաձայնել Ռոբերտ Ալեքսիի հետ, որ խնդրահարույցը ոչ թե սահմանադրական իրավունքների սահմանափակումներն են, այլ հենց այդ իրավունքների թույլատրելի պարունակությունն ու տարածական աստիճանը որոշելն է ու սահմանափակումն իրավունքների որոշակիացումից, իրականացումից, կարգավորումից տարբերելը: Սահմանադրական իրավունքների սահմանափակում բուն իմաստով տեղի է ունենում, երբ անհրաժեշտ է լինում հավասարակշռել սահմանադրական իրավունքների հիմքում ընկած շահերը՝ կիրառելով համաչափության սկզբունքը⁹:

Այս համատեքստում արժեքավոր են ՀՀ Բարձր դատարանի՝ ՀՀ Սահմանադրության 77-րդ և 78-րդ հոդվածներով նախատեսված համաչափության և որոշակիության սկզբունքների մեկնաբանությունները¹⁰: Ըստ այդմ՝ համաչափության սկզբունքի առաջին տարրը հիմնական իրավունքի սահմանափակման նպատակի լեգիտիմությունն է, այն է՝ Սահմանադրությամբ նախատեսված լինելը: Դա նշանակում է, որ օրենսդիրը, իրականացնելով հիմնական իրավունքի սահմանափակման իր լիազորությունը, պետք է հիմնվի Սահմանադրությամբ նախատեսված նպատակների վրա: Բոլոր այն դեպքերում, երբ այդ նպատակներն ուղղակիորեն ամրագրված են սահմանափակվող հիմնական իրավունքին կամ ազատությանը վերաբերող սահմանադրական դրույթներում, օրենսդիրն իրավասու է միայն դրանք կոնկրետացնել օրենքներում, մնացյալ դեպքերում օրենսդիրն ինքն է բացահայտում սահմանափակման՝ օրենքով սահմանված նպատակի սահմանադրական բովանդակությունը՝ հիմնվելով Սահմանադրության վերաբերելի նոր-

⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2021թ. մայիսի 7-ի ՍԴՌ-1592 որոշումը (Հասանելի աղբյուրը՝ <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1592.pdf> 20.03.2023)

⁹ Տե՛ս **Alexy R. A** *Theory of Constitutional Rights*, Oxford university Press, 2002 էջ 178:

¹⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 77, 78 (ՀՀ Սահմանադրություն: Ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ի ՀՀ հանրաքվեով: Սահմանադրության փոփոխությունները կատարվել են 2005 թ. նոյեմբերի 27-ի և 2015 թ. դեկտեմբերի 6-ի ՀՀ հանրաքվեներով, ՀՀՊՏ Հատուկ թողարկում, Հոդ. 1118, 21. 12. 2015):

մերի մեկնաբանության վրա: Հավաստիանալով իր կողմից պարզված սահմանադրական նպատակի առկայության մեջ՝ օրենսդիրն այնուհետև պետք է ընտրի դրան հասնելու միջոցները: Հետևապես, ընտրված միջոցների սահմանադրականությունը կանխորոշվում է առաջին հերթին դրանցով հետապնդվող նպատակով:

Ինչ վերաբերում է օրենսդրի կողմից սահմանադրորեն արդարացված նպատակին հասնելու համար միջոցների ընտրությանը, ապա դրանք պետք է պիտանի լինեն հիշյալ սահմանադրական նպատակին հասնելու համար: Այսինքն՝ պիտանի են այնպիսի օրենսդրական միջոցները, որոնցով օրենսդիրն ի գործ է հասնել հետապնդվող նպատակին, այլ կերպ՝ երբ ապահովված է հավանականությունը, որ արդյունքը, որին ձգտում է օրենսդիրը, ի հայտ կգա:

Համամիտ ենք Մ.Զաքսի այն կարծիքին, որ իրավունքների ու ազատությունների սահմանափակումների դեպքում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այդ խնդիրն առաջանում է առաջին հերթին տարբեր սուբյեկտների իրավունքների ու ազատությունների բխման դեպքում, հետևաբար օրենքը պետք է կարգավորի այդ բխումների լուծումը որոշակի բարոյական առաջնայնություններից ելնելով, ընդ որում՝ այդ առաջնայնությունները պետք է ունենան որոշակի աստիճանակարգում: Առաջին աստիճանում պետք է լինեն հասարակության շահերը և հասարակության անվտանգությունը: Ինչ վերաբերում է պետությանը և անհատին, ապա պետական շահերը և մարդու իրավունքները պետք է ենթարկվեն հասարակական շահերին, իսկ պետությունը պետք է ծառայի հասարակությանը և անհատին, պայմաններ ստեղծի և ապահովի ինչպես մարդու իրավունքների ու ազատությունների ազատ դրսևորման, այնպես էլ հասարակության զարգացման համար¹¹:

Համաչափության սկզբունքի հաջորդ տարրն օրենսդրի կողմից ընտրված միջոցի անհրաժեշտությունն է, այսինքն՝ այն, որ այդ միջոցը, այլ միջոցների համեմատ, նույն ներգործությամբ պետք է ենթադրի ամենամեղմ միջամտությունը որևէ հիմնական իրավունքին կամ ազատությանը: Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու բոլոր պիտանի միջոցներից պետք է ընտրվի այն օրենսդրական միջոցը, որը նպատակին հասնե-

¹¹ Տե՛ս Միխայել Զաքս, «Գերմանիայում հիմնական իրավունքների ընդհանուր ուսմունքի հիմունքները: Սուբյեկտիվ հանրային իրավունքները վարչական իրավունքում» Եր.: Տիգրան Մեծ, 2018 էջ 89:

լու նույն հավանականությամբ, այսինքն՝ նույն արդյունավետությամբ, սակայն առավել մեղմ է սահմանափակում որևէ հիմնական իրավունք կամ ազատություն:

Համաչափության սկզբունքի վերջին՝ չորրորդ տարրը պահանջում է, որ օրենսդիրն իր կողմից ընտրված պիտանի և անհրաժեշտ միջոցը համեմատի սահմանափակվող հիմնական իրավունքի կամ ազատության սահմանադրական նշանակության հետ՝ պարզելու համար, թե այդ միջոցներով արդյունքում պետությունն իրապես հասնու՞մ է հետապնդվող նպատակին, և սահմանափակվող հիմնական իրավունքը կամ ազատությունն իր նշանակությամբ չ՞ի պահպանում իր գերակայությունն այն հանրային շահերի նկատմամբ, որոնք պահպանելու նպատակով էլ օրենսդիրը դիմում է հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակման: Վերջնարդյունքում դա նշանակում է, որ որևէ հիմնական իրավունքին կամ ազատությանը չմիջամտելը կամ այն երաշխավորելը, կախված դրանց էությունից, կանոն է, իսկ դրա սահմանափակումը՝ բացառություն, որը պետք է հիմնավորվի սահմանափակման յուրաքանչյուր դեպքում: Ընդամին, որքան ավելի ինտենսիվ է սահմանափակումը, այնքան ավելի է մեծանում սահմանափակումը հիմնավորելու բեռը»¹²:

Համաչափության սկզբունքն արտացոլվել է նաև Սահմանադրության 76-րդ հոդվածում, երբ իրավունքների և ազատությունների՝ օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցումը կամ լրացուցիչ սահմանափակումները կիրառելի են միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակն արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում¹³:

Մեր կարծիքով՝ Սահմանադրական դատարանի արձագանքն իրավական որոշակիության սահմանադրական պահանջների բովանդակության

¹² Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2020թ. հունիսի 18-ի ՄԴՈ-1546 որոշումը (Հասանելի աղբյուրը՝ <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1546.pdf> 11.03.2023):

¹³ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 76 (ՀՀ Սահմանադրություն: Ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ի ՀՀ հանրաքվեով: Սահմանադրության փոփոխությունները կատարվել են 2005 թ. նոյեմբերի 27-ի և 2015 թ. դեկտեմբերի 6-ի ՀՀ հանրաքվեներով, ՀՀՊՏ Հատուկ թողարկում, Հոդ. 1118, 21. 12. 2015):

վերաբերյալ նույնպես շատ արժեքավոր է թե՛ իրավաստեղծի, թե՛ իրավակիրառի համար. հատկապես այն առումով, որ

ա) իրավունքի գերակայության ապահովման գլխավոր պահանջ է դիտարկում իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի,

բ) (...) օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը՝ համաձայն որի որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (...) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը,

գ) իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ի՞նչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը,

դ) (...) իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության,

ե) (...) իրավական որոշակիությունը նաև իրավական անվտանգության կարևոր բաղադրիչ է, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև վստահությունը հանրային իշխանության և նրա հաստատությունների նկատմամբ, (...) իրավական պետությունում բացառապես որոշակի՝ կանխատեսելի, հստակ և բոլորի համար մատչելի օրենսդրական կարգավորումների միջոցով պետք է երաշխավորվի առկա իրավակարգի հետագա գոյության նկատմամբ վստահության պաշտպանությունը,

զ) (...) իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ,

ե) իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե՞ հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ,

ը) նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել. նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով^{14, 15, 16, 17, 18, 19, 20}:

Համաչափության սկզբունքին անդրադարձել է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը՝ նշելով, որ իրավական հիմքերը, որոնց հղումներ են կատարում ազգային իշխանություններն իրենց գործողությունների հա-

¹⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2016թ. մայիսի 3-ի ՄԴՈ-1270 որոշումը (Հասանելի աղբյուրը՝ <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1270.pdf> 11.03.2023)

¹⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2006թ. ապրիլի 18-ի ՄԴՈ-630 որոշումը (Հասանելի աղբյուրը՝ <https://www.concourt.am/decision/decisions/sdv-630.htm> 11.03.2023):

¹⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2008թ. մայիսի 13-ի ՄԴՈ-753 որոշումը (Հասանելի աղբյուրը՝ <https://www.concourt.am/decision/decisions/sdv-753.pdf> 11.03.2023):

¹⁷ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2014թ. դեկտեմբերի 2-ի ՄԴՈ-1176 որոշումը (Հասանելի աղբյուրը՝ <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1176.pdf> 11.03.2023):

¹⁸ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2019թ. նոյեմբերի 15-ի ՄԴՈ-1488 որոշումը (Հասանելի աղբյուրը՝ <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1488.pdf> 11.03.2023):

¹⁹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2015թ. հունիսի 9-ի ՄԴՈ-1213 որոշումը (Հասանելի աղբյուրը՝ <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1213.pdf> 11.03.2023):

²⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2017թ. մարտի 14-ի ՄԴՈ-1357 որոշումը (Հասանելի աղբյուրը՝ <https://www.concourt.am/decision/decisions/sdv-1357.pdf> 11.03.2023):

մաչափությունը հաստատելու համար, պետք է լինեն «բավարար, համոզիչ և ծանրակշիռ, առնչություն ունենալ գործին, հիմնվեն համապատասխան գործունեության ընդունելի գնահատման վրա»²¹:

Մասնավորապես, Ստերինգը ընդդեմ Միացյալ թագավորության գործի շրջանակներում ՄԻԵԴ-ը անդրադարձել է համաչափության սկզբունքին՝ այն մեկնաբանելով մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման թույլատրելիության սահմանների որոշման նապատակ: Համաչափության սկզբունքը, ըստ Եվրոպական դատարանի, արդարացի հավասարակշռության որոնում է հասարակության շահերով թելադրված պահանջների և անձի հիմնական իրավունքների պաշտպանության միջև²²:

Այսպիսով, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումներ նախատեսելու համար կարևոր նախապայման են օբյեկտիվ ու «կենսունակ» իրավական հիմքերի ամրագրումը և դրանց իրագործման ճկուն ընթացակարգերի առկայությունը: Ընդ որում՝ կառուցակարգերի պարագայում խոսքը վերաբերում է սահմանափակումների առավելագույնս պարզորոշությանն ու հիմնավորվածությանը թե՛ իրավակիրառողների, թե՛ իրավունքի հասցեատերերի համար: Անդրադառնալով հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման ընթացակարգերին՝ նշենք, որ դրանց ճկունությունն արտահայտվում է իրավիճակին համապատասխան սահմանափակման միջոցներ ընտրելու և այն իրագործելու համաչափության մեջ, ինչը արդեն իսկ հասցեագրվում է պետական իրավասու մարմիններին:

²¹ St' u Application no 35082/04, Makhmudov v. Russia Judgment of 26 July 2007 Para. 64,65 (Հասանելի աղբյուրը՝ <https://pandia.ru/text/77/352/37302.php>) 11.03.2023):

²² St' u Application no 14038/88, Soering v. The United Kingdom Judgment of 07 July 1989 Para. 89 (հասանելի աղբյուրը՝ [https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:\[%22001-57619%22\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{%22itemid%22:[%22001-57619%22]})) 20.01.2023):

КОНСТИТУЦИОННЫЕ ОСНОВЫ ОГРАНИЧЕНИЯ ОСНОВНЫХ ПРАВ И СВОБОД ЧЕЛОВЕКА И ГРАЖДАНИНА

Сафарян Амаля Гагиковна

*Доцент кафедры теории государства и права
и конституционного права Академии
Образовательного комплекса МВД
Республики Армения, подполковник
полиции, аспирант Образовательного
комплекса МВД Республики Армения*

Зилабян Наири Акобович

*курсант 2 курса Академии
Образовательного комплекса
МВД Республики Армения,
старший сержант полиции*

Аннотация: В научной статье обсуждаются проблемы, связанные с конституционно-правовыми ограничениями прав человека, и соблюдении при этом надлежащего баланса в вопросах защиты интересов общества и ненарушения основных прав личности. По мнению авторов, в сферу обсуждения проблемы ограничения основных прав человека также входят вопросы международно-правовой практики и толкование принципов соразмерности и определенности, предусмотренных статьями 78 и 79 Конституции Республики Армения.

Ключевые слова: основные конституционные права человека, ограничение, международный опыт, принципы соразмерности и определенности.

CONSTITUTIONAL BASIS OF RESTRICTIONS OF FUNDAMENTAL HUMAN AND CITIZEN'S RIGHTS AND FREEDOMS

Safaryan Amalya

*Associate Professor at the Chair of Theory of
State and Law and Constitutional Law of the
Educational Complex of the Ministry of
Internal Affairs of the Republic of Armenia,
Police Lieutenant Colonel, Postgraduate
Student of the RA MIA Educational Complex*

Zilabyan Nairi

*2nd year student of the Academy of the
Educational Complex of the Ministry
of Internal Affairs of the Republic of
Armenia, Police Senior Sergeant*

Abstract: The scientific article discusses the problems associated with constitutional legal restrictions on human rights, while maintaining an appropriate balance in matters of protecting the interests of society and not violating the fundamental rights of the individual. According to the author, the scope of discussion of the problem of restriction of fundamental human rights also includes issues of international legal practice and the interpretation of the principles of proportionality and certainty provided for in Articles 78 and 79 of the Constitution of the Republic of Armenia.

Key words: fundamental constitutional human rights, restriction, international experience, principles of proportionality and certainty.

Հոդվածը գրախոսվել է՝ 30.03.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 30.03.2023թ.:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՀԱՆՑԱՆՔԻ ՀԱՄԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԱՐՔԻ ՎՏԱՆԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Սմբատյան Հասմիկ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հայցորդ

Համառոտագիր: Որքան էլ միտված լինենք կատարելագործել օրենքները, անժխտելիորեն շրջվում ենք դեպի երևույթի արմատներ:

Սույն հոդվածը «հանցանք» եզրույթի և արարքի վտանգավորության հատկանիշի սաղմնավորման շրջադարձերի մասին է:

«Հանցանք» եզրույթի ձևակերպումն ինքնին պատմական փուլեր է անցել և ժամանակին համընթաց էվոլյուցիա ապրել: Ի սկզբանե հանցանքը դիտարկվել է որպես որևէ արարք՝ ուղղված այն բարիքների դեմ, որն այդ ժամանակահատվածում առավել արժևորվել է՝ պետություն, կրոն, իշխանություն և այլն:

Ուսումնասիրելով հանցանքի պատմական փուլերը՝ ակնհայտ է դառնում, որ մտածողները և իրավագետները նախ՝ այն ներկայացնում են իբրև մի երևույթ, որը որոշակի վնաս է պատճառում, ավելի ուշ՝ երևան են հանվում հանցանք ծնող պատճառները, ապա՝ ուրվագծվում է հանցանքին առավել բնորոշ մի հատկանիշ, որն է՝ արարքի վտանգավորությունը: Դա հատկապես ակնառու է գոյան հանցակազմերի նախատիպերում, որոնք էլ դարակազմիկ շրջադարձ են հանդիսանում ու էականորեն փոխում հանցանքի պատկերացման մասին վեկտորը դեպի արարքի կարևորագույն ու անքակտելի հատկանիշը՝ վտանգավորությունը: Այդ հատկանիշները կապվում են մերթ այն օրբյեկտի հետ, որի դեմ ուղղված է վտանգավոր արարքը, մերթ արարքի կատարման եղանակի, իրադրության, գործիքի, միջոցի հետ, մերթ էլ վտանգավորության դրսևորումը կապվում է այն հանգամանքով, թե արարքը անգգուշությամբ է կատարվել, թե՞ դիտավորությամբ:

Բանալի բառեր՝ արարք, հանցանք, արարքի վտանգավորություն, արարքի նվազ վտանգավորություն, կրոնական հանցանքներ

Հանցանքը՝ որպես սոցիալական, իրավական երևույթ, հազարամյակներ շարունակ գտնվել է մտածողների, փիլիսոփաների, իրավագետների, գրողների մշտադիտարկման առանցքում: Սակայն որքան էլ առաջատար

դիրք է զբաղեցնում հանցանքի ընդհանուր հասկացությունը, այն բավարար չափով ուսումնասիրված չէ¹: Հետհայացք ձգելով մեզ հասած բաբելոնյան, եգիպտական, հունական, պարսկական, հնդկական և մյուս օրենքներին՝ ակնհայտ է դառնում, որ հանցագործության վերաբերյալ համապատասխան իրավանորմեր չկան: Որոշ աղբյուրներ նախատեսել են որոշակի հանցավոր արարքներ, սակայն, առանց դրանց հատկանիշները բնութագրելու, մատնանշել են միայն այն պատիժները, որոնք պետք է կիրառվեն այդ հանցանքները կատարած անձանց նկատմամբ²: Հասարակության մեջ հանցանքների և զանցանքների մասին օրենսգրքերը մուտք են գործել միայն մասնավոր սեփականության ի հայտ գալուն զուգընթաց: Դիցուք՝ ստրկատիրական հասարակության մեջ ստրուկների կատարած ամենաչնչին ոտնձգություններն անգամ դիտվում էին որպես ծանրագույն հանցանքներ և արժանանում խիստ պատիժների:

Այսպիսով, ստրկատիրական պետությունների օրենքներով մասնավոր սեփականության, ինչպես նաև ստեղծված պետության ու հասարակության գոյության մյուս հիմքերի դեմ ուղղված ամենաաննշան արարքներն անգամ համարվել են ծանրագույն հանցանքներ:

Ֆեոդալական հասարակությունում հանցանք էր համարվում ամեն մի արարք, որը դուրս-ինչ ոտնձգություն էր դիտվում ֆեոդալական կարգերի ու պետության գոյության հիմքերի, ֆեոդալների իրավունքների ու արտոնությունների դեմ: Պատմաիրավական վկայությունները փաստում են, որ այդ շրջանում պատժի համակարգը խիստ կամայական էր, ասել է թե՛ իշխանությունները կաշկանդված չէին ցանկացած պատիժ կիրառելով, ընդհուպ՝ զերծ չէին ճորտերին անառիթ պատժելու պրակտիկայից: Ասվածի վառ վկայություն են գյուղացիական ապստամբությունները, որոնք իշխանությունների կողմից ճնշվում էին նույնիսկ մահապատիժներով:

Այսպիսով՝ ֆեոդալական հասարակարգում դասակարգային քաղաքացիական ազատության նպատակ հետապնդող ամեն մի արարք ճորտ գյուղացու կողմից հայտարարվում էր հանցավոր արարք, որին հետևում էր խստագույն պատիժ: Պատժի խստությունը կախված էր նրանից, թե դա ում նկատմամբ էր կիրառվում. որքան ցածր դասի ներկայացուցիչ էր հանցանք

¹ Ст'ю Кузнецова Н.Ф. Преступление и преступность. М.: Изд. МГУ, 1969թ., էջ 4

² Ст'ю Թովմասյան Ա.Թ., «Չին և միջնադարյան հայ քրեական իրավունք», Երևան, 1962թ., էջ 232

կատարողը, այնքան ավելի խիստ էին պատժատեսակները, և, հակառակը, որքան բարձր էր կատարողի դասը, այնքան ավելի մեղմ պատժատեսակներ էին գործում նրա հանդեպ:

Կրոնի ազդեցության ուժեղացմանը զուգընթաց՝ փոխվեց հանցանքի վերաբերյալ մոտեցումների վեկտորը, և այն ընկալվեց որպես հավատքի, պաշտամունքի դեմ ուղղված ոտնձգություն: Այս շրջանում մահապատիժ էր սպառնում նրան, ով կատարել էր հանցավոր արարք, որպիսիք էին՝ անհավատությունը, հերետիկոսությունը, կախարդությունը, վիուկությունը և այլն:

Անդրադառնալով միջնադարյան Հայաստանի իրավունքի հիմնահարցերի վկայագրություններին՝ նշենք, որ դրանք ևս զուրկ էին հանցանքի բնորոշումից: Որոշ հեղինակներ հանցանքը դիտարկում էին որպես ոտնձգություն թագավորական կամքի, արքայական կամահայեցողության դեմ: Դիցուք՝ Եղիշեն նկարագրում է. «Մի կտոր մագաղաթն ավելի աննշան բան է, քան թուզը, բայց եթե թագավորի խոսքը գրվում է նրա վրա, այն պատռողը մահվան պատիժ է ստանում»³:

Պատմագրական վկայությունները ցույց են տալիս, որ, չունենալով հանցանքի վերաբերյալ բնութագրիչներ, միևնույն ժամանակ երևան են հանվել դրանք ծնող նյութական, տնտեսական և հոգևոր պատճառները: Զորքինակ՝ Սահակ Պարթևին վերագրվող կրոնաբարոյախոսական կանոններից մեկում նշվում է, որ բոլոր մեղքերի, ուստի և հանցանքների մայրն ազահությունն ու արծաթասիրությունն է: Աշտիշատի 365թ. ժողովում ընդունված «Կանոններում» արձանագրվել են հանցավոր մի քանի երևույթներ, առաջին հերթին՝ գույքային հանցանքներ, (մասնավորաբար՝ գողությունը), որում դարձյալ մատնանշվում է դա կատարելու պատճառը, այն է՝ մարդկանց նյութական, տնտեսական անապահովությունը: Նմանատիպ մոտեցումներ առկա են նաև Բուզանդի երկերում, ով որպես հանցանքի պատճառ մատնանշում է նախանձը, ազահությունը, նենգությունը, որկրամոլությունը, որոնց հետ կապված ամեն բան դիտում է որպես հանցանք, իսկ մի շարք հեղինակների նկարագրությամբ էլ հանցանքի պատճառ են հարբեցողությունը, պոռնկությունը, վրեժը և այլն⁴:

³ Տե՛ս Թովմասյան Ա.Թ. նշված աշխատությունը, Երևան, 1962թ., էջ 230

⁴ Տե՛ս Թովմասյան Ա.Թ. նշված աշխատությունը, Երևան, 1962թ., էջ 238

Միջնադարյան Հայաստանի պատմությունն առանձնանում է քրիստոնեության՝ որպես կրոնի ընդունմամբ, հետևաբար, այս շրջանի քրեական իրավունքն անմիջականորեն կապվում է հենց կրոնի հետ: «Հայաստանի քրիստոնեացումը մեծ ազդեցություն է գործել հայերի հասարակական ու կուլտուրական կյանքի զարգացման, ընդամին նաև հայ իրավունքի և իրավաբանական ինստիտուտների վրա»⁵: Ուստի, ամեննին զարմանալի չէ, որ այս շրջանից մեզ հասած քրեաիրավական վկայագրություններն ունեն կրոնա-բարոյախոսական կնիք: «Վաղ և միջնադարյան քրեական իրավունքին բնորոշ հատկանիշներից մեկը կրոնի հետ նրա սերտ կապն է»⁶: «Հայք իրենց օրենքը մեծաւ մասամբ հին Կտակարանի վճիռներէն առած են այն չափաւորութեաբ, զօր գտած է անւոր թէ քրիատոնէութիւն, եւ թէ ազգային տեղական սովորութիւնք»⁷:

Ժամանակագրական առումով հայ առաջին իրավաբանական ժողովածուն «Կանոնագիրք հայոցն» է, որը սովորութային նորմերից և կանոնական ցաքուցրիվ նյութերից ծաղկաքաղ է արել և 18-րդ դարասկզբում կազմել է հայոց կաթողիկոս Հովհաննես (Հովհան) Օձնեցին: Օձնեցու կանոնագրքի կանոնախմբերի մեջ արժանահիշատակ են Նեոկեսարիայի ժողովի կանոնները (10 հոդվածից 9-ը շոշափում է հանցանքի ու պատժի հարցեր)⁸: Այն հիմք է եղել հետագա հայ իրավունքի այնպիսի երկերի համար, ինչպիսիք են Ն.Լամբրոնացու, Մ.Գոշի, Ս.Սպարապետի աշխատությունները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հին և միջնադարյան հայ պատմագիրները, օրենսգիրներն ու պետական-քաղաքական գործիչները զանազան առիթներով անդրադարձել են հանցանքի հիմնահարցին: Նրանցից ոմանք հանցանքը համարել են բացարձակապես չար, այսպես կոչված՝ ազատ կամքի արտահայտություն, հետևապես՝ հատուցման ենթակա, ասել է թե՛ պատժի արժանի երևույթ: Փ. Բուզանդի, Ագաթանգեղոսի, Մ. Խորենացու և այլ քերթողների «Պատմություններում» հանցանքները մի ամենակարող ուժի շնորհիվ ստանում են իրենց արժանի հատուցումը՝ պատժվում են: Սակայն «... հարկ է նշել, որ ո՛չ հայ իրավունքի հուշարձաններում, ո՛չ կա-

⁵ Տե՛ս Սամվելյան Խ., «Հայ հին իրավունքի պատմություն» հ. 1., Երևան, 1939թ., էջ 40

⁶ Տե՛ս Косареv А. Римское право М.: 1986թ., էջ 37

⁷ Տե՛ս Գուլեր, «Իրավունք հայոց» (թարգ. Գ. Գալեմբարյան), Վիեննա, 1880թ., էջ 21

⁸ Տե՛ս Մեհրաբյան Լ.Ն., «Կիլիկիայի հայկական պետության իրավունքը», Երևան, 2001թ., էջ 33

նոնական օրենքներում, ո՛չ էլ Մ. Գոշի, Ս. Սպարապետի «Դատաստանագրքերում» չկան այնպիսի իրավանորմեր, որոնց մեջ տրվեր հանցանքի թեկուզ ընդհանուր իրավաբանական բնորոշումը»⁹:

Դավիթ Ալավկա որդու (ենթադրվում է 1070 կամ 1080-1140թթ.) դարաշրջանում դարձյալ տիրապետող էր հանդիսանում կրոնական աշխարհայացքը: Ուստի իրեն վերագրվող «Կանոններում» Ալավկա որդին որպես հանցանք դիտում է կրոնի դեմ ուղղված արարքները: Մասնավորապես, հայտնի են մկնանկության վերաբերյալ նրա մի շարք կանոնները, որոնցում «հանցանք» հասկացությունն ամեննին նկարագրված չէ, փոխարենը նկարագրված է բուն արարքը, այն է՝ մթերքները, որոնց դիպել է կենդանին, մասնավորապես հացահատիկը, որին դիպել է մուկը, այլևս պղծված է, հետևաբար, դա պիտանի չէ գործածման համար: Իսկ նրանց համար, ովքեր դա կգործածեն, համարվում է ծանր հանցանք, որին պետք է հետևի պատիժը՝ ապաշխարությունը: Դավիթ Ալավկա որդին, մկնանկությունից զատ, իր «Կանոններում» հանցանքներ է համարում այլակրոնությունը, այլազգիների հետ շփումը, մանավանդ՝ մահմեդականների: Ըստ Ա. Թովմասյանի՝ «Կանոններում» արծարծվում են այնպիսի հանցանքներ, ինչպիսիք են բռնաբարությունը, արվամոլությունը, անասնապղծությունը, գողությունը, վաշխառությունը, կաշառակերությունը և այլն:

Այսպիսով, մեզ հասած իրավաբանական նախակարապետների էջերում նկարագրված չէ «հանցանքի» սահմանումը, սակայն առանձնացված են որոշակի արարքները, որոնք հարիր են տվյալ ժամանակաշրջանին՝ որպես հանցանքներ:

Հայ իրավաբանական մտքի անկյունաքարն է Մ.Գոշի բազմաշերտ աշխատությունը՝ «Դատաստանագիրքը» (1130-1213թթ), որը մշտապես նոր լույսի ներքո մեկնաբանության կարիք ունի: Ուշագրավն այն է, որ Գոշը հայոց աշխարհիկ օրենսգիրքը կազմել է պետականության բացակայության պայմաններում, ինչը բացառիկ երևույթ է իրավունքի պատմության մեջ:

Մ. Գոշը ևս չի սահմանում բուն «հանցանք» եզրույթը, փոխարենը փորձում է նկարագրել մի շարք արարքներ, որոնք, տվյալ ժամանակաշրջանին բնորոշ, օժտված էին հանրային վտանգավորությամբ: Այդ են վկայում դրանց համար սահմանված խիստ սանկցիաները: Ստանձնելով օրենսդրի

⁹ Տե՛ս Թովմասյան Ա.Թ. նշված աշխատությունը, էջեր 229-230

դեր՝ Գոշն իր «Դատաստանագրքում» փաստացի կազմել է ժամանակակից քրեաիրավական նորմերի նախատիպեր. դիցուք՝ Մանկանց սպանությունը (Գլուխ ԻԲ), Ժառանգության համար սպանելը կամ վնասելը (Գլուխ Խբ), Քարերով վնաս պատճառելը (Գլուխ ԻԶ), Տերերի կողմից շինարարներին վնասելը (Գլուխ ԼԵ), և այլն, որոնք այսօրվա քրեական օրենսգրքում ամրագրված են մի դեպքում որպես սպանություն, մյուս դեպքում շահադիտական դրդումներով սպանություն, մեկ այլ դեպքում առողջությանը տարբեր աստիճանի վնաս պատճառել և այլն:

Ուսումնասիրելով գոշյան հանցակազմերը՝ ակնհայտ է դառնում, որ վերջինս դրանք ընտրել է որոշակի սկզբունքով՝ հաշվի առնելով արարքների վտանգավորությունը: Դա հատկապես ակներև է, երբ Գոշն արարքը նկարագրելիս նախևառաջ նկարագրում է այնպիսի հանգամանքներ, որոնց պարագայում տվյալ արարքի կատարումը դառնում է առավել վտանգավոր:

Համեմատենք հետևյալ օրինակները՝ «Եթե այրն իր կնոջը սպանում է պոռնկության համար, արյան դատաստան լինի նրան՝ լրիվությամբ, քանզի նման պարագայում Աստված պատվիրեց արձակել կնոջը և ոչ թե սպանել: Եվ եթե կինն է սպանում իր այրին դեղերով կամ այլ ցավերով, նույն դատաստանը լինի»¹⁰, և մյուսը՝ «Եթե մեկն անմեղորեն ճանապարհ է գնում և առաջ ոչ մի թշնամի չունի և ամենքին թալանող գողերն ու ավազակները նրան կաշեն, և սա սպանի նրանց, եկեղեցին նրան չդատի որպես սպանողի: Բայց նա թող սրբի իր անձը ապաշխարությամբ սակավ օրեր»¹¹:

Վերը նշված օրինակներից պարզ է դառնում, որ Գոշը փորձում է տարանջատել սպանության երկու դրսևորումներ՝ հաշվի առնելով որոշակի հանգամանքներ՝ շարժառիթ, իրադրություն, գործիք, միջոց: Այդ կերպ վերջինս փորձում է ընդգծել մի դեպքում տվյալ արարքի բարձր, մյուս դեպքում՝ նվազ վտանգավորությունը:

Ուշագրավ է, որ Գոշը հանցանքը պատկերացրել է որպես կոնկրետ արարք, առավել ստույգ՝ գործողություն ու դրանով իսկ պատճառված վնաս՝ հետևանք: Ուստի, նկատենք մի ընդհանուր օրինաչափություն գոշյան հանցակազմերում՝ դրանք միշտ նյութական են:

¹⁰ Տես՝ Գոշ Մ., «Դատաստանագիրք», գլուխ ԺԹ, Երևան, 2001թ., էջ 55

¹¹ Տես՝ Գոշ Մ. նույն աշխատությունը, գլուխ ՃԼԳ, էջ 107

Գոշը հետևողական նկարագրում է հետևանքը, ասել է թե՛ պատճառված վնասը, դրա չափը՝ այդ կերպ դարձյալ փորձ կատարելով տարանջատել առավել վտանգավոր արարքը նվազ վտանգավորից: Օրինակ՝ «Եթե երկու այրեր կռվեն, և հարված կպնի հղի կնոջը, և հարվածից դեռ չձևավորված սաղմը դուրս գա, ապա վնասի կես չափով տույժ լինի, որչափ որ կնոջ ամուսինը պահանջի և մեղավորը տուգանքը աղաչելով տա:

Իսկ եթե սաղմն արդեն ձևավորված էր, ապա տուգանքը լինի՝ անձի դիմաց-անձ օրենքով»:

Այլ օրինակներում Գոշը տարանջատում է արարքի բարձր և նվազ վտանգավորությունը՝ հաշվի առնելով, թե հատկապես ո՞ր օբյեկտին է ուղղված տվյալ արարքը: Գաղտնիք չէ, որ այդ ժամանակաշրջանում կարևորագույն արժեք էր եկեղեցին, բնականաբար, դրա դեմ ուղղված հանցանքները դիտարկվում էին առավել վտանգավոր: Այսպես՝ «Եթե ժառանգավորներից մեկը կամ ժողովրդականներից մեկը գողանա եկեղեցուց մոմեղեն կամ ձեթ, որոշումն այսպես է՝ հնգապատիկը պետք է տուժի»¹², և մյուսը՝ «Դիակողոպտողները երբ բռնվեն և իրենց կամքով խոստովանեն, ապա շխարությունը որոշվի ըստ կանոնների»¹³: Դատելով վերը նկարագրված արարքների պատիժներից՝ դժվար չէ նկատել, որ եկեղեցու դեմ ուղղված հանցանքն առավել բարձր վտանգավորությամբ է օժտված, քան մյուսը:

Արարքների բարձր և նվազ վտանգավորության տարանջատման մեկ այլ չափանիշի դրսևորում գոյան հանցակազմերում դա սուրյեկտիվ կողմն է: Դիցուք՝ «Եթե մեկն իր կամքով տուն վառի, և եթե կրակից մարդ մեռնի, վառվող ձեռքը խրատել (կտրել), թեպետ, ըստ օրենքների, մահվան է արժանի (...)»¹⁴, համեմատենք՝ «Եվ եթե մեկը կրակ վառի փուչն այրելու, և դրանից այրվի վաստակը կամ կալը կամ անդաստանը և այլն. տուժելով՝ տուժի նա, ով կրակը այրեց»¹⁵: Նշված օրինակներում նկարագրվում են դիտավորությամբ և անզգուշությամբ կատարված արարքներ, և միանգամայն ակնհայտ է, որ Գոշը փորձել է դրանք դիտարկել վտանգավորության տեսանկյունից: Սահմանելով առավել մեղմ պատիժ անզգուշ հանցանքի համար՝ Գոշը միաժամանակ մատնանշում է դրա նվազ վտանգավոր լինելը:

¹² Տես՝ Գոշ Մ. նույն աշխատությունը, գլուխ ԽԴ, էջ 66

¹³ Տես՝ Գոշ Մ. նույն աշխատությունը, գլուխ ՃԼԲ, էջ 107

¹⁴ Տես՝ Գոշ Մ. նույն աշխատությունը, գլուխ ԶԴ, էջ 81

¹⁵ Տես՝ Գոշ Մ. նույն աշխատությունը, գլուխ ՀԵ, էջ 78

Բավական հետաքրքրական է այն իրողությունը, որ գոշյան հանցակազմերում առկա է նորմ, որն իրավամբ կարելի է գործող քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի նախատիպը համարել: Ահավասիկ՝ «... Եվ չլինի որևէ մեկը կարիքի համար անգամ՝ գողանա, որովհետև գողությունը օրինականություն է, և եթե որևէ մեկը բռնվի, պատուհասված պիտի դատվի»¹⁶:

Այս նորմից եզրակացնում ենք, որ Գոշը «կարիքի համար անգամ» (ընդգծումը մերն է՝ Ն.Ս.) արտահայտությամբ փորձել է նկարագրել նվազ վտանգավոր արարք՝ միաժամանակ դրա համար սահմանելով պատիժ: Այստեղից եզրակացնում ենք, որ Գոշի ժամանակահատվածում թեև գնահատվել է արարքի նվազ վտանգավորությունը, սակայն վերջինս դարձյալ ճանաչվել է որպես պատժելի արարք:

Այսպիսով, քննության առնելով Մ. Գոշի «Դատաստանագիրքը»՝ հանգում ենք եզրակացության, որ, թեև չբնութագրելով բուն «հանցանք» եզրույթը, Գոշը հետաքրքրական կերպով կազմել է իր ժամանակի համար նախադեպը չունեցող քրեաիրավական նորմեր, ընդ որում՝ եռանդամ՝ հիպոթեզով, դիսպոզիցիայով և սանկցիայով: Բացի այդ՝ Գոշը հանցանքը ներկայացնում է արարքի և դրանից բխող հետևանքի միասնության մեջ՝ ստեղծելով հիմնականում նյութական հանցակազմեր: Ի լրումն սրա՝ նա նաև առաջադրել է արարքի վտանգավորության հարցը՝ տարանջատելով նվազ վտանգավոր արարքն առավել բարձր վտանգավորությամբ օժտված արարքներից: Արարքի վտանգավորությունը, ըստ Գոշի, որոշվում էր հետևյալ չափանիշներով՝

- ո՞ր օբյեկտի դեմ էր ուղղված արարքը,
- դիտավորությամբ էր կատարված արդյոք արարքը, թե՞ անզգուշությամբ,
- ինչպիսի՞նք և որչա՞փ վնաս էր պատճառվել արարքի կատարմամբ,
- ո՞րն էր արարքի կատարման շարժառիթը, իրադրությունը, եղանակը, գործիքը և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկանիշներ:

Գոշն իրավագետին բնորոշ հոտառությամբ սահմանազատել է նվազ վտանգավոր արարքն առավել բարձր վտանգավորությամբ օժտված արարքներից՝ միաժամանակ սահմանելով պատիժ դրանց համար: Այդ կերպ

¹⁶ Տես՝ Գոշ Մ. նույն աշխատությունը գլուխ ԽԴ, էջ 66

վերջինս արտահայտել է իր դիրքորոշումն առ այն, որ մինչև անգամ նվազ վտանգավորությամբ օժտված արարքները քրեորեն պատժելի են:

Շարունակելով պատմական ակնարկը՝ նշենք, որ ինչ վերաբերում է 14-19-րդ դարերին, ապա այս ժամանակաշրջանում հայկական պետականության կորստով պայմանավորված՝ հայկական իրավունքի հետագա զարգացումը կասեցվեց, սակայն հայ իրավունքը չանհետացավ պատմական թատերաբեմից¹⁷:

Եթե հետևելու լինենք այդ ժամանակաշրջանում տարբեր երկրների մոտեցմանը «հանցանք» երևույթին, կնկատենք մի հետաքրքրական միտում. իշխող դասակարգի պահանջները միշտ էապես ազդեցություն են ունեցել արարքը հանցանք ճանաչելու համար:

Այսպես, ցարական Ռուսաստանում հանցանք հասկացությունը հասցվել է ծայրահեղության (խռովություններից մինչ, որքան էլ զավեշտալի է, մոռուք կտրելը): Մասնավորապես 1715թ. «Ռազմական Արտիկուլում» հանցանքը սահմանվում է որպես նորին արքայական մեծության կամ նրա զորքի, ինչպես նաև պետության, մարդկանց կամ պետական շահերի դեմ ուղղված թշնամական և պարսավանքի արժանի արարք¹⁸: Արարքները հանցանք ճանաչելու հիմք է համարվել թագավորական հրամաններին ուղղակի չենթարկվելը: Այս շրջանում այն ամենը, ինչը պատժի սպառնալիքի ներքո արգելվել է, համարվել է հանցանք՝ անկախ նրանից, թե այդ արարքը որևէ մեկին կամ հանրությանը վնաս հասցրե՞լ է, թե՞ ոչ, ընդհուպ՝ եթե դա եղել է հանրորեն օգտակար արարք:

Ավելի ուշ՝ հանցանքներ համարվեցին տնտեսության, կապիտալիստական համակարգի, մասնավոր սեփականության, ինչպես նաև բուրժուա անհատի դեմ ուղղված արարքները, և այդ շրջանը հատկապես աչքի ընկավ իր խստագույն պատիժներով. ժամանակագիրների մոտ այն թվագրվում է որպես «արյունոտ օրենսդրություն» անվամբ:

Այսպիսով՝ ակնբախ է դառնում, որ ժամանակաշրջանն ու հասարակությունը մշտապես իրենց դրոշմն են թողել «հանցանք» հասկացության ընկալման վրա, և դրա սահմանները կանխորոշվել են պատմական իրողությ-

¹⁷ Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն: Ընդհանուր մաս /չորրորդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով/ Ս. Դիրաբյան Ա. Հարությունյան, Գ. Ղազինյան և այլք, ԵՊՀ Եր.: Երևանի համալսարան հրատ., 2006, էջ 77-78

¹⁸ Տե՛ս Русское законодательство 10-20 веков. М. 1986 Т 4, էջ 327

յամբ՝ իշխող դասակարգի պահանջներով, նաև՝ քաղաքական բովանդակությամբ:

Հանցանք հասկացության իրավաբանական բնորոշումն առավել ուշ ժամանակահատվածի ծնունդ է:

Պատմականորեն հանցանք հասկացության վերաբերյալ անդրանիկ նորմի ծնունդը թվագրվում է 1789-ը, որի հայրենիքը Ֆրանսիան էր: Մասնավորապես, «Մարդու և քաղաքացու իրավունքների մասին» հռչակագրի 5-րդ հոդվածում ասվում է. «Ցանկացած իրավախախտման բովանդակային հատկությունն այն է, որ դա վնասակար է հասարակության համար»: Հռչակագրի 8-րդ հոդվածն ամրագրում է. «*nullum crimen, nulla poena sine lege*»՝ ոչ ոք չի կարող պատժվել այլ կերպ, քան մինչև հանցավոր արարքի կատարումը սահմանված և հրապարակված օրենքով:

Այսպիսով՝ Հռչակագիրն ամրագրում է, որ օրենքը պետք է արգելի միայն հասարակության համար վնասակար գործողությունները:

Թերևս հենց այս մոտեցումն էլ հետագայում ելակետային դարձավ «հանցանք» եզրույթի սահմանման համար, և առաջին հերթին հենց Ֆրանսիայի քրեական օրենսգիրքն ամրագրեց հետևյալ վերտառությամբ նորմը. «Հանցագործությունը գործող քրեական օրենքով պատժելի արարքն է»: Դրանից հետո այլ երկրների քրեական օրենսգրքերում համանման իրավադրույթներ ներառվեցին:

Պետք է արձանագրենք, որ քրեական իրավունքի տեսությունն ավանդաբար հիմնվում է հանցանք հասկացության երեք բնորոշման վրա՝ ձևական, նյութական, ձևանյութական: Հանցանքի ձևական բնորոշումն այն է, որ հանցանք է ճանաչվում **օրենքով** պատժելի արարքը (ընդգծումը մերն է՝ Հ.Ս.): Փաստացի առաջին ձևական բնորոշումները երևան եկան կապիտալիստական պետությունների քրեական օրենսգրքերում¹⁹:

Հանցանքի նյութական բնորոշման համաձայն՝ բացահայտվում է դրա սոցիալական էությունը, այսինքն՝ **հանրային վտանգավորությունը** (ընդգծումը մերն է՝ Հ.Ս.): Հանցանքի սույն բնորոշումը հիմնականում ընդունվել է միութենական բոլոր հանրապետությունների քրեական օրենսգրքերում²⁰:

¹⁹ **Տե՛ս** Советское уголовное право Общая часть Изд МГУ М.: 1988, էջ 44

²⁰ **Տե՛ս Գրիգորյան Մ.**, Քրեական իրավունք ընդհանուր մաս, Երևան, 2007թ., էջ 84

Ինչ վերաբերում է ձևանյութական բնորոշմանը, ապա այն իր մեջ ներառում է թե՛ մեկը, թե՛ մյուսը: Ավելի ուշ՝ հանցանքի սույն բնորոշումն իր անդրադարձն ունեցավ առավելապես ԱՊՀ երկրների քրեական օրենսգրքերում:

Փաստորեն, այս երեք բնորոշումներն էլ բացահայտում են հանցանքի թե՛ սոցիալական, թե՛ իրավաբանական էությունը: Սոցիալական էությունն ավանդաբար կապվում է հանցանքի նյութական բնորոշման, մինչդեռ իրավաբանական էությունը՝ դրա ձևական բնորոշման հետ:

Այսպիսով՝ նոր ժամանակաշրջանում հեղափոխական Ֆրանսիան հիմք դրեց «հանցանք» հասկացության սահմանման քրեաիրավական նոր բանաձևի, այն է՝ ձևական բնորոշմանը: «Չկա հանցագործություն առանց այդ մասին օրենքում նշված լինելու». ահա այս դրույթն էին առաջադրում եվրոպացի լուսավորիչները, որն էլ շուտով դարձավ ժողովրդավարության հիմնարար սկզբունք²¹: Մինչդեռ միութենական հանրապետությունների համար առավել նախընտրելի դարձավ դրա նյութական բնորոշումը, իսկ ավելի ուշ՝ ԱՊՀ երկրներում արդեն ձևավորվեց հանցանքի ձևանյութական բնորոշումը:

ИСТОРИЧЕСКИЙ ОБЗОР ВОПРОСОВ ПОНЯТИЯ ПРЕСТУПЛЕНИЯ И ОПАСНОСТИ ДЕЯНИЯ

Смбатян Асмик

Соискатель юридического факультета ЕГУ

Аннотация. Как бы мы ни были нацелены на совершенствование законов, мы бесспорно обращаемся к корням явления.

Статья «Исторический очерк о понятии преступления и вопросах опасности деяния» посвящена термину «преступление» и поворотам эмбриогенеза признака опасности деяния.

Формулировка термина «преступление» сама по себе прошла исторические этапы и пережила эволюцию, параллельную времени. Изначально преступ-

²¹ **Տե՛ս**՝ Мартышкин О. В. История политических и правовых учений. М. Норма 2004թ., էջ 164

ление рассматривалось как некое деяние, направленное против тех благ, которые в этот период считались наиболее ценными: государство, религия, власть и т.д.

При изучении исторических этапов преступления, становится очевидным, что мыслители и юристы, прежде всего, представляют его как явление, наносящее определенный ущерб. Позже выявляются причины, порождающие преступление, затем намечается наиболее характерная для преступления черта – опасность деяния. Это особенно заметно в прототипах гощанских составов преступления, которые являются эпохальным поворотом и существенно меняют вектор представления о преступлении в сторону опасности – важнейшей и неотъемлемой особенности деяния. Эти качества связываются то с субъектом, против которого направлено опасное деяние, то со способом, ситуацией, инструментом, средством совершения деяния, или же проявление опасности связывается с обстоятельством – было ли данное деяние совершено по неосторожности или умышленно.

Ключевые слова: деяние, преступление, опасность поступка, малозначительность деяния, религиозные преступления.

A HISTORICAL OVERVIEW OF THE CONCEPT OF CRIME AND THE DANGEROUSNESS OF THE ACT

Smbatyan Hasmik

Applicant of YSU Faculty of Law

No matter how much we want to improve the laws, we undeniably turn to the roots of the phenomenon.

‘A historical overview of the concept of crime and the question of the dangerousness of the act’ article is about the twists and turns in the conception of the term crime and the characteristic of the dangerousness of the act.

The wording of the term "crime" itself has gone through historical stages and evolved along with time. From the beginning, the crime was considered as an act directed against the goods that were most valued at that time: state, religion, power, etc. Studying the historical stages of the crime, it becomes obvious that thinkers and

jurists first present it as a phenomenon that causes some harm. Later, the reasons that lead to the crime are revealed, then one of the most characteristic features of the crime is outlined, which is the dangerousness of the act. It is especially prominent in the prototypes of Goshian crimes, which are also an epoch-making turning point and significantly change the vector of the idea of the crime towards the most important and inseparable feature of the act: dangerousness. These features are related to the object against which the dangerous act is directed, the manner, situation, tool, and means of the act, and the manifestation of dangerousness is related to whether the act was done carelessly or intentionally.

Key words: act, crime, dangerousness of the act, less dangerousness of the act, religious crimes

Հոդվածը գրախոսվել է՝ 13. 02.2023թ.:

Ներկայացվել է տպագրության՝ 15.02.2023թ.:

**«ԿԱՇԱՌՔ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՄ ՏԱԼՈՒ ՆՄԱՆԱԿՈՒՄԸ»
ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ
ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ**

Վարյան Նվարդ

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի
քրեական դատավարության ամբիոնի
դասախոս, ոստիկանության
կապիտան*

Մանուկյան Ջոնիկ

*ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի
օպերատիվ- հետախուզական
վարչության առաջին բաժնի օպերլիազոր,
առաջին դասի խորհրդական*

Համառոտագիր: Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից կոռուպցիայի դեմ պայքարի իրավական գործիքակազմում ամենաարդյունավետ միջոցը «կաշառք ստանալու կամ տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացումն է: Սույն հոդվածի շրջանակներում քննարկման առարկան «կաշառք ստանալու կամ տալու նմանակում» ՕՀՄ-ի իրավաչափ իրականացման, այն իրականացնելիս պրովոկացիայի բացառման, ինչպես նաև հետագա քրեական վարույթի ընթացքում նշված ՕՀՄ արդյունքի՝ որպես ապացույց թույլատրելիության ապահովման հետ կապված հիմնահարցերն են:

Բանալի բառեր. կաշառքի սադրանք, կաշառք ստանալու կամ տալու նմանակում, օպերատիվ-հետախուզական միջոցառում:

Սպիտակօձիքավորների հանցավորության (White-collar crime) դեմ պայքարի կարևորագույն ասպեկտներից է կոռուպցիայի դեմ պայքարը: Այս ոլորտում պետությունների ջանքերը պետք է ուղղված լինեն իրավական և գործնական կիրառության արդյունավետ մեխանիզմների ներդրմանը, որոնք կնպաստեն կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման մակարդակի աճին: «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ «յուրաքանչյուր մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է մշակի և իրականացնի կամ վարի հանրության մասնակցությանը և օրենքի գերակայության սկզբունքների արտացոլմանը, պետական գործերի և պետական գույքի պատշաճ կառավարմանը, ազնվությանը և անկաշառքությանը, թափանցի-

կությանը և պատասխանատվությանը նպաստող՝ կոռուպցիայի հակազդման արդյունավետ, համակարգված քաղաքականություն»:

ՀՀ-ն ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայից բացի վավերացրել է նաև կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային համագործակցության շրջանակներում մշակված այլ ունիվերսալ իրավական ակտեր, ինչպիսիք են ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան, Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի» կոնվենցիան, որոնց նորմերի իմպլեմենտացիան հիմք հանդիսացավ ազգային հակակոռուպցիոն օրենսդրության ձևավորման համար: Կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում պետք է ընդգծել ՀՀ կառավարության կողմից հաստատված հակակոռուպցիոն ռազմավարությունների և դրանց համապատասխան միջոցառումների ծրագրերի իրականացման արդյունավետության բարձրացումը, ՀՀ-ում հակակոռուպցիոն մասնագիտացված իրավապահ մարմնի և դատարանների ստեղծումը, ինչով էլ կարելի է պայմանավորել այն հանգամանքը, որ վերջին տարիներին «Transparency International» միջազգային հակակոռուպցիոն ոչ կառավարական կազմակերպության հրապարակած տվյալները վկայում էին կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ գրանցած առաջընթացի մասին¹: Այնուամենայնիվ, ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում իրավական մեխանիզմների շարունակական կատարելագործումը ժամանակի հրամայականն է:

Կոռուպցիոն հանցագործությունների լատենտային բնույթը պայմանավորում է դրանց հայտնաբերման, բացահայտման, կանխման և խափանման ոլորտում նաև օպերատիվ-հետախուզական բնույթի իրավական արդյունավետ գործիքակազմի առկայության և դրա իրավաչափ կիրառության ապահովման անհրաժեշտությունը: Օպերատիվ-հետախուզական պրակտիկան վկայում է, որ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման ամենաարդյունավետ օպերատիվ-հետախուզական միջոցառումներից է (այսուհետ՝ ՕՀՄ) կաշառք ստանալու կամ տալու նմանակումը: Պետք է նշել, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքից ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք (այսուհետ՝ ՀՀ քր.դատ.օր.) են ինկորպորացվել դատական երաշխիքով ապահովված օպերատիվ-հետախուզական որոշ միջոցառումներ՝ որպես գաղտնի քննչական գործողություններ,

¹ Տե՛ս <https://transparency.am/en/cpi> (30.08.2023թ.)

այդ թվում՝ կաշառք ստանալու կամ տալու նմանակումը: Մակայն կաշառք ստանալու կամ տալու նմանակում գաղտնի քննչական գործողությունը կարող է իրականացվել հետաքննության մարմնի կողմից միայն նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում և միայն քննիչի հանձնարարությամբ՝ դատարանի որոշման հիման վրա: Այնուամենայնիվ, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասն ամրագրում է, որ նշված օրենքով առանձին օպերատիվ-հետախուզական միջոցառմանը վերաբերող կարգավորումները կիրառելի են նույնա-նուն գաղտնի քննչական գործողության նկատմամբ, եթե ՀՀ քր.դատ.օր-ով այլ կարգավորում նախատեսված չէ:

Սույն հոդվածի շրջանակներում քննարկման առարկան «կաշառք ստանալու կամ տալու նմանակում» ՕՀՄ-ի իրավաչափ իրականացման, այն իրականացնելիս պրովոկացիայի բացառման, ինչպես նաև հետագա քրեական վարույթի ընթացքում նշված ՕՀՄ արդյունքի՝ որպես ապացույց թույլատրելիության ապահովման հետ կապված հիմնահարցերն են:

Այսպես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը համապատասխան առաջարկ ստացած կամ այլ անձի ներգրավմամբ նախապես անհատականացված կաշառքի առարկան օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի վերահսկողության ներքո ստանալն է կամ կաշառքը պահանջած կամ նրա նշած անձին փոխանցելը»:

«Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» ՕՀՄ-ն կարող է իրականացվել միայն կաշառք ստանալու կամ կաշառք տալու հանցագործության բացահայտման համար՝ բացառապես կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկ ստացած անձի գրավոր հայտարարության հիման վրա: Այս ձևակերպումը ենթադրում է, որ «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» ՕՀՄ-ն չի կարող իրականացվել այնպիսի ենթադրյալ հանցավոր արարքների բացահայտման նպատակով, որոնք չեն հանդիսանում կաշառք ստանալու կամ կաշառք տալու հանցագործություն, և այդպիսի դեպքերում նշված օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելը չի կարող համարվել իրավաչափ: Նման դիրքորոշումը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) ձևավորած կայուն նախադեպային պրակտիկայից առ

այն, որ գաղտնի բնույթի վերահսկողական միջոցառումներ իրականացնելիս իշխանության չարաշահումը բացառելու համար, որպես նվազագույն երաշխիք, պետք է ապահովվի (ի թիվս այլնի) օրենքում այն հանցագործությունների բնույթը հստակ սահմանելը, որոնք կարող են հիմք ծառայել միջամտության թույլտվություն ստանալու համար (*տե՛ս, օրինակ, Sefilyan v. Armenia*, հունվարի 2-ի վճիռ, գանգատ թիվ 22491/08, կետ 125, *Association for European Integration and Human Rights and Ekimdzhiev v. Bulgaria*, 2007 թվականի հունիսի 28-ի վճիռ, գանգատ թիվ 62540/00, կետ 76, *Liberty and Others v. the United Kingdom*, 2008 թվականի հուլիսի 1-ի վճիռ, գանգատ թիվ 58243/00, կետ 95 և այլն):

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները նշված օրենքում օգտագործվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 218-220-րդ, 258-րդ, 272-276-րդ, 435-440-րդ, 477-րդ, 496-րդ և 497-րդ հոդվածներով սահմանված իմաստով:

ՀՀ ոստիկանության կողմից մշակված և շրջանառության մեջ դրված «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի² (այսուհետ՝ նախագիծ) 38-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ քննարկվող ՕՀՄ-ն կարող է իրականացվել միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների հայտնաբերման, կանխման, խափանման կամ բացահայտման համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու նպատակով: Ի տարբերություն գործող օրենսդրության՝ նախագծի 38-րդ հոդվածի 10-րդ մասը սահմանում է, որ «Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» ՕՀՄ-ն կարող է իրականացվել ոչ միայն կաշառք ստանալու կամ տալու առաջարկ ստացած անձի գրավոր հայտարարության, այլ նաև արժանահավատ ցուցմունքի հիման վրա³:

² Տե՛ս <https://www.e-draft.am/projects/4538/about> (30.08.2023թ.)

³ Ընդհանուր առմամբ՝ նախագիծը չի նախատեսում օրենսդրական նշանակալի փոփոխություններ կաշառք ստանալու կամ տալու ՕՀՄ-ի իրականացման համատեքստում՝ բացառությամբ այն իրականացնելու իրավասությամբ օժտված մարմինների: Նախագիծը, ի տարբերություն գործող իրավակարգավորումների, կաշառք ստանալու կամ կաշառք տալու ՕՀՄ-ն իրականացնելու իրավասությամբ օժտել է միայն ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին:

Պետք է նշել, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների գործելակերպից է մեծապես կախված այս ՕՀՄ-ի իրականացման իրավաչափությունը, հետևաբար պետք է ուշադրություն դարձնել վերջինիս օրենսդրական կարգավորման առանձնահատկություններին: Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները հաճախ հնարավորություն են ունենում այս կամ այն կերպ ազդել, երբեմն նաև ղեկավարել կաշառք ստանալու կամ տալու կապակցությամբ առաջացած իրադրությունը: Սակայն ներկայացված օրենսդրական կարգավորումները նախատեսում են, որ այդ իրադրությունը պետք է ոչ թե նախաձեռնել, այլ միջամտել արդեն իսկ ստեղծված իրադրությանը: «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված «Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը համապատասխան առաջարկ ստացած կամ այլ անձի ներգրավմամբ...» բառակապակցությունը նշանակում է, որ կաշառք ստանալու կամ տալու համապատասխան առաջարկն արդեն ստացվել է, հետևաբար նման իրադրության ստեղծման հարցում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները պետք է ցուցաբերեն զրո նախաձեռնողականություն, այլապես ՕՀՄ-ն կարող է վերածվել կաշառքի սադրանքի:

Եվրոպական դատարանն ընդունել է իշխանությունների՝ քննության հատուկ մեթոդների դիմելու անհրաժեշտությունը, մասնավորապես, կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի վերաբերյալ գործերում: Այս առնչությամբ Եվրոպական դատարանը վճռել է, որ քննության հատուկ մեթոդների, մասնավորապես՝ գաղտնի հնարքների կիրառությունն ինքնին չի խախտում արդար դատաքննության իրավունքը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ այդ մեթոդները կիրառելիս առկա է ոստիկանության կողմից հրահրման ռիսկ, դրանց կիրառությունը պետք է դուրս չգա որոշակի հստակ սահմանների շրջանակից⁴: Թեպետ կազմակերպված հանցավորության աճը պահանջում է, որ պետությունները համապատասխան միջոցներ ձեռնարկեն, արդար դատաքննության իրավունքը, որից տրամաբանորեն բխում է արդարադատության պատշաճ իրականացման պահանջը, այնուամենայնիվ կիրառվում է բոլոր տեսակի քրեական իրավախախտումներ-

⁴ Sté u Ramanauskas v. Lithuania գործով վճիռ, 2008թ. փետրվարի 5, գանգատ թիվ 74420/01, § 51:

րի նկատմամբ՝ ամենապարզից մինչև ամենաբարդը: Արդարադատության արդար իրականացման իրավունքը ժողովրդավարական հասարակությունում այնպիսի կարևոր դեր ունի, որ այն չի կարող զոհաբերվել հանուն նպատակահարմարության⁵: Այս կապակցությամբ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ ոստիկանությունը կարող է գաղտնի գործել, բայց ո՛չ հրահրել⁶:

Այլ կերպ ասած՝ միշտ չէ, որ նպատակն արդարացնում է միջոցները, և կոռուպցիայի դեմ պայքարի հարցում հաջողության հասնելու հանրային շահը չի կարող արդարացնել սադրանքի (պրովոկացիայի) արդյունքում անձին պատասխանատվության ենթարկելը:

Պրովոկացիայի ժամանակ հանցագործության կատարումը դրա ենթադրյալ սուբյեկտի կամարտահայտության արդյունք չէ: Տվյալ դեպքում հանցանքի կատարման նախաձեռնությունը գալիս է ուրիշ անձանցից, որոնք «շահագրգռված» են դրա կատարման մեջ⁷:

«Հանցագործության սադրանք» հասկացությանը ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է Գ.Գալստյանի վերաբերյալ գործով և արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Հանցագործության սադրանքն առկա է այն դեպքում, երբ անձի մոտ հանցագործություն կատարելու նախաձեռնությունն ի սկզբանե բացակայել է և ձևավորվել բացառապես իշխանության մարմինների, նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց գործողությունների հետևանքով: Հետևաբար, հանցագործության սադրանքի առկայության հարցը կարող է քննարկվել այն դեպքում, երբ իշխանության մարմինների կողմից իրականացվել են գործողություններ, որոնք օբյեկտիվորեն կարող էին այս կամ այն կերպ ազդել անձի հանցագործություն կատարելու նախաձեռնության ձևավորման վրա: (...) Միննույն ժամանակ, իշխանության ներկայացուցիչների, ինչպես նաև նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց կողմից իրականացված գործողությունները հանցագործության սադրանք

⁵ Տե՛ս նույն տեղում, § 53:

⁶ Տե՛ս Khudobin v. Russia գործով վճիռ, 2006թ. հոկտեմբերի 6, գանգատ թիվ 59696/00, § 128:

⁷ **Հովհաննիսյան Ա.**, «Օպերատիվ փորձարարության և հանցագործության պրովոկացիայի սահմանազատման հիմնահարցն օպերատիվ-հետախուզական գործունեությունում», «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր № 11, էջ 71:

կարող են գնահատվել այն դեպքում, երբ դրանք չեն համապատասխանի «զգալիորեն պասիվ ձևով քննություն» չափանիշին: Իրականացված գործողությունները չեն համապատասխանի «զգալիորեն պասիվ ձևով քննություն» չափանիշին, եթե այդ գործողություններն իրականացվել են առանց օրյեկտիվ կասկածներ ունենալու, որ անձը ներգրավված էր հանցավոր գործունեության մեջ կամ նախատրամադրված էր հանցագործություն կատարել, ինչպես նաև դրանք հրահրել են անձին հանցանք կատարել: Այլ խոսքով՝ հանցագործության սադրանքն իրենից ներկայացնում է իշխանության ներկայացուցիչների (նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց) կողմից իրականացված գործողություններ, որոնք դուրս են գալիս զգալիորեն պասիվ ձևով քննության շրջանակներից՝ պայմանավորելով անձի կողմից հանցագործություն կատարելու նախաձեռնության ձևավորումը, որպեսզի հնարավոր դարձնեն հանցագործության հաստատումը, այն է՝ ապահովեն ապացույցներ և հարուցեն քրեական հետապնդում»⁸:

Ստացվում է, որ օրենսդրությունն արգելում է օպերատիվ-հետախուզական մարմիններին որևէ ազդեցություն ունենալ հանցագործություն կատարելու նախաձեռնության ձևավորմանը, սակայն կարծում ենք, որ օպերատիվ-հետախուզական մարմինները պետք է նախաձեռնողականություն դրսևորեն արդեն իսկ ձևավորված իրադրությունների հայտնաբերման և «կաշառք ստանալու կամ տալու նմանակում» ՕՀՄ-ի կատարման համար նախապայմաններ ստեղծելու մեջ՝ չսպասելով կաշառք ստանալու կամ տալու առաջարկ ստացած անձի գրավոր հայտարարությանը: Ինչպես արդեն նշել ենք, «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» ՕՀՄ-ն կարող է իրականացվել բացառապես կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկ ստացած անձի գրավոր հայտարարության հիման վրա: Իրավակարգավորումը ենթադրում է, որ օպերատիվ-հետախուզական մարմինները պետք է սկսեն գործել միայն կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկ ստացած անձի գրավոր հայտարարությունն ստանալուց հետո: Սակայն նման հայտարարություններին սպասելը և այդպիսի հայտարարություններ ստանալու ուղղությամբ որևէ ակտիվ վարքագիծ չդրսևորելը կարող

⁸ Տե՛ս Գառնիկ Գալստյանի գործով 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵՄԴ/0027/01/14 որոշման 14-15-րդ կետերը:

է ոչ իրատեսական դարձնել կոռուպցիոն հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարը: Կարծում ենք, որ այն դեպքերում, երբ օպերատիվ-հետախուզական մարմիններն ունեն հավաստի տեղեկություններ կաշառք ստանալու կամ տալու առաջարկի կատարման մասին, ապա պետք է հնարավորություն ունենան այդպիսի առաջարկ ստացած անձի հետ իրականացնելու Ոսպերատիվ հարցում ՕՀՄ-ն: Եթե վերջինս, ծանոթանալով «կաշառք ստանալու կամ տալու նմանակում» ՕՀՄ-ի բնույթին և կատարման պայմաններին, օպերատիվ-հետախուզական մարմիններին կամավոր դիմում է գրավոր հայտարարությամբ, այդ դեպքում պետք է իրականացնել «կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում» ՕՀՄ-ն: Նման դեպքերում կաշառք ստանալու կամ տալու առաջարկ ստացած անձին ՕՀՄ-ի կատարմանը ներգրավելու հարցում նախաձեռնողականությունը թույլատրելի է, քանի որ միջամտությունը տեղի է ունենում արդեն իսկ ձևավորված իրադրությանը:

Հնարավոր է իրավիճակ, երբ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող աշխատակիցը՝ որպես մասնավոր անձ, ինքը կաշառք տալու առաջարկ ստանա: Արդյո՞ք այս դեպքում իրավաչափ կլինի «կաշառք ստանալու կամ տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառման սուբյեկտի դերում վերջինիս հանդես գալը: Նշված պարագայում կարծում ենք, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող աշխատակիցը պետք է որպես կաշառք տալու առաջարկ ստացած անձին գրավոր հայտարարություն ներկայացնի, իսկ «կաշառք ստանալու կամ տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառման սուբյեկտի դերում հանդես գան օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի այլ աշխատակիցներ: Նույնպիսի գործելակերպ պետք է դրսևորվի նաև այն դեպքերում, երբ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող աշխատակիցը՝ որպես պաշտոնատար անձ, կաշառք տալու կամ ստանալու առաջարկ ստանա: Իհարկե, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում առկա չեն ՕՀՄ-ին մասնակցության անհնարինության հանգամանքներ, այնուամենայնիվ քննարկվող ՕՀՄ-ի իրավաչափության համար անհրաժեշտ է միջոցառման ելքով չշահագրգռված, անկողմնակալ ՕՀՄ սուբյեկտի առկայություն:

Իսկ իրավաչափ է արդյոք նշված ՕՀՄ-ի իրականացման համար հիմք ընդունել այնպիսի գրավոր հայտարարություն, որում ակնհայտորեն նկարագրված են այն ներկայացրած անձի կողմից կաշառքի պրովոկացիայի կատարման մասին վկայող տվյալներ: Կարծում ենք, որ այս դեպքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինը պետք է առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում ներկայացնի քննիչին՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար, քանի որ առկա կլինեն ՀՀ քրեական օրենսգրքի 477-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշները (կաշառքի կամ մասնավոր ոլորտում կաշառքի պրովոկացիան): Պետք է բացառել նման գրավոր հայտարարություն ներկայացրած անձանց «կաշառք ստանալու կամ տալու նմանակում» ՕՀՄ-ին ներգրավելու հնարավորությունը և ապահովել վերջիններիս պատասխանատվության ենթարկելը ՀՀ քրեական օրենսգրքի 477-րդ հոդվածի շրջանակներում: Կարծում ենք՝ անթույլատրելի է նման հաղորդումների հիման վրա քննարկվող ՕՀՄ-ի իրականացումը՝ անկախ այն հանգամանքից, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների միջամտությունը պրովոկացիոն նախնական փուլին բացակայել է: Եվրոպական դատարանը Ռամանաուսկասն ընդդեմ Լիտվայի գործով արտահայտել է դիրքորոշում՝ որի համաձայն իրավասու մարմինները չեն կարող «ex post facto» օգտագործել մասնավոր կարգով հրահրված հանցագործության արդյունքները⁹:

Կաշառք ստանալու կամ տալու առաջարկ ստացած կամ այլ անձի ներգրավմամբ քննարկվող ՕՀՄ-ի իրականացման ցանկացած պահի առկա է դրա իրավաչափության խախտման պոտենցիալ վտանգ, ուստի այն կատարելիս պետք է հետևել մի շարք կանոնների:

Նշված ՕՀՄ-ի «մաքրության» համար կարևոր է հանցանքի կատարման մեջ կասկածվող անձի համար ապահովել վարքագծի տարբերակների ընտրության հնարավորություն և օպերատիվ աշխատակցից «կաշառք ստանալուց» կամավոր հրաժարվելու իրավունքը¹⁰: Սա նշանակում է, որ վերջինս

⁹ St' u Ramanauskas v. Lithuania գործով վճիռ, 2008թ. փետրվարի 5, գանգատ թիվ 74420/01, §§ 62-65:

¹⁰ St' u Александрова Ирина Александровна, Шевелев Антон Владимирович "К вопросу о пересмотре границы между провокацией взятки и оперативным экспериментом"/ Вестник МВД. – 2007. – № 1. – էջ. 45-52:

պետք է ստեղծված իրադրությունում ունենա կաշառքից հրաժարվելու այլընտրանք, և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների վարքագիծը չպետք է պարտադրի գործողությունների խիստ որոշակի ընթացք՝ անկախ կաշառք ստանալու կամ տալու ՕՀՄ-ի արդյունավետ իրականացման մեջ շահագրգռվածությունից:

Օպերատիվ աշխատակցից և ՕՀՄ-ի կատարմանը ներգրավված այլ անձից պահանջվում է ընտրել վարքագծի բացառապես պասիվ ձև, որը կարող է արտահայտվել կաշառքի առարկան տալուց (ստանալուց) տատանվելով, նման գործողություններ կատարելու առնչությամբ իր մտավախությունը հայտնելով, անօրինական գործողությունների կամ անգործության բնույթի, ստացված (փոխանցված) գումարի չափի վերաբերյալ պարզաբանումներ անելով: Նման իրավիճակում կասկածյալի կողմից կաշառքի առարկա ստանալու համար ակտիվ, համառ առաջարկները, շորթումները, պահանջները, սպառնալիքները ցույց են տալիս հանցագործություն կատարելու նրա մտադրության ուղղվածությունը¹¹:

Ինչպես բխում է «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպումից, կաշառքի առարկան պետք է նախապես անհատականացված լինի: Այս կապակցությամբ պետք է նշել, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի աշխատակիցները պետք է քննարկվող ՕՀՄ-ի կատարման ընթացքում խուսափեն նաև կաշառքի առարկայի որոշման հետ կապված նախաձեռնողականություն դրսևորելուց, քանի որ կաշառքի առարկայի չափը կարող է պայմանավորել արարքի իրավական գնահատականը, հետևաբար նաև պատժի խստությունը (*տե՛ս, օրինակ, ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշները և նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշները*): Ուստի կաշառքի առարկայի բնույթի և չափի վերաբերյալ առաջարկները չպետք է բխեն օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնից, որպեսզի որևէ կերպ չազդեն արարքի իրավական գնահատականի, պատասխանատվության խստության վրա և նշված օպերատիվ-հետախուզական միջոցառման իրավաչափությանն առնչվող շա-

¹¹ St' u Дубоносов Е.С. "Провокация взятки при осуществлении оперативно-розыскной деятельности"/ Известия Тульского государственного университета, Экономические и юридические науки. -2016, № 37-38:

հարկումների տեղիք չտան հետագայում՝ քրեական վարույթն իրականացնելիս:

Պետք է նշել նաև, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քննարկվող օպերատիվ-հետախուզական միջոցառումը նույն անձի նկատմամբ նույն անձի կողմից տրված նույն հայտարարության հիման վրա կարող է իրականացվել միայն մեկ անգամ:

Քննարկվող ՕՀՄ-ի արդյունքների՝ որպես ապացույցի թույլատրելիության իմաստով նպատակահարմար ենք գտնում ևս մեկ անգամ ընդգծել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից պրովոկացիայի բացառման անհրաժեշտությունը, քանի որ սադրանքի գործադրումն անձին գրկում է արդար դատաքննության իրավունքից¹²: Խուդոբինի նախադեպում ՄԻԵԴ-ն այնուհետև նշել է, որ սադրանքի գործադրման արդյունքում ձեռք բերված ապացույցներն ամբողջապես պետք է անտեսվեն¹³: ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է»:

Քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում է քրեական վարույթի շրջանակներից դուրս դատական երաշխիքով ապահովված ՕՀՄ-ների արդյունքները որպես արտավարության փաստաթուղթ ճանաչելու հնարավորություն (*տե՛ս*, ՀՀ քր. դատ. օր-ի 96-րդ հոդվածի 3-րդ մասը): Վերը նշված արտավարության փաստաթղթերը չեն կարող օգտագործվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքով մեղադրանքը հիմնավորելու համար: Այդ արտավարության փաստաթղթերը կարող են օգտագործվել միայն այն դեպքում, երբ դրանք ստացվել են քրեական վարույթ նախաձեռնելուց առավելագույնը չորս ամիս առաջ՝ ծանր հանցագործության մեղադրանքը հիմնավորելու համար, կամ ութ ամիս առաջ՝ առանձնապես ծանր հանցագործության մեղադրանքը հիմնավորելու համար:

¹² St' u Teixeira de Castro v. Portugal գործով վճիռ, 1998թ. հունիսի 9, գանգատ թիվ 5 44/1997/828/1034, § 39:

¹³ St' u Khudobin v. Russia գործով վճիռ, 2006թ. հոկտեմբերի 6, գանգատ թիվ 59696/00, §§ 133-135:

«Կաշառք ստանալու կամ տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները քրեական վարույթի ընթացքում որպես ապացույց օգտագործելու հնարավորության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև դրանց ամրագրման ձևը: «Կաշառք ստանալու կամ տալու նմանակում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները հավաստվում են բացառապես տեսաձայնագրման միջոցով: Ընդ որում՝ տեսաձայնագրումն անձի բնակարանում իրականացվում է բացառապես դատարանի որոշմամբ:

Բացի վերը նշված քրեադատավարական բնույթի պահանջներից՝ «կաշառք ստանալու կամ տալու նմանակում» ՕՀՄ-ի արդյունքները քրեական վարույթի ընթացքում որպես արտավարության փաստաթուղթ օգտագործելու համար անհրաժեշտ է, որ պահպանված լինեն «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով տվյալ ՕՀՄ-ի իրականացմանն ու արդյունքների ամրագրմանն առաջադրվող պահանջները:

Այսպիսով, ընդհանրացնելով ներկայացվածը՝ կարող ենք նշել, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին «կաշառք ստանալու կամ տալու նմանակում» ՕՀՄ-ի իրավաչափ իրականացման համար անհրաժեշտ է՝

1. զերծ մնալ քննարկվող ՕՀՄ-ն իրականացնելուց այնպիսի գրավոր հայտարարության հիման վրա, որում ակնհայտորեն նկարագրված են այն ներկայացրած անձի կողմից կաշառքի սադրանքի կատարման մասին վկայող տվյալներ,

2. զերծ մնալ կաշառքի սադրանքի դիմելուց կամ այնպիսի գործողություններ կատարելուց, որոնք կարող էին այս կամ այն կերպ ազդել անձի կողմից հանցագործություն կատարելու նախաձեռնության ձևավորման վրա,

3. դրսևորել վարքագծի պասիվ ձև՝ ՕՀՄ-ի օբյեկտին ընձեռելով ցանկացած պահի սեփական ազատ կամահայտնությամբ գործելու հնարավորություն,

4. խուսափել կաշառքի առարկայի չափի հարցում նախաձեռնողականություն դրսևորելուց,

5. պահպանել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով քննարկվող ՕՀՄ-ի իրականացմանն ու արդյունքների ամ-

րագրմանն առաջադրվող պահանջները՝ ապահովելով որպես ապացույց ՕՀՄ արդյունքի թույլատրելիությունը քրեական վարույթի ընթացքում:

Կարող ենք եզրակացնել, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական օրենսդրության իրավաչափ կիրառմամբ է մեծապես պայմանավորված հետագա քրեադատավարական կառուցակարգերի շրջանակներում կոռուպցիոն հանցագործություններով մեղադրանքի հիմնավորումը և որպես համասոցիալական արդյունք՝ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը:

ГАРАНТИИ ОБЕСПЕЧЕНИЯ ПРАВОМЕРНОСТИ ОПЕРАТИВНО-РОЗЫСКНОГО МЕРОПРИЯТИЯ «ИМИТАЦИЯ ПОЛУЧЕНИЯ ИЛИ ДАЧИ ВЗЯТКИ»

Варьян Нвард Вардановна

*Преподаватель кафедры уголовного
процесса Академии Образовательного
комплекса МВД РА, капитан полиции*

Манукян Джоник Размикевич

*Оперуполномоченный первого отдела
Оперативно-розыскного управления
Антикоррупционного комитета РА,
советник первого класса*

Наиболее эффективным средством в правовом арсенале противодействия коррупции органов, осуществляющих оперативно-розыскную деятельность, является реализация оперативно-розыскного мероприятия «имитация получения или дачи взятки». В рамках данной статьи предметом обсуждения являются вопросы, связанные с правомерной реализацией оперативно-розыскного мероприятия «имитация получения или дачи взятки», исключением провокации при его реализации, а также допустимостью результата указанного оперативно-розыскного мероприятия в качестве доказательства в ходе последующего уголовного разбирательства.

Ключевые слова: провокация взятки, имитация получения или дачи взятки, оперативно-розыскное мероприятие.

GUARANTEES OF ENSURING LEGALITY FOR THE CRIMINAL INTELLIGENCE ACTIVITY "IMITATION OF RECEIVING OR GIVING A BRIBE"

Varyan Nvard

*Lecturer at the Chair of Criminal Procedure
of the Academy of Educational Complex of
the Ministry of Internal Affairs of the
Republic of Armenia, Police Captain*

Manukyan Jonik

*Operative officer of the first division of
The operational intelligence department of
Anticorruption committee of RA,
First- class counsellor*

The most effective means in the legal arsenal of combating corruption by bodies engaged in criminal intelligence activities is the implementation of a criminal intelligence activity "imitation of receiving or giving a bribe". Within the framework of this article, the subject of discussion are issues related to the lawful implementation of the criminal intelligence activity "imitation of receiving or giving a bribe", the exclusion of provocation during its implementation, as well as the admissibility of the result of this activity as evidence during subsequent criminal proceedings.

Key words: provocation of bribery, imitation of receiving or giving a bribe, criminal intelligence activity.

Հոդվածը գրախոսվել է՝ 11.09.2023թ.:
Ներկայացվել է տպագրության՝ 15.09.2023թ.:

ПРОБЛЕМЫ ЗАКОНОДАТЕЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ КАК ФАКТОР, СНИЖАЮЩИЙ ЭФФЕКТИВНОСТЬ ИСПОЛЬЗОВАНИЯ РЕЗУЛЬТАТОВ ОПЕРАТИВНО- РОЗЫСКНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Багратян Азат Людвигович

Преподаватель кафедры оперативно-розыскной

деятельности и криминалистики

Академии Образовательного комплекса МВД РА,

кандидат юридических наук, майор полиции

В статье изучаются вопросы, которые крайне важны для использования результатов оперативно-розыскной деятельности в уголовном судопроизводстве. Учитывая ценность некоторых оперативно-розыскных мероприятий, автор говорит о необходимости приведения условий их организации в соответствие с уголовно-процессуальными нормами. Наряду с этим аргументируется недопустимость оперативно-розыскных мероприятий, осуществляемых с нарушениями установленных законом правил, а уж тем более, использования результатов таких мероприятий. В заключении предлагается внести соответствующие изменения в часть 4 статьи 31 Закона РА «Об оперативно-розыскной деятельности», предусматривая, таким образом, возможность проведения отдельных оперативно-розыскных мероприятий с целью предупреждения и пресечения преступлений.

Ключевые слова: оперативно-розыскная деятельность, оперативно-розыскное мероприятие, результаты оперативно-розыскной деятельности, внепроцессуальные документы.

Результаты оперативно-розыскной деятельности имеют весьма важное значение в борьбе с преступностью. Порой они имеют самостоятельное значение, являясь основой для проведения других оперативно-розыскных мероприятий. Однако иногда эти результаты выходят за рамки оперативно-розыскной деятельности и используются в производстве по уголовным делам, в частности, в процессе доказывания.

Одним из направлений развития результатов оперативно-розыскной деятельности является их трансформация во внепроцессуальные документы. Уголовно-процессуальный кодекс Республики Армения достаточно детально определяет требования, предъявляемые к этим доказательствам. Так, аудиозапись, видеозапись, киносъемка и другие документы, полученные за рамками уголовного судопроизводства в ходе проведения оперативно-розыскных мероприятий, по решению суда могут выступать в качестве внепроцессуальных документов лишь в том случае, если целью оперативно-розыскных мероприятий является предупреждение, пресечение преступления, а также выявление преступника во время совершения преступления или непосредственно после него¹. Как видно, законодатель акцентирует внимание на предупреждении и пресечении преступлений, то есть результаты оперативно-розыскной деятельности должны отражать действия лиц на стадии приготовления к преступлению или покушения на его совершение. И хотя уголовно-процессуальный закон устанавливает виды доказательств и процедуру их признания, для использования результатов оперативно-розыскной деятельности в доказывании, однако, необходима полная гармоничность оперативно-розыскных и процессуальных норм. Между тем положения оперативно-розыскного законодательства явно противоречат параллельным уголовно-процессуальным настройкам. Так, часть 1 статьи 34 Закона РА „Об оперативно-розыскной деятельности“ определяет оперативно-розыскные мероприятия, требующие решения суда. Вместе с этим внутреннее наблюдение, контроль переписки и иных видов нецифрового общения, контроль цифрового общения, в том числе, телефонной связи, контроль финансовых сделок проводятся только при наличии данных об уже совершённом тяжком или особо тяжком преступлении². Следовательно, указанные оперативно-розыскные мероприятия вообще нельзя проводить с целью предупреждения или пресечения преступлений. Такого рода запрет на осуществление мероприятий в свою очередь исключает возможность рассматривать их результаты как внепроцессуальные документы.

¹ См. часть 3 статьи 96 УПК РА.

² См. часть 4 статьи 31 Закона РА „Об оперативно-розыскной деятельности“.

Из редакции части 4 статьи 31 Закона РА „Об оперативно-розыскной деятельности“ следует, что внутреннее наблюдение, контроль переписки и иных видов нецифрового общения, контроль цифрового общения, в том числе, телефонной связи, контроль финансовых сделок проводятся только в случае совершённого, но ранее неизвестного преступления, по которому уголовное судопроизводство не осуществлялось, поскольку в процессуальных рамках вместо оперативно-розыскных мероприятий, требующих решения суда, проводятся негласные следственные действия. Однако и в данном случае результаты этих оперативно-розыскных мероприятий не могут быть признаны внепроцессуальными документами в виду несоответствия уголовно-процессуальным требованиям³.

Ограничение на проведение требующих судебного решения оперативно-розыскных мероприятий по факту готовящегося или совершаемого преступления не распространяется на наружное наблюдение и имитацию получения или дачи взятки. И если с проведением наружного наблюдения нет никаких проблем, то в отношении имитации получения или дачи взятки могут возникнуть определённые трудности. Как известно, результаты имитации получения или дачи взятки закрепляются с помощью наружного или внутреннего наблюдения. Получается, что, с одной стороны, для фиксации преступных действий лица необходимо организовать внутреннее наблюдение до начала уголовного судопроизводства, а, с другой стороны - в корреспонденции с требованиями оперативно-розыскного закона, внутреннее наблюдение осуществляется в отношении лица, уже совершившего преступное деяние. Таким образом, внепроцессуальными документами могут признаваться разве только результаты наружного наблюдения как в качестве автономного оперативно-розыскного мероприятия, так и в пределах имитации получения или дачи взятки.

В юридической литературе существует мнение, что факт нарушения оперативно-розыскного законодательства не должен повлечь аннулирование полученных результатов, ибо нарушение находится за рамками уголовного

³ См. часть 3 статьи 96 УПК РА.

процесса⁴. Нарушения этого закона не влияют на отнесение доказательств, полученных оперативно-розыскным путём, к числу недопустимых⁵. Справедливости ради заметим, что осуществление оперативно-розыскных мероприятий с отклонениями от установленных норм противоречит принципу законности. Так, государственные органы, органы местного самоуправления и должностные лица, вправе совершать действия в пределах полномочий, предусмотренных Конституцией или иными законами Республики Армения⁶. Принцип законности в силу особой значимости нашёл своё непосредственное отражение и в оперативно-розыскном законе⁷. Вместе с тем, нельзя не согласиться, что незаконное действие порождает не имеющий юридической силы результат⁸. Для использования результатов оперативно-розыскной деятельности в доказывании необходимо выяснить, соблюдены ли правила проведения оперативно-розыскных мероприятий⁹. Правовой запрет на использование доказательств, полученных с нарушением основных прав человека или нарушающих право справедливого судебного следствия, содержится в самой Конституции РА¹⁰. В соответствии с частью 8 статьи 97 УПК РА, результаты оперативно-розыскных мероприятий, проведенных с нарушениями требований закона, не являются основой для совершения действий доказательственного значения. Вышесказанное свидетельствует о недопустимости осуществления оперативно-розыскных мероприятий с нарушениями установленных правил, а тем более использования их результатов.

Действующий УПК РА включил в себя негласные следственные действия, которые по своей сущности весьма схожи с оперативно-розыскными мероприятиями, проводимыми по решению суда. Как уже отмечалось, в рамках

⁴ См. Комментарий к Федеральному закону «Об оперативно-розыскной деятельности» / отв. ред. А. Ю. Шумилов. М., 1997. С.120.

⁵ См. Теория оперативно-розыскной деятельности: учебник / под ред. К. К. Горяинова, В. С. Овчинского. – 4-е изд., перераб. и доп. – М.: ИНФРА-М, 2018. – Х. – С. 520.

⁶ См. часть 1 статьи 6 Конституции Республики Армения.

⁷ См. статья 5 Закона РА „Об оперативно-розыскной деятельности“.

⁸ См. Оперативно-розыскная деятельность в XXI веке: монография / С. И. Захарцев, Ю. Ю. Игнащенко, В. П. Сальников. – М.: Норма, 2015. – С. 294.

⁹ См. Уголовно-процессуальное право Российской Федерации / отв. ред. П. А. Лупинская. М., 2003. – С. 238.

¹⁰ См. часть 3 статьи 63 Конституции Республики Армения.

